

ԱՐԱՐՈՒ

ՀՊԱՐՏ ՄԵՐ



ՍՊԱՀԱՅՎԿԱՆ ԳՐԱԴ



Հայութիքի բրյուշ
Առարկա հետազոտություն
ՏՅՇ ռեկոնվերտ
30 ամյակին

891.99

86091

Q-85 Կրանք.


Հայաբն սեր:

50 ր.

20/մ-57 28/III

168





Դ 26963 26097

891.99
Կ-85

ԱՐԱԿՈ

ՅԵՐԱԿԱՆ Հ. 1961 թ.

ՀԱՐՍ ՄԵՐ

ՊԱՏՎԱԾՔՆԵՐ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ
ԵՐԵՎԱՆ
1947

АРАКС
ГОРДАЯ ЛЮБОВЬ

(На армянском языке)

Издательство „Советский писатель“
Армения, Ереван, 1947

Հ Պ Ա Ր Տ Ս Ս Ե Բ

Ա. Ի Զ Ա. Ն Ը

Նվիրում ԽՄ ԴԻԱՆԱՅԻՆ

— Արշալույս, ծանոթացի՞ր մորաքրոջս տղայի հետ,—ուրախ աղմկելով ներս մտավ Արմենուհին, դուրեկան մի աղջիկ և դիմեց սեղանի մոտ նստած ընկերուհուն, որը փութաջանորեն թերթում էր լուսանկարների մեծադիր ալբոմը:

Ներկայացավ խաժ աշքերով, գունատ մի երիտասարդ, որ անմիջապես հանեց գլխարկը, ուղղեց գլխարկի տակ խառնված շեկ մազերը, ապա արագ մոտեցավ, ձեռքը պարզեց աղջկան.

— Արսեն Սարգսյան...

— Արշալույս...—պատասխանեց աղջիկը, կիսով շափ գլուխոր բարձրացնելով և շտապելով ձեռքն ազատել երիտասարդի ձեռքից:

Ինչպես մի գեղեցիկ պատկերի առջև՝ շոյվեց երիտասարդի տեսողությունը, առաջին պահից գրավիչ թվաց աղջիկը իր սկ փայլատակուն աշքերով և ուսերին թափված ալեծուփ սկ մազերով: Մի քանի րոպե տևող լուսվյունը խանգարեց Արմենուհին իր զրնգուն ձայնով:

— Արսեն, ասա տեսնեմ, ի՞նչպես է մորաքույր՝ Աշխենը և ինչո՞ւ ես այդպես թանկ-թանկ երևում:

— Քո մորաքույր՝ այսինքն իմ մայրը, ինչպես կասեր իշխան Համլետը՝ չի դավաճանել հանգուցյալ հորս, ուրեմն լավ է, — հնչեց երիտասարդի թավ ձայնը կատակի շեշտով:

Արմենուհին, որ առհասարակ ծիծաղկոտ և աշխույժ աղջիկ էր, այդ խոսքի վրա բռնկվեց ուժգին ծիծաղով և ընկերուհուն դառնալով՝ հարեց,

— Տեսնո՞ւմ ես ինչ սրախոսն է, գեռ ավելին էր...

— Ինչ վերաբերում է իմ թանկ-թանկ երևալուն, —շարունակեց

Արսենը լրջացած, —պատճառն այն է, որ պատրաստվում եմ ցուցա՛հա՛նդե՛սի՛, — վերջին բառի վանկերն արտասանեց հատ-հատ և շեշտված:

— Այ թե ի՞նչ, ցուցա՛հա՛նդե՛սի՛, —կրկնեց նույն ձեռվ Արմենուհին: —Դե՛ք քեզ տեսնենք, այնպիսի մի գործ ստեղծես, որ գերազանցի քո բոլոր գործերին, ամենքը հիանան, —ավելացրեց Արմենուհին ոգեսրված:

— Թո՞ր կատարվի քո բարի ցանկությունը, —պատասխանեց երիտասարդը, սոյր հայացքներ նետելով նորածանոթ աղջկա կողմը, որին ասես ամենեին չեր հետաքրքրում նրանց խոսակցությունը:

— Իսկ դո՞ւք, օր ու գիշեր պարապում եք, շատ ին դասերը, այնպե՞ս չեր, —նոր շարժառիթ էք ուղում տալ Արսենը՝ ընկերուհուն խսակցության մեջ ներգրավելու համար:

Բայց պատասխանել շտապեց Արմենուհին.

— Ֆիլոլոգիական ֆակուլտետ, ծով գրականություն, կարդում ես, կարդում ու չի վերջանում...

— Ամեն մի դիտություն իր փոփոխման, շարժման և անվախճանության մեջ է հետաքրիեր, այլապես չեր լինի զարգացում — պրոգրես, —պատասխանեց Արսենը սենյակում բայլելով:

— Այժմ էլ փիլիսոփայել սկսեցի՛ր, —ծիծաղելով ասաց Արմենուհին, ապա թեքվելով Արսենի ականջին՝ շշնչաց, —մանավանդ աղջիկների ներկայությամբ բացվում ես:

Արսենը ծիծաղեց՝ կրկնելով իր սիրած դարձվածքը. «Դա հասարակ բան է...»

— Ահա՛ մեր Զարուհին, —հանկարծ բացականչեց Արշալույսը՝ մի լուսանկար սեղմելով կրծքին, —ի՞նչ թովուն, ի՞նչ ծիծաղելուտ... — Նկարը մոտեցրեց աշքերին ու շարունակեց թախծածոր ձայնով, —ո՞ւր ես, ո՞ւր, զարնան սիրում ծաղիկ, լավ կոմերիտուհի...

— Ի՞նչ ազիտատոր էք, ուղղակի այրվում էր... Հայրենական պատերազմի օրերին մենք միասին էինք թաղամասերը գնում ադիտացիայի:

Արսենը նույնպես հետաքրքրված կռացավ նկարի վրա:

— Ազնիվ և կրակոտ հայացք... հապա ի՞նչ եղավ:

— Մի անմիտ պատահարի, ավտո-աղետի հանդիպեց և չեց շարքերից ընկավ. Համալսարանը, մեր ամբողջ կուրսը սփաց, — հառաշեց Արշալույսը:

— Ծածկիր ալբոմը, — հանդիմանեց Արմենուհին, — իմանալով ընկերուհու զգալուն սիրտը:

— Այս էլ նրա սիրածը՝ Ալոնը, վերադարձավ ուազմաճակառից ոտքը կտրված... — Արշալույսի ձախը դողաց, այլիս շկարողացավ շարունակել:

— Թողնենք ողբերգականը, — միշտմտեց Արսենը և ձեռքը պարզեց դեպի պատուհանը, դեպի դուրս:

— Այժմ զմայլվենք մեր խաղաղ հայրենիքի, այս խաղաղ գարնան թովշանքներով:

— Տեսիք ի՞նչ կանաչ, ի՞նչ թավիշ է լեռ ու դաշտ պատել:

— Ի՞նչ է, ես չեմ կարող քեզ պես բանաստեղծել, — երգաձայն միշտմտեց Արմենուհին՝

Արեն է շողում,
Ծտերն են ծլվում ..

— Իշարկե, դու որպես նկարիչ-քանդակագործ, այդ ամենի արժեքն ավելի լավ գիտես ու կարտահայտես, քան մեզ նման համարակ մահկանացուները, — նկատեց Արմենուհին լրջացած:

— Ուրեմն դուք նկարի՞շ եք, — հարցրեց Արշալույսը անակընկալի եկած:

Արսենը գլխով գրական նշան արեց:

— Նկարիչ և քանդակագործ, — հպարտորեն վրա բերեց Արմենուհին: — Լավ չէ երեսին ասել, մեծ ապագա է խոստանում և օրեքով արվեստանոցից դուրս չի գալիս, — վերջին բառերը արտասանեց հոգածու շեշտով:

— Ուրեմն սիրում է իր արվեստը, — հարեց Արշալույսը՝ կիսաժպտուն աշքերը մի ակնթարթ սկսենելով Արսենի վրա:

Արսենը խիստ անհարմար զգալով իրեն, պատերի բազմիցու դիտած նկարները կրկին էր դիտում և մի երգ մոմուում քթի տակը ֆարճ դադարից հետո Արշալույսը շարունակեց՝ տեղից կանգնելով.

— Երանի չե՞ր արվեստի որևէ ճյուղում շնորհք ունենայի՝

Ակարշության, քանդակագործության, գրականության կամ երաժշտության, այն ժամանակ կգրեի այնպիսի սիմֆոնիաներ, որ լեռնային ջրվեժների նման թափվեին մարդկանց սրտերը և փոթորկեին, կհյուսեի պոեմներ սրտի լարերից, կքանդակեի հեղենական արձանների հետ մրցող անդրիներ, որ մարդն սքանչանար, նրա մեջ միշտ արթուն մնար ազնիվ, վեհ ու գեղեցկի զգացմունքը:

Արսենը անսպասելի ժեստով շրջվեց գեղի նորածանոթ աղջկը և զարմացական ժպիտը դեմքին՝ հետևում էր նրա ամեն մի խոսքին. նրա դեմ հանկարծ բացվել էր աղջկը լեռնային շուշանին նման, ձգվել սլացիկ հասակով:

«Ի՞նչ նկարչական դլուխ և ի՞նչ հասակ», մտածում էր քանդակագործը:

— «Արվեստի դիցուհի»—այսպես ենք նրան անվանում ուսանողական շրջանում,—միշտամտեց Արմենուհին ընկերուհուն բնութագրելու նպատակով.—մի գեղեցիկ նկարի, արձանի կամ երաժշտության հանդեպ ամեն ինչ մոռանում է...

— Նրանք, ովքեր սիրում են գնահատում են արվեստը, կիսով շափ արվեստագիտներ են,—եղրափակեց Արսենը:

— Զգացված եմ ձեր հաճոյախոսության համար,—նկատեց Արշալույսը և մոտենալով լուսամուտին՝ շարունակեց կրծքացին ձայնով.

— Ա՛յ, տվեք բնության զարթոնքը շե՛րտ-շե՛րտ, կանաչ ցոլք ջրեր և ամեն երանգը...

— Քնկերուհիդ բանաստեղծ է,—նկատեց Արսենը, ինքն էլ մոտենալով պատուհանին:

— Ե՛վ դու, և՛ Արշալույսը բանաստեղծել գիտեք, հապաւ և՛ ի՞նչ անեմ շոր ու ցամաք դատողություններով,—ասաց Արմենուհին վշտացած:

— Դա հասարակ բան է,—ձեռքը թափահարեց Արսենը:

— Ինչ հասարակ, գիտե՞ս ինչքա՞ն է պետք գալիս... դրա համար մի հատ է Արշալույսը. մեր ալբոմներում գրում էր ոտանավորներ. հիշում եմ այս տողերը՝ ընկել էր բոլորին բերանը.

Մըրբկների խոլ պահեն,

Սագառնում է իմ հոգին...

Արշալույսը պոկվեց տեղից և ձեռքի ափով փակեց ընկերուհու բերանը:

— Եենթ թոթովանքներս մի՛ կրկնիր, մի՛ ամաշեցնիր, — 22ընչաց նա գրեթե անլսնիք, ապա ձայնը բարձրացրեց, — եկան պատերազմի ահեղ տարիները և ամենքս հասունացանք, մեր ընկերներից շատերը ուզմաճակատ մեկնեցին, ոմանք վերադարձան, ոմանք անդարձ կորան, — և թախիծը թաքցնելու համար նա երեսը շրջեց:

Մինչ Արսենը մտածում էր մի նոր առիթ՝ նորածանոթ աղջկա ուշադրությունը արվեստի խնդիրներին դարձնելու համար, աղջիկը հրամայական շեշտով դարձավ դեպի քանդակագործը.

— Բարձր կոչում ունեք դուք՝ գեղեցկի վարպետ լինելու, ապա ուրեմն զարդարեցեք. մեր պատկերասրահները, այսօրվա խիզախ, անձնվեր մարդկանց պատկերներով և քանդակներով, որպեսզի թե՛ մեր, թե՛ գալիք սերունդների աշքում կենդանի շնչժամանակի ողին:

— Դուք ավելի, քան արվեստագետ եք, — հիացական բացականշություն գուրս թռավ Արսենի շուրթերից:

— «Արվեստի դիցուհին» մեր կուրսի ամենաուժեղ քննադատ-տեսարանն է, — այդ լրացումով Արմենուհին բազմապատկեց Արսենի հիացումը. նա մտքում որոշեց. «Սրա հետ չի կարելի կատակել կամ թեթևարանել»:

— Ամեն անգամ կենինի հրապարակով անցնելիս ամենավսեմ՝ զգացումներ են պաշարում հոգիս, — շարունակեց Արշալույսը՝ հպարտ կցցվածք ընդունելով, — խորին ակնածությամբ նայում եմ կենինի ձուլածո արձանին, անսլարփակ սիրով ու գործվով է լցնում հոգիս ու մղվում եմ նպատակաւաց թոփշքների...

Արմենուհին արշահար նայում էր ընկերուհում, որ այդ օրը ավելի ճարտար էր խոսում և աշքերի փայլը շատացել էր:

Արսենը եկել էր կես ժամով, բայց հետաքրքիր խոսակցությամբ տարվելով, մեկ ժամ էր մնացել և ուշացել նկարիչների ժողովից; Նայեց թե՛ ժամացուցին: Ժամը մեկն էր, նա շփոթված փնտրում էր գլխարկը:

— Ներեցեք, ափսոս որ... — ասաց նա և գլխարկը դրեց:

— Մամա՛, մայրի՛կ, — ճշալով դեպի դուռը գնաց Արմենուհին: Նախասենյակից ներս մտավ գլուխը շալով փաթաթած, բարձրահասակ մի տարեց կին, որի դիմագծերը հիշեցնում էին Արմենուհու դիմագծերը:

— Այս ի՞նչ բան է, ովհարկդ ինչո՞ւ ես ծածկել, — Հանդիմա-
նեց կինը քրոջ տղային, — կոֆեն պատրաստ է, գնանք:

— Սիրելի՛ մորաքույր, ինձ կներես, ժողովից ուշացել եմ...

— Մամա, ախար ինչո՞ւ շուտ շպատրաստեցիր, — դժկամեց
Արմենուհին:

— Ես ի՞նչ իմանայի, որ ձին թամրած պիտի գա ու թռի...
շկարողանաս երկու խոսք փոխանակել:

Տեսնելով՝ Արսենին այլևս չի կարողանում համոզել, շարու-
նակեց աղերսաբար.

— Մի ուրիշ անգամ քրոջս հետ եկեք, նստենք, մի քիչ երկար
խոսենք. թե չէ, ի՞նչ հարազատություն...

Արսենը մորաքրոջը կրկին այցելելու խոստում տալուց հետո,
մոտեցավ Արշալուսին, ձեռքը պարզեց մնաս բարեկի, բայց զեմ-
քին կարգացվում էր կրկին հանդիպելու բուն ցանկություն:

— Հույս ունենանք, որ ձեր քանդակները տեսնելու կարժա-
նացնեք մեզ, — ասաց Արշալուսը:

— Միայն թե զուք ցանկանաք, անպայման, — վերջին բառը
շեշտեց Արսենը և զուրը թափով բացելով՝ զուքս եկավ նախասե-
նյակ. նրան մինչև զուրը ուղեկցեց Արմենուհին:

— Թոշուն է կրակեղեն, հեշտ չէ բռնել, — ասաց Արսենը զուան
մոտ:

Արմենուհին ուրախ լրաբերի նման նորից ետ եկավ, իսկ Ար-
շալուսը մտքերի մեջ խորասուզ՝ կոթնել էր սեղանին. ամեն ան-
դամ մի նոր երիտասարդի հանդիպելիս թախծում էր, հիշելով իր
ընկերոջը, որ պատերազմից չվերադարձավ:

— Հը՞ս, ինչպե՞ս էր մորաքրոջս տղան, — դիմեց Արմենուհին
երեխալական պարզությամբ:

Արշալուսը ընկերուհու հարցին պատասխանեց բաղմախոր-
հուրդ ժպիտով:



Փարնան զով երեկոներից էր, քամին այգիներից քերպամ էր
ծաղկած յասամանիների բույրը: Արսենը «Արգեստի դիցութուն»

Նի անդամ տեսնելուց հետո, այլևս չեր մոռանում: Նոր առիթ էր սրոհում նրան կրկին տեսնելու և տնից դուրս էր եկել հենց աչք նպատակով:

Ահա հեռվից նկարչի սրատես աշքը որսաց նրա սլացիկ հասակը: Արշալույսը մենակ իջնում էր Համալսարանից:

Փոխադարձ սիրալիրությամբ նրանք բարեկեցին միմյանց և քայլեցին կողք-կողքի: Նախ խոսեցին ուսանողությանը հուզող տարեկերջի քննություններից, հետո Արշալույսը խոսքը դարձրեց դեպի արվեստը:

— Մենք քննությունների ենք պատրաստվում, իսկ դուք շարումակ քերում եք, հղում և քանդակում...

— Այո, շնչում եմ դրանով,—պատասխանեց Արսենը և շտապեց ավելացնել,—ես ձեզ սիրով կառաջնորդեմ իմ արվեստանոցը, եթե ցանկանում եք:

Աղջիկը համաձայնեց, ու երկուսով թեքվեցին դեպի աջ տանող մի ուրիշ փողոց:

Արշալույսը կանգ առավ փողոցը հատող փայտե կամբջակի վրա, որի տակով խշշալով անցնում էր դարնան անձրևներից գարսրած գետակը:

— Ասես կյանքի հեքիաթն է պատմվում այս մշտահոս ջրերում,—հնչեց աղջկա քաղցրալուր ձայնը, ապա նա դառնալով դեպի աստղապարուր երկինքը՝ ալելացրեց.

— Իսկ ցոլցլուն այս աստղերը քանի՞-քանի՞ բանաստեղծներ են մաշկե...

— Համոզվում եմ, որ դուք բանաստեղծ եք,—հարեց Արսենը:

— Մի՛ ասեք, բանաստեղծները կխոռվեն,—հեղնեց Արշալույսը:
Հանկարծ կրոնկն առեց քարի, քիչ եր մնում սայթաքեր, երբ Արսենն առաջարկեց իր թեր:

Արշալույսն առանց վարպնման հենվեց նրա ուժեղ բազկին: Արսենը այդ պահին իրեն զգում էր աշխարհի ամենաերջանիկ մարդը, որ տանում է իր հետ արվեստի քնքշաբերո դիցուհուն:

Աստղալույսի և էլեկտրական լույսերի տակ ծառերի ստվերախաղն էր սկսվել գետնին: Թրթռուն քամին էր նրանց ուղեկցում: Նրանք տաք զրուցով տարված՝ դիմեցին դեպի մի նրբանցք ու քարձրացան մի երկհարկանի տան աստիճաններով: Առաջին հար-

կի երկրորդ բնակարանի առջև կանգնեցին: Արսենը սեղմեց կոճակը, դուռը բացվեց՝ և շեմքում երևաց 50-ի մոտ, դեռևս իր թարմությունը պահպանած համակրելի մի կին: Դա Արսենի մայրն էր:

— Արսեն զան, — հնչեց կնոջ ձայնը ու տեսնելով օտարաղջկան՝ նախ շփոթվեց, ապա ուշքի գալով՝ համեցեք արակ:

— Արմենունը ընկերութին է, — շտապեց ծանոթացնել Արսենը:

— Համենցե՞ք, բա ինչո՞ւ չեք Արմենունու էլ ձեզ հետ բերել, կարունել եմ, — ծոր տվեց կինը:

— Նա ֆրանսերենի դաս ուներ, — պատասխանեց Արշալույսը:

— Եղ դասերը ձեր հոգին հանեցին, — դժկամեց կինը՝ ոտից գլուխ շափնելով աղջկան:

Արսենն իր աշխատանոցի դուռը բացեց, լույսը վառեց և Արշալույսին հրավիրեց:

— Ընկերութի՞ն էլ նկարող է, — հարցրեց մայրը:

— Համարյա թե, — ծիծաղելով պատասխանեց Արսենը:

— Կյանքումս կատու էլ շեմ նկարել, — ծիծաղելով ու կամացուկ ասաց աղջիկը:

Քառակուսի փոքրիկ սենյակ էր աշխատանոցը, որ առաջին հայացքից թվում էր թափիթիված և անհրապույր:

Աղջիկը ուշադիր նայեց պատերի մատիտանկարներին, յուղանկարներին և սեղանին շարված արձաններին: Ասես ուզում էր մի անգամից ըմբռնել նրա ստեղծագործական ընդգրկումները: Իսկ Արսենը անհամբեր հետեւում էր նրա ամեն մի շարժումին, դեմքի արտահայտությանը, կուահելու, թե ի՞նչպիսի տպավորություն էր թողնում:

— Իսկական է այս մեկը, այն մյուսը, — աղջկա աշքերը ուրախությամբ ճառագայթեցին մարտիկների քանդակները գիտելիս:

«Սկսվում է քննադատությունը», մտածեց Արսենը սրտի դողով:

— Նոր է և հաջողված, — Հայրենական Պատերազմի հերոսներ, իսկ եթե մասնակցած լինեի՞ք... — դարձավ աղջիկը Արսենին: Արսենը խորհրդավոր ժամաց, ասլա մի փոքր հետո ասաց.

— Նայեցեք դիմացի նկարին:

— Այս քեզ սյուրպրիզ... այս դո՞ւք եք զինվորական շորեւ-

բով, — գրեթե Ֆլաց աղջիկը, — ձեր ստեղծագործությունը շահել է նաև նրանից, որ պատերազմին մասնակցել եք:

— Արմենուհին ձեղ չէ՞ր ասել, — հարցրեց Արսենը զարմանդով:

— Նա ասում էր, որ ուղմաճակատում հարազատներ ունի, բայց չի ասել ո՛վ և ի՞նչպես, և վերջապես մենք նրա հետ մտերմացանք այս վերջին տարում, — կարճ բացատրությունից հետո աղջիկը մի խուզարկու հայացք նետեց տղային ու ավելացրեց.

— Այդ մեծ բան է...

Արսենը տեսնելով, որ աղջկան առանձնապես հետաքրքրեց իր պատերազմին մասնակցելու փաստը, ոգևորված սկսեց պատմել.

— Հայրենական Մեծ Պատերազմին մասնակցել եմ ուղիղ երեք տարի, արյունահեղ կոխվներում մահն էր աշքիս տակ, վիրավորվել եմ մի քանի անգամ, բայց բախտ ասեմ, թե պատահականություն; ինչպես տեսնում եք՝ վերադարձել եմ ողջ-առողջ:

— Նախախնամությունը ձեղ պահպանել է հանուն մեր սովետական արվեստի, որ գաք և վերստեղծեք մեծ գաղափարի անձնը վեր մարդկանց կենդանի կերպարներ, — պատասխանեց Արշալույսը մտախոհ:

Արսենի մայրը մի երկու անգամ դուռը բացեց, բան էր ուզում ասել, բայց տեսնելով նրանց խիստ դպաղված՝ նորից դուռը ծածկեց, մտածելով.

«Արսենի սովորությունն է, եկած հյուրին ժամերով աշխատանոցում պահում է»:

Արսենը տեսավ, որ Արշալույսը հայացքը չի հեռացնում ուղմիների արձաններից, հիշողությունների կծիկը բացեց:

— Սա մի ուս քաջածին մարտիկ էր, իմ ընկերը՝ Անդրեյ անունով, — նա ձեռքը տարավ գետի մի մետր բարձրություն ունեցող արձանի գլուխը՝ շոյեց գորովանքով:

— Որքա՞ն ենք միասին մի հողափոսում կողք-կողքի պառկել: Նա կարճահասակ էր, նիշարիկ, ի՞նչ սրատես, կապուտ աշրեր ուներ, ոչ թե քանի հինգ, այլ տասնհինգ տարեկան պատանու գոպավորություն էր թողնում: Նրա անունը կնքեցինք «Կալժակե հետախուզ»: մաղեկամուրջներ էր անցնում, ոչ գնալն էինք իմա-

նում, ոչ գալը, միայն լսում էինք, որ «Հայծակե Հետախույզը» կարևոր տեղն կությունն էր է բերել թշնամու դասավորությունների մասին: Մի օր նա առաջադրանք ստացավ Հետախուզների շատ զբժվարին մի տեղամաս: Անդրեյն այդ օրը արտասովոր տրամադրության մեջ երգում էր, կատակում: Մենք մարտիկներս ասում էինք՝ Անդրեյը ասես հարսանիք է դնում:

«Է», նկատիչ, — հանկարծ դարձավ նա դեպի ինձ, — նկարից սիֆաթս և ուղարկիր սիրածս աղջկան, թող ծաղիկներով զարգարի, գրողը տանի, ծաղիկներ շատ է սիրում նա»:

— Ի՞նչ ես խոսում, Անդրեյ, — խոսքս չավարտած՝ նա վրա եկավ խոռվիկան երեխայի նման՝ թշնը ուռեցրած... Լավ, մի՛ ուղարկի, Դուսյան թաղ կարոտից... — Ու մի այնպիսի թախծուտ հայցը նետեց ինձ փրա, որ սիրոս փուլ եկավ, փաթաթվեցի նրա պարանցով, ասացի. — Անդրեյ, մի՛ բարկանա... — Նա ժպտաց և կամացով ասաց. — սիրոս վկայում է, քրիցները այս անգամ իմ զլովսը կուտեն:

Մինչև այսօր այդ խոռվերը ծակում են սիրու: Այդպես էլ այդ հետախուզությունից նա չվերտադրածակ: Նրան շրջապատել էին տաս ավտոմատավոր, բայց նա չէր հանձնվել կենդանի, խփել էր մի քանիսին ու ինքն էլ վերջում խփվել:

Եյս պատմությունն ավելի լուսավորեց Անդրեյի պայծառ դեմքը, ասես աշքերն ակնակապիշների մեջ խաղացին, շուրթերը շարժվեցին:

Արշալույսը նայում էր լուռ, անթարթ և հանկարծ ասաց.

— Մարմնացրել եք այս արձանիկի մեջ Հերոսի բնորոշը՝ արհամարհանք դեպի մահը, կեցվածքի մեջ՝ խիզախումը, բայց չ՝ որ նա մարդ էր բոլոր կողմերով — ծաղիկներ սիրող աղջկա սեր ուներ պահած իր սրտում, այդ է, որ պակասում է:

Արսենը անակնկալի եկած՝ շիմացավ ինչ պատասխանի աղջկա սուր դիտողություններին ու շփոթմունքից կցկտուր բառեր դուրս թռան շուրթերից:

— Հը, ինչպես... մի՛թե, — և որպեսզի շուտով դուրս դա այդ վիճակից, ցուց տվեց մի ուրիշ գործ՝ կանացի կիսանդրի:

— Սա էլ բժշկական քույր նաստայաց Պավլովնան է, ողջ կյանքովս եմ պարտական նրան:

— Թեժ կույի մեջ վիրավորվեցի, աշքս բաց անեմ տեսնեմ՝ կողքիս քույր նաստասյան... Բինթը վերջացել էր, գլխի թաշկի-նակն արձակեց ու նրանով կապեց ոտքիս վերքը: Փորձում եմ սո-ղալով գնալ սան-մաս, չեմ կարողանում: Շունկս է: Տեսնեմ նաս-տասյան հրամայում է՝ պառկի'ր մեջքիս: Ես համառորեն հրա-ֆարվում եմ, իսկ նաստասյա Պավլովնան ձեռք չի քաշում:— Եռ'աւ, —ասում է, —երկուս էլ կոչնչանանք: Ի՞նչ ազդու հայացք: Եվ նա մի կիլոմետր ինձ տարավ մեջքին դրած, փորսող տալով:

Հախունն մտքերից ազատվելու համար Արսենը մի փոքր դա-դար առավ, ապա շարունակեց՝ հիացական ժամանակին: Ժամանակին մի ուղարկում էր կոմպլիմենտներ և շատ էր ուզում, որ իրեն նկարեն: Մի անդամ սկսեցի նկարել, բայց ծանր վիրավոր բերին: Նաստասյան էլ կնսենք: Եվ ահա կապուտաշյա նաստասյան մեր ձեռքից թռավ-վիրավորներին օգնելիս արկի բեկորը սպանել էր նրան:

Արսենի ձայնը կերկերաց:

— Զեր արվեստը շնորհ եք բերել նրա հիշատակին, —կերտել եք նրա գեղեցիկ կիսանդրին: Այժմ լոիկ ու երախտապարտ հա-յացքով նայում է նաստասյան: Այդ հայացքի մեջ ես ճանաշում եմ նաև կոմերիտուհի Զարուհու հայացքը: Զէ՝ որ դրանք մի կտո-րից կտրած մի հոգու տեր աղջիկներ են, —նա շարունակեց ավելի դանդաղ ու մատախոհ: —Որքա՞ն մեծ է արվեստի դերը մեր կյան-քում, ամբողջացնում, մարմնացնում է ի տես աշխարհին՝ մարդ-կային գեղեցիկը, նվիրականը: Դրանումն է նրա մեծ ուժը:

Արսենն այլևս չէր լսում, նա բռնկվել էր գեղի երիտասարդ աղջիկը տածած համակրանքի ու սիրո բոցով: Տանջվում էր երկ-մըտանքից՝ հայտնել, թե՝ սպասել: Իսկ աղջիկը վեր էր կացել տե-ղից և մոտեցել անկյունում կտավի ծածկոցով պատած մի պատ-վանդանի:

— Զբացե՞ք, —աղաղակեց քանդակագործը սթափիվելով:

Արշալույսը ցնցված ետ քաշվեց, ապա հանդիմանող շեշտով ասաց.

— Ինչո՞ւ վախեցաք, մի՞թե ես չեմ հասկանում, որ ծածկված է, ուրեմն չի կարելի:

Արսենը զղաց իր արարքի համար և ներողություն խնդրող տոնով ասաց.

— Ես չեմ ուզում որ անավարտ մի գործ ձեր տեսողության հանձնման:

Արշալույսը ժպտաց ներողամտաբար:

— Պատրաստում եմ ցուցահանդեսի, — վրա բերեց Արսենը խորհրդավոր: — Իմ մտերիմ ընկերն է, մի գիշերում հերոսացած՝ ինձ հանդիստ չի տալիս, հետապնդում է շարունակ, մինչև որ իր նմանը ստեղծվի նորից: — Արսենը ակնածանքով նայում էր ծածկոցի կողմը, երբ ավելացրեց հանկարծ: — Կարողանա՞մ արդյոք անշունչ նյութի մեջ դնել այն անպարտելի ոգին, վառել այն բոց աշխերը:

Աղջիկը հետաքրքրությունից վառված՝ բացականշեց.

— Կարող եք, ձեր բնուն սերը և կամեցողությունը, ձեր շնորհատու մատները կիերտեն հերոսին այնպես հարազատ, որ գըտնենք նրա մեջ մեր կորած սիրելիներին, — վերջին բառերը նարտասանեց թախծածոր:

Մի քանի բոպե երկուան էլ լուս նայում էին ծածկոցին: Լուսիցումը խզեց աղջիկը համարձակ ու հրամայու.

— Թող անանոն հերոսի քանդակը լինի մինչև այժմ ձեր ստեղծած գործերից ամենալավը՝ գլուխ-գործոց:

Արսենի ականջին հնչեցին ոչ թե մեկ, այլ հաղարավոր մարդկանց ձայներ:

Արշալույսը դիմեց դեսի դուռը,

— Ես բավական ուշացած:

Մինչ Արսենի աղերսական հայացքը ասում էր՝ մի՛ դնա, սպասի՛ր, մայրը նորից դուռը բացեց և այս անդամ սիրտ առնելով՝ ասաց.

— Ընկերունուն մի քիչ էլ էս սենյակը բեր, թեյ եմ պատրաստել...

Արսենը ծիծաղեց, հասկանալով մոր կշտամբանքներն իր նկատմամբ, երբ հյուրերին երկար էր պահում իր աշխատանոցում:

Մայրը փռել էր սպիտակ սկիռոցը, պատրաստել թիյասեղանը, շարել մեկ վաղա բալի անուշ և մի մեծ վազով խմորեղին:

Արսենի մայրը մհնակ և երկար սպասելուց ձանձրացել էր, որիմ ինքն էր սկսել աշխուվժ զրուց. Հարցնում էր աղջկա որտեղացի լինելը, նրա ծնողներից, բառեկամներից և շատ ուժից մանրամասնություններ. աղջիկն էլ սիրով պատասխանում էր:

Արսենի մայրը մտքում որոշեց, որ աղջիկը կրթված է և խոնարդ:

Թեյից հետո Արսենը Արշալույսին ուղեկցեց մինչև տուն: Բաժանվելիս Արշալույսն ասաց.

— Թող դա լինի ձեր գլուխ գործոցը:

Արսենը բաժանվեց սրտի ցավով՝ համակրանքի և սերո զգացումներում:

Մոտենում էր ամառը, մոտենում էին և ցուցահանդեսի օրերը:

Արսենը մտահոգ էր և լուս: Օրերով փակվում էր իր աշխատանոցում: Մայրը անհանգստանում էր, որ իր միակ որդին քունն ու հանդիսար կտրած՝ տարված էր գործին:

— Արսեն ջան, երեսիդ է՛լ գույն չի մնացել, մաշվում ես գրեցօր, — տրտնջում էր մայրը:

Բայց ի՞նչ փույթ Արսենին մոր թախանձանքն ու տրտունջները, մազնիսի նման ձգում էր արձանը, որին գերի էր զարձել:

Գիշեր էր խաղաղ, քուն էր մտել ողջ քաղաքը, բայց քուն շմտավ Արսենը: Էլեկտրական լույսի տակ աշխատում էր. Ընքն ու հնարքը տված ճկուն մատներին՝ փորում էր, հղում գլուխ. Կերտագածքը, գեմքին տրտահայտություն ու կյանք էր վառում: Հանկարծ պոկվում էր արձանից, հեռու քաշված նայում երկար ու ցնցվում ինչպես մի նետահար, այն փոքրիկ թերը՝ ճակատի ու այտերի, թուղացնում էր հերոսի ըմբոստ արտահայտությունը ու սահղծագործ մատներին՝ ապավինած՝ նորից կերտում էլլու մանրազնին: Ինչո՞ւ նորից ետ քաշվեց, ստուգելո՞ւ. ո՞չ, մատներն այցվել ակսեցին. շուրջը փոխվեց ռազմակաշի: Ահա կոմերիտական Դանիելը, որին Ահ Գանի էին կանչում զորամասում:

Սևագանգուր մազերով, ու աշքերով այդ մարտիկը, աժենակրտակերն էր և ամենքի սիրելին: Նա աշխի չէր ընկել հերոսությամբ, բայց մարտական առաջադրանքները կատարում էր ճշգույն:

թյամբ: Սիրում էին և նրա համար, որ նամակներ էր բաժանում մարտիկներին ու ամեն մեկի ուրախությունն ու վիշտը կիսում:

Երբ Արսենն ասում էր նրան, թե քեզ պետք է նկարեմ, նապատասխանում էր հեգնոտ ժպիտը դեմքին, ձեռքը թափահարելով. «Զե՞ռք քաշիր, ես ի՞նչ... թե շնորհք ունես նկարիր Անդրեյին, նաստայային, ուստ հերոսների, որ գործդ էլ գործ լինի, նայողն էլ բան հասկանա»: Այդպիսով նա խուսափում էր նկարվելուց:

Մարտիկները նկատել էին, որ Դանին սիրում էր արևածագը դիտել, դրա համար նրան ասում էին՝ Աև Դանի, արևի որդի:

Մի անգամ առավոտը վաղ, երբ գետնատնակի մուտքի մոտ նստած Դանին հափշտակվել էր երկնքի վառ գույներով, Արսենը հարմար առիթը շուղեց փախցնել, մատիտն ու թուղթը վերցրեց ու նրա պրոֆիլը նկսեց գծել: Երբ վերջացրեց, մոտեցավ—թափահարեց Դանիկի ուսերը, նկարը աշքերի գեմ բռնելով.

— Չսիրածդ բանը կատարվեց, տե՛ս պատկերդ:

Դանիելը արշալույսից բոցավառված աշքերը դարձրեց. Արսենի վրա ու ասաց հեգնանքով. «Դուք, նկարիչներդ համառ կող ունեք, սիրուն աղջիկներին թողած իմ կոշտ ու կոպիտ երեսին էիր կարոտ, տեսնո՞ւմ ես սառած եմ դուքս եկել»:

Այդ նկատողությունն ամենախիստը թվաց և մինչև օրս շի մռանում:

Այժմ հսկում է նրա ազդու հայացքը Արսենի մատներին, որ դարձյալ սառած դուրս չըերի:

Անցան օրեր: Սովետական զորքերը հարձակման էին անցել: Ն զորամասը հետապնդում էր թշնամուն բելոռուսական անտառներում: Այդ նույն զորամասի մի գումարտակում էին երկու հայ ընկերներ՝ Արսենն ու Դանիելը:

Պատպահեց այնպես, որ գումարտակը կտրվեց իր զորամասից, ու մի գիշեր խճճվեց մթին ու խոր անտառի մեջ: Թշնամուն հաշողվեց նրանց շրջապատել ու կրակի օղակի մեջ առնել: Իսկ սպավետական զորքերն առաջադրանք ունեին լուսաբացին Ն գետանցը գրավել:

Գիշեր էր, մթին անտառը ճռնշում էր որոտներից: Գումարտակի ուստ քաշարի ճրամանատարը խփվել էր, անտառը անծանոթ, իրենք շորս կողմից շրջապատված: Ամեն մի մարտիկ իր մտքի մեջ մահու և կենաց կոփվ էր մղում: Այդ ահեղ, ճակատագրական

պահին հանկարծ ծառերի հետեւից ելավ մեկը ու ասաց. «Հետեւեցիք ինձ»:

Զայնը խղզում էր. Մութի մեջ շեին կարողանում որոշել՝ ո՞վ էր այդ հանդուսն զինվորը: Ծշուկ անցավ զինվորների մեջ—ո՞չ է, ի՞նչ խենթություն, չի որ ճանապարհ չկա:

«Ի՞նչ եք մոլորդել, կանգնել», նորից հնչեց ձայնը, այս անգամ պարզուց:—Սև Դանի՞ն է,—զարմացած հարցնում էին միմյանց:

Մի՞թե նա էր, թե հրաշքով ծնված մի նոր Դանկո:

— Գնանք, — գոչեց, — և զիտեմ ճանապարհը, — ու նետվեց առաջ:

Դժկամ ու տարտամ 22ուկները խլացան նրա հրաժայական ձայնից: Մարտիկները լուռ հետեւեցին նրան:

Մութն էր պատել և աշնան թուփապը: Դժվար էր ճանապարհն ու անանցանելի: Բայց գումարտակը համարձակ ճեղքում էր անտառը Սև Դանիի առաջնորդությամբ: Խոկ թշնամին համառորեն գնդակոծում էր: Խվում էին մարտիկների ոտնաձայները:

Շառերի կատարները գծագրվեցին, զուսո ժայռական մարտիկների աշքերում: Արևածագի սիրածար կոմերիտական Դանին քայլում էր աշքը գեպի երկինք, դեպի արևը:

Անտառը վերջանում էր, լույսն էր առատորեն սփուլում շորս կողմ:

Դանին լուռ էր, գումատ, արևածագի բոցն էր աշքերում: Նա ձեռքը պարզեց զեպի գետանց: Ոչ ոք չէր հանկանում թե ինչ կատարվեց:

Դանին ընկավ Արսենի թերին ու հազիվ 22նշաց: «Դեպի լույս, առաջ»: Մարտիկները կուրծքը բացեցին, տեսան արյուն. վերջին պահին խոցվել էր նա, բայց չէր հայտնել, չէր հառաշել ու քայլերը չէր դանդաղեցրել:

Ի՞նչ բոցեկեն աշքեր, ինչ հաղթական հայացք, որ վերջին անգամ նետեց նա մարտիկներին:

Աշքերը փակեց խաղաղ: Հառաշանքներ թռան մարտիկների կրծքից—ափսու...

Ռափայելի կամ Տիցիանի զբձինը պիտի լիներ հերոսի մահը կերպելու համար:

Ռեալիստիկին թվաց, որ նա չմարենց, այլ դարձավ լույսի մի շեր ու արևին միացած վառվեց աշխարհի վրա:

Դանիի ներշնչումով մարտիկները գետանցը զրավեցին և նորից միանալով զորամասին՝ նետվեցին առաջ, դեպի հաղթություն:

Արսենը երդվեց իր կոմերժուական ընկերոջ հիշատակը համերժացնել: Եվ ահա այդ գիշեր արվեստագիտի կյանքի ամենանվիրական պահն էր: Մի քանի թեթև հարվածներ և գործը ավարտված էր:

Առավույան լույսը թափանցել էր սենյակը: Արսենը չէր նկատել: Հանկարծ գուող բացվեց և շեմքում կանգնեց մայրը՝ ցավատանջ գեմքով:

— Աչքերս կուրանան, ոնց տեղու փոել եմ, այնպես էլ մնացել է, չե՞ս քնել...

— Տե՛ս, մայրիկ, սրա համար արժեք հազար գիշեր չքնել, — բացականչեց Արսենը ձեռքը ալարդելով դեպի արձանը:

— Ո՞վ է, ի՞նչ մոր որդի, որ էղպես կանգնեցրել ես կենդանի, — շշնչաց մայրը:

— Դանկոյի սրտի պես մի սիրտ էր՝ վառվեց ու ճանապարհ ցուց տվեց սովորական մարտիկներիս... — Եղավ Արսենի պատասխանը ու նորից ծածկոցի տակ առավ արձանը:

Մայր ու որդի մտան մյուս սենյակը: Տղան հոգնարեկ ընկավ մահճակալին:



Ամառվա շոգ օր էր, կիրակի: Կրեմ մոտենում էր զենիթին և այրող ճառագայթները ուղղաձիգ նետում երկրի վրա:

Մայրաքաղաքի նկարչական պատկերասրահում բացվել էր Հայոթանակի տարհնդարձին նվիրված գեղարվեստական ցուցահանդեսը:

Արվեստանոր հասարակությունը խոնվել էր մուտքի մոտ, ներս էին մտնում կին, աղամարդ, ծեր, երիտասարդ ու փունջփունջ պատանիներ, ընդհանուր հետաքրքրությունն էր ամենքին մղում պատկերների և կերպած արձանների մեջ տեսնել Հայրենական Պատերազմի հերոսապատումը:

Սրահի մուսաքի գեմդիմաց հառնել էին կենինի — Ստալինի հոգակերտ արձանները: Ամեն ներս մտնող պահ մի կանգ էր առնում իր պատկառանքի և սիրո հայացքն ուղղում երկու հանճարներին:

Ասես կյանքը վարար հորդել էր ներս ու ապկել պատերին, պատկերվել արձանների մեջ: Այստեղ մեծածավալ կտավի վրա մարտիկներն են գրոհի նետվում, մի ուրիշ նկարում՝ սովորական հերոս օդաչուների մի խումբ, կրծքերը շքանշաններով զարդարված Ահա գեներալների ու ռազմիկների խորխութ կերտվածքներ: Այստեղ ուրախ մի տեսարան՝ սովորական մարտիկները նվերներ են ստանում թիկունքից:

Սրահը ծփում էր հանդիսատեսներով:

Այդուղ էր երիտասարդ քանդակագործը. իր տքնության, իր մատների ձուլածոն բերել էր հանդիսին: Ծանոթ նկարիչներ ու քանդակագործներ մոտենում, շնորհավորում էին, ասում իրենց հակիրք գնահատականը:

— Արտահայտիշ է, դինամիկ է...

Ամեն մի ներս մտնողի հետ արոփում էր քանդակագործի սիրտը, նա սպասում էր «Արվեստի դիցություն»: Շուրջը թեթև ազմըկում էին, մերթ լսվում էին հիացական բացականը ություններ, մերթ բարձրածայն կարծիքներ էին փոխանակում:

— Ինձ դուք է գալիս այս նկարը:

— Իսկ ինձ այս արձանը:

Նա անտարբեր այդ ամենին, մտածում էր, թե ի՞նչ կատարած...

Այդ օրը նա հագել էր իր տոն օրերի բաց շագանակագույն կոստյումը, խնամքով սանրվել, գունատ դեմքին աշխուժորեն փայլում էին խաժ աշքերը և մի ծածուկ ուրախության ալիք երեմն բախում էր սիրտը:

— Կդա՞ կհավանի՞ արձանը: Իսկ ինքը կհայտնի իր սրտի ամենանանվիրական գաղտնիքը նրան: Նայում էր թեփ ժամացուցին, ապա սրահի մուտքին. նա պետք է գար Արմենուհու հետ: Ինչո՞ւ էին ուշանում. միթե մոռացել էին, չէ՞ որ հայտարարություններ կային թերթերում՝ պատկերահանդեսի բացման օրվա մասին: Ոզդ քաղաքը գիտեր և վերջապես մեկ օր առաջ Արսենը գնացել էր Արմենուհու մոտ, հրավիրատումներ տվել:

Այդ մտքի հետ էր նա, երբ ուրախածայն ներս մտան մի խուժք աղջիկներու հաւախ ներս մտավ Արմենուհին՝ շարաձեխ սեթենթե-

Հով, նրա հետեւից երկու ուրիշ աղջիկ, ապա Արշալույսը հանդիսավոր ու անշտապ: Նրա մե մազերի խռավաները դեմքի շուրջը կազմել էին գեղեցիկ շրջանակ, սպիտակ կրեպդըշինե զգեստը ժիւում էր ծնկներին:

Ճերմություն և թեթևություն իշավ տղայի հոգուն, նա շշնչաց.—վերջապես...

Նորեկ աղջիկները մի պահ հիացած կանգ առան առաջնորդների արձանների տոշեն, ապա Արմենունու աշքերը սնդիկի պես շարժում սկսեցին խուզարկել սրահը, և ընկերուհիներին թողած՝ նա վեցեց գեպի աջ:

— Արսեն, սիրելի՝ և...—խոսքը բերանին, ուշագրությունը գրավեց պատվանդանին հենված արձանը:—Ի՞նչ հոյակապ է... շնորհավորում եմ,—շտապեց հայտնել Արմենուհին:

Մյուս աղջիկները նույնպես շնորհավորեցին Արսենին և խոնը-վելով մարդկանց խմբերին՝ խրվեցին ընդարձակ սրահը:

Իսկ Արշալույսը ասես վախենում էր մոտենալ արձանին, ապա դանդաղ առաջ գնաց և մի քայլաշափ հեռավորության վրա կանգնեց: Պատուհանից լուսի խուրձը ուղիղ ընկել էր արձանի վրա: Գլուխը վերծիկ, ոտներին սապոդներ, շինելը ետ տված՝ քարացել էր նա քայլելու պահին:

Անսպասելի հանդիպում, նրանք իրար ճանաշեցին, մեկը իր կեցվածքի մէջ՝ ձուզածո, մյուսը՝ աղջիկը կենսաթրթիու:

Արսենը մի քանի քայլ հեռու կանգնած սպասում էր անհամբեր, թէ ինչ տպավորություն կգործի:

Հանկարծ աղջիկը դալկացավ ու մի զուապ ճիշ թռավ շուրից:

— Նա՞ է, նա՞...

«Ուրեմն չհավանեց», անցավ Արսենի մտքով ու փշրված պրով, մոտեցավ աղջկա թևը բռնեց:

— Ի՞նչ, չե՞ք...—դողացող ձայնով հարցրեց Արսենը, խոսքը անավարտ թողնելով:

— Դուք վերադարձել եք...—ասաց աղջիկը կցկտուր, ապա կարճ դադարից հետո շշնչաց.

— Դանիելին...

— Ի՞նչպես, ո՞վ ասաց անունը, —անշահար հարցրեց Արսենը:

Արշալույսը հուզմունքից հեալով՝ դարձավ քանդակագործին:

— Դուք չեք իմացել, բայց ձեր մատներից հրաշքով դուրս է թռել իմ մտերիմը, իմ...—ձայնը դողաց, նա այլևս շշարունակեց: Քանդակագործը հանցանքի մեջ բռնված երեխայի պես կը մկնաց:

— Դանին, ձե՞ր...

Արշալույսը լուր ժպտաց ու հափշտակված հայացքը նորից դամեց արձանին:

Ողորկ, ուսնուցիկ ճակատ, գանգուր մազեր, համառորեն դարսված շուրջին, համարձակ ու յուրովի կեցվածք՝ կոմերիտական Դանին էր: Արշալույսը, սիրակարուտ, ձեռքը դրեց արձանի ուսին, ասես, ջերմություն անցավ մարմնի մեջ, բարախեցին երկու սրտերը ու երջանիկ հառաջանքի հետ դուրս թռավ նրանց կրծքից սերն անպարփակ ու ձուլվեց հավերժին:

Այնտեղ, քրափինքը ծորում էր երիտասարդ քանդակագործի չակատից. մի՞թե այդ ինքն էր կերտել, հեք ու շունչ տվել, կորովի ու գեղեցկի այն մարդուն, որ նվաճել էր աղջկա սիրտը:

Այժմ ահա, երկու ահեղ դատավորներ, մեկը՝ հերոսացած Դանինը, մյուսը՝ այն կոմերիտուհին մեծասիրտ, նայում էին երախտապարտ ու ասում.

— Արլիստագիտ, դու հասար քո նպատակին, մենք նորից դտանք միմյանց:—Աղջկա հանդեպ տածած սերը Արսենի մեջ փոխվեց ընկերոջ և հերոսին տածած մեծ սիրո զգացումով ու շշնչաց.

— Այժմ միայն հասկացա, թե ինչո՞ւ սիրում էր նա երկու արշալույսներ բոցավառվող և թե ինչպես նա իր վառվող սիրտը տվեց աշխարհին...

Արշալույսը ոչինչ չէր լսում, իր սիրեցյալ Դանինի հետ էր դրուցում, սփոփում հոգին: Սիրո վայելքի թանկ ակնթարթներ... Խոկ նկ Դանին, արևի որդին՝ արշալույսն էր դիտում ու դեպի լույս, դեպի ազատությունը մղվում:

Երիտասարդ քանդակագործն իր սեփական ձեռներով ստեղծած մարդու հզոր հայացքից պարտված՝ վլուխը խոնարհեց կրծքին ու համակվեց նորից ստեղծագործական մոլուցքով:—Տալ աշխարհին ու մարդկանց նոր ժամանակի գեղեցկություններն անգերազանց:

Հ Պ Ա Բ Տ Ս Ս Ե Բ

Նրանք առաջին անգամ հանդիպեցին կոմերիտական ակումբում, որտեղ երիտասարդական զվարիթ ծիծաղն էր միշտ զնգում:

Ո՞վ էր այն հանդուպն տղան, որ ուզում էր անսլայման աղջկաձեռքը սեղմել: Աստղանման աշխերով, բարակիրան այն աղջկա:

Հանկարծ աղջկա գիրկը նետեց նոր փթթած կեռասենու մի փոնջ սպիտակ ծաղիկներ:

Աղջիկը զլուխը բարձրացրեց, տեսավ գեմը կանգնել էր ձեռքը պարզած՝ բարձրահասակ, շլուտ մարմնով մի երիտասարդ:

— Կոմերիտական Վ...

— Կոմերիտուհի Ա...

Նրանք ծանոթացան, ապա քայլեցին կողք-կողքի, խոսեցին երկար:

Գարնան վարար ջրերի պիս անուշ զնգաց աղջկա ձայնն այդ երեկո: Նրա ծիծաղն ու շրջազգեստի շրջունը սեր էին սփոռում աղջիկը:

Տղան նրանով հմայված—քիշ էր խոսում:

Իսկ աղջիկը խոսում էր սովետական առասպելական հերոսների մասին, որոնց առջև խոնարհվում է ամեն մի վեհ հոգի: Նա թոշումի թկին էր նախանձում, մերթ երկնքի աստղերին ու կարծես ուզում էր գրեկել բոցավառ մոլորակները:

Աղջիկն իր վառ երկակայությամբ տարված, չէր նկատում աղջիկը սերը բորբոքված...

Ինչ մեղմ էր այն երեկոն, ինչ հաճելի էր առաջին հանդիպումը...

Աղջիկը՝ երկնային բյուր ցոլք առած—շողաց տղայի աշքում: Տղան անհամբեր սիրոք բացեց աղջկա դիմ.

— Գարունն է մեր շուրջը ծաղկել, մենք կոմիրիտականներ առուցք, եկ միմյանց սիրենք...

Մինչ տղան սպասում էր փոխադարձ սեր...

Ի՞նչ զարմանք, ինչպես մեգը պատեր լուզսին, այնպես աղջիկներ պաղեց և գլուխը թեքած ծաղիկների վրա՝ հեգնանքով ասաց.

— Կոմերիտական իմ ընկեր, դու ինձ շատ սովորական բան հայտնեցիր, ինչպես կարող է հայտնել ամեն մի երիտասարդ իբ հավանած աղջկան...

Տղան սաստիկ շփոթվեց, կարծես մեկը շոնդալից ապտակեց նրան:

Մի հասարակ աղջկա դեմ ինքն այդքան շնչին... Դողաց ու հաղիվ շշնչաց.

— Ի՞նչ էիր ուզում հապա...

— Քո նվիրած ծաղիկները բույր շունեն... Ես քեզ չեմ կարող սիրել...

Տղան քարացավ տեղում, գլուխը կրծքին խոնարհած:

Այդ գիշեր քուն շեկավ նրա աշքերին, շրջում էր փողոցում և մտածում, թե որքան հպարտ էր այն աղջիկը և ինչու այնպես ասաց: Վերջապես տղան որոշեց՝ վաղն ավելի փարթամ, ավելի բուրավետ ծաղիկներ նվիրել իր հավանած աղջկան:

Ուշ գիշեր էր. աղջկա սեղանի վրա բուրում էր թարմ ծաղկեց փոմազը: Սպիտակ ծաղիկները նայում էին պաղ, անթարթ աշխինեց բուլք:

Աղջիկը շշնչում էր, — թարմ եք, աննման, իմ սիրո առաջին նվերներ, բայց շունեք բույրն ու ցողը երջանկության...

Հետևյալ օրը, երեկոյան, մի փունջ բուրավետ հասմիկ գրկած տղան սպասում էր ակումբի դռան: Եկավ աղջիկը թեթևաքայլ... Դեռ հեռովից տղան զգաց նրա շրջապեստի շրջունը, ջահել սիրութը ծփաց ինչպես հողմից:

Աղջիկը նկատեց տղային ու կանգնեց մի քայլ հեռու.

— Դու արդեն այստեղ ես, Վ...

— Եկ իմ ընկերուհի, տես ծաղիկներ եմ բերել քեզ համար, այնքան բուրավետ...

Ասաց տղան սիրով վառված ու ծաղկեփոնջը սլարդեց:

Աղջիկը ծաղկեփունջը վերցրեց, հոտոտեց, ինչպես թիթեռ պարնանային, զմալլվեց:

Սերն այնպես մոտ թվաց, այնպես հեշտ, տղան աշխուժացած հպվելուզեց աղջկան, իսկ աղջիկն այն, եղնիկի պես հեռու ցատկեց ու ասաց—սպասիր... Նա թերթում էր մեկիկ-մեկիկ ծաղկի թերթերը:

— Ես սիրում եմ ծաղիկներ, որ երջանկության ցող են կրում իրենց աշխիներում, բույր ունեն իսկական սիրո... սեր, որ ազնվացնում է հոգին ու վեր ճախրում հպարտ... Ես այն եմ սիրում...

Այս անդամ տղան էլ ավելի շփոթվեց ու հույսը կտրած—գլուխը կախեց կրծքին:

Որքան մոտիկ, այնքան անհատ թվաց սերն այն հպարտ աղջկա:

— Դու ինձ չե՞ս սիրում...—շշնչաց տղան ու քայլեց երեր:

Սեղանի վրա այժմ՝ էլ թարմ հասմիկների ծաղկեփունջն էր բուրում, բայց այդ բույրը չէր գոհացնում աղջկա սիրտը:

Սիրահար տղան շրջեց աղջկա պատուհանի տակ, մի ուրիշ անդամ մանուշակներից ու կապտաթերթիկ անմոռուկներից կաղմած ծաղկեփունջ նվիրեց աղջկան: Բայց աղջիկը դարձյալ սեր չխստացավ:

Ինչպես մի հալլում բարձրագագաթ սարի ձյունը արևի շողերից, այնպես չէր հալլում աղջկա սրտի սառուցը տղայի չերմ հայլացքներից: Աղջկա սիրտն ուրիշ չերմություն էր ուզում...

Անցան օրեր, ծաղկի թերթերը թափվեցին... Աղջիկը տիսուր հառաշեց.

— Ինչո՞ւ ինձ շհասկացավ այն կոմերիտ տղան:

Վերջին անդամ նրանք հանդիպեցին կոմերիտական ակումբում: Այս անդամ տղան ձեռքին ծաղկեփունջ շուներ բոնած, այլ լրջմուած, մնաս բարով էր ասում իր ընկերներին, երբ աղջիկը մոտեցավ:

— Ո՞ւր այդպես շտապ, ինչո՞ւ չես նայում...

— Գիտե՞ս, իմ սիրելի, մենք այլևս չենք հանդիպի, Հայրենիքն է կանչում, ես բանակ եմ գնում,—ասաց տղան հպարտ:

Պայծառացավ աղջկա դեմքը:

«Մի՞թե հրաժեշտի բոպեն էր նրան այնշափ ուրախացնում», մտածեց տղան:

— Սիրտու սիրառաւս, կյանքս զահել, դու շուղեցիր... Այժմ
առանում եմ Հայրենիքիս նվեր... Մնաս բարով,—ասաց տղան ու
հաստատ քայլերով գնաց:

Աղջկա սերը թափուն զարթնեց, 22նշաց.—Եա՛ց...

Իսկ տղան արդեն չկար:

Ո՞ւր էր գնում այնպիս շտապ—ոչ ոք շիմացավ: Սրտամորով,
Շերիչե նա անցավ մարդաշատ փողոցներով: Եվ ահա կայարանում
գնացքի դեմ այն կոմերիտուհին էր կանգնել:

Հնչեց երրորդ զանգը:

Նրա անհանգիստ հայացքը փնտրում էր մեկին:

Տղան հանկարծ վագոնի լուսամուտից նրան տեսավ ու բացա-
կանչեց.

— Ո՞ւմ ևս փնտրում, հպարտ աղջիկ:

— Քեզ...—պատասխանեց աղջիկը:

Պահ մի շերմություն դդաց տղայի սիրտը, ապա նորից պաղեց:
«Մի՛թե ուզում է վերջին անդամ սրտիս հետ խաղալ»,
մտածեց տղան:

Աղջիկը կանգնած էր լուու: Հուզմունքից այսերը շիկնած:

Գնացքը շարժվեց:

— Մնաս բարով... Տղան պատուհանից գլխարկը ճոճեց:

Աղջիկը պատասխանեց.

— Կոմերիտական սիրտս քեզ հետ է, գնա իմ ընկեր ու արիա-
ցիր... Նամակ կգրես:

Գնացքը սուլեց երկարաձիգ: Ջրնգացին անիվները, կարծես
աշխարհն էր զրնգում անիվների հետ.

Գնա՛ց, գնա՛ց, գնա՛ց...

Լուսամուտից մի սիրաբորբոք հայացք էր նայում հպարտ
տղջկան, որի սիրտը մնում էր դեռ աննվաճ:

Սրբնթաց վագոնների առջևից լապտերներն էին փախչում:
Աղջիկն էլ չերևաց: Միայն զույգ աշքերը աղջկա, որպես կրակ
տանող թիթեանիկներ—ճախրեցին տղայի աշքերի դեմ երկա՛ր:
Մերթ կորան մթնում, մերթ վերադարձան լուսաթե 22նշացին՝
արիացիր...

Ի՞նչ մեղմ էր երեկոն, ինչ հուզիչ էին հրաժեշտի բոպեները...



Անցան օրեր, ամիսներ, աղջիկը լուր չառացավ իր կոմերիտական ընկերոջից: Հիշեց գարունը ծաղկած ու երեկոն լույսով ողողված, բուրավետ: Հիշեց այն տղային բարձրահասակ ու զլուածեռքը պարզած ու տիրեց: Տղան սիրեց, իսկ ինքը սեր շխոստացավ:

Միշտ հանդիպեց նա կոմերիտական ընկերներին, զվարթ ծիծաղեց նրանց հետ: Ոչ ոք շիմացավ, որ այն աղջիկը կարուտ էր քաշում թաքում:

Ահա մի գիշեր աղջիկը պառկած էր անկողնում—աշքերը փակ, իսկ երկնում լուսինն էր վառ...

Եվ հանկարծ մի գնդատեսիլ թոշուն նստեց աղջկա սեղանին ու երգեց քաղցր: Աղջկա սիրութ թնդաց, ուզեց երգը հասկանալ: Ականջ դրեց: Երգը հնչեց քնքշորեն:

Մի վես տղա հայրենիքի սիրով վառված կովում է անձնուրաց...

Աղջիկը անձկությամբ ուզեց բոնել այն թոշունին, բայց թըռչունը թերթը թափահարեց, մի նախշուն փետուր միայն մնաց աղջկա ձեռքում: Փետուրը դարձավ այրող հայացքն այն տղայի ու այրեց աղջկա սիրութ:

Առավոտն աղջիկը արթնացավ, ինչպես խելակորույս փնտրել սկսեց այն երազ-թոշունին: Բայց շգտավ ոչ թոշունին, ոչ էլ նախշում փետուրը:

Կեսօրին, երբ աշխատանքից հոգնարեկ տուն վերադարձավ, տեսավ սեղանին մի ծրար: Սիրտն ալեկոծվեց: Ծրարը բացեց շուտափուցիթ ու կարդաց ծանոթ ձեռագիրը: Մի՞թե այդ նա էր, չըր հավատում աշքերին: Նա գրել էր կարճ, բայց աղդեցիկ:

«Կոմերիտական իմ ընկերուհի, դու հապարտ մնա: Հայրենիքին ազատության համար օր ու գիշեր կովում եմ արիաբար...»:

Ինչպես կայծակից փայլատակեր, այնպես փայլատակեց դեմքը աղջկա:

— Ուրիմն չի թուլացել իմ ընկերը,—շնչաց նա և նամակը պահեց կրծքի վրա:

Ի՞նչ շնչին էր թվում այժմ ինքն իր աշքում, ինչ բարձր էր այն կոմերիտ տղան, որ նամակ էր գրել ուղմաձակատից: Աղջիկը որոշեց հասնել նրան:

Սեղանին կոմնած աստղանման աշքնրը թարթելով նամակ էր պրում ընկերոջը: Մերթ մտազբազ կանգ էր առնում, զրիշը ձեռքում աեղմած: Թուշունների երամների պիս հախուսն սիրո հուշներն էին անցնում մտքով: Նա ժպտում էր:

«Միրելի վ... գրում ես, թե միշտ արթուն ես, միշտ անսասան: Երբ ճիվաղը մագլցել է գետի վրա կախված ժայռից, կրակել ես դիպուկ, գլորել ես նենգ թշնամուն:»

Թուփի էիր կանաչ, այժմ աշքումս հասակ առար, շինարու պես բարձրացար: Այդպես միշտ անվրեալ կրակիր, աշքի լույսի պես պահպանիր մեր Հայրենիքի պատիվը:

Ես պահանջում եմ քեզանից արիություն, որու էլ նույնը պահանջիր ինձանից: Օգաչուական դպրոց եմ հաճախում: Երեկ թռա ու վատ չէր, ճիշեցի խիզախ կին օդաշուներ՝ Գրիզոդուբովային, Ռասկովային, Օսիպենկոյին—սիրոս շդողաց: Կոմերիտական հաստատ խոսք եմ ասում, ուզում եմ բարձր թոշել, հեռու թոշել, իսկ երբ հարկավոր լինի՝ օդից ոռումբեր նետել թշնամու վրա:

Միրելի վ... իմ սիրածը չես լինի, թե որ թուզանաս դիրքում: Ի՞նչ եմ անում լոկ սերդ առանց հոգու վեհության: Թե հայրենասիր ու քաջ լինես... սիրոս սիրով լի, որպես անհատակ օվկիան—քեզ համար թող ծփա...»

Տվածք ծաղկեփունջն իսկական սիրո բույր կոմենա այն ժամանակ, երբ նվեր կրերես նրա հետ քո քաջ սիրոը: Ես այն եմ սիրում...»

Կոմերիտական շերմ բարեներ՝ ԱՐԵՎ»

Մի նոր գաբուն թևակոխեց ծաղկով փթթած: Հպարտ աղջիկը շմոռացավ իր ընկերոջը:

Որպես սիրո հուշ անմոռաց կապտաթերթիկը անմոռուկները վաղոց էին շորացել գրքի ծալքերում: Իսկ աղջիկն ամեն օր թարմ ծաղիկներ էր դնում սեղանի վրա ու սպասում:

Եվ ահա մի երեկո նա նստած էր իր սենյակում, հանկարծ գուոք բախեցին: Վեր թռավ նա, բացեց դուռը, այլալլվեց:

Շեմքում կանգնել էր նա, իսկական զինվորի տեսքով, շլուտ ձեռքը պարզած։ Դնմքին մկաններ էին ձգվել հաստատակամության ու պայքարի, արևն էր այրել...

Աղջիկն աշքերին չհավատաց։ Երբ ծանոթ ձայնը հնչեց.

— Բնկեր իմ սիրելի, ևս վերադարձաւ։ — այսաց տղան, առաջ գնաց համարձակ։

Աղջիկը դեռ կարութը շառած հարցնում էր տղային, թե ինչպես էր նա իրեն պահել ուղմաճակատում...

Տղան պատմեց հանգարտ, պատմեց համեստ շնչառվ։

— Մի մութ գիշեր, մի խումբ թշնամիներ հարձակվեցին, իսկ ես մենակ... նա այլևս չշարունակեց, նայում էր աղջկա աշքերի մեջ, ուզում էր տեսնել սիրո կայծը փոխադարձ։

— Իսկ դու վախեցա՞ր. թողիր որ առաջ մղվեն, — հարցրեց աղջիկը անհամբերությամբ։

Տղան չէր լսում աղջկան, լուս գլուխը կախել էր կրծքին սիրուց ընկճված։

Ինչպես երկինքն է հանկարծ մթնում, այնպես մթնեցին աղջկա աշքերը, ինչպես տոթից ծաղկի թերթերն են դալկում, այնպես դալկացան աղջկա այտերը։ Նա շշնչաց։ — Չեմ սիրում քեզ դեմքը շրջեց։

Տղան սթափովեց. մի՞թե աղջիկը նորից ուզեց նրա սրտի հետ խաղալ... ինչպես մոլեգնած մի առյուծ վեր թռավ նա՝ տեղից, աղջկա ուսերը ցնցելով բացականչեց.

— Են այն շեմ այլևս, որ դողամ քո սիրո առջև։ Չեմ դողամ շել մարտերում... Տե՛ս, կուրծքս հմ դեմ տվել որպես պատվար... — Տղան ցույց տվեց խոցված կուրծքը։

— Բերել հմ քաջ սիրուս նվեր, իսկ դու ինձ դարձյալ հրո՛ւմ ես...

Հպարտ աղջկա սրտի սառուցը հալվեց մեկից, աստղանման աշքերը երշանկության ցողով լցված ժայռացին։ Պարտված, անուշ ընկալ նա իր սիրածի թևերին։

Դուրս գարուն էր, ծաղկած ծառեր։ Կողք-կողքի տրոփում էին երկու ջահել սրտեր, մեկը տղան արիասիրտ, մյուսն աղջիկն այն հնարյուն։

ինչ մեղմ էր այդ երեկոն, ինչ հաճելի էր հանդիսումը սիրող
սրտերի:

— Դու կովել ես որպես անձնվեր զինվոր, քո քաջ սիրուն ես
բերել նվեր, հենց այդ եմ սիրում...—շշնչաց աղջիկը:

Երկու շուրթեր կյանքի վառ սիրով հպվեցին: Այդ գիշեր՝ նրանց
ականջի տակ երջանկության երգն անմոռաց աղբյուրի նման կար-
կաշեց, թե ինչպես այն տղան կոմերիտական արիությամբ նվաճեց
հպարտ սերը աղջկա:

Իսկ սեղանի վրա բուրում էր թարմ ծաղկեփունջը...

ԱՅՐՈՌՈԽՎԵՐ

Հաղթանակից հետո իմ հանդիպումը մտերիմ ընկերոջս հետ պացքում զերմ ու սրտասուշ էր: Երկուսս էլ զինվորական. նա եկել էր արձակուրդ, ևս՝ գործուղում, և այժմ նորից վերադառնում էինք մեր զորամասները: Երկուսս էլ եղել էինք շատ ուղմանակատաներում, շատ փորձությունների միջով էինք անցել և անսպառ նյութ ունեինք իրար պատմելու, բայց այդ մասին քիչ էինք խոսում, այժմ մեզ զբաղեցնում էին խաղաղ կյանքը, թիկունքում թողած ընկերներն ու բարեկամները:

Ընկերս առնականացել, ամրակուռ տղամարդ էր դարձել: Նրա քրոնզագույն գեմքի վրա շողացող սև, խոհուն աշքերը և շքանշաններով զարդարված կուրծքը պատկառանք էին ներշնչում: Ի՞նչ սխրաթյուններ էր կատարել, նա այդ մասին ոչինչ չէր ասում. ինձ մնում էր միայն կռահել նրա որոշ ակնարկներից: Մկրում ես տվելի շատ էի խոսում քան թե ընկերս: Նա մտազրադ ու լուս ծխում էր, միայն երբեմն իմ կատակների վրա սրտանց ծիծաղում էր ու նորից խորասուզում մտքերի մեջ: Մեկ էլ տեսնեմ ընկերս պլուխը գուրս է հանել վագոնի պատուհանից ու դիտում է ճանապարհը: Գնացքն արագ անցնում էր ոռւսական տափաստաններով: Ընկերս հայացքը տափաստաններին հառած՝ հայկական ծանոթ մի երգ էր մասնացնում քթի տակ, իսկ ես պառկած ծխում էի:

— Իիրիկական տրամադրություն ունես, բարեկամս,—կատակեցի ես երկարատեկ լոռությունից ձանձրացած:

Նա շրջվեց գեպի ներս և աշխուժ ասաց.

— Մահաւ և կենաց կոփմներից հետո հաղթող զինվորի մեջ բուռն կերպով արթնանում է կյանքի կարուց, ուզում ես ապրել,

աշխատել, երազելու սիրել։ Արթնանում է այն ամենը, ինչ մարդկային է:

Արյունու կոփվներում, փոթորիկների մեջ մի առ ժամ մոռացել էինք և բնություն, և կյանք, և սեր...

— Ի՞ , բարեկամս, դու այսօր հաճախ ես հիշում սիրո մասին, չինի՞ թի...—նկատեցի ես ծիծաղելով։

Այդ խոսքերից ընկերոջս աշքերը փայլատակեցին. նա ասպետական կեցվածք ընդունելով նայեց ինձ ու ասաց.

— Իսկական սերը իմաստավորում, վեհացնում, գեղեցկացնում է մարդու կյանքը։—Ապա մի փոքր դպրարից հետո իմ գլանակից վառեց իր գլանակը, ասես առիթ էր փնտրում հորդելու և շրվնժի պես հորդեց։

Չդիտեմ բանաստեղծ, թե՝ միայնան անվանեմ նրանու նապատմում էր սրտի կրակով։

— Եթե սիրում ես, կամ սիրել ես շատ ուժեղ, կհատկանաս ինձ,—այսպես սկսեց նա։

— Սիրածդ աղջկան նմանեցնում ես բնության ամենապեղեցիկ տեսարաններին՝ մերթ քնքուշ մի ծաղկի, մերթ ծովի փրփուրի, մերթ լազուր երկնքի, շողին, շաղին, արշալույսի վառ գույներին։ Եվ վերջապես ո՞վ պետք է վայելի կնոջ աղնիվ սերը, եթե ոչ մենք։

Ես կռահեցի, որ ընկերս ուժեղ սիրահարված է և ընդհատեցի նրան։

— Իրավացի ես, նրանք, ովքեր կովել են արդար գործի համար, ովքեր կովել են լույս կյանքի և ազատության համար ու հաղթել պետք է վայելեն կնոջ սերը և ամեն մի գեղեցկություն։

— Իմ ընկերն ես, իմ մտերիմը, չեմ ուզում քեզանից թաքցընել, — շարունակեց նա իր թափ, հաճելի ձայնով։ Ապա կոշտ ռազմիկի մատներով ծոցագրապանից հանեց մետաքսե մի նույր թաշկինակ, ծալերը ետ տարավ խնամքով և ծածանեց աշքերիս գեձ։

— Տեսնո՞ւմ ես այս փոքրիկ թաշկինակը, ինձ հետ է եղել ամեն տեղ, և օրհասական կովի մեջ, և հաղթության պահին կրել եմ սրտիս վրա...։

Հալացքս գամվեց թաշկինակին և նկատեցի նրա մի ծայրում մետքսե-կասլույտ թելերով ասեղնագործած անմոռուկներ։

— Այն ապօբեկը նվիրեց և ասաց՝ մի՛ մոռանա...—շարունակեց ընկերու:

— Ես և նա Համազարանի դրական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանողներ էինք: Ընկեր-ընկերութիւններ ինչքան ասես, բայց ամենից շատ ինձ գուր էր գալիս դալում գեմքով, կապուտացա մի աղջիկ, որ ավելի շատ ուսւ աղջկա էր նման, քան թե հայութու: Շատ անգամ շեմ կարող ասել, թե ինչո՞ւ մեկը քեզ սասափի գուր է գալիս: Նա ուներ հեզ, զսպված և քննիքություն: Գուցե հենց դրա համար: Ճշմարիտն ասած՝ համակրանքը սիրո առաջին աստիճանն է. բավական է մի փոքր կայծ և այդ համակրանքը փախվում է սիրո հրդեհի: Հաճախակի հանդիպումները, միասին պարապելը բորբոքում էին իմ սրտի հրդեհը: Ես անհամեներ ու կրակու երիտասարդ, մի քանի անգամ ակնարկեցի իմ սիրո մասին, բայց աղջիկն այդ ակնարկներն ընդունում էր սառն ու անտարբեր և անմիջապես խոսակցությունը դարձնում ուրիշ կողմ: Ես սաստիկ զայրանում էի և մտածում, «Եթե սա ինձ շիսիրում, արհամարհում է, ապա ինչո՞ւ եմ նվաստանում, մի՞թե թիշ են աղջիկները...»: Մյուս կողմից էլ զգում էի նրա հոգատար վերաբերմունքը գեպի իմ կյանքն ու առաջադիմությունը: Ահա պատրաստվում էի լուրջ կերպով առաջարկություն անել, վերջնականապես համոզվելու սիրում է ինձ, թե ոչ, երբ մը հասավ պատերազմը:

Ամենքս բանվեցինք Հայրենիքի պաշտպանության կրակով, ամեն տեսակ անձնական զգացումներ տեղի տվին Հայրենիքի զինվորի բարձր կոշմանը: Ես նույնպես շատ շատերի հետ պետք է ուազմաճակատ մեկնեի: Թվում էր թե մոռացաւ բայց, ոչ: Եվ ահա կայարան մեկնելուց առաջ գնացի նրա մոտ վերջին հրաժեշտը տալու: Նա տանը մենակ էր: Սպիտակ մետաքսե շորը, ասես հարսանեկան շորը, խիստ քննիքացրել ու երազային տեսք էր տվել նրան:

Երբ ինձ տեսավ, մի փոքր այլայլվեց, և մեղմ ժամկիտ սահեց նրա գեմքով:

— Աստղի՛կ, գնում եմ, եկել եմ հրաժեշտի...—բացականչեցի հուզմունք զսպված:

— Գնում ես, հա՞՛, Ազու, — պատասխանեց նա,

առնելու առաջ հանդուրաց և առ լուսավառ առաջ առնելու առողջությունը:

— Այս, զնում եմ: մնաս բարով. զնում եմ կովելու Հայրենիքի համար, ամենքի և քեզ համար...—զգացի որ ձայնադողաց:

— Հայրենիքի համար կովելը մհծ պատիվ է, երանի քեզ,—ասաց Աստղիկը շեշտակի նայելով աշքերիս մեջ:

Ի՞նչ հրամայական; ի՞նչ համարձակ էր նրա հայացքը:

— Մենք լավ ընկերներ ենք եղել և ես տռանձին համակրանք եմ տածել գեղի քեզ...—մի փոքր լուսթյումից հետո ավելացրի գրեթե ազերսական ձայնով.—ինձ ասելիք շունե՞ս...

Ինչպես վազորդյան ցողն է շողում ծաղիկների մեջ, այնպես էլ ժպիտը շողաց նրա աշքերում: Իմ հարցին նա ուղղակի պատասխան շտվեց, այլ ասաց.

— Էա՛վ կովիր, անձիք մի խնայիր, և երբ հազթանակով վերադառնաս...—նա խոսքը կիսատ՝ ձեռքը տարավ գեղի իր սեղանի գզրոցը և այնտեղից հանեց մի սպիտակ ծրար: Ինձ թվաց թե գատավճիս է հայտնելու.—այն ժամանակ այս ծրարը կբացենք և դու կկարդաս իմ ասելիքը:

— Իսկ եթե շվերադառնամ, չէ՞ որ կովելու եմ զնում, ոչ զբուսանքի...—գժկամ շեշտով նկատեցի:

— Դու անպայման կվերադառնա՞ս, —պատասխանեց նա այնպես համոզված, որ այլևս շկարողացա առարկել:

Կյանքումս ոչինչ ինձ այնպես անհաս ու խորհրդավոր չէր թվացել, ինչպես այդ պահին սիրածս աղջիկն ու այն մագնիսացնող ծրարը, որին սկսեցի տիրանալ տենչալ: Նույնիսկ մի հանցավոր միտք անցավ գլխովս՝ ծրարը հափշտակել: Մինչդեռ աղջիկը սպիտակ ծրարը նորից դրեց գզրոցը և փակեց:

Այս, այդ սպիտակ ծրարը սպիտակ թռչնի պես թե տռավ, թռավ իմ աշքից:

Ինձ այլևս ոչինչ չէր մնում անել. ձեռքս մեկնեցի հրաժեշտ տալու, բայց աղջիկը ձեռքը շմեկնեց.

— Սպասի՛ր, —ասաց նա, —գեղ վաղ է, ես էլ եմ գալիս կաշաբան:

Ամուսն զովաշոմալ երեկո էր, կայարանը լեփ-լեցում էր բազմությամբ. խոնկել էին բանակ մեկնողները և ճանապարհ կցողները:

Մեր կուրսի շատ ուսանողուհիներ եկել էին ինձ և մյուս ընկերներին ճանապարհ զնելու:

Հենց որ ինձ տեսան՝ աղաղակ բարձրացրին:

— Աշո՞ւ, որտե՞ղ ես, մենք քեզ ենք փնտրում: Ա՞չ, Աստղիկըն է մեղավոր, — կատակեցին նրանք և շրջապատեցին ինձ:

Ժամանակը կարճ էր, ասելիքը շատ, իրար հերթ շեխնք տալիս:

Այդ ամենի մեջ ինչպես բենուային աստղ շողում էր Աստղիկի հայացքը: Նա լուսի կանգնած թարթում էր կապույտ աշքերը: Ակամա աշքերս նրա կողմն էին դարձած:

Սպիտակ մետաքսե զգեստով նա սպիտակաթերթ ծաղկի էր նման, իսկ աշքերի ծովը հանդարտ ծփում էր այդ սպիտակ ափերին:

Սիրտս ալեկոծեց մի ուժգին ալիք... Մի՞թե, ասելիք չոնի, պաղ է ու անտարբեր, — մտածեցի ես և քիչ էր մնում աղաղակեի — ասա, սիրո՞ւմ ես, թե ոչ...

Մի՞թե իմ հարցական հայացքը նրան ոշինչ չէր ասում. նա համառ կերպով լուս էր:

Զանգը հնչեց: Ալեկոծ հայացքների և աղմուկի մեջ դարձյալ նրան էի փնտրում: Գրկախառնվում էին, համբուրվում, ոմանք լավիս, ընկերուհիներս փաթաթվեցին ինձ. «Սիրելի Աշոտ, բարի ճանապարհ»:

Իսկ նա, որին ուզում էի սեղմել կրծքիս, այնքան հեռու էր և անհաս...

«Ժա՛յր աղջիկ, անգովթ աղջիկ», — ասացի ես մտքիս մեջ:

Ամենից վերջը նա մոտեցավ, փոքրիկ, սպիտակ ձեռքը մեկնեց: Վանդակ ընկած թռչնի պես ձեռքը դողում էր ափիս մեջ:

Գնացքը շարժվելու րոպեին նորից հարցրի.

— Ինձ ասելիք չունե՞մ...

Հանկարծ մի բան հիշեց նա. ձեռքը պոկեց իմ ափից ու արագ պայտաակից հանեց ահա այս մետաքսե թաշկինակը և շնչաց.

— Ինձանից քեզ հիշատակ, մի՛ մոռանա...

Ես ոչ թե վերցրի, այլ ուղղակի հափշտակեցի նրա ձեռքից ասես նրա սրտի մի մասնիկն էր, որ բաժին ընկավ ինձ:

Գնացքը շարժվեց: Որքա՞ն գթուա զերմ հայացքներ բարի ճանապարհ էին ժագթում մեզ: Ընկերուհիներս ճշում, օգային համ

բույրներ էին ուղարկում, իսկ Աստղիկը հեռագրասյումին հենված՝ փոքրիկ ձեռքն էր թափահարում:

Ես վագոնի պատուհանից կիսով շափ կախված՝ նրանց էի նայում և շնչում.

— Մնաք բարո՞վ, ընկերներ, մնաս բարո՞վ, իմ սեր...

Գնացքը սլացավ: Կայարանը, ամենքը մնացին հեռու-հեռու... ևվ Աստղիկը ծովի փրկուրի պես հանկարծ շքացավ: Միայն ժըպ-տածոր կապույտ աշբերը սլանում էին գնացքի հետ:

Արեմն նա ոչինչ շասաց,—ժտածեցի ես, ապա թաշկինակը գրպանից հանելով՝ խուզարկու աշքով մի լավ տնտղեցի, ասեն նրա մատների հպումն զգացի և երկա՞ր, երկա՞ր նայեցի անմո-ռուկներին, որոնք ասես նրա աշքերի կապույտը լինեին դրոշմված թաշկինակի ծայրին:

Թաշկինակը նորից խնամքով ծալեցի և պահեցի: Երբ այդ քաղցր ու տանջող ակնթարթներն անցան, ես զգաստացա, մար-տընչող զինվորի կամքը հառնեց իմ մեջ...

Ընկերս մի փոքր դադար առավ, վառեց գլանակը և առա-շարկեց ինձ նույնպես ծխել:

Ճակատին կնճիռներ դիզվեցին. շարունակեց ծուխը գուրծ թողնել բերանից, ասես ներսը հրաբուխ էր ժայթքել:

— Անցավ մի երկու ամիս և ես ուղմանակատումն էի: Պա-տերա՞զմ: Ինքդ էլ պատերազմի բոցերից անցած ուղմիկ ես, գի-տես ի՞նչ բան է ուղմանակատը. կովելու մոլուցքն ու ցասումը այնքան է ուժգին, որ մի առ ժամ մոռանում ես ամեն բան: Զի հանգչում միայն սեր կոշշվածը:

Երբ մի փոքր դադար էինք առնում՝ մոռացումի մշուշից դուրս էր ելնում պարզ ու պայծառ սիրուս պատկերը և կանչում էր ինձ դեպի կյանք, դեպի երջանկություն: Գուցե ծիծաղելի թվա այժմ քեզ, բայց այս թաշկինակը փարատում էր ինձ մորմոքով կարոտի կրակը: Նամակներ էի գրում, ուր սիրտս բացվում էր հրետանու ուժգնությամբ: Այն, ինչ որ չէի ասել մոտը եղած ժամանակ, այժմ ասում էի լիուվի և վերջում ավելացնում՝ կյանքս շեմ խնայում շայրենիքիս և քեզ համար... գուցե զոհվեմ: Այդ վերջին բառը շեշտում էի նրա գութը շարժելու և իմ ուղած պատասխանն ստա-նալու համար:

Նա կանոնավոր պատասխանում էր իմ նամակներին, տողերի մեջ զգում էի շերմովթյուն, հոգատարություն, նույնիսկ զնացել էր մոտիկ գյուղը հիվանդ մորաքրոջ տեսության և գրում էր, որ այժմ լավ է, այդ ինձ շատ հոգեց: Ինձ ոգևորում, սխրովթյունների էր մղում, բայց դարձյալ չէի գոհանում, չկար իմ ուղած մի բառը. «Միրում եմ»:

— Այ, դու փաքրիկ սատանա (նա մարմնով փոքրիկ էր): Այդ էր իմ ամենակոպիտ խոսքը նրա հասցեին:

Զինվորի ըմբոստացած և տիրակալ Հոգին նվաճել էր ուղում այդ աղջկա սիրաց, որ ամենաամուր ամրոցից էլ ամուր էր թվում:

Եվ ահա իմ ողջ ուժն ու խանդը տվել էի մարտերի ընթացքին: Պատերազմը դարձավ իմ հոգու տարերքը: Ուղում էի կովել, հաղթել, հասնել...

Վիրավորվել եմ մի քանի անգամ. տեսնում ես գեմքիս և ձեռքերիս սպիները, բայց այդ վիրքերը մահացու չեին, ապաքինվում էի և նորից կովի նետվում:

Մի քանի անգամ արժանացա կառավարական բարձր պարգևի, բայց այդ մասին ոչինչ չգրեցի Աստղիկին. դա էլ իմ գաղտնիքն էր. վերջապես ի՞նչ պարծենալու բան է. չէ՝ որ բոլորս ենք կովել, ահա տեսնում եմ քո կուրծքն էլ զարդարված:

Մի ամպ էր շոքել սրտիս վրա, մի կրծող կասկած, գուցե նա ինձ շի սիրում և ինձ շվշացնելու համար թաքցնում է ինձանից: Ես, որ մահից չեի սարսում, այդ կասկածից սարսում էի: Այնժամ վիրավոր առցուծի նման մոնշում էր հոգիս: Եվ միայն ահեղ մարտերի մեջ էի գտնում իմ հանգստովթյունը:

Բարի նախանձ ունեի դեպի իմ ընկեր Սարգիսը, որը սիրառոշոր նամակներ էր ստանում իր սիրած աղջկանից՝ Մանեից: Նա գրում էր՝ անգինս, անզուգականս, կյանք չունեմ առանց քեզ: Ինկ Սարգիսն ի՞նչ հետախուզ էր, ուղղակի մազե կամուրջներով և անցնում և տեղեկություններ բերում, կրծքի վրա տեղ չէր մնացել՝ այնքան շքանշաններ էր ստացել: Հազար այդպիսի Մանեներ որ նրան սիրեին՝ էլի քիչ էր: Սարգիսը Մանեի նամակները կարդում էր ամենքիս մոտ և ոգևորված գովում Մանեի աշքերը, մազերը, ուրախ բնավորովթյունը: Սարգսի հարսնացուին օմենքս գիտեինք, երբ նամակն ուշանում էր՝ ամենքս անհանգըստանում էինք:

«Ա՞սի, ինչ կլիներ Աստղիկն էլ Մանեի նման լիներ», մտածում էի և որոշում մի խայթող նամակ գրելու վերջ ամեն ինչին, բայց ձեռքս չէր գնում:

Կովում անակնկալներ շատ են լինում: Այնպես պատահեց, որ ես և Սարգիսը միաժամանակ վիրավորվեցինք, պառկեցինք հիմանդանոցում: Սարգիսն իր Մանեի լուսանկարով էր միմիթարվում, ես էլ՝ Աստղիկի թաշկինակով:

Եվ պատահեց անսպասելին, երբ ամենքս Սարգսին ամենաերջանիկն էինք համարում սիրո ասպարեզում, դուրս եկավ ամենաադքախոր: Մի օր նա իր քրոշից նամակ ստացավ, թե քո սիրելի Մանեից հույսդ կտրիր, մի քանի ամիս նամակ շտանալով՝ քեզ սպանված համարեց. երբ ասում էինք՝ աղջի, սպասի, ձեռքը թափահարում էր. «Է՛լ նրանից հույս չկա, ես էլ ջաճել եմ, ոեր եմ ուղում անել»: Եվ այժմ ամուսնացել է սովորողի պահեստապետի հետ:

Այնքան ահեղ մարտերով էինք անցել, բայց ես մի անգամ Սարգսին մոայլ ու գունատ չեի տեսել, իսկ այդ նամակն ստանալուց հետո Սարգիսը միանդամից փոխվեց, մոռայվեց.

— Դե արի ու հավատա աղջիկներին, ալիսկես կարճ էր քո սերը, Մանե՛... ի՞նչպես էիր ջաճելիս գլուխը պտտեցնում, թե տունց ինձ շես կարող, և ահա ուրիշին գտար, — հառաջում էր Սարգիսը զայրույթից, աշքերը կայծկլտում էին: — Ասում էի աշխարհում սրա պես սիրող չկա, դե արի ու հավատա, — կրկնում էր նա: — Է՛յ, հետախույզ Սարգիս, ամեն մի դարան հետախույզեցիր, բայց քո սիրածի սիրտը չկարողացար հետախույզել, — այդպես նախատում էր ինքն իրեն:

Մենք բոլորո Սարգսի հետ վշտացանք, բայց սիրո էինք տուիս, «ի՞նչ ես մտածում, թող գրողի ծոցը գնան՝ Մանեն էլ, նրա ամուսինն էլ ուրիշ լավ Մանեներ մեր աշխարհում շա՞տ... քեզ պես հերոսին ո՞վ չի սիրիս: Օրինակ էինք բերում մի ուրիշ մարտիկի՝ վասիլենկոյին, որը մարտում ծանր վիրավորվեց, ոտքը կտրեցին, բայց նրա սիրածը՝ Կատյուշան նրան լքեց, այլ ասաց.

— Հայրենիքի համար քո ոտքը կորցրիր, ես քեզ կսիրեմ, կգուրգուրեմ մինչև գերեզման:

Սարգիսը կռվում չվարանեց, ընդհակառակը, նա իր զայրույզ

թթն ու ոխը թշնամուց էր հանում: Հետո մենք բաժանվեցինք, ու ես շիմացա ի՞նչ եղավ Սարգիսը: Նրա դժբախտ սիրո պատմությունը նոր կասկածներ ծնեցրեց իմ մեջ Աստղիկի նկատմամբ: Մանեն աշխարհով մեկ երգվում էր, թե ինքը սիրում է Սարգիսին և հանկարծ մոռացավ: Հապա ի՞նչպես հավատալ Աստղիկին, որ այդ իսոսքն էլ դեռ չի շնչացել: Է՞հ, գրովը տանի, ի՞նչու եմ մի աղջկա շրջազգեստից կախվել,—նախատում էի ինքս ինձ ու կովիթունդ տեղերը նետվում: Նախախնամությունն էր, թե իմ՝ մահից շվախենալը, որ կենդանի մնացի: Երկար ժամանակ չէի գրել Աստղիկին և չէի գրում՝ վախենալով, որ վատ բան կլսեմ:

Բայց կապույտ անմոռուկներով թաշկինակը սրտիս վրա շնչում էր. «Մի՛ մոռանա»...

Սյստեղ ընկերս ընդհատեց, գլանակը վառեց, ես նույնակեալ վառեցի: Լուռ էի, ոչ մի հարցով չէի ուզում կտրել նրա մտքի թելը: Նա այդ քանը կուահեց իմ հայացքից և շարունակեց. — Մեր պայքարն ու մեր արյունն իզուր շանցան. պատերազմը վերջացավ մեր հաղթանակով:

Մի մսգական ուժով բացվեցին բոլորիս սրտի դռները, ցնծությամբ արբեցած այժմ ուզում ենք աշխարհը գրկել—ապրել ու ալրել...

Եվ ահա հույզերիս փրփրադեղ ծովից դուրս ելավ իմ Աֆրոդիտեն; Իմ դիցուհին: Ուզում եմ աղաղակել.—Ասա, սիրո՞ւմ ես... Բայց ծրարը փակում է աշքերս,—պետք է բացել այն, այնտեղ է պատասխանը:

Խնդրեցի հրամանատարությունից և նրանք ինձ թույլ տվին մի քանի օրով հայրենիք վերադառնալ:

Գնացքն ինձ հասցրեց հայրենիք քաղաքը: Երազ էր թվում, չեղ հավատում աշքերիս:

Ամուան երեկո էր, փշում էր հայրենիք քաղաքի մշտարթուն զովը: Հայրենակիցներիս աշքերում կարդում էի հաղթանակի խինդք, գորովանքով ու սիրով էին նայում զինվորականիս:

Հարազատներս ընդունեցին ինձ բերկրանքով: Խիստ անհամբերն էի: Շտապ ինձ կարգի բերեցի և զնացի նրանց տուննենտրոնական փողոցից թեքվեցի մի նրբանցք, մոտեցա աղյուսաշեն տանը: Օրորվում էին նրանց տան առջեկի ծառերի կտտար-

ները. ինչքա՞ն ենք զբունել այդ ծառերի տակ եմ և նա: Ամենածանր մարտերից առաջ սիրու այնպես շէր բարախնել, ինչպես այժմ: Ի՞նչ էր պատում հոգնատանց զինվորիս, արդյոք զերմ ընդունելությո՞ւն, թե...

Դուռը բախում եմ: Բացվում է. շեմքում կանգնում է մայրը: Մի անգամ էի տեսել և դիմագծերը լավ էին տպվել հիշողության մեջ: Աղջկա պատկերն էր. միայն թե սա թորշոմած էր: Նա ինձ շնանաշեց:

— Բարե՛, մայրի՛կ,—ասացի ես:

Նա բարեց և ուզում էր հիշել...

— Որտե՞ղ է Աստղիկը,—հարցրի ես անհամբեր:

— Աստղի՛կը... իսկ դուք ո՞վ եք, ամոթ Ախնի հարցնելը:

— Ես, մայրիկ, նրա ընկերն եմ, Աստղիկի հետ սովորում էինք մի ֆակովտետում. երբ պատերազմն սկսվեց, ես գնացի ուղղմանակատ:

— Ներս համեցե՞ք, որդի՛ ջան, ֆրոնտից ես հա՞՝, ձեր արեկին մեռնեմ,—այնպիսի՝ գորովանք ու սեր կար նրա ձայնի ու հայացքի մեջ:

Ես համարձակ ներս մտա, նստեցի Աստղիկի սեղանի առջև: Մայրը մի գլուխ պատերազմից էր հարցնում, իսկ Աստղիկի մասին ոչինչ չէր ասում:

Հազար ու մի կասկածներից քիչ էր մնում սիրոս պայթի:

— Աստղիկն ավարտե՞ց,—հարցնում եմ համբերությունից դուրս գալով:

— Հա, ավարտեց, ի՞նչ տանջանքով, համ սովորում, համ տում էր պահում,—ասաց մայրը և հակառակ իմ ցանկության Աստղիկին թողած սկսեց որդիշ բան:—Քրոջս որդին պատերազմն սկսվելու օրից գնացել է ու ոչ մի տեղեկություն չունենք, ինո՞ւ քույրս էդ մինումարի հույսին էր,—ասաց նա հառաշելով:

— Մայրի՛կ ջան, այդպես շատ է պատահել, և հանկարծ մի օր նամակ, կամ տեղեկություն են ստացել, հույսներդ մի՛ կը տրեք, —պատասխանեցի ես, բայց ուշադրությունս ուրիշ կողմն էր:—Այժմ որտե՞ղ է Աստղիկը,—հարցրի ես անհանգստանալով:

— Խեղճ աղջիկս դադար չունի, ցերեկը դասերին է, իրիկուն ներն էլ քույր է զինվորական հիվանդանոցում...

Մի փոքր աղաւա շունչ քաշեցի, ուրեմն կդա, կտեսնեմ,—
մտածում էի ես սեղանին կոթնած:

— Եսօր նա պետք է շուտ գար, ասում էր պլուխս ցավում է, —
շարունակեց մայրը:

Այդ «շուտը» ե՞րբ է լինելու, ամեն մի վայրկյանը տարի էր
մվում: Դուան մոտ ուսնաձայն լսվեց: Ես անհանդիստ շրջվեցի,
իսկ Աստղիկի մայրը գնաց գեպի դուռը՝ քթի տակ շշնչալով.

— Նա՛ պետք է լինի:

«Դուռը բացվեց և շեմքում ձգվեց մտքիս մեջ տարիներով
փայփայած աղջկա փոքրիկ հասակը: Շուրջս ասես գարուն
բացվեց, արև ծագեց: Նա տեղում քարացավ, իսկ ես վեր թռա տե-
ղիցս և չեմ հիշում, թե ինչպիս մոտեցա և սեղմեցի նրա փոքրիկ
ձեռքը...»

— Աշո՞ւ: Չեմ հավատում աշքերիս, չեմ հավատում, — բա-
յականչեց նա:

— Աստղիկ, — այդ մեկ բառը միայն կարողացա արտասանել:
Մի քանի վայրկյան երկուսս էլ լուս էինք:

— Ա՛յս, երանի մի օր էլ իմ քրոջ որդին էսպես դար, — ասաց
մայրը ու դնաց մյուս սենյակը:

Նայում եմ անհագ աշքերով. կա՛ ացդյոք փոփոխություն. ավե-
լի է հասունացել, ավելի խոճուն է զարձել հայացքը:

Նա հագել էր իր աշքերի ֆոնի բաց-երկնագույն շոր: Կա-
պույտ էր ինչպիս երկնքի մի կտոր: Նայում էր կրծքիս շքանշան-
ներին և ակնածանքով ժպտում:

— Տեսա՞ր, որ իմ խոսքը եղավ, դու կովեցիր և ողջ-առողջ
վերադարձար, — աշխաւ ասաց նա:

Ես ինձ շոյված և հպարտ զգացի:

— Ինչո՞ւ նամակներդ դադարեցրիր, — հանկարծ հիշեց և
հանդիմանեց Աստղիկը:

— Ինձնից անկախ պատճառներով: Եվ բացի այդ, մի՞թե
քեզ համար միենառուն չէ, — պատասխանեցի ես դժկամ և նեղացած:

— Մի՛ պահանջիր ինձանից այն, որ շեմ կարող ասաց
Աստղիկը տիրամած:

Ես զգացի, որ կորցնում եմ հավասարակշռությունս. այս
ամենից հետո նորից մերժում... մտածում էի, երբ նա ավելացրեց
շշուկով.

— Ես ընդունակ չեմ աղաղակել, երգվել... մի՞թե քո վատն
և ցանկացել, ասա՛:

Նրա բարի ու մանկական նայվածքը ինձ դուրս բերեց շաբ
հասկածներից և հանկարծ հիշեցի.

— Բե՛ր այն ծրաբը, որ դու խոստացար իմ վերադարձից
հետո բացել:

— Ինչպե՞ս չես մոռացել: Երավացի ես, պայմանը պայման
է, — ասաց նա ու իր սպիտակ մատներով բացեց սեղանի փակ
գզրոցը և այնտեղից հանեց խորհրդավոր ծրաբը:

Երկար ժամանակ նա ծրաբը կրծքին սեղմած՝ չեր ուզում
տալ: Իսկ ինձ տանջում էր նորից շար կասկածը, մինի՞ մի վատ
րան կա այստեղ:

Ոչ մի բարձունք գրավել այդքան դժվար չեր եղել, ինչպես
այդ ծրաբի գրավումը: Զեր հավատում, որ այժմ ծրաբն իմ ձեռ-
ուրումն է, ձեռքերս դողում էին. արդյոք ի՞նչ եմ կարդալու: Իսկ
Աստղիկը հանցավոր մանկան պես դլուխը թեքել էր կրծքին ու
շշնջում էր.

— Գու կիմանաս իմ ամենանվիրական գաղտնիքը:

Գրանով նա ավելի էր վասում իմ հետաքրքրությունը: Բացե-
ցի և ի՞նչ, իմ սեփական լուսանկարը, որ նվիրել էի նրան ուզ-
մանակատ մեկնելուց առաջ:

Նայում եմ մերթ լուսանկարին, մերթ Աստղիկին և ոչինչ չեմ
հասկանում, իսկ Աստղիկն առանց աշքերը բարձրացնելու ինձ
թելադրում է, շրջի՛ր...

Շրջում եմ և լուսանկարի հետել կարդում մի բառ. «Սիրում
իմ»: Վաղուց տեսնչացած սիրուս կախարդական բանալին գտնում
իմ այդ ծրաբի մեջ: «Սիրում իմ» բառի տակ նկարված էին նորից
մի փունջ անմոռուկներ:

— Եվ դու այսքան ժամանակ թաքցնում էիր՝ ինձ տանջելու
համար, — ասացի ես խնդալից ու հաղթողի շեշտով:

— Գաղտնիքս իմացար, ես պարտված եմ, — շշնջաց նա:

— Մի՞թե սերը պարտություն է, — պատասխանեցի զարմա-
ցած:

— Յուրաքանչեակ պարտություն է, երբ աղջկա սիրուը բացվում
է իր սիրածի առաջը

ինչ տարօրինակ էր, սիրուց խինթացած էր այդպես խոսում, — մտածում էի ևս տիրաբար նայելով նրան:

— Իսկ դու պահե՞լ ես իմ նվեր-թաշկինակը, — հանկարծ մտաբերեց նա:

Ես հանդիսավոր ձևով գրանիցս հանեցի թաշկինակը և ցուց տվի ասելով.

— Պահել եմ նույն անաղարտությամբ...

— Այդ անմոռուկները մի՞թե քեզ ոչինչ շասացին, — կշտամքում էր նա խելացի կապույտ աշքերը սևեռած ինձ վրա:

Նա ինձ նեղն էր գցել, փաստն ավելի հզոր էր քան խոսքը... Ես հիշեցի ընկերոջ՝ Սարգսին ու նրա Մանեին, որ երդվում էր աղաղակում իր սիրո մասին... և հանկարծ գուրս եկավ փուշ սեր:

Ես նրան պատմեցի Սարգսի սիրո պատմությունը:

Աստղիկը թախծեց ասելով.

— Ափսոս հերոսին, անեծք թեթևամիտ ու անսիրտ աղջկան...

Այդ գիշեր մենք զույգ թռչնի պես զլուխ գլխի տված լուսացրինք: Անհաս երազը դարձել էր իրական, նա այժմ ինձ հետէր...

Գիշերն աստղավառ երկնքից սեր էր ծորում աշխարհի վրա, ծառերի սոսակիյունում, ջրերի կարկաշում սիրո մեղեղին էր հնչում: Ծովի պես փուլել էր նրա սիրտն իմ առաջ իր բոլոր գանձերով, իսկ ես, ագահ մի սուզակ՝ ուզում էի այդ բոլոր դանձերին մեկից տիրանալ:

— Ինչո՞ւ շասացիր սիրում եմ, — հանդիմանեցի ես՝ նրա ուսերը թեթևակի ցնցելով:

Նա շիկնեց նորից ու այսպես պատասխանեց.

— Սերն ամենաթանկ դանձն է սրտի, երբ սիրում ես, շետ ուզում ոչ ոք իմանա, նույնիսկ սիրածիցդ ես թաքցնում...

Զեռքերիս վրա արցունքի տաք շիթեր ընկան նրա աշքերից: Սիրո առաջին արցունքներն էին:

Ես սիրով արբեցած էի:

Այդ գիշեր նրանից ես լսեցի անմոռուկների գեղեցիկ զրուցը՝ նրկու սիրահար խենթի պես սիրում են միմյանց, բայց այդ սերը կարճատես է լինում: Տղան գնում է ուրիշ երկիր ու իր սիրած աղջկան մոռանում, այնտեղ էլ ամբաւնանում: Եսկ աղ-

շինկը չի մոռանում իր սիրածին, գիշերները թաքում լալիս է ու շրջում, գետինն իր արցունքներով թրջում... Այդ սիրահար աղջկա կապույտ աշքերի արցունքներն են այս կապույտ անմոռուկները, որ ամեն գարնան ծաղկում են աշխարհի վրա և շշնջում սիրահար սրտերին.

— Մի՛ մոռանա...

Ես ու ընկերս տարված զրույցով, սիրո պատմությամբ, չէինք նկատել, որ արդեն լուսանում էր, և մոտենում էինք կայարանին:

Ես նայում էի ընկերոջս երջանկալիութ աշքերին: Նա նորից ձգվեց ասպետական կեցվածքով:

— Օ՛, ինչ լավ է կավել—հաղթե՛լ... Այժմ թվում է ինձ կյանքըն ու սերը հավերժ: Ես ցանկանում եմ աշխարհին ու ամենքին այդպիսի սեր...—վերջացրեց նա:

Ինչպես բնությունն է բազմազան, այնպես էլ մարդու կյանքը: Բնության խստագույն տեսարանների մոտ հանկարծ աշքդ շոյում է մի թափիշ կանաչ, կամ մի եթերաթերթ ծաղիկ, այնպես էլ այժմ ուազմիկի ահեղ ու արյունոտ ճանապարհը զարդարել էր ալդ ցնքուշ սերը՝ կապույտ անմոռուկները:

Գնացքը սովեց ու կանգ առավ: Մենք հասանք կայարան: Նորից պիտի բաժանվեինք: Ես սեղմեցի ընկերոջս ծեռքը և ասացի, —բարեկիր սրտանց քո Աստղիկին, մեր ազնիվ աղջկան...

Հպարտ մի ժպիտ ողողեց ընկերոջս գեմքը: Նա լուռ գլխով արեց:

ԱՐՄՎԵՆԻ ՀԱՅՑՈՒՀԵՆ

Ն զորամասի ականաձիգների գումարտակում հայտնվեց մեր փոքրահասակ մարտիկ, որի գորշ շինելը մեծ էր վրայով, հասնում էր մինչև կրունկները, թէսարկը կիս նստած էր մազերին, երբ բարձրացնում էր գլուխը՝ սև աշքերի շարաճճի նայվածքը ակամա ուշադրություն էր գրավում: Թուխ, քնքույշ մորթ ուներ, շրթումքները բարակ էին ու կարմիր:

Դա սանդրութինայի հրամանատար՝ Էլույա Շահինյանն էր: Կիրովաբադի մի հայ աղջիկ:

Նա սովորում էր երեանի բժշկական տեխնիկումում, կոմերիտական էր և կազմակերպության քարտուղար: 1941 թ. ավարտական քննություններ էր տալիս գերազանց գնահատականներով: Քսան տարեկան կոմերիտուհին իր ծննդավայրում աշխատելու մեծ բաղձանք ուներ: Հանկարծ նրա ծրագիրները փոխվեցին, երբ պատերազմ սկսվեց ու Հայրենիքին վտանգ սպառնաց: Նա երկար շմտածեց: Դիմում գրեց, որ իրեն ուազմաճակատ ուղարկեն, որպես բուժ-քույր:

1941 թվականի Հունիսի 29-ին նա մեկնում է ուազմաճակատ մի խօսք հայրենասեր աղջիկների հետ: Եվ ահա դեպքերի բերումով գալիս հասնում է կոիվների թեժ տեղը: Եվ այսուհետև ականաձիգների գումարտակի հետ շրջում էր նորեկ քույրը դեղորայքի պարկը մեջքին: Ամեն տեղ, ամեն վայրկյան օդնության էր հասնում սովետական մարտիկներին:

Հարավ-արևելյան ուազմաճակատի մեկ հատվածում փոթորկուն մարտ էր տեղի ունենում: Կրակի գծից մեկ կիլոմետր հեռու սանիտարական կետում, վրանի տակ անհանգիստ գնում էր գալիս

սպիտակ խալաթ հագած բուժ-քույր էյուայա Շահնշանը: Թերում
էին վիրավորներին—նա անմիջապես կապում էր վերքերը և պառ-
կեցնում:

Նա սկսում է անհանգստանալ, անցնում է մեկ-երկու ժամ,
բայց սանիտարները չեն երևում, վիրավոր չեն բերում: Իսկ մար-
տը շարունակվում էր, ուրեմն վիրավորները մնում են անսպեղա-
նի և անօգնական: Ո՞չ, նա չի սպասի: Մեջքին կապում է նոնակ-
ներ ու սողում դեպի կրակի գիծը: Հայրենի լեռներում կայծակ-
ներն այնպես չեին շղացել, ինչպես այժմ ճրետանու կրակը,
հայրենի ձորերում փոթորիկն այնպես չեր ոռնացել, ինչպես այժմ
ականների ոռնոցը: Նա գնում էր գեպի փորձովթյուն, գեպի կրակ:
Պահ մի գողաց, բայց ոչ, նա ետ չի դառնա, պետք էր մոռանալ
կանացի քնքությունն ու սրտադուղը: Աև, վառվուն աշքերը նրա
դեմքին տալիս էին հեքիաթային փայլ—նա համարձակ առաջ էր
սողում: Վառողի ծիսի և զատրվանի պես ցայտող հողասյումերի
միջից նա հազիվ է կարողանում նշմարել իր ընկերներին:

— Լյուայա՛, ես դարձիր, այս քո տեղը չէ,—նկատելով նրան
հանդիմանում է հրամանատարը:

— Իմ տեղն է, եկել եմ վիրավորներ տանելու,—պատասխա-
նում է լյուայան սաստիկ մտահոգված: Հրամանատարը ժպտում
է և գլուխը պտտացնելով շարունակում իր մարտական հրահանգ-
ները:

Սովետական ականաձիգները կրակ կտրած՝ խփում էին դեպի
գերմանական դասավորությունները: Ահեղ որոտմունքներից ա-
կանջ էլ խլանում: Լյուայայի երեսին էին խփվում հողի կտորներ,
բայց նա գլուխը թափահարում էր և տեսողությունը լարած դի-
տում մարտաշարքերը:

Ահա վիրավոր մի մարտիկ ձեռքը թուղացած փովեց գետին:
Լյուայան սողաց գեպի նա, բայց շփոթվեց՝ առաջին անգամ շիմաց
նպլով մարտական պայմաններում ինչպես վարվել վիրավորի
հետ: Այդ տևեց ընդամենը մի քանի վայրկյան, հետո զգաստա-
ցավ, տիրապետեց իրեն և շրթունքները սեղմած՝ վիրավորի վերքը
կապեց, գուրս բերեց թեժ կրակի գծից և տարավ 50 քայլ հեռու,
թփուտի տակ: Լյուայան սողում էր խրամատից-խրամատ և քուշ-
րափան խնամուտ ձեռքը մեկնում վիրավոր մարտիկներին: Մեկ

օրում կրակի գծից Լյուայան դուրս բերեց և բուժօգնություն ցուց տվեց 30 վիրավոր մարտիկի: Նույն օրը երեկոյան նա սանհտարական սալլակով վիրավորներին փոխադրեց բուժկայան: Հետևյալ օրը նա նույնպես շնորացավ մարտադաշտից և կրակային գծից դուրս բերեց ևս 27 վիրավոր մարտիկ:

Մարտից հետո Լյուայա Շահինյանը մտավ հողե բլինդաժը և պարտկազմակերպության քարտուղարին հանձնեց ծալված, սպիտակ մի թուղթի Հուզմունքից կարմրել էին այտերը: Նա հայտարարեց պարզ, առանց ճոխացնելու Ուղում եմ պարտիական լինել Խնդրում եմ քննել դիմումս:

Երկու օր հետո N գորամասի պարտբյուրոյի նիստում քննվեց նրա դիմումը:

Բոլորը քվեարկեցին հօգուտ անձնազոհ, հայրենասեր աղջոկան պարտիայի մեջ ընդունելու Այդ օրը գրվեց Լյուայայի կյանքի ամենապայծառ էջը: Այժմ որպես պարտիայի անդամ, Հայրենիքին օգնելու գործում ավելի պատասխանառու զգաց նա իրեն:

Մարտից հետո, գիշերները բլինդաժներում սուական գարմոնը հնչեցնում էր ուրախ եղանակներ: Գարմոնի կենսաբուխ թրթիռները ասես լցնում էին ողջ տիեզերը հաղթանակի և կյանքի արիով, ապրելու բուռն տենչանքով: Ուրախանում էր ուսմարտիկը վաղվա կոխվը առույդ դիմավորելու համար: Ե՛մ կավի, և՛ ուրախության ժամերին Լյուայան նրանց հետ էր: Նրանց համար և՛ մայր էր, և՛ քույր: Նա միակն էր ու ամենքի սիրելին: Լյուայան երգում էր գարմոնի հետ, ալանում դեպի հայրենի վեհաշուր լեռները, որ նրա հոգին լցնում էին հաղթելու անսահման կամքով:

Բայց պատահեց այնպես, որ N գումարտակը մի որոշ ժամանակ զրկվեց իր քնքասիրա ու մտերմիկ բարեկամուհոց:

Մի անգամ մարտադաշտում վիրավոր մարտիկներին օգնություն ցուց տալու ժամանակ՝ ոսմբը պայմում է Լյուայային շատ մոտ և փետուրի պես նրան թոցնում 15 մետր այն կողմէ: Մարտիկները Լյուայայի մարմինը հանեցին հողակոշտերից և տարան բռժարան: Այդ դեպքից երեք օր հետո Լյուայան աշքերը բացեց առև ժողից նոր ծնված, քայլ նա մոայլ չէր և ոչ էլ ընկճված:

Խաղմաճակատի այդ հատվածում Լյուսյան հանգիպում է ծանոթ հայ տղաների, որոնց թվում հայ ժողովրդի անձնվեր զավակ՝ պնդապիտ Թորգոմ Շահինյանին։ Նրա մասին ոգևորությամբ է խոսում. «Հիանալի մարտիկ, ազնվագույն ընկեր, պարզ, աշխատ է խոսք չեմ գտնում նրա իսկական պատկերը տալու», — ասում է Լյուսյան։ Պատմելու այնքան բան կա, այնքան դեպքեր, մեկը մյուսից հետաքրքիր, կլանող։

Մի անգամ հայ մարտիկները հրավիրում են փոքրիկ, թխահեր Լյուսյային իրենց բլինդաժը զրուցելու։ Գիշեր էր, ցուրտ—բոլորել էին խարուցի շուրջը, Լյուսյայի ներկայությունը ջերմացրել էր հայ մարտիկների սրտերը, բարձրացրել տրամադրությունը։ Նրանք հիշում էին իրենց հայրենի երկիրը, պատմում հարազատներից, մորից, կնոջից, երեխաներից։

Օքախի կրակից շառագունել էին նրանց դեմքերը, Շահինյանը կատակում էր Լյուսյայի հետ։

— Լյուսյա, մեր զորամասն արի, այժմ էլ մեր քույրը դարձի՞ր։

— Ոչ, — պատասխանում էր Լյուսյան, — ինձ բաց չեն թողնի իմ սուս ընկերները, միևնույն չեմ, դուք թե նրանք։

— Իրավացի ես, միևնույն է, մենք թե նրանք, բայց մեզ մի՛ մոռանա, — ասում էր Թորգոմը։

Կայծկլտում էր խարուցի թեժ կրակը. մի պահ մոռանալով կրիվ, տագնապ, ամենքը երազում էին։ Անձկալի ու քաղցր երազներ։

Դուրսը բուք էր, ձյուն, նինջ էր իջնում նրանց աշքերին, բայց նրանք քունը փախցրած սպասում էին։ Տար շորեր զցեցին Լյուսյայի վրա, որ շմբսի։ Իսկ Թորգոմն անհանգիստ ծխում էր։

Ահա ներս մտան մի խումբ մարտիկներ։ Քունը փախավ ամենքի աշքից, աշխուժորեն շրջապատեցին նկվորներին։ Դրանք հետախույզներ էին, բերել էին բազմաթիվ կարեսը տեղեկություններ։ Բլինդաժն աղմկեց։ Լյուսյան, նախանձով էր նայում հետախույզներին, նրան չեր գոհացնում իր կատարած աշխատանքը, նա ուզում էր թափանցել թշնամու թիկունքը, հայտնաբերել նրանց որչերը։ Այդ գիշեր նա որոշում է անպայման հետախույզ գառնալ։

Եվ հրամանատարությանը մի քանի անգամ դիմելուց հետո՝ վերշապես հասնում է իր նպատակին:

Մի խումբ սովետական հետախույզների, որոնց թվում և կյուսյային, խնդիր էր տրված թափանցել թշնամու թիկունքը Ն տեղամասում և անհրաժեշտ տեղեկություններ բերել: Գործը լուրջ էր: Նրանք վերցրել էին իրենց հետ ատրճանակ, նոնակներ և վառողապարկեր: Քողարկված էին սպիտակ խալաթներով: Յուրաքանչյուր գիշեր էր: Մինչև ծնկները հասնող ձյունը պատռում էին կրծքերով և սողում ճարպկորեն, զգույշ: Նրանք չեին խոսում, ասես համբ լինեին: Ամեն ոք գիտեր իր անելիքը: Միայն պաղ ձյունն էր նրանց կրծքերի տակ ճոճուում:

Հասան թշնամու լարափակոցներին: Զգույշ մեկ-մեկ անցան տակից, առանց լարերին շփվելու: Պայմանական տեղ որոշեցին՝ կրկին հանդիպելու համար և գնացին՝ ամեն մեկը տարրեր ուղղությամբ:

Ձյունը թափվում էր անդադար ու ձյան սպիտակ փաթիլներից լուսավորվում էր գիշերը:

Լյուսյան հանկարծ տեսավ, որ մենակ է մնացել ձյունապատ, ամայի դաշտում: Սարսուռ անցավ մարմնի մեջ, կանգ առավ, ուժ առավ, նորից շարունակեց համփան: Ահա թշնամու որջերը, որ ավեր ու մահ էին բերում մեր ազատասեր ժողովրդին: Զգույշ և տեսողությունը հազար դարձրած գծումներ էր անում թղթի կտորի վրա: Չնկատեցին, շրմվեց, վերադառնում էր, շրմունքները խորհրդավոր շարժվում էին, պաղ, թափշա ձյունը շոյում էր նրա բորբոքված սիրտը: Աղջիկը այժմ մտածում էր ընկերներին հանդիպելու մասին: Հանկարծ դիմացը տեսավ մի ձյուն բլուր և բլրի մոտ գերմանական մի ժամապահ: Լյուսյան աննկատելի կերպով մոտեցավ ժամապահին: Նա ննջում էր: «Բլուրը քողարկված դաշտային պահեստ է», անցավ աղջկա մտքով: «Թողնել, որ թշնամու պահեստը հարվածի մերոնց—ոչ, չի' կարելի», վճռեց աղջիկն ու անցավ բլրի հետեւ: Թշնամու հանդիպ ունեցած անսահման ոխն ու ատելությունը նրան ուժ տվին: Բազուկն ամրացավ, շոշափեց կողքի վառողապարկերը: Ու շանցած մի ակնթարթ՝ բլուրն սկսեց հրդեհվել: Գերմանացի պահակը նկատեց փախչող սիլուետը և ալվտոմատը բացեց նրա վրա: Լյուսյան ինչ-որ դադոց զգաց

մարմնի մեջ ու թուլացած բնկավ գետին, բայց մի կերպ սողալով
վիրավոր մարմինը նետեց մի փոսի մեջ:

Գերմանացի պահակը հրդեհից վախեցած՝ փախավ:
Գնդակը ծակել էր Լյուսյայի ազգը, արյուն էր ծորում, մահը
նրան այնպես շէր սարսափեցնում, որքան այն միտքը, որ շէր
կարողանալու տեղեկությունները տեղ հասցնել: Փորձում էր
շարժվել, բայց շէր կարողանում: Վիրավոր աղջկա մշուշված աշ-
քերին լույս էր տալիս հրդեհը:

— Սլրվի՛, թող մոխիր դառնա, — շշնչում էր նա: Ամպերի
միջից հատ ու կենա աստղեր էին ցոլում մոր աշքերի պես շոյող
ու գորովալի: Գուցե ոչ մի անգամ նա այնպես շէր զգացել կյանքի
սերը, ինչպես այժմ: Չէ՞ որ նրա կյանքը նպատակ ուներ,
ուզում էր ապրել, պայքարի ու հաղթանակի համար: Կոշտ շինելը
քավում էր վերքին, բոլի ցավեր էր զգում մարմնի մեջ, բայց այդ
փույթ շէր — միայն թե դաշտի նկարը տեղ հասցվեր:

Աւշ գիշեր, ձյան վրա պար էին բռնել ցասման կարմիր բո-
ցերը: Բլուրը վառվում էր: Նվազած աղջկա ականջին հասան ինչ-
որ շշուկներ: Ո՞վ կարող է լինել, թշնամի՞ն, նա վերջին ուժերը
հավաքած պատրաստվում էր նոնակներ նետել: Հետախույզ ըն-
կերները վերադարձին նկատել էին կրակը և եկել հրդեհի ուղղու-
թյամբ:

Նրանք կռահել էին, որ դա Լյուսյայի գործը կլինի: Սրտի
դողով վերջապես գտնում են Լյուսյային վիրավոր վիճակում, հա-
զիվ շնչելիս:

— Լյուսյա, մեր խեղճ սարյա՛կ, արթնացիր...

Լյուսյան աշքերը թարթեց ու ինչպես երազից արթնացած՝
շշնչելիս:

— Վերցրեք դաշտանկարն ու էլ մի՛ սպասեք, շուտով տարեք:
Իսկ ես, տեսնում եք, չեմ կարող...

— Ո՛չ, մենք քեզ այստեղ շենք թողնի, անպայման կտա-
նենք, — ասացին հետախույզ ընկերները վճռական շեշտով: Ժամա-
նակ չկար, թշնամին կարող էր շուտով վրա հասնել: Բլուրը դեռ
հրդեհվում էր: Մի ակնթարթում Լյուսյայի վերքը կապեցին ու
ականջ շղնելով նրա թախանձանքներին իրենց հետ վերցրին
նրան ու բռնեցին վերադարձի ճանապարհը:

Զյունապատ ու գժվար էլ ճանապարհը, բայց ոչ մի վայրկյան կանգ շառան, որպես թանկ բեռ վիրավոր քրոջ մարմինը հերթով շալակելով եկան, ճասան պայմանական աեղք:

Այս անգամ էլ լարափակոցից բարեհաջող անցան:

Գնդում ամենքը նորից երիտասարդ հայունու մասին էին խոսում: Գնդի հրամանատարը շնորհակալություն հայտնեց Լյուսյային, ճակատացին թերթը գրեց նրա քաջագործության մասին:

Լյուսյային փոխադրեցին սանմաս: Գնդակը խոր չէր թափանցել, վերբը լավանում էր: Ընկերները նրան խզուր էին համոզում թիկունք գնալ, ճանգստանալ: Նա այդ մասին լսել անգամ չէր ուզում:

Նա դեռ դուրս չէր գրվել հիվանդանոցից, կիսառողջ վիճակում էր, երբ նենդ թշնամին նորից հարձակման անցավ: Սովետական մարտիկները դիմադրում էին: Կոփիսների թոշ ու բոհի մեջ պատահեց այնպես, որ մովետական գորամասերը նահանջել սկսեցին: Լյուսյան մի խումբ ընկերներով փորձության մեջ ընկալվ: Թշնամին շրջապատեց, ու գերի վերցրեց նրանց:

Մանկահասակ ազգիկը մուալլից, ճակատին զայրույթի կընձիռներ դիզվեցին:

Սովետական գերիներին լցորել էին մի ցածրիկ մարտիկ մեջ ու դռների մոտ ավտոմատավոր պահակներ կանգնեցրել: Բոլորին մահ էր սպասում: Գերիներին մեկ-մեկ կանչում էին և հարցաքննում: Շուտով նրա հերթն էր գալու, լյուսյան մի ճնար, մի ճեղք էր փնտրում փախչելու:

— Եկ փախչենք...—շշնչաց լյուսյան ընկերոջ ականջին: Ընկերը մի երիտասարդ մարտիկ էր՝ հիվանդանոցից նոր դուրս գըրված վիրավոր:

— Ինչպե՞ս, ո՞րտեղից, չէ՞ որ ամեն կողմից շրջապատված ենք ֆաշիստներով,—պատասխանեց ընկերը գրեթե հուսահատ:

Լյուսյայի հայացքը կառչել էր մի նեղլիկ լուսամուտի:—Ահա այստեղից,—պատասխանեց լյուսյան:

Ընկերը գլուխը տարուբերեց:

— Այստեղ մեռնելու փոխարեն...—ասաց աղջիկն ու առանց սպասելու, ուժով բռունքը խփեց լուսամուտի ապակիներին,

կոտրատեց, և թոշունի պես վանդակից իրեն դուրս նետեց: Նրան հետևեց ընկերը: Գերմանացի պահանջերը սկսեցին կրակել դեպի լուսամուտը: Լյուսյան և ընկերը փախչում էին գնդակոծության միջից: Գիշեր էր, մահվան ու սարսափի գիշեր: Ծովից փշում էր խոռվաճույզ քամին: Մեր փախստականները դեպի ծովն էին դիմում՝ կյանքի և ազատության կարուղ սրտներում:

Այն տեղ, ուր ոտք էր դնում թշնամին, վեր էր ածվում դժոխրի: Ահա թե ինչու լյուսյան բուռն տենչանքով շնչում էր.

— Այս, երանի նրան, ով գտնվում է այնտեղ-մերոնց հետ,— և գերբնական մի ուժով դեպի ափ, դեպի ծովն էր մղվում: Հրթիռների լույսի տակ շոշողում էին ծովի ջրերը: Ահա նրանց հոգնարեկ հայացքն ընկավ ծովափին կանգնած մի կատերի վրա:

Հույսը սրտերում՝ նրանք մագլցել սկսեցին ծովափնյա քառաժայռը: Բայց խարիսխը պոկվեց, ալիքները ճողիկելով կատերը շարժվեց. դա սովետական վերջին կատերն էր, որ հեռանում էր ափից: Լյուսյան ու ընկերը թափահարում էին ձեռքերն օդում, կանչում, բայց ավազ, ծովի քամին էր լոկ նրանց քրտնած դեմքը շոյում, կատերը հեռանում էր:

Այդ ժամանակ մի ֆաշիստ ավտոմատպոր հեռվից նրանց նկատելով՝ սկսեց կրակել: Լյուսյան ու ընկերը պատրսպարվեցին քարերի մեջ, բայց հիտլերականը համառ կերպով կրակում էր: Մահ էր սպառնում. «Կավ է ծովում, քան թշնամու գնդակից մեռնել»—որոշեց լյուսյան: Փրփրագեզ ալիքներն էին իրարախվում: Աղջկեց հանեց շինելն ու նետվեց ցած:

Լսվեց ջրերի ճողիկյուն...

Լյուսյայի ընկերն էլ հետևեց նրան: Սկսվեց մահու և կյանքի կոփը: Իեռների սովոր աղջկեց լողալ զգիտեր, ծովն անծանոթ էր նրան: Ինչպես մի ծովահարս, մազերը փուլել էին ջրի երեսին, ալիքները շփշփոցով, խշողով նրան զարկում էին ափին: Հրթիռների լույսերը ճաճանչում էին գիշերվա մեջ ու ցոլցլում ծովի ջրերում: Լյուսյան կովում էր ալիքների դեմ: Զուրն ուժեղ էր, քաշում էր խորքը: Ապրելու հզոր կամքը պահում էր աղջկան ծովի երեսին:

— Թվում էր, որ մեկը ուժեղ բազուկներով ինձ քաշում էր դեպի ծովի հատակը. ախ, ինչպես էի ուղում ապրել, — ասում է նա ուսերը ցնցելով, ասես զգում է նորից պաղ ջրերի շփումը մարմնին:

Կատարվում է մի հրաշք բան—նավակը պոկվում է կատերից, գալիս այն տեղը, ուր աղջիկն էր կոփի մղում:

Լյուսյան չի հիշում, թե ինչպես իրեն նավակի մեջ են զցում, միայն հիշում է, որ աշքերը բացել է կատերի վրա: Այդտեղ էր նաև նրա ընկերը, նա էլ փրկված էր:

Լյուսյան հուզմունքով է հիշում իր ազատարարի մասին:

— Նա իմ փրկիչ, աստվածն էր: Ահա թե ինչպես էր պատահել: 18-ամյա մի նավաստի սրատեսաշքը հառած ծովի ջրերին տեսնում է, թե ինչպես ծովն է նետվում մեկը՝ մաղերը քամուն տված:

— Կա, չկա սա աղջիկ է, մերոնցից, թույլ տվեք գնամ աղատեմ,—խնդրում է, համոզում կապիտանին վասվուն նավաստին:

Կապիտանը զայրանում է սաստիկ, որ կովի աճեղ պահին, ոմբակոծության ժամանակ նորից դեպի ափ գնալու հանդգնություն է ունենում:

Անվեհեր նավաստին վերջապես հասնում է իր նպատակին, նավակով գնում, աղատում է երիտասարդ հայուհուն և նրա ընկերոջը:

Փոթորկում էր ծովի կաթսան: Ֆաշիստական սավառնակները վխտում էին օդում և ոռոմքեր նետում ծովի վրա, հեռացող կատերն էին ուզում խորտակել: Բայց խիզախ ծովայինները ահաբեկվող չեին, նրանք սովոր էին փոթորիկների:

Լյուսյան խոսք չի գտնում իր շնորհակալությունը հայտնելու: Մինչև իր կյանքի վերջը երախտապարտ է մնում ծովի անվեհեր ասպետներին, որ իրեն կյանք էին շնորհել նորից: Երախտապարտ է մնում այն պատանուն, որ այժմ էլ արծվի պես պտույտ էր գալիս նրա շուրջը, որպեսզի նա վատ չգտար:

— Այնպես դժվար էր բաժանվել ընկերներից,—ասում էր Լյուսյան ափսոսանքով: Լյուսյային չի վիճակվում գեթ մի քանի օր հանգստանալ: Նա գտնում է իր զորամասի ընկերներին ու որպես սանդրութինայի հրամանատար՝ նոր առաջադրանք ստանալով, մեկնում է ուղղմաձակատ: Ն զորամասի մարտիկները խրվում են թշնամու պաշտպանության գիծը: Լյուսյա Շահնյանը իր գորշ շինելը հագած շտաբքերգելով մյուս մարտիկներից, այդ վտանգավոր տեղում վիրավորների վերքերն էր կապում նորից:

Սովետական մարտիկները խիզախորեն բնաջնջում էին ֆաշիստ-ներին, որոնք հակագրո՞ղի էին անցել: Ահա այդ ժամանակ մի խումբ մարտիկներ և նրանց թվում Լյուսյա Շահինյանը մնում են շրջապատճան մեջ:

— Դրանից սարսափելի բան չկա, երբ զգում ես, որ թշնամու ձանկերումն ես,—ասում էր Լյուսյան:

Գաղանաբարո ֆաշիստները սովետական գերիների շորերը հանում են, ձեռքերն ու ոտները կապուտած նետում մի ցուրտ նկուղ: Լյուսյան մազերը հավաքել, թաքցրել էր գլխարկի տակ: Նա չէր տարբերվում տղամարդ գերիներից: Նա դողում էր ոչ թե ցրտից, այլ ցասումից: Մոռալ ու խիստ էին գերի ընկած սովետական մարտիկները: Միմյանց հետ չէին խոսում: Նրանց զբաղեցնում էր միայն մի միտք՝ մեռնել պատվով, շդավաճանել Հայրենիքին: Հերթով կանչվում էին գերմանացի սպայի մոտ հարցաքննության: Ի՞նչպիսի խուզարկող ու զննող աշքերով էին ձանապարհ դնում ընկերները յուրաքանչյուր գնացողի, «Մեռի՛ր, բայց մի՛ դավաճանիր». այդ էր նրանց պատգամը: Նկուղի պատի տակ կծկված Լյուսյան կիսարթուն վիճակում դեգերում էր ծանր մտածումների մեջ, երբ ուժեղ մի ոտք դիպավ նրա կողքին: Աղջիկը զգաստացավ: Թարգմանի միջոցով հայտնեցին, որ ներկայան սպային:

Աղջիկը հասկացրեց, որ առանց հագուստի չի կարող ներկայանալ սպային:

Գերմանացի սպան, երբ լսեց հանդուգն ոռնաի պահանջը, կատաղեց, ոտքը խփեց հատակին, բայց միաժամանակ կարգադրեց տալ թիկնոց, որ նա ծածկվի:

Լյուսյա Շահինյանը գունաթափ դեմքով կանգնեց գերմանական սպայի դեմ: Սպան կրծտացող ատամների արանքից հարցնում էր.

— Սա՞ էր թիկնոց ուղում...

— Այո, սա էր,—պատասխանում են պահակները:

Սպան բռնազրուիկ հանդարտությամբ դառնում է դեպի Լյուսյան:

— Հապա տեսնենք, ի՞նչ կարող ես մեզ պատմել...

Ոչ մի պատասխան: Աղջիկն արհամարհանքով երեսը շըրջում է:

- Ինչո՞ւ չես խոսում, ինչո՞ւ չես պատասխանում, կոնտուզիա՝ ունես, չե՞ս լսում, —դեմքը ծամածոելով հարցնում է սպանութեամբ:
- Դու հրեա՞ ես...
- Ոչ, —պատասխանում է աղջիկը կտրուկ:
- Ո՞ւր են քո ծնողները:
- Իմ ծնողներին ես կորցրի մի քանի օր առաջ: —Մինչ այդ լյուայային տղայի տեղ էին դրել, իսկ այժմ ձայնը մատնում է:
- Ուրեմն դու աղջիկ ես, հա՞...
- Այո, աղջիկ եմ, —պատասխանում է լյուայան համարձակականացնելու գործիքի գիշատիչ աշքերը շովում են.
- Կոմսոմոլիկա՞ ես, հրեա՞...
- Լյուայան խորագիր պատասխաններ է տալիս, որպես պի աղատվի սպայի հարցապնդումներից:
- Հրեա չեմ, կոմսոմոլիկա չեմ...
- Սպան շարունակում է կզակը շփելով.
- Ինչո՞ւ ես ուղմաճակատ եկել, ո՞վ է քեզ ստիպել:
- Ինձ ոչ ոք չի ստիպել, ծնողներիս էի փնտրում, գերի ընկառ սպայի արնակոխ աշքերը մահ էին սպառնում:
- Գիտե՞ս, որ քեզ պետք է սպանենք, եթե ոչինչ շասես, — ասում է սպան:
- Աղջիկը ցնցվեց...
- Ինչ որ պետք էր՝ ասացի, ուրիշ բան չեմ իմանում, սպանեցեք, մեկ է, մի օր պետք է մեռնեմ:
- Դու պարտիզա՞ն ես հը՛, հը՛, —զայրույթից մրթմրթում է գերմանացի սպան՝ որսը կորցրած արջի պես, ապա դառնում պահանձնակներին, —տարեք դրան իր տեղը, երեք օր էլ պահեք, եթե ոչինչ շասի կսպանեք:
- Լյուայան արձանի պես ձգված՝ ոչինչ չի ասում: Միայն զգում է, թե ինչպես սրտի զարկերն արագանում են:
- Աղջիկը գունատ լուանի պես սահում է նկուլն ու նորից կծկվում պատի տակ: Ընկերները շոմաները պահած՝ շնորհանձնականացնենքի սերը: Նա այդ ժամանակ ըստոն կերպով արթնանում է, նրա մեջ կյանքի սերը: Նա ապրել էր ուգում վրեժ լուծելու համար, Հայրենիքի հաղթանակը տոնելու համար: Մերթ փակում էր աշքերը՝ և արշալույսի կախարդական գույներով հայրենի լեռնա-

պարն էր աշքի դեմ գալիս, ստվերոտ անտառներն էին սոսափյունով օրորվում: Հայրենի աղբյուրների ու ոլորածումի գետակներէ կարկաչն էր ականջին հնչում, նա ձեռքերն ուզում էր փարել Հայրենիքի կրծքին: Բայց ավա՞ղ, ձեռքերը կապուտած էին:

Այդ նույն օրը հիտլերյան գազանները սովետական գերիների աշքի առաջ, զարհուրելի տանջանքների ենթարկեցին մի քաղղեկի, որը հրաժարվեց դավաճանել իր Հայրենիքին: Կտրատեցին նրա ձեռքի մատները, կտրեցին դաստակը: Վիրավոր առյուծի պետ մոնշում էր սովետական մարտիկն ու ընկերներին վրեժի գոշում: Ողջ գիշերը նրանց աշքից շնչեռացավ խոշտանգված ընկերոջ արյունոտ պատկերը:

Երրորդ օրն էր իրիկնանում, ժամը ութին Լյուսյային տանելու էին հարցաքննության և վերջ...

Հանկարծ ականջին հասան խոզ դղրդոցներ. Լյուսյան լարեց լսողությունը և համոզված ասաց.

— Մերոնք են...

— Խելագարվե՞լ ես,—ասացին ընկերները:

— Հավատացեք, որ մերոնք են;—կրկնեց աղջիկը:

Աշխույժ մի շշուկ բարձրացավ մթին նկուղում ու նորից լոեց Այդ ժամանակ վերին հարկում, գոռող սպան պատրաստություն էր տեսնում արյունոտ դատաստան տեսնելու սովետական գերիների հետ: Նա վերցնում է հեռախոսի լսափողն իրեն նման մարդակերների հետ խոսելու: Եվ հանկարծ լսափողը նետում է ջղայնացած: Պատասխան չի ստանում, կտրել են: Դրան հետևում է այն, որ ներս են մտնում պահակները և հայտնում.

— Խուսնե՞ր...

Այդ լուրը հանկարծակի է բերում սպային. նա գլուխը կորցրած վերցնում է փաստաթղթերը և որոշում փախչել:

Բայց նախքան փախչելը նա ուզում է արյան ծարավը հագեցնել: Ատրճանակը ձեռքին, գրեթե գլորվելով իշնում է մինչև նկուղը, բացում է դուռը և կանգնում շեմքում: Նրա դեմ Լյուսյան էր գլուխը պատին հենած՝ ազատության վառ հավատը սրտում, սպասում:

Սպան ատրճանակը պարզած մի քանի րոպե չի կրակում:

«Ճիվաղն ուզում է տանջե՞լ, ինչո՞ւ չի կրակում», մտածում է աղջիկն ու դարձյալ չի հաշտվում մահվան մտքի հետ:

Սպան կրակեց: Լյուսյայի ականջները խլացան:

Նա խփվեց, մահացա՞վ: Ոչ: Սպան նշանը ճիշտ չէր բռնել, գնդակը վրիպել էր ու ծակել պատը՝ աղջկա ճակատից մի մազաշափ հեռու: Սպան ուզում էր երկրորդ անգամ կրակել, երբ ուսական սվինը խրվեց նրա կողը: Նա գետին գլորվեց՝ ատրճանակը ձեռքին:

Զինված մարդիկ ներս սողացին: Լյուսյայի մշուշոտ աշքերը փայլատակեցին: Հրաշշը էր թե իրականություն:

- Խուս ընկերներ, դուրս եկեք,— Հնչեցին հարազատ ձայներ:
- Ալլոշ...

— Լյուսյա, ո՞րտեղ ես, դուրս արի: — Դա շտաբի պետի տեղակալն էր, որի կյանքը՝ մի քանի անգամ փրկել էր Լյուսյան վերքերը բուժելով:

— Չեմ կարող գալ, ձեռքերս ու ոտքերս կապոտած են, — պատասխանում է Լյուսյան:

Հանդիպման տեսարանը սրտառուշ էր, մթան մեջ խարխափելով փարվում էին իրար: Օգնության հասած մարտիկները քանդում էին իրենց ընկերների կապանքները: Նրանք Լյուսյային հագցնում են իրենց շինելը:

— Սիրտս վկայում էր, որ մեր փոքրիկ Լյուսյան՝ արծվենի հայուհին կենդանի է, — ասում է շտաբի պետը ծիծաղելով՝ մատը պարզած դեպի Լյուսյան: Ահա նորից ժամանում էր սև աշքերով, աննկուն քույր Լյուսյա Շահինյանը:

Ն զորամասի հրամանատարությունը բարձր գնահատից նրա ծառայությունը Հայրենիքին և ներկայացրեց կառավարական բարձրը պարզեցի՝ կենինի շքանշանի:

Լյուսյան առաջվանը չէ, հասունացել է, լրջացել, ճակատին կնծիռներ են հավաքվել, աշքերը վառվում են պայքարի անմար կրակով և կենսափորձով լի:

ԳԱՐԵԱՆԱՅԻՆ ՇՇՈՒԽԶՆԵՐ
(Արձակ բանաստեղծություն)

Բաց պատռւհանից ներս է հորդում գարնանաշունչ իրիկունը,
Հողի, կանաչի բուլը:

Մայր արեն իր նիրհող շողերն է սփոռում երկրի վրա:

Սև վարսերն ուսերին թափված սևաշվի մի աղջիկ լուսամուտի
դոդին կոթնած նայում է դուրս:

Վերջալուսի մեջ շողացող պարտեզն է հմայիչ:

Նորարողրոջ ծառերին ծտերն են ծլվում, իրար կանչում,
գգվում սիրավառ:

Առուն մեղմիկ քշքշում է:

Աղջկա սիրան է ծփում գարնան խոռվրով: Մերթ ժպտում է
նա, մերթ թախծում:

Սենյակը ողողված է վերջալուսի շողերով: Նա մենակ է սե-
նյակում:

Իսկ սեղանին՝ մի լուս լուսանկար... երիտասարդ ու հպարտ
ճակատը պարզած, սևեռուն հայացքը մի պահ քարացած...

Իսկ դուրսը գարուն է, գարնան շատ շնչերն են կանչում, հու-
զում:

Շրջվում է աղջիկը դեպի լուսանկարն այդ անշշունչ ու սուզ-
վում հայացքի մեջ:

Ասես խնդրում, աղերսում է նրան—մի՛ հալածիր, մի՛ նախա-
տիր ինձ այգահն:

Աւ հրացայտ շողերի մեջ նրա սիրո պատմությունն է հյուս-
վում նորից ու նորից:

Գարուն, քնքաթով իրիկուն:

Քարեր է նետում լուսամուտից մի անհանգիստ ձեռք. տերեւ-
վիկներ՝ սիրիսիրի... մանուշակի թերթիկներ ու կանչում է քաղց-
րաշշումնջ մի ձայն...

— Երազի՞կ...

Աղջկա այտերը շիկնում են հուզմունքից, հայելու առաջ մա-
զերն է ուղղում, ճգլում նաղանքով, ժպտում:

Նորից է ձայնը կանչում.

— Երազի՞կ...

Նա նետվում է դուրս՝ վախեցած եղնիկի պես: Գտնում են
միմյանց սիրահարները սիրատենչ: Նա խոնարհում է գլուխը, իսկ
տղան՝ գրկում իրանը:

Ու թևանցուկ շրջում են ծառուղիներում: Թվում է նրանց, որ
աշխարհն է իրենց մեջ ու աշխարհն է սիրահարված...

Շառերի կատարներն են հրգեհվում, մարում, օդը ցրտում,
ստվերները շատանում, բայց նրանք դեռ շրջում են:

Մի պահ սերը փոխվում է խաղի, կատակի: Աղջիկը հանկարծ
պոկվում է տղայի կողքից, ինչպես աստղը երկնքից ու չքանում:

Տղան խենթորեն փնտրում է ընկերուհուն, չի պատկերացնում
առանց նրան ոչ մի վայրկյան: Սուլում է մեղմորեն ու կանչում...

— Երազի՞կ...

— Չարաձեի՛, ինձ մի՛ տանջիր:

Շառերի հետեկի լույս թիթեռնիկի պես դուրս է թուշում աղջիկը—

— Այստեղ եմ, մի՛ տխրիր:

Յոլք աստղերի տակ, գարնանացին 22ունչներում, նրանք երդ-
վում են միմյանց սիրել համես:

Գարուն է նորից, երազների սիրս գարուն:

Իսկ սեղանին՝ մի լուռ լուսանկար:

Ի՞նչ եղավ հապա այն երիտասարդը սիրավառ: Գմտությունը
անշատեց, թե՛ ուրիշին սիրեց:

Աղջկա սև, փայլատակուն աշքերից թախիծն է ծորում:

Սեր օրերին, երադ օրերին հաջորդեցին կալի ահեղ օրեր,
արյուն:

Կայծակեց տղայի հայրենասեր ոգին: Այն սովորական սիրու
տղան դարձավ անձանաշ: Ելավ դյուցազնալանչ:

— Հայրենիքի համար, այս աղատ գարնան, քո սիրո համար
գնում եմ կոիվ...

Լաց եղավ աղջիկը, արցունքներով թրջեց սիրածի ձեռքերը և չրդվեց սպասել:

Դյուցազնական բանակի հետ խավարի դեմ՝ կռվում էր նրա շեր դյուցազունը լայնալանց:

Հեռվից լսվում էր նրա ձայնը. կռվում եմ, իմ Երազիկ...

Չմեռներ անցան բքարեր, գարուններ կանաչ: Տղան կռվեց աննաշանց: Իսկ աղջիկը սպասեց անվարան: Սպասեց, որ սիրո գարունը բացվի կրկին:

Եկավ գարուն մի հաղթաբեր, մի նոր զարթոնք գերհզոր:— Չյուները հալվեցին, ջրերը կարկաչեցին, բնությունը փարթամուռեն կանաչեց:

Հեռու-հեռուներից հավերն եկան իրենց բները նորոգեցին:

Եկան դինվորները ուազմի դաշտերից, իրենց օջախները ծխացրին:

Բայց աղջկա սիրածը չեկավ: Լուր ստացվեց, որ սիրտը խոցված ընկել էր նա...

Գարնան անձրեկի պես աղջկա աշքերից արցունքները թափվեցին:

Լացեց, ափսոսաց:

Դուրսը գարուն է, շշունչներ բազմախորհուրդ:

Իսկ սեղանին—մի լուռ լուսանկար...

Նա կոթնել է լուսամուտին ու նայում է դուրս:

Իրինահովը սիրավառ նրա մազերն է շոյում:

Ահա երկինքն այն հրաբորը, պարտեզը՝ կանաչով թարմ, ժիտերն այն ծլվուն —նորից սեր են շշնչում...

Անցնում են օրերդ, տարիներդ, անսեր մի ապրի՛ր, անվերջ մի՛ թախծիր...

Ու աղջիկը, մասն այն բնության, ոստն այն կանաչ, դեպի կյանք, դեպի արեն է ձգտում:

Սթափվում է սարսուռով, չէ՞ որ երդվել է սպասել այն դյուցազնին լայնալանց:

Ավա՛ղ, նա չկա: Իսկ սեղանին—մի լուռ լուսանկար... հպարտու վես:

Սերն այն ձուլվեց աստղերին, գարունքներին ամեն ու դարձավ անհաս երազ:

Աստղերի ցոլքերը, գարնանային շշունչները թաքուն գողով լցվում են սիրու աղջկա:

Այս գարնան զով իրիկոնը նա պիտի գա:

Մթնշաղի ծալքերից ասես ծանոթ ձայնն է նորից կանչում-նրագի-կ, ես կովեցի քո գարնան, քո սիրո համար...

Ու գծվում է մուժի մեջ իր սիրո պատկերը նորից:

Կովի բոցերից անցած այն երիտասարդի աշքերից հուր է կաթում, ու ձեռքով է անում՝ արի, բացել եմ քո ճամփան լույս ու ազատ, քայլիր համարձակ,—կանչում է, դյութում...

Իսկ աղջիկը հայելու դեմ ուղղում է մազերը, ժամանակ սեթեթ-Հանկարծ վախեցած եթեսը ծածկում է ձեռքերով:

— Օ՛, իմ սեր, իմ երազ, ինձ մի տանջի, — շշունչում է նա թախ-ծալից... ու մոտենում ձեռքերը պարզած...

Բայց ավազ, սեղանին մի լուս լուսանկար անտրտունչ, անշար նայում է նրան:

Ու հեռուներից քաղցրաշշունչ ձայնը կանչում է նորից. երա-զի-կ, մի՛ թախծիր...

Պարտեզը թաղվել է մթնում, երկնքում ցոլցլում հն աստղերը:

Աղջիկը լուսամուտի գոգին կոթնած սպասում է ու տենչում կրկին:

Սերն այն դյուցազնի աստղերի մեջ հավերժացած կանչում է աղջկան լույս հեռուներն անսահման:

Սենյակը ընկղմվել է մթի մեջ:

Աղջկա այտերն ի վար գլորվում են արցունքի կաթիլները:

Արցունքներում նրա վճիտ-վաղանցիկ սիրո թախիծն է ծորում և կյանքի ու հաղթնվթյան բերկությունը:

Սենյակում սեաշվի աղջիկն է մենակ նստած:

Իսկ սեղանին մի լուս լուսանկար...

ՈՒՍՈՒՅՉՈՒՀԻՆ

Ամեն առավոտ նույն ժամին, նույն ճանապարհով քայլում էր՝
միջահասակ; նիշարավուն, ոև խոշոր աշբերով, փոքր ինչ ներս
ընկած կրծքով այդ կինը և թվում էր, թե ոչ ոք չի կարող խանգա-
րել նրա ընթացքը:

Բարի ժպիտ էր խալում նրա դեմքին, շուրջերը միշտ
շշնչում էին, ասես զրուցում էր շրջապատի հետ: Նա հայոց լեզվի
դասատու էր քաղաքի մի իգական դպրոցում: Նա վարժվել էր
դպրոցին, ուր նա երիտասարդանում և աշխուժանում էր:

«Ընկեր Արուս» էին կանչում նրան դպրոցում: Աշակերտուհի-
ները սիրում էին նրան՝ հոգածու և համբերատար բնավորության
համար: Կայտառ ալիքների պես վազվզում էին նրա շուրջը, փար-
զում, պոկվում, նորից գալիս, փարվում: Աղմուկի ու շարաձճիու-
թյան համար նա կոպիտ ու բարձրածայն սպառնալիքներ չեր կար-
դում սանուհիների զիսին, այլ լուռ, շեշտակի հայացքով որսում
էր նրանց ուշադրությունը: Մագնիսի ուժով ձգում էր ողջ դասա-
րանը և մի ակնթարթ բոլորի հայացքը դառնում էր դեպի ուսուց-
չուհին: Նրա ամեն մի բառն ու շեշտը, ինչպես կհնացող, թափ-
վում էր աշակերտուհիների մտքի ծաղկոցը, և փայլ, և աշխուժու-
թյուն բերում: Աշակերտուհիները կարգում էին, պատմում, նախա-
դասություններ վերլուծում, հոլովում: Դասն աշխուժ էր անցնում:
Երբեմն ուսուցչու մեղմ երաժշտական ձայնն էր միջամտում,
սխալներն ուզզում, կամ լրացումներ անում:

— Տիրապետեցե՛ք ձեր մայրենի լեզվին, մաքուր հայերին
խոսել սովորեցեք: Մայրենի լեզուն հոտավետ է, ինչպես գարնան
ծաղիկ, քաղցր է, ինչպես մեղր,—ամեն անգամ ասում էր նա:

Ութերորդ դասարանը ուսուցչու Արուսի ամենասիրելի դա-

սարանն էր, որտեղ նա և դաստիարակ էր, և դասատու: Հարազատ մոր պիս նա կապված էր այդ դասարանին. փոխադարձ սեր և համակրանք էր ստեղծվել ուսուցչունու և աշակերտուների միջև Ուսուցչուն հաճախ էր հարցնում իր աշակերտուների կյանքից, կենցաղից. մասնակից էր նրանց վշտին և ուրախությանը: Երբեմն էլ ինքն էր սիրտը բացում նրանց առջևու սկսում պատմել իր միակ որդուց՝ կեռնիկից:

Երբ դպրոցում ժողով էր լինում՝ մայրն ուշանում էր, կեռնիկն անպայման գպրոց էր գալիս, սպասում: Կեռնիկը թիկնեղ ու բարձրահասակ էր, մոր մոտ ինչպես մի հսկա. միաժամանակ այնքան քաղաքավարի և ամազկու, որ գլուխը չէր բարձրացնում աշակերտուների երեսին նայելու, իսկ չարաճճի աղջիկները փափսում էին իրար ականջի, կատակում, թե կեռնիկը մոր փեշից կպած՝ խոնարհ հարն է և այլն...

Սմբենահետաքրքիր տեսարանն այն էր, երբ մայր ու որդի հանդիպում էին. կարծես մի տարի իրար չէին տեսել. մայրը գոշում էր՝ կեռնիկ, իսկ տղան՝ մամա՛: Ապա ուսուցչուն հպարտության և երջանկության փայլը դեմքին՝ մնաս բարտվ էր ասում աշակերտուներին և տղայի հետ թևանցում գնում տուն:

Եվ ահա խաղաղ օրերին հանկարծ հաջորդեցին փոթորկալի օրեր. սկսվեց Հայրենական Մեծ Պատերազմը: Արագ փոխվեց սովորական մարդու կյանքն ու կենցաղը: Աշակերտուներից շատերի հայրերը, եղբայրները հակատ մեկնեցին: Ուսուցչունի Արուսի կենցաղում էլ անսպասելի փոխուսություն կատարվեց: Կեռնիկը կանչվեց Բանակ:

Որքան էլ ծանր էր մոր համար իր միակ որդուց բաժանվել, բայց նա վիշտը թարցրած; զուապ որդուն ճանապարհեց հետեւյալ խոսքերով.

— Գնա՛, կեռնիկ, Հայրենիքդ պաշտպանիր, դա ամենագեղեցիկ և սրբազն գործն է:

— Մամա, տես, շտխրես ու լաց վինես. չէ՞ որ դու շատ զավակներ ունես՝ քո աշակերտուները: Իսկ ես կկովեմ անձնագոհությամբ:

Մայրը թաքում սրբեց աշքերը, նախատեց իրեն թուլության համար ու շշնչաց.

— Ի՞մ սիրը և մայրական սիրտը թող քեզ վահան լինեն:

Այնուհետև և դպրոցում, և շրջապատում մի ընդհանուր դարձանք էր տիրում, թե ինչպես կարողացավ ուսուցչութիւն Արուաը բաժանվել իր որդուց և որդին էլ՝ մորից: Թվում էր թե ոչ մի ուժ չէր կարող բաժանել նրանց միմյանցից: Բայց ահա պատերազմը, Հայրենիքին սպառնացող վտանգը նրանց բաժանեց:

Այդ մեղմամաղիտ ու հեղաբարո կինը միանգամից փոխվեց: Աշակերտուհիները զարմանքով երբեմն հարցնում էին: — Այս ի՞նչ պատահեց մեր ընկեր Արուաին, ճրդեհի պես մտնում է դասարան ու քիչ է մնում մեզ էլ ճրդեհի:

— Աղջիկներ, պատերազմ է, պատերազմ, — այս էր նրա մըշտական խոսքը:

Աշակերտուհիներն իրենց դիտողության մեջ չեն սխալվում: Հայրենական պատերազմը, որդու բանակ գնալը հեղաշրջեցին ուսուցչուն ներքին աշխարհը: Նա այժմ այսպես էր մտածում. «իմ քրոնտն էլ դպրոցն է, իմ մարտկոցը՝ դասարանը: Կոնիկս ուազմաճակատում, ևս էլ դպրոցում կպայքարենք Հայրենիքի համար»:

Այդ մտածողությամբ մտնում էր դասարան, խանդավառվում և խանդավառում աշակերտուհիներին:

— Զեղանից ամեն մեկը ուսման գինվոր է, լավ սովորել կնշանակե թշնամու դեմ կովող մեր բանակին օդնել:

Դասից գուրս էլ նա ակտիվ մասնակցում էր հասարակական աշխատանքներին: Միտինգների ժամանակ ձայն էր խնդրում ուսուցչուհին և բեմ էր ենում դեմքը շառագունած, հուզումնալից ցնցումներով, բռունցքները սեղմում էր, աշքերից կրակ էր ցայտում:

Ահա մի այսպիսի միտինգի ժամանակ շնորհ աշակերտուհիների մեջ.

— Ընկեր Արուաը ձայն խնդրեց, ընկեր Արուաը...

— Երբ անարդ թշնամին ուզում է մեր հողը զավթել, մեր ազատությունը խեղդել, ո՞վ պետք է կռվի, ո՞վ, եթե ոչ մեր որդիները, մեր ամուսինները, մեր եղբայրները: Մենք ամենքս մի մարդու պես մեր կրծքով պետք է պաշտպանենք մեր աննման Հայրենիքը... Իմ կոնիկն էլ գնաց իր Հայրենիքի հանդեպ պարտք կամտարելու, ևս էլ պարուք շեմ մնա...

Մարտի ելած զինվորի պես նա ձգվել էր, ձայնը խրոխտացել: Հայացքը բոցե ալիքի նման անցավ ժողովականների վրայով, նա վերջացրեց: Ծափահարում էին միտինդի հավաքվածուսուցիչները, աշակերտուհիները. ծափերի որոտի տակ նա բեմից իջավ: Շուրջը խոսում էին, աղմկում, իսկ նրան թվում էր, թե այժմ ինքը կառնիկի հետ միասին զենքը ուսին՝ գրոհից էր վերադարձել:

Սովորականից ավելի վաղ էր նա դուրս գալիս տնից, դասունքնար թե շունենար, միմնույն էր՝ այնտեղ նա միշտ գործ էր գտնում և ամենից վերջն էլ դպրոցից նա էր տուն գնում:

— Ընկեր Արուա, ինչո՞ւ եք այդպես շուտ գալիս, — հարցնում էին աշակերտուհիները:

— Հապա ի՞նչ անեմ, որ շուտ չգամ, չէ՞ որ կառնիկս առաջվա պես տանը չէ, — պատասխանում էր ուսուցչին:

Նա չեր կարողանում մի տեղ երկար նստել կամ կանգնել. դասամիջոցներին շրջում էր միջանցքներում, տրորում էր քունքերը, ձեռքերը, մոտենում էր աշակերտուհիներին առանձին-առանձին ու հարցնում, — նամակ ունե՞ք ուազմաճակատից, հայրիկից, եղբորից, քեռուց:

Ահա մոտենում է նրան իր ամենասիրելի աշակերտուհին և — իսկ դուք, ընկեր Արուա, նամակ ունե՞ք կառնիկից:

Ասես կենսաբեր զուր տային. նա սթափվեց ու սև աշքերի շուրջը թարթիչները խաղացնելով սկսեց.

— Երեկ հենց կառնիկից նամակ ստացա, — մի պահ լոեց, ապա աղջիկների խմբի հետ քաշվեց մի անկյուն ու գրպանից ինչպես մի թանկ գանձ հանեց նամակը:

— Գիտեմ, ձեզ էլ կհետաքրքի մարտիկի նամակն իր մորը:

— Այո, ընկեր Արուա, — վրա բերին աղջիկները:

Ուսուցչին զգուշությամբ բացեց նամակի ծալը և սկսեց կարդալ.

«Սիրելի մամա ջան, հենց որ զինվորի շորեր հագա, գլխիս սաղավարտ դրի, հրացան վերցրի, մեջս մի այնպիսի ուժ առաջացավ, որ ինքս ինձ շնանաշեցի: Դու էլ ինձ շես ճանաշի, այնպես եմ փոխվել: Գրում եմ ուազմաճակատից: Մամա, սնայպեր եմ, մեկ էլ տեսար՝ գնդակս վը՝ զզ, ֆրիցի հոգեհանգիստը բերեց: Ես

որ առաջ անգամ ափսոսում էի մի ձանձ սպանել, այժմ այդ երկու-
տանի գաղաններին հաճույքով եմ գլորում։ ԶԵ՞ որ նրանք բռնու-
թյուն ու խավար են ուզում բերել մեր երկրին, իսկ մենք, արդար
կողմի զինվորներս՝ մեր ազատությունն ու պատիվն ենք պաշտ-
պանում։ Ինչ ես ամեն անգամ գրում՝ զգուշացիր... վախկոտ հո-
շեմ, որ գնդակն ինձ կպչի... Լավ եմ քողարկվում։ Գլուխս շեմ
ուզում գովել, բայց նշված եմ, շուտով կկարդաս, կուրախանաս...

Իմ հաղթական բարեները հաղորդիր քո ընկեր ուսուցիչներին,
աշակերտուհիներին, մարտական ջերմ բարեներ քեզ իմ ընկերնե-
րից և հրամանատարից։

Համբուրում եմ—քո կեռնիկ»։

Լուս էին թե՛ ուսուցչուհին, թե՛ աշակերտուհիները, որոնք հիա-
ցած աշքերով նայում էին նրան։ Ուսուցչուհին շհագենալով որդու
նամակից՝ դեռ պահում էր աշքերի առաջ, կարծես նամակն երկա-
րել էր ու նա շարունակում էր մտովին կարդալ։

Զանգի ձայնը ուսուցչուհուն սթափեցրեց։ Նամակը ծալեց,
զրեց գրպանը և երբ շուրջը նայեց՝ աշակերտուհիներն արդեն
ցրվել էին իրենց տեղերը։ Ուսուցչուհու մեղմ և գգվալից հայացքը
նորից անցավ դասարանի վրայով։ Աշակերտուհիներից ամեն մեկն
ուզում էր ինքը դաս պատասխանել, իսկ ուսուցչուհու աշքերի
առջև դեռ երկար ժամանակ բռնել էր կեռնիկի նամակը։ Աշակեր-
տուհի Սոնիկը կարդում էր մի հերոս օդաշուի կյանքի պատմու-
թյունը, մեկ ուրիշը՝ Արեք պատմում էր այդ նույն առանց գրքի։
Հայրենիքն է նրան թեեր տվել, կամք և արիություն, խիզախ օդա-
շուն երդվել է շիջնել երկնքի շերտերից, մինչև որ թշնամու ան-
գրդները իսպառ շնչվեն մեր երկնակամմարից։

— Պատմիր, լավ է, —խրախուսում էր ուսուցչուհին՝ բարի
հայացքը աշակերտուհու վրա։

Այդ օրը լավ թվանշան ստացան բոլոր դաս պատասխանող-
ները։

— Երանի ընկեր Արուաը ամեն օր կեռնիկից նամակ ստա-
նա, —ծիծաղելով շնչում էին ուսուցչուհու կյանքը, ժամա-
նակն աննկատ էր անցնում ու նա մենակություն չէր զգում։

Ահա նորից դեպի տուն էր գնում ու նրան թվում էր, թե ամեն

կողմից բնությունը և մարդիկ հարցնում էին՝ «Անոնիկից նամակի ևս ստացել»։ Նա պլիսի շարժումով պատասխանում էր այս, և շորթերն ինքնարերաբար 22նշում էին, — Անոնիկը բարեւում է բոլորիդու։

Տուն էր հասնում արագ քայլերով, աղմուկով բացում էր դռւոք։ Հարևաններն ասում էին՝ ուսուցչունին անպայման նամակ ունի Անոնիկից։

Հարեւանների հարցին նա պատասխանում էր շտապ։

— Անոնիկը ողջ, առողջ է, կովում է թշնամու դեմ. սնայպեր է։

Սպա մտնում էր տան առջևի փոքրիկ պարտեզը, խնամում, շրում Անոնիկի տնկած ծառերն ու թփերը, երկար, երկար նայում էր Անոնիկի բալնուն, որ արդեն գարնան դեմ ծաղկել, փթթել էր ինչպես զուգված նորանարս և հաճելի բուրմունք էր տարածել իր շորս դին։ Կարուած մայրը ասես ծաղիկներից իր Անոնիկի մանկության բույրն էր առնում ու 22նշում էր մեկուսի՝ «ախ, երանի Անոնիկս տեսնի»։

Պարտեզից նա տուն էր մտնում, կանգնում որդու սեղանի առջև ու նայում նրա նկարին, զրուցում նրա հետ։ — Դու հանգիստ չես, իմ սիրելի որդի, ես էլ հանգիստ չեմ ու չեմ կարող լինել. երբ կվերադառնաս, միայն այն ժամանակ կհանգստանամ քեզ հետ միասին։ — Քիչ հետո սեղանի առաջ նստած որդուն նամակ էր գրում։ Նրա կյանքի ամենաերջանիկ պահն էր այդ, երբ հնարավորություն էր ստանում զրուցելու որդու հետ։

«Իմ թանկագին որդի Անոնիկ, նամակներդ ինձ կյանք և աշխարհ են պարգևում։ Հպարտությամբ է լցվում հոգիս, երբ ամեն անգամ իմանում եմ, որ քաջարաբ ես կովում... Երազում միշտ քեզ եմ տեսնում. գալիս ես դեմս այնպես առույգ, այնպես հսկամարմին, որ ձեռքերս չեն բավում քեզ գրկելու, գոշում եմ՝ Անոնիկ, ու ինքս իմ ձայնից արթնանում։

Ի՞նչ է մնում ինձ անել այս մեծ կովի օրերին, եթե ոչ քեզ հետ մեկտեղ թշնամու դեմ պատերազմել ու հաղթանակը մոտեցնել։ Ուսումնական տարին հաջող ենք փակում. իմ դասարանն այս տարի շատ առաջադիմեց։ Սանուհիներս տարեվերջի քննություններին լավ են պատրաստվել։ Մյու բանը նշվեց ընդհանուր ժողովում և գրեցին թերթում։

Սիրելի կունիկ, այս գարնան պարտեզդ ավելի շատ է կանաչապատվել, ծաղկել ու փթթել է քո բալենին: Անհամբեր սպասում եմ, որ բալը կարմրի, ինձ թվում է, թե այն ժամանակ դու տուն կվերադառնաս: Գրիր, նամակներդ օդի պես անհրաժեշտ են, նրանցով եմ ևս շնչում: Լավ քողարկվիր, իմ սնայպեր տղա, թշշ նամու գնդակը թող քեզ շգտնի: Շուտով հաղթանակ եմ ցանկանում մեր սովետական զորքերին, քեզ և քո ընկերներին:

Իմ մայրական բարեները հաղորդիր քո ընկեր մարտիկներին, քո հրամանատարին:

Զերմ համբույրներով քեզ սիրող մայր՝ Արուա:

Նա առանձին խանդաղատանքով նամակի մեջ դրեց բալենու սպիտակ ծաղիկներ ու ծրաբեց: Առավոտը դպրոցի ճանապարհին նամակը փոստարկվը ցցեց ու քայլերն ուղղեց դեպի դպրոց: Օդը լցված էր արևի շողերով ու գարնան բույրով, ուղիոն ձայնում էր բարձր՝ սովորական զորքերի հարձակման և հաղթանակների մասին: Ուսուցչուհին շնչում էր.—իմ կունիկն էլ է մասնակցում... Նա վառ հույսերով մտավ դպրոց, ուր զիմավորեցին նորից աշակերտուհիները, որոնց գգվել ու համբուրել էր ուղում նա:

Վարդուհին տեսավ ուսուցչուհուն միշանցքում երթևեկելիս, մոտեցավ, ուղում էր հարցնել տարեվերջին թվանշանների մասին, որ այժմ հուզում էր նրան:

— Բնկեր Արուա...

Նրա խոսքը կիսատ՝ ուսուցչուհին շտապեց պատասխանել.

— Կունիկին նամակ ուղարկեցի և բարեներ ձեր բոլորի կողմից: Նա շատ կուրախանա: Հանկացա՞ր, Վարդուհի, կունիկը նշված է պարզեատրվելու համար,—նրա աշքերի ուրախ փառը թափանցեց աշակերտուհու հոգու խորքը և նա մոռանալով իրեն մտահոգող հարցը, շարունակեց.

— Բնկեր Արուա, կունիկը հերոսների շարքը կանցնի, կգրին թերթերում, կգովեն, սնայպեր կուն Հովհաննիսյանը արժանացել է կառավարական բարձր պարգևի...

Շոյվում էր մայրական անհագուրդ սիրու, մանկան անմենյ ժպիտն էր պատում դեմքը: Նա հենվեց աշակերտուհու ուսին:

— Վարդուհի ջան, ճշմարիտ ևս ատում, ախր տանն էլ նու ըրինակելի էր, օնում էր ինձ բոլոր զործերում, չեր բարկացնում.

միշտ մամա, մամա կանչելով հետևիցս պառւյտ էր գալիս:—Մի փոքր դադարից հետո ավելացնում էր հպարտորեն:—իսկ զպրոցումն էլ օրինակելի սովորող էր և ակտիվ կոմերիտական:

Այդ օրը դասին նա դարձյալ ոգևորված էր, իր հոգու բոլոր գանձերը, իր ամբողջ գիտությունը ուզում էր տալ աշակերտուհիներին: Պատմում էր պատմական հերոսների ու հերոսական դեալքերի մասին:

— Բայց մեր օրերի հերոսները գերազանցեցին անցյալի հերոսներին,—ավելացնում էր նա հիացմունքով և առաջարկում աշակերտուհիներին ամառվա ամիսներին գրել շարագրություններ՝ «Հայ հերոսները Հայրենական Պատերազմում» թեմայով, գրել սովորական զորքերի հաղթանակների մասին:

— Իսկ որ Լևոնիկի հերոսության մասին ես գրե՞մ, —առաջարկեց Վարդուհին:

Ուսուցչուհին և երջանիկ, և ամոթիսած՝ գլուխը խոնարհեց կրծքին.

— Այդ քո գործն է,—պատասխանեց նա ցածրաձայն:

Վերջին օրերը նա սասափել զբաղված էր, հարեւանները նրան տանը չէին տեսնում, դուռը միշտ փակ էր: Ասում էին, ուսուցչուհի Արուազ դասի սիրահար է, դաս որ վիճի, կստեղծի: Նա պարապում էր թույլ աշակերտուհիների հետ, ամեն շանք գործ գնում, որ քննություններին չկտրվին: Հոգինածությունից չէր տրտնջում, միայն թե լավ ըմբռներին: «Զէ՞ որ Լևոնիկն էլ հանգիստ շունի կովի մեջ, —շարունակ կրկնում էր նա, —ես էլ պետք է աշխատեմ անդադար մինչև հաղթանակը»:



Գարնան վերջն էր, արևն ավելի շռայլորեն էր սփռում իր ճառագայթները, տաքացնում երկիրը: Ծաղիկները թափվում, ծառերը պտղակալում էին: Այդ օրը վերջին դասն էր: Ութերորդ դասարանի աշակերտուհիները զվարթ դեմքով, ծաղկեփնջերով խոնվել էին իրենց դասարանի առջև:

Հակառակ իր սովորության՝ այդ օրը ուսուցչուհին շատ ուշացավ: Աղջիկները հարցական նայում էին միմյանց:

— Ե՞նչ պատահեց...

— Մի՞թե հիվանդ է:

— Իմ ծաղկեփունջն ամենից սիրունն է, — ճշում էր Սոնի-
կը: — Ես պետք է առաջինը նվիրեմ...

— Իմ ծաղիկները թարմ են ու կարմիր, — ասում էր մեկ ուրիշը:
Նրանց վիճաբանությունն ընդհատվեց, երբ Վարդուհին շնչա-
կուոր վազելով հայտարարեց:

— Ահա նա գալիս է...

Դանդաղ ու երերուն քայլերով գալիս էր ուսուցչուհին: Նա
մոտեցավ աշակերտուհիների խմբին, գլուխը մի փոքր բարձ-
րացրեց, բարեւց:

Ի՞նչ զարմանալի բան, կարծես նրա մարմինը փոքրացել էր,
գեմքը գունատ էր, աշքերի տակ խոր ակոսված:

Նոր միայն զգացին, որ ուսուցչուհին հիսունի մոտ էր և մա-
զերի մեջ սպիտակ շերտեր էին երեսում:

Աշակերտուհիներն ըստ իրենց սովորության ուրախ ճիշով
շրջապատեցին նրան:

— Ընկեր Արուս, ինչո՞ւ ուշացաք, հիվա՞նդ էիք:

— Ներեցեք, սիրելի աղջիկներ, — սեղմված ատամների միջից
հազիվ լսելի պատասխանեց ուսուցչուհին և տեղ էր փնտրում նըս-
տելու: Մինչդեռ ուրիշ անգամ ոտքի վրա կանգնած՝ երկար զրու-
ցում էր և կատակում: Նա նստեց, մի փոքր շունչ առավ, ապա բա-
ցեց դասացուցակը և սկսեց շտապ կարդալ թվանշանները:

— Աստվածատրյան Վարդուհի՝ հայոց լեզվից 5, Ավագյան
Արմիկ՝ 5, Ալեքյան Աստղիկ՝ 5...

Նկատելի փոփոխություն կար ուսուցչուհու մեջ, բայց աշա-
կերտուհիները չեին կարողանում հասկանալ՝ ինչից էր: Նա հե-
տըդհետե դալկանում էր, շուրթերը դողում էին:

Մի՞թե հիվանդ է, — մտածում էին աշակերտուհիները, — բայց
նա համառորեն շարունակում էր իր գործը: Վերջին անունը կար-
դաց ու դադար տվեց: Ասես ծանր բեռից կթվել էին ուսերը: Հոգ-
նած՝ հենվից աթոռին:

— Գոհ եմ ձեղանից, — շարունակեց նա. — պատերազմի տեմ-
պով ընթացաք. ամառվա ամիսներին շատ կարդացեք, շարադրու-
թյուններ գրեցեք, որ մայրենի լեզվին ավելի լավ տիրապետեք...

Ինչպիսի մեծ ճիգ էր գործադրում նա խոսելու համար: Ապա
նորից լոեց և լուս հայացքն ասես աղերսում էր, որ իր փոխարեն
նրանք խոսեին:

Աղջիկները երախտազիտությամբ լցված դեպի իրենց ուսուցչուհին՝ ծաղկեփնչեր թափեցին սեղանի վրա:

— Այս ծաղկիկները ճակատում կուլող մեր Հերոսներին են սաղական և ոչ թե ինձ,— Հաղիկ 22նշաց ուսուցչուհին և աշքերն արցունքով լցվեցին:

Աշակերտուհիները քարացած նայում էին ուսուցչուու այլայլված դեմքին և չին կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ նա այդպես տիրեց, չէ՞ որ նրանք ուզում էին նրան միայն ուրախացնել:

— Ընկեր Արուս, — ուզեց հրաժեշտի խոսք ասել Վարդուհին, — մենք ժամանակավորապես բաժանվելով ձեղանից և դպրոցից տանում ենք մեզ հետ լավ հուշեր. դուք շնորհեցիք ձեր առողջությունը և հանգիստը, պարապեցիք այնքան, ինչքան ուժ ունեիք: Մենք էլ մեր պարտքը կկատարենք, կգանք նոր ուժով կլծվենք ուսման գործին. պատերազմն էլ, հույս ունենք, շուտով կվերջանա, հաղթանակով տուն կվերադառնան մեր հարազատները:

Ուսուցչուհին ցնցվեց, կարծես խվում էին գլխին: Շրթունքները սեղմեց, վախենում էր խոսել:

— Ես չեմ ուզում ձեղանից բաժանվել, — հանկարծ բացականչեց նա ու լոեց: — Աղջիկներ, ինձ ներեցեք, ես պետք է տուն գնամ: Այսօր եկա, որ իմ պարտքը կատարեմ վերջին անգամ: — Նա վեր կացավ ու թվում էր՝ ահա պիտի ընկնի:

Վարդուհին բռնեց նրա թեր՝ հասկանալով նրա վիճակը: Մէքանի ուրիշ աշակերտուհիներ էլ շրջապատելով ասացին:

— Մենք ձեզ տուն կուղեկցենք:

Ուսուցչուհին այնպես աղերսական հայացքով նայեց նրանց աշքերին, կարծես ասում էր.

— Մի՞թե այդքան անօդնական եմ:

Երբ մոտեցան տան դռան՝ նա ետ-ետ քաշվեց վախեցած:

— Իմ սիրելիներ, ինձ մենակ մի թողեք:

— Մենք ձեզ մենակ չենք թողնի, — ասացին աղջիկները:

Նա դիմեց գեպի պարտեզը:

— Եկեք նստենք այս բալենու տակ: Տեսնում եք, ինչպես է ծաղկել... Գիտե՞ք ում բալենին է սա:

Եվ նա շրթունքները կծոտեց:

— Լուսնիկինը... — անմիջապես վրա բերեց Վարդուհին:

Ուսուցչուհին թախծորեն ժպտաց, Վարդուհին շարունակեց.

— Այսնիկը կգա, այս ծառի տակ քեֆ կանենք:

Ուսուցչուհին վաթաթվեց նրա պարանոցին:

— Իմ անդին, իմ բարի աղջիկ, երանի թե ճշմարիտ լինեին խոսքերդ:

Փշում էր երեկոյան ցուրտ քամին: Ծաղկի թերթերը թափւում էին նրանց ուսերին:

Պարտեզից նրանք տուն դնացին:

Ուսուցչուհին աղջիկների թևից բռնած տուն մտավ, ընկապմահճակալին:

— Ախ ի՞նչ պատահեց, ի՞նչ պատահեց մեր բարի, մեր լավը ընկեր Արուսին,—շշնջում էին աշակերտուհիները:

Վարդուհին մոտեցավ, գրկեց ուսուցչուու գլուխը:

— Դուք հիմանդ եք, ընկեր Արուս:

— Ու, սիրտս է...—Հառաշեց նա: Նրանցից մեկը հանկարծ նկատեց սեղանի վրա ընկած մի նամակ ու մոտ կանչեց Վարդուհուն: Վարդուհին վատ բան կուահեց, շինի՝ թե կոնի-կին..., ու ձեռքերը գովալով սկսեց նամակը կարդալ:

— Զեր որդին՝ կոռն Մովսեսի Հարությունյանը հերոսաբար զոհվեց Հայրենիքի անկախության ու ազատության համար մղված մարտերում:

Վարդուհին ցնցվեց, մի պահ լուս կանգնեց ու կրկին աշքի անցկացրեց նամակը:

— Սիսալ... թյուրիմացություն, սա ձեր կոնիկը չէ,—Ճշաց նա, — մեկ ուրիշն է, հավատացնում եմ, ընկեր Արուս, դուք սիսալ եք կարդացնել: Ազգանունը Հովհաննիսյան չէ... միայն անունը և հայրանունն է... փողոցը նույնպես ձերը չէ...»

Վարդուհին վագեց, գրկեց ուսուցչուն ու սկսեց ուրախությունից հեկեկալ: Մի անսպասելի աղմուկ բարձրացավ սենյակում: Ուսուցչուհին կարծում էր, որ այդ բոլորը սարքեցին իրեն հանգըստացնելու համար և արցունքների միջից ասաց.

— Ես երեխա՝ եմ, ինչ է, ուզում եք ինձ հավատացնել:

— Ո՛չ, ընկեր Արուս, ապա ձեր աշքով կարդացեք.—և նամակը մոտեցրին նրա աշքերին:

— Իմ կոռնիկ, իմ կյանք, մի՞թե այս բոլորը թյուրիմացություն է, ախ, երանի թե...

Ու աշքերին շնավատալով՝ սկսեց նորից կարդալ գրությունը. արցոննքի երկու կաթիլ կաթեցին թղթի վրա, նա դանդաղ, խորհրդավորությամբ թուղթը դրեց սեղանին ու ձեռքի ամփով ամուր ծածկեց:

— Ուրախացիր, ընկեր Արուա, Լևոնիկն առողջ է, — ամեն կողմից վրա բերին աշակերտուհիները:

— Չեմ հավատում, չեմ հավատում, — գրեթե ճշաց ուսուցչուհին:

Աղջիկները տեսան, որ այդ փաստն էլ չի համոզում ուսուցչուհին, սկսեցին ուրիշ ելք փնտրել. անհանգիստ շրջում էին սենյակում, իրար ականջի փսփսում, վերջապես գյուտ անողի պես վարդուհին աղաղակեց.

— Ես և Սոնիկը հենց հիմա կդնանք զինկոմիսարիատ և ամեն ինչ կպարզենք:

— Շշմարիտ է, ճշմարիտ է, — հաստատեցին մյուս ընկերուհիները: Իսկ ուսուցչուհին վշտից քարացած, արձանի պես լուռ նայում էր աշակերտուհիներին:

Վարդուհին և Սոնիկը վազեվազ գնացին: Ուսուցչուհու մոտ մնացին երկուաը. նրանք ամեն կերպ պշտատում էին ցրել ուսուցչուհու տխուր մտքերը, զանազան դեպքեր էին պատմում իրենց կյանքից: Ուսուցչուհին մերթ լսում էր, մերթ շեր լսում ու ջղածգորին տրորում էր ձեռքերն ու շշնչում, — եթե Լևոնիկը չէ, հապա՞վ է...

Մինչ նրանք այդպես զրուցում և անհամբեր սպասում էին, մեկ էլ ուրախաբեր ծիծոնակների պես ներս ընկան վարդուհին և Սոնիկը:

— Հաստատվեց, որ դա Լևոնիկը չէ, գրությունը սխալմամբ է ընկել... — Վարդուհին աղաղակելով մեկնեց գրությունը, որի վրա մակագրված էր, որ հասցեն ճիշտ չէ և չի վերաբերում Լևոն Հովհաննիսյանին:

Ասես ուսուցչուհու աշքերի մշուշապատ քողն ընկավ. նա սկսեց կարդալ. ապա կանգնեց տեղից, ձգվեց ու բացականչեց.

— Ուրեմն դու կենդանի ես, խփում ես ֆաշիստներին, իմ սնայպեր, հերոս տղա...»

Հանկարծ նա ցնցվեց, իր սեփական ուրախության ալիքին հաջորդեց մի ուրիշ զորեղ զգացում:

— Իմ կեռնիկը չէ, բայց չէ՝ որ մեկ ուրիշն է, տեսնես ո՞ւմ քաղան է, ո՞ր մոր սիրալը սկսի կսկսա...—կռեց ու նորից նստեց անկողնու վրա: Նա կրկնեց.—բայց չէ որ...—ու լռեց... Արցունքով լցված մոր աշքերում և ժպիտ, և թախիծ էր շողում,—ախ երանի թե ոչ ոք, ոչ մի մայր շագար,—հազիվ լսելի շշնչաց նա:

Իսկ աշակերտուհիները ուրախ ծիծաղում էին և բացականչում.

— Կեռնիկը կվերադառնա որպես շքանշանակիր հերոս, ու մենք բոլորս կհավաքրվենք, կպատմենք նրան այս սխալ հասցեագրված նամակի և, ընկեր Արուս, ձեր անտեղի հուզումների մասին:

Վշտի ամպրոպն անցել էր ուսուցչունու հոգուց՝ խաղաղ էր, ու աշքերը և կարոտ և գգվանք էին արտահայտում: Նա մայրական անհուն սիրով նայում էր անվերջ իր սանուհիներին ու ամոթխած աղջկա պես գլուխը կրծքին խոնարհած՝ շշնչում.

— Ներեցեք և հասկացեք ինձ, ախր միակ որդիս է և իմ միակ հույսը: Կարոտն էր ինձ կուրացրել... Հենց որ առաջին բառը կարգացի աշքերս մթնեցին...

Աշակերտուհիներն իրար ընդհատելով պատմում էին դըպրոցական կյանքից ծիծաղաշարժ դիպքեր: Ուսուցչին լսում էր ու գլուխը տմբացնում:

— Իսկ զուք ի՞նչու չեք խոսում ընկեր Արուս,—դիմեցին աշակերտուհիները ուսուցչունուն:

— Մի՞թե ցավ չէ, որ ինձ պես մեկ ուրիշ մայր պիտի սկա..— պատասխանեց ուսուցչին: Այժմ էլ նրան հանգիստ չեր տալիս ուրիշի վիշտը...

— Ախ, ընկեր Արուս, ինչո՞ւ չեք մոռանում,—ասացին աղջիկները հանգիմանող տոնով:

Ուսուցչուհին զգաստացավ և մի պահ մոռանալով, որ ինքը տանն է և ոչ դասարանում, շարունակեց հաստատակամ շեշտով...

— Տիրապետեցեք մայրենի լեզվին, ամառը շատ կարդացեք:

Ուշ երեկո էր, գեռ երկար ժամանակ վառվում էր ուսուցչուու տան լույսը: Աշակերտուհիները չեին ուզում մենակ թողնել իրենց շանասեր ուսուցչուն, որ շշնչում էր.

— Ախ երանի թե ոչ մի մայր շագար...

Իսկ պարտեզում գիշերային մեղմ քամուց խշշում էր բաւենին և թափում գետնին իր ծաղկաթերթերը:

ԱՌԱՋԻՆ ԹՇԻՉՋՐԸ

Սև աշքերով հանդուպն մը աղջիկ էր նա, որ առաջին անգամ՝ պարաշյուտային բարձր աշտարակից իրեն ցած նկանց ու մի ակնթարթում զնդակի պես թեթև գետնին կանգնած՝ ծիծաղում էր ընկերների հետ:

Այդ օրվանից նրա համար աշտարակից թոշելը խաղալիք դարձավ:

Ն. գործարանից առաջին կոմերիտունին էր նա, որ արձադանգեց պարտիայի կոչին՝ սկսեց համախնել օդաշուական գլորոյ, առելով.—Մայրս թոշել շգփտեր, սրովհետեւ թեր շուներ, իսկ ես թոշել կոռվորեմ, ինձ թեր է տվել իմ սովետական մայր երկիրը:

Սովետական կենսաթիրթիու տարիներն աճեցրել էին նրա մեջ մի կայտառ հոգի: Նա դադար շուներ, ազատ ժամերին աերոդրոմ էր վագում տեսնելու թոփշքի առաջին պահը, թե ինչպես էր օդանավը գետնից պոկվում:

Եթե կարդում կամ լսում էր սովետական օդաշուների հերոսական թոփշքների մասին, սրտի թրթողով հաշվում էր այն վայրկյանները, եթե ինքն էլ պատրաստ կլինի ինքնուրույն թոշելու:

Այդ բոլորի հետ մեկտեղ նա չէր կտրվում արտադրությունից, կյանքով լի մտնում էր մանածաղործ ցեխը և սկսում էր աշխատել անսպառ եռանդով:

Բանվորներն ասում էին. — կոմերիտունին թուալ նորմաներից. իսկ նա սիրում էր «թոշել» բառը: Որովհետև նրա համար կյանքը թռչելու, արագության և աշխատմության մեջ էր: Այդպես էր դաստիարակել նրան կոմսոմոլը:

Ժիր օրորվում էր նա մեքենաների շարքում ու հակում էր, որ մեքենաները աշխատեն անխափան:

Հանկարծ նրա զվարթ աչքերի դեմ, արագ սլտովող իւլիկները ալոկվում էին մեքենաներից և հողմասւաց սավառնակների պես ամպերի մեջ կորչում, իրենց հետ տանելով աղջկա բարախուն սիրութ:

Ուրախության քրտինքը ճակատին աղջիկը շշնչում էր.

— Ես կսովորեմ թոշել և կհասնեմ ամպերին...

Այն օրն ավիացիայի տոնն էր: Նա առավոտը վաղ արթնացավ, սատինն սպարզ շրբը հադավ, մազերը կող սանրեց ու քայլեց դեպի անորոշում:

Դեռ ոչ ոք չեր եկել: Նա շուրջն էր նայում ադահորեն, կարծես առաջին անգամն էր այստեղ լինում:

Գետնատարած թերը փոած օդանավերն էին սպասում արեկ առաջին շողքին:

Արեւ ծագեց ու փայլվեց երփներանդ նրանց բրոնզի թերին:

Գարնան նոր բացված ծաղկի պես թարմ, աղջիկը ժպտաց:

— Սրանցից և ոչ մեկը իր ճանապարհը չի մոլորի սովետական երկնակամարում, — շշնչաց մեկուսի:

Քիչ ճետո ազլես նա մենակ չէր: Ժողովորդը հավաքվեց: Դաշտը թնդում էր ցնծությամբ, սովետական քաղաքացիները եկել էին տեսնելու երկինքը նվաճողների թոփշքը:

Օդաշուները զգեստավորված պատրաստ՝ սպասում էին պետի կարգադրությանը:

— Կեցցե՛ն սովետական օդաշուները, — բացականշում էր ժողովորդը:

Հանկարծ գետինը գզրդաց, բարձրացավ խլացուցիչ աղմուկ, հեր առնելով մեկ-մեկ օդանավերը թռան դեպի երկինք: Մենակ մի օդանավ մնաց կանգնած:

Բոլորը հայացքները երկինքն էին բենոել, նայում էին հաղթական ճախրումները: Մի ընդհանուր խնդություն էր տիրում:

Մի օդաշու մոտեցավ այն միայնակ օդանավին և ուզում էր ինքը թոշել, երբ բազմությունը ճեղքելով վրա հասավ մի ուրիշ փոքրամարմին, բարակիրան օդաշու և աղջկա վճիռ ճայնով գոշեց.

— Ես պետք է թոշեմ, ես... — Բոլորը վազեցին այն կողմը և շրջապատեցին օդաշուներին: Նրանցից մեկը գործարանի աղջիկներ, այժմ օդաշուական շորերով զվարթ կանդնած: Աերոդրոմի պետը ակնապիշ նայեց աղջկա աշբերի մեջ.

— Դու պատրաստ ես թոշելու...

Աղջիկը գլխով դրական նշան արեց, հրելով մյուս օդաշու ընկերոջը:

— Թող աղջիկը թոշի, — աղաղակեցին ամեն կողմից:

Ժիր ցատկումով մոր գիրկն ընկած մանկան պես աղջիկ օդաշուն տեղավորվեց օդանավում — ղեկի մոտ, ապա աշբերը կկոցելով թևերը շարժեց:

Մեքենան գետինը փորելով, թեթև թիթեռի պես գետնից պոկվեց:

— Համարձակ թոփ' ը, — աղաղակում էր ժողովուրդը. թաշկինակներ էին ճոճում օդում, բերկրալից հայացքներով էին ճանապարհում այն աղջկան:

Աղջկա սիրտը թրիռաց ուժգնորեն, հետո հանդարտ նայեց հաշվեցույցի սլաքներին, իսկ ներքեսում այլևս մարդիկ չէին երելում:

Սովետական աղջիկն էլ կարող է թոշել, մտածում էր նաղեկն ամուր բռնած, շուրջը երկինքն էր անծիր, ինքն էլ թևերը արձակ...

Դեմքին փոփոռում էր ցուրտ քամին: Գործարանում պտտվող իլիկի փոխարեն դեմը պտտվում էր այժմ մի ուրիշ սուլող իլիկ-պրոպելլերը:

Իսկ մոտորի հետ մի ձայն էր հնչում անընդհատ նրա ականջիշտակ. դա ժողովրդի ոգեսրիշ ձայնն էր:

— Համարձակ թոփ' ը...

Երամից ետ մնացած թոշունի պես ելավ վեր, ապա ճախրեց մյուս օդանավերին հավասար. ինքն էլ չէր սպասում, որ կարող էր այդպես հեշտ հասնել:

Իսկ ներքեսում ժողովուրդն էր սպասում սրտատրուի:

Մյուս օդանավերն արդեն վայրէջք էին կատարում, իսկ աղջիկը դեռ վեր ելնելով, հորիզոնն էր պատռում հանդուգն թափով: Հեռադիտակն աշբերին՝ աերոդրոմի պետը երկինքն էր նայում: Ահա նշանարեց մի փոքրիկ կետ ու ժամաց:

— Այդ նա է, վերադառնում է:

Մարդիկ հարցական ու անհանգիստ իրար էին նայում, թե ի՞նչու էր աղջիկն ուշանում: Իսկ աղջիկը երկնքում՝ շնչառությունը զսպած մոտորի ձայնն էր ստուգում, ապա սրտապնդված, անշփոթմի շարժումով դեկը դարձրեց: Այժմ ներքև էր նետվում... Ահա մոտենում էր—մեծանում:

Թեին տալով օդանավը աերոդրոմի վրա ճախրեց, երկնակամարում մայրենի հողի կարոտով զորացած՝ կուրծքը նորից գետնին հպեց:

Ժողովուրդը ծափահարում էր ու բացականշում.

—Կեցցե սովետական աղջիկը:

Իսկ աղջիկը գլուխն օդանավից հանած՝ հանդարտ ժպտում էր, ինչպես առաջին անգամ պարաշյուտի աշտարակից թուշելուց հետո:

Ամենքը վազում էին մոտիկից տեսնելու այն աղջկան, որ այնպես պարզ էր, սովորական, բայց հանդուգն:

Իսկ աղջիկն արդեն անհետացել էր բազմության մեջ...

ՓՈՒՌՈՒԿԻՑ ՀԵՏՈ

Կինում են հանդիպումներ, որ բացառիկ տպավորություն են թողնում մարդու կյանքում՝ որպես լուսատղ՝ մնում են հիշողության մեջ անմար:

Սրանից մի քանի տարի առաջ ահա մի այդպիսի հանդիպում ոմեցա և ծովի վրա ու երթեք չեմ մոռանում:

Ա. նավով գնում էի ծովափնյա մի քաղաք բուժվելու: Տարվա ամենալավ եղանակն էր՝ գարունը:

Մի քանի օր անընդհատ ծովն ալեկոծվում էր, ուղևորներից շատերը չեին հանդիպում տախտակամած դուրս գալ. ծովը նրանց ահաբեկել էր: Իսկ ես շարունակ շրջում էի տախտակամածի վրա. ծովն ինձ չեր ահաբեկել:

Երեկոյան դեմ ծովը հոգնեց, ալիքները մտնեցան: Նորից գրավեցի իմ սիրած տեղը տախտակամածի վրա ու դիմում էի վերջալույսը:

Ի՞նչ կա բնության մեջ ավելի վեհ ու գեղեցիկ, քան արշալույսի ու վերջալույսի տեսարանը ծովի վրա: Աչքս չեի թարթել, երբ հանկարծ արևագունդը պոկվեց երկնքից, սովոր լողորդի պես սուզվեց ծովն ու իր երփներանգ փայլով շլացրեց իմ տեսողությունը: Ծովը դողաց իր մեջ առնելով երկնքի դատեր ոսկեցող պատկերը: Երկինք ու ծով հպվեցին համերաշխ, արևը նազանքով լվանում էր ծովում իր ոսկե վարսերը:

Որքան սիրաբորբոք էին ծովի ալիքները, ի՞նչ կախարդական էր ծովն այդ պահին: Այդպիսի պահերին մարդ մոռանում է իրեն հուզող առօրյան, ընկեր, բարեկամ, ու նետվում հավերժության գերեւ: Հոգիս անդորր էր ու թվում էր ինձ, որ այդպես անդորր շարունակվելու էր ողջ հանապարհս: Երկի այդպիս երկար մնայի,

Նթե ինձ չսթափեցներ մանկան վճիտ մի ծիծաղ: Շրջվեցի, տես-
նեմ ուկեդանգուր մազերով, սպիտակ հագուստով մի փոքրիկ աղջիկ,
հաղիվ 4—5 տարեկան, թոշկոտում է շուրջս: Նա ծիծաղում էր ան-
վերջ և ինձ նայում: Ես նրան մոտիկ կանչեցի: Մի վայրկյան շան-
ցած և ահա նա թրթում էր բազուկներիս մեջ:

— Ո՞րտեղից, ի՞նչպես հայտնվեց. մի՞թե ծովը նետեց վեր,
ծովափրիտուր լինի կարծես..., մտածում էի ես:

— Ծովի՞կ... Հնչեց շատ մոտիկ կանացի մի նուրբ ձայն:
Փոքրիկ աղջիկն սկզբում վախեցած աշքերը սեեռեց դեպի ձայնի
կողմը, ապա նորից սկսեց ծիծաղել ու բացականչել զվարի շեշ-
տով.—Մամա—...

Ուրեմն մայրն է,—մտածեցի ես: Ինչպես կիսած խնձոր նրանք
նման էին միմյանց: Մի կենսաբեր ալիք շարժվեց կրծքիս տակ՝
մենակ շեմ լինի, մտածեցի...

Ուշադրությունս զրավեց այն դեռատի կինը՝ նուրբ կազմված-
քով, ծով աշքերով, դեմքի կիրթ արտահայտովթյամբ: Ուկեդույն
մաղերն արձակ թափվել էին ուսերին. Հագին՝ թափանցիկ երկնա-
գույն ջրջաղգեստ: Հելլենական արձանի պես զլուխը բարձր բրո-
նած՝ հայացքը չէր պոկում ջրերից: Ինչպես երեսում էր, նա էլ ինձ
պես ճանապարհորդ էր, ծովի սիրահար: Թարմացավ հոգիս գար-
նան բույր առած ու զվարի սկսեցի փոքրիկ աղջկան թոցնել թևե-
րիս վրա: Չարաճճի աղջիկը փոքրիկ թաթիկներով խփում էր ձեռ-
քերիս ու կրկնում,—դյաղյա՛, էլի թոցրու...

Այստեղ, ծովում, արևալողն էր վերջանում, իսկ իմ գրկում
մի նոր կյանք էր սկսվում, աղջիկն էր թովուն... Ու նրա մայրը՝
մաղերն ալեծածան՝ շուրջս մանուշակի բույր էր սփռում:

— Ծովի՞կ...—երկրորդ անգամ լսեցի մոր քաղցրահնչուն
ձայնը,—դյաղյան կհոգնի, վար իջիր:

— Օ՛, ոչ, ի՞նչ եք ասում, ես սիրում եմ երեխաներ, այն էլ
մի այսպիսի աստղածաղիկ,—փոքր ինչ շփոթված պատասխանե-
ցի ես:

— Երեխաներ սիրող մարդիկ բարի սիրու են ունենում և
քնքուշ զգացմունքներ,—պատասխանեց կինը, առանց իմ կողմ
դառնալու: Մտասույզ էր նրա հայացքը, կարծես ծովի խորովթյունն
էր կամենում շափել:

Մանկանը թոցնելով՝ քայլ առ քայլ մոտենում էի դեռատիք կնոջը, որն անփութորեն ետ տարավ ճակատից մազերի փունջն ու դարձյալ իմ կողմը չնայեց:

Տղամարդու տիրական ձայնը բողոքեց իմ մեջ, մտածեցի, ի՞նչ վեհանձնություն և անտարբերություն. երիտասարդ եմ, տեսքով բավական տպավորիշ, կանանց հետ վարվելու ընդունակ. այժմ երեկո, ծով, ես ու նա մենակ. . .

Կինն ինքնարերաբար թե գիտավորյալ տեղափոխություն կատարեց, ինձնից հեռու կանգնելով:

— Գուցե ինքնահավան մի քաղքենուհի է, որ չուզենա ինձ հետ խոսել կամ... ավելի վատ բան մտածելով նրա մասին, սկսեցի անհանգստանալ:

Հանկարծ մտքերիս շղթան կտրվեց. կինը բազովները տարածած, կարոտալից գգվանքով կանչում էր Ծովիկին: Աղջիկը վազեց մամա-մամա ճշալով: Մայրը դրկեց իր Ծովինարին, իսկ ես մնացի մոլոր կանգնած:

Հակառակ իմ սպասածի՝ կինը մոտեցավ, մտերմական տոնով ինձ հանդիմանեց.

— Ի՞նչ եք այդպես լուս, չե՞ք ուզում ընկերակցել: Իմ Ծովիկը ձեզ շատ սիրեց, ձեզ հետ կապվեց, ես ուզդակի զարմացած եմ, նա երբեք այդպես համարձակ չէր մտել օտար մարդկանց գիրի:

Բերկրանքից լեզուս կապվեց, —պատասխանի խոսք չէի գըտնում: Աղջիկը թաթիկներով խփում էր մոր երեսին. նրանք երկուսով զվարթ ծիծաղում էին: Լավ էր, այդ միջոցին ես ինձ կարգի բերեցի և իմ կարծիքով գտա մտերմության բանալին —բերանից հանկարծ թռավ.

— Գուք ամբողջովին տարվել եք ծովով... Սպա անդրագաւրձա մի շատ սովորական հարցի: — Գուք երկա՞ր եք ճամփորդելու ծովով...

— Ո՛չ բայց ինձ համար երկար է թվում այս մեկ գիշերն էլ, —պատասխանեց կինը մշտաժպիտ աշքերն ինձ վրա սենուած:

Այս, երանի թե նա այդպես շասեր, ուրեմն, —մտածեցի ես, —խստաբարո ամուսինն է սպասում, կամ... Սիրտս կծկվեց մի անախորժ զգացումով: Տղամարդը հավանած կնոջ նկատմամբ

զարմանալի հսամոլ է: Կինն ամուսին ունենա թե ոչ, այդ շատ հաճախ միկնուն է նրա համար, ցանկանում է, որ նա ամեն ինչ մոռացած՝ միմիայն իրենով հետաքրքրվի: Ճիշտ այդպես էի մտածում ևս, երբ հողմացրիվ եղան մտքերս. կինը փրփուրանման ձեռքը պարզեց գեպի ծովն ու բացականչեց.

— 0^o, ծով լայնածիր, անհուն, մարդու հոգու պես երբեմն փոթորկու, պղտոր, երբեմն վճիր—ինչպես հայելի: 0^o, ծով, զարմանալի բուժիչ հատկություն ունես դու. լվանում ես մարդու հոգին, մոռացնել ես տալիս կյանքում պատահած ամեն տեսակ դժբախտություններ, տիսուր հուշեր: Ու ծովի վրա կարծես մարդ ծնվում է նորից ապրելու բուռն տենչանքով...

Կինը լոեց. ես նույնպես լուս էի՝ ակնածանքով համակված գեպի նա:

Մայր ու աղջիկ ինչպես երկու ծովածին, նայում էին ինձ վրա: Ծովը այժմ տեղափոխվել և ծփում էր նրանց աշքերում. ծովի փայլն էի տեսնում, ծովի շունչն էի զգում...

— Ինչպես երեսում է, դառնովթյուններ շատ եք կրել կյանքում.—Հարցրի ես խիստ բարեկամական տոնով: Պատասխանի փոխարեն կինը սեղմեց աղջկան իր կրծքին, բացականշելով.

— Ծովիկ ջան, քամին սաստկացավ, բնելուդ ժամանակն է, գնանք:

— Դուք գնում եք ու շե՞ք վերադառնալու,—ասացի ես աղերսական տոնով:

Կնոջ մշտաժպիտ աշքերն իմ տարակուսանքը ցրեցին, նա պատասխանեց աշխուժ:

— Միենույն է, այս գիշեր քուն չի գալու աշքերիս, ես կվերդառնամ ու մենք կզրուցենք երկար:

Նրա անուշ ձայնի թրթիռները սլացան քամու. թևին ծովն ի վեր... Շուրջ դատարկվեց...

Սիրո հանդեսը փակվել էր արևմուտքում. արևը կու էր գնացել սիրատոշոր ծովին. հագուրդ առած ջրերը ներկվել էին մուգ լեղակագույն: Մութն էր արգեն: Նավը ճեղքում էր. ջրերն ու աներեր սուրում առաջ: Այժմ ծովի ջրերում մերթ աստղերն էին առկայօնում, մերթ նավի լույսերը:

«Ո՞վ է տիրացել այդ շքնաղ կնոջ սրտին, և ինչո՞ւ եմ ես

թախծում», — մտածում էի ու չէի կարողանում ինձ հաշիվ տալ: Գնում էի հանգստանալու, մինչդեռ ճանապարհին նորից կյանքն էր ինձ հուզում:

Նորից ծանոթ քայլեր, և մանուշակի գրգորի բույրն զգացի շատ մոտիկ: Նու եկավ ուսերին սպիտակ շալ նետած: Ոչ մարդկային կեցվածքով, այլ ինչպես մի ջրահարս հենվեց տախտակամածի երկաթարին:

«Ախ, ի՞նչ կլինի սիրտս հենարան լինի նրան դեմ մի բռպե, գեթ մի վայրկյան», — մտածում էի:

— Ծովիկս ննջեց, այժմ ես ազատ եմ ու հանգիստ, — ասաց նա մեղմությամբ: Ապա անսպասելի կերպով ավելացրեց: — գիտե՞ք ինչ, դուք մտերմություն եք ներշնչում, կրթված և լրջամիտ մարդ եք երեսում, հետո ծովն է տրամադրում. մարդ այսպիսի ըռպեներին ընկեր է փնտրում, ուզում է խոսել ու խոսել անվերջ:

— Օ՛, ինչ երջանկություն, խոսեք, ձեզ կլսեմ անվերջ, — բացականչեցի ես:

Չայնն այն թույլ ասես ելնում էր ծովի հատակից: Մի՞թե խսկական կյանքն էր, մի՞թե երազ չէր այն... Ես սիրահար ասպետի պես քարացած՝ լսում էի նրան:

— Մարդ սիրտը բացում է երկու գենքում. մեկ մեծ վիշտ կրելուց հետո, մեկ էլ երջանկության պահին: — Հանկարծ ընդհատեց նա, դառնալով ինձ հրամայաբար. — ասացեք, դուք փոթորկի հանդիպե՞լ եք, կամ սիրում եք այն...

— Այո, — պատասխանեցի անակնկալի եկած, առանց ինձ հաշիվ տալու:

Նա շանց իմ պատասխանը, այլ շարունակեց, դեպի ծովը ապավինած:

— Գլխովս երկու փոթորիկ է անցել. մեկը ցամաքի վրա, մյուսը՝ ծովի: Մեկը հոգիս տակն ու վրա է արել, մյուսը՝ նորից կյանք է բերել, արևաշող գարուն:

Դուք շզարմանաք, որ ես այսպես եմ սկսում: Փոթորիկը սարսափելի է միայն առաջին բողքեներին, երբ թվում է թի աջքեն ինչ վերջանալու մոտ է ու էլ կյանք չես տեսնելու:

Այնպես լավ է շնչել փոթորիկից հետո, այնպես քաղցր է կյանքը թվում: Ամեն ինչ պարզվում է, զուզալվում, ճանաչում ես

շրջապատով, մարդկանց: Կեզտերն ամեն ափ են շպրտվում, այն որ նենք շողոքորթ է, ցցվում է աշխիդ առջև իր մերկությամբ, կեղծ սիրո դիմակն է պատովում: Այնպես լավ է շնչել փոթորկից հետո...—առանձին զերմությամբ կրկնեց խոսակցութիս:

— Դուք սիրե՞լ եք,—նա դարձավ նորից ինձ:

Այս անգամ ուղղակի պատասխան չկարողացա տալ. կմկմացրի: Նա ձեռքը թափահարեց, հեգնանքը դեմքին.

— Ի՞նչ վախկոտն եք, ինչո՞ւ չեք պատասխանում,—այլև թույլ շավեց շարունակել:

— Սեր կոչվածը՝ կախարդ թռչում է գայթակղեցնող, որ բույն է Հյուսում ջահել սրտերում, առանց տիրոջ կամքը հարցնելու. մեկ էլ տեսար՝ թեթև հողմից բունն ավերակ դարձավ ու թռչնակն այն կախարդ չվեց...

Տասնյոթ տարեկան էի, նոր կյանքի հորձանք մտած ակտիվ կոմերիտութի: Աշխատանքի ու պայքարի տենդով էի բռնված, սիրու էլ սիրով լի: Հենց առաջին հանդիպումին կայծակի պես իմ աշխատ շողաց այն երիտասարդը՝ արտաքինով գրավիչ, առույգ, լեղուն հարուստ: Իսկ ես ջահել, ես շլացած:

Ծովաքամին շարունակ խաղում էր նրա մազերի հետ, աշքերն անսովոր փայլ էին ստացել: Ես՝ հնագանդ, իսկ նա իշխում էր իմ մաքերին: Կուրծքը հենեց երկաթալարին և շարունակեց.

— Անկեղծ ու անբիծ էր սերս: Հանդիպում էի, ծիծաղում, հրճվում մանկան պես, փաթաթվում էի նրա պարանոցով ասում.— դու ես որ կաս... Նա նույնպես ինձ սիրում էր:

Մեր սիրահարությունից չեր անցել երկու ամիս, երբ մի քանի օր չհայտնվեց նա, շեկավ ինձ տեսության: Սկսեցի անհանգստանալ: Ուշ աշնան գիշեր էր, քամի, վերարկուս ուսերիս ձգեցի, դուրս եկա տնից: մտածում էի, ի՞նչ է պատահել, ուզում էի անպայման նրան հանդիպել: Ճանապարհին սիրոս ճմլվում էր վատ նախաղդացումից, կարծես մեկն իմ ականջին շշնչում էր,—մի՛ զնա...

Մտա մեր մշտական զբոսատեղին, պուրակը, անցնում էի տերեածածկ ծառուղիով. տեսնեմ առջևից գնում է մի թևանցուկ զույգ: «Ջահել սրտերն իրար ծոված երկի մեջ պես սիրահարներ

ին խենթ», — մտածեցի, մեկ էլ նայեցի տղայի երերուն քայլերին ինձ ծանոթ թվացին։ Քայլերս արագացրի, զգուշորեն մոտեցա ու Հանկարծ ի՞նչ... ճիշտ նույն տոնով, ճիշտ նույն խոսքերով նա սեր էր խոստովանում մի ուրիշ աղջկա. «Քեզնից բացի, ուրիշ ոչ ոք»...

Ուզում էի ճշալ, հազիվ ինձ զսպեցի. ուրքերս թուլացան, հանգնեցի մինչև նրանք հեռացան, ապա մի ուրիշ ճանապարհով տուն վերադարձա։ Հոգիս խոռվահույզ էր ու փոթորկոտ, որուն ինչ է, կայծակն ի՞նչ է, որ համեմատվի. անկողնուս վրա երեսն ի վայր ընկած արտասլում էի։ Դուք չկարծեք թե խանդից. օ՛, ոչ, այլ նրանից, որ խարված էի դաժանորհն։ Շշնչում էի ցասումով. խարդախ սեր...

Այդ դեպքից հետո անցել էր երկու օր, երեկոյան պատուհանիս մոտ նստած գիրք էր կարդում, գուսու առանց բախելու ներս մտավ նա այլայլված, գլխարկն աշքերի վրա իշեցրած.

— Օ՛, ինչքան եմ հոգնած, քանի օր շարունակ գործերով զբաղված, չեի կարողանում քեզ մոտ գալ, սիրելիս, — ասաց նա ձայնը կոկորդում խեղդված։

— Հեռացիր, ինչ ես խանգարում ինձ, — ասացի ես խիստ կոսկիտ, առանց գլուխիս բարձրացնելու։

Զհասկացավ հիմարը, կարծում էր սիրախաղ է սովորական։ Կողքիս նստեց, հայացքն այնպես անդուր էր ու կեղծավոր։ Ուզեց ձեռքերս համբուրել...

Չեռքս դողաց, առաջին անգամ կյանքումս հանցանք գործեցի ու շրախիկ՝ ապտակեցի։

Կինը լոեց, հեռում էր, ասես նրա հետ այդ դեպքը հենց նոր էր պատահել։

Ա՛յս, ինչպես էի ուզում նրան միսիթարել, բայց խոսք չէի գտնում։ Շովը շաշում էր կարծես զայրացած այդ պատմությունից, նավը սուրում էր առաջ։ Եմ կողքին կինը՝ լուռ, գլխահակ կանգնած, այդպես տեսեց մի քանի վայրկյան. ապա գլուխը թափահարեց նա ու ասաց համբողված։

— Պիտք է սիրել հանաչելուց հետո... .

— Ոչինչ, դաս եղավ, դուք չպետք է այլևս հիշեք, — միշտեցի ես կարեկցաբար։

— Նրա տեղը սոսկ ավասոսանքը մնաց միայն որպես հուշը Ավասոսացի դեպի նրան տածած իմ լավ զգացումները, որ իզուր անցան, — շաբումակեց նա ցածրածայն: — Որոշեցի այլևս ոչ ոքի չսիրել, բայց կյանքը հղոր է քան մենք ենք կարծում... Հանկարծ խոսքը կիսատ թողած՝ վազեց.

— Ախ, Ծովիկս շբացվի...

Ալիքները բյուր շշունջով ինձ հետ միասին նրան էին սպասում: Շուտով վերադարձավ նա՝ հայտնելով.

— Ծովիկս այնպես խոր, այնպես անուշ է քնած:

— Հետո ի՞նչ եղավ, — հարցրի ևս անհամբերությամբ:

— Այն, որ շատ աշխատելուց առողջությունս վատացավ, բժիշկներն ինձ խորհուրդ տվին ապրել ծովափնյա քաղաքում: Ես անշափ ուրախ էի այդ խորհրդի համար: Սովետական աշխարհը լայն, ինքս աշքարաց կոմերտառութի, ուր էլ որ գնացի ինձ համար աշխատանք կար: Մի գարնանային առավոտ, հիշում եմ ինչպես այսօր, մնաս բարով ասացի ծնողներիս, ընկերներիս և Հանապարհվեցի դեպի ծով, թողնելով այնտեղ մի տխուր հուշ, մի անհաջող սեր: Նավ նստեցի, նավում այնքան ուղևորներ, հագել էի ոտից գլուխ սպիտակ գարնանային զգեստ, զգում էի հետապնդող շատ հայացքներ ինձ վրա, բայց ևս ոչ որի չէի ուզում նայել, չէի ուզում խոսել: Թող գարմանալի շթվա, այդպես երբեմն պատահում է ամեն մարդու հետ: Նավ նստելու պահից ծովը դարձավ իմ մտերիմն ու հարազատը: Սիրտս բաց էր ծովի դեմ՝ ինչպես հողմահար առագաստ: Այնքան ալիքներ հոսեցին, այնքան մտքեր ճամփեցի դեպի ծով: Երկրորդ օրը երեկոյան դեմ ծովն սկսեց ալեկոծվել, թվում էր որ ծովի անդորրը ես խանգարեցի: Այդ վիճակում ծովն ավելի գրավիչ էր, ձգում էր ինձ մագնիսացին ուժով: Ուղկորները հետզհետե քաշվեցին իրենց նավախցիկները, հանգստանալու ես մնացի տախտակամածի վրա, մեկ էլ ծովային մի քանի պաշտոնյաներ:

Հանկարծ լսեցի շատ մոտիկ կանացի սուր ծիծաղ և նրան միախառնված առնական թափ ձայն, որ ասում էր ուսւերենով՝ պետք է զգուշանալ, ծովը կարող է փոթորկել այս գիշեր:

«Ո՞վ էր այդպես համարձակ գուշակություն անում ծովի մասին» — մտածեցի ես ու կիսով շափ շրջեցի նրանց կողմը, տեսա,

երեք աղջիկ թեթև հագնված. նրանց մեջ մի տղամարդ՝ սոլիդ տեսքով, լայնալանջ, սև աշխերով, ծխամորճը բերանում: Ես նորից դեպի ծովը դարձա, խուսափելով նրանց զննող հայացքից: Իսկ նրանք փոքր ինչ կանգ առան և անծանոթ տղամարդն առաց իմ հասցեին,—իսկ այս ընկերուհին մենակ շի տիսրում...

Աղջիկները ծիծաղեցին, կարծես ինձ զայրացնելու համար, իսկ ես, ինքնասերս, մի քանի անգամ գլուխս հպարտորեն թափահարեցի, նրանց հասկացնելու համար, որ ինձ միք անհանգստացնի: Երկրորդ, երրորդ անգամ նրանք շուռ եկան, անցան իմ կողքից բարձր ծիծաղելով: Իսկ այն տղամարդու ծխամորճի կայծերն էին մերթ ընդ մերթ իմ առջևից քամու հետ թոշում: Երկինքն ավելի մթագնեց, անձրեսի խոշոր կաթիլներ թափվեցին զեմքիս, ուսերիս: Բոլորը գնացել էին, մենակ ես էի մնացել տախտակամածի վրա կանգնած: Քամին ծեծում էր կուրծքս: Խոնավությունը թափանցեց ոսկորներիս մեջ, մրսեցի:

— Դուք մտադիր չե՞ք նավասենյակ գնալու, — հնչեց ականջիստակ:

Ես կարծեցի քամին էր ինձ զգուշացնում, բայց ոչ, այն անձանոթ մարդն էր լայնալանջ, խիստ հանդիմանող աշխերով ինձ նայում: Ես սկզբում շփոթվեցի, հետո պատասխանեցի կոպիտ.

— Մի՞թե ձեր գործն է այդ և կամ հաշիվ եմ տալու ամեն մեկի... Դժկամության և ոչ մի նշույլ նրա դեմքին չնկատեցի: Հանդարտ, ծխամորճը ուզում էր կպցնել, քամին խանգարում էր: Միքանի բոպե լուռ՝ դեպի ծովն էր նայում: Ես սպասում էի, որ նա հեռանար իմ մոտից: Մինչդեռ նորից հնչեց նրա թափ ձայնը աիրաբար:

— Միամիտ աղջիկ, — դարձավ նա այս անգամ հայերենով, — երեկ առաջին անգամն էք ծովով ճանապարհորդում, դուք ծովը չեք ճանաշում... Բոլղեք ձեր ֆանտազիան, — այժմ գնանք նավասրահը:

Այժմ մի բան միայն ինձ համար պարզվեց, որ ազգությամբ նա հայ էր: Բայց ի՞նչ էր ուզում այդ մարդն ինձանից, մինի՞ թե չիմարի տեղ էր դրել ինձ, կամ մի արկածախնդրի, օ, ոչ սկալվում էք, քաղաքացի — մտածում էի ես՝ խիստ վիրավորված:

— Ընկերների շրջանում... խոսքը կիսատ մնաց, ես ընդհատեցի, — այստեղ ընկերներ ես շունեմ, հասկացեք:

— Եվ գուք ծո՞վն եք սիրում, —ասաց նա հեգնական շեշտրությունը բայց չունենք հոգու լայնություն, մի՞թե սովորական աղջիկն ամեն տեղ և ծովի վրա իրեն ընկեր չի կարող գտնել:

Այդ ինձ համար սուր ապտակ էր, սաստիկ ամաշեցի: Ուզում էի աղաղակել, որ նա ինձ չի ճանաչում, ևս պարզ եմ, ընկերական, բայց ո՞վ էր նա, ի՞նչպես ապացուցեի...

Ամպը գոռաց, կայծակեղեն սրերով ասես կտրատում էին ծով ու երկինք: Ծովը մոլեգնած ու փրփրած... Այդ ահեղ պահին անձանոթ մարդը նայում էր ինձ ներշնչող հայացքով, անսասան: Վախը պատեց հոգիս, գողացի ինչպես աշնան տերեւ, մի որոտ ևս ու թվաց թե նավը շրջվում է: Անձանոթն ուժով ձգեց իմ թեփց: Ես լուս, հնագանդ քայլեցի՝ նրա ուժեղ բազուկներին ապավինած:

Նավախցիկում պառկած՝ մտածում էի—ո՞վ էր այն մարդը, ինչո՞ւ էր մտահոգված ինձանով...

Կես գիշեր էր, փոթորիկ... երկինք ու ծով խառնվել էին: Նավը նետվում էր այս ու այն կողմէ: Ծովային հիվանդությունը հաղթել էր ուղևորներին. կանայք աղմկում էին, երեխաները լալիս. ևս նույնպես սկսեցի վատ զգալ, սրտախառնություն, գլխապտույտ: Այնքան ինքնավստահ նավ նստեցի, այժմ պաշտպանություն էի փնտրում: Ակամայից անձանոթ մարդու պատկերն էր աշքիս դեմ գալիս: Նրա սեաթուզը աշքերը, խրոխտ ձայնը, այնքան էին տպավորվել: Ինձ թվում էր, որ նա միայն կարող էր ծովի տարերքը սանձել: Նրա աշքերն էին շարունակ դեմս գալիս հեռվում առկայծող փարոսների պես:

Աշքերս բացեցի այն ժամանակ, երբ նավակայանում պառկած էի իրերիս վրա: Ո՞րտեղ էի, ի՞նչ էր պատահել, —նայում էի շուրջս զարմացած: Սարսափահար դեմքերով մարդիկ խոնվել էին, ումանք թրջված, թուզացած: Մի՞թե նավը խորտակվել է. մտածում էի ես, երբ ականջիս տակ հնչեց անձանոթ մարդու ձայնը.

— Հը, ինչպես եք զգում... ծովը ձեզ փոթորկով հյուրասիրեց:

Նա երեկվա մարդը չէր. այժմ թևերը սոտտած, կիսով շատ:

Թրջված, բայց դեմքը պահառ, անխոնչ. ես չէի ուզում, որ նա իմ կողքից հեռանար: Կանայք, տղամարդիկ հերթով մոտենում էին, նրա ձեռքը սեղմում.—դու մեր կյանքը փրկեցիր, հերոս ընկեր: Նա պատասխանում էր ժպտալով:

— Սովետական քաղաքացու պարտքս իմ կատարել, ուրիշ ոչինչ...

Ամեն ինչ հասկացա: Զղջում էի, որ նրան դեռ չճանաչած նավի վրա կոպտել էի, հրել. ուզում էի ներողություն խնդրել, ուզում էի շնորհակալություն հայտնել, բայց կողքից շքացել էր:

Կարծես մի շատ, շատ թանկ բան կորցրած լինեի և վերջապես այն միտքը, թե ո՞վ է նա, տանջում էր ինձ, միթե այդ տոկողձված պիտի մնար: Կողքիս նստած մի ծեր կնոջ հարցրի.—տատի, ո՞վ է այն մարդը, որի ձեռքը դուք սեղմեցիք:

Ծեր կինը ինձ պատասխանեց զարմացած.—միթե նրան չես ճանաչում, աղջիկս, եթե նա վիներ դու կուկ կգնացիր ծովի ձկներին, ինչպես և մենք բոլորս: Աշքովս տեսա, թե ինչպես փորբիկ նավակներն արձակեց, փրկարար օղակները ծովը դցեց, նա իր թեւրի վրա քեզ այստեղ բերեց, պառկեցրեց և լսում էր շունչը: Իմ որդու շափի սիրեցի նրան: Ասում են ծովային աշխատող է, նավի կապիտան:

Գլուխս բռնեցի, ի՞նչ եմ արել ես, Շիմարս, կյանքս փրկողին մի շնորհակալություն անդամ շնայտնեցի:

Ծեր կինը ժպտաց խորհրդավոր. «Չլինի՛ թե, աղջիկս... ծովը նրան կտանի, էլ ո՞ւր գտնես...»

Ծեր կնոջ խոսքերը փշերի պես սիրտս ծակեցին:—ուրեմն նա ինձ շի տեսնի: Իրերս հավաքեցի, պատրաստվում էի քաղաք մեկնել. ա՞յս, ինչպես տխուր էի... Հենց այդ ժամանակ տեսնեմ, դեմս կտրեց նույն մարդը—փոխված, ծովային պաշտոնյացի սպիտակ զգեստով, դեմքը սափրված, առուց:

— Թույլ տվեք ձեզ մնաս բարով ասել, իմ արձակուրդը վերշացավ, այսօրվանից աշխատանքի եմ անցնում,—նա ձեռքը պարզեց բարեկամաբար, ես շպարզեցի. նա զարմացավ.

— Այս, դարձյալ կանացի կապրիզ, չե՞ք ուզում նույնիսկ ձեռք տալ:

Ասացի—շեմ ուզում բաժանվել:

— Դուք ինձ վրա ծիծաղո՞ւմ եք, ընկերուհի, — հարցրեց նա վրդովված:

— Ո՞ւ, ոչ, ճշմարիտ եմ ասում, դուք իմ աշքում այնքան բարձրացաք, ծովը ձեզնով ճանաչեցի... — ու քիչ մնաց արտասվեի:

Այն մարդը, որ անսասան էր թվում, այժմ շփոթված — իր պիշտակի կոճակներն էր շոշափում: Մի քանի րոպե լուռ մնալուց հետո դարձավ ինձ պարտված տոնով.

— Եթե դուք ինձ կսպասեք, ես կգամ ձեզ տեսության ուղիղ մեկ ամսից հետո: Այժմ անհետաձգելի գործ ունեմ, տես ուղմանավն ինձ է սպասում...

Ես բառ չգտա, միայն գլխով դրական նշան արեցի:

Հեռվից տեսա թե ինչպես ուղղմանավը շարժվեց, նավակայացին կանգնած այն կապիտանն էր ժպտում:

— Ո՞ւ, ծով, որքա՞ն լավէ շնչել փոթորկից հետո, — բացականչեց կինը ձեռքերը պարզած — կարծես ուզում էր ծովը կուլ տալ, ինչպես մի ծովակուլ ու շարունակեց, — սրաիս սիրո փակ դռները ձոնչալով նորից բացվեցին և այնտեղ իշխեց ծովի հապարտ որդին, սովորական մի ասպետ:

Աշխատանք երկար չփնտրեցի: Նավակայանում հեռագրից դարձա: Ամեն օր սովում էին նավի շակները, կարծես կյանք էին քերում: Վեր էի թոշում մտածելով. — Հը՛, Ստյոպան կլինի, որի անունը միայն վերջին րոպեին իմացա: Հետո հառաչում էի հուսահատ — ո՞վ իմանա, ինձ երկի չի հիշի...

Մեկ ամսից մեկ օր անցած լսվեց երկար մի սուլոց: Ինձ հայտնեցին, որ ուղղմանավ է մոտենում ափին: Քիչ հետո լսում եմ ծանոթ ձայն, իմ անուն աղքանունն է հարցնում: Սպիտակագլուխ ծովայինը կանգնեց իմ առջև:

— Անյա, — այնպես հարազատ հնչեց իմ անունը նրա շրթերից, — շե՞ք մոռացել ինձ, — ու ձեռքս մտերմորեն սեղմեց: Ես հուզմունքից դողում էի: Մենք պայմանավորվեցինք երեկոյան ծովափնյա գրոսարանում հանդիպել:

Ծովափին նստած խոսում էինք ինչպես վաղուցվա մտերիմներ: Նա համառոտ պատմեց, պարզ պատմեց, թե ո՞վ էր ինքը, ձնողներին չէր հիշում: Ինքը սկզբում մի շարքային նավաստի — վոմերիտական: — Այժմ դարձել եմ կապիտան, վերջացրեց նա հապարտ շեշտով:

— Անյա; կդա՞ս ինձ հետ, դեպի ծով, միշտ միասին նավելնք հեռու-հեռու և սովորական ափերով:

Մինչև ինձնից դրական պատասխան չստացավ, Համարձակվեց ձեռքերս համբուրել: Կան մարդիկ, որ սխալ մի տեսակետ ունեն, որպես թե ծովային աշխատողները կանանց հետ կոպիտ են, սիրո մեջ թեթևաբարո: Այդ նրանից է, որ իրականում չեն ձանաշում, զրբերում են կարգացել նրանց մասին: Ստյոպան գիտե՞ք ինչ ասաց, եթե ակնարկեցի այդ մասին.

— Կանանց խարում են թուլամորթ և եսամոլ մարդիկ միայն: Ես հարկ չունեմ ձեզ խարելու, ճշմարիտ եմ առում, առաջին կինը չեք որ ինձ հանդիպում եք, չնայած ինձ կոպտեցիք, բայց առաջին և իսկական սերը դուք իմ մեջ առաջացրիք ձեր տարօրինակ վար-մունքով, որպես հանդուզն՝ մի հայունի:

Առանց սիրո շուայլ խոսքերի, առանց երգումների, նա ինձ իր սրտի մեջ առեց, ինչպես ծովն է առնում նավն իր ջրերի մեջ: Դարձանք ընկերներ: Մենք միասին նրա նավով շրջեցինք: Շովոր մեր սիրուն վկա, ծովը մեզ օրրան: Իմ աղջիկը—այդ սիրո պտուլը՝ նավում ծնվեց, նավի վրա սկսեց թոթովել ու առաջին քայլերն արեց: Շովիկ անունը—նրան հայրը տվեց: Երեք տարեկան էր Շո-վիկս, երբ հրաման եկամ՝ Ստյոպան պետք է փոխազրվեր Հեռա-վոր Արևելք: Իմ առողջությունը չէր ներում, չէի կարող նրա հետ մեկնել: Ես և աղջիկս պետք է մնայինք այստեղ, իսկ Ստյոպան պետք է գնար: Մի ամբողջ օր նա Շովիկին գրկից միշեցրեց, չէր կարողանում մեղնից բաժանվել:

Նորից աշխատեցի նավակայանում: Ստյոպան մեկ էր նա-մակ գրում, թե մնում եմ ձեր կարողով, ես նրան էի նամակներով ոգեսրում, վերջում Շովիկի թաթիկները թղթի վրա նկարում:

— Գուք նրան երե՞ք շմոռացաք,—հարցրի ես զգուշությամբ:

— Ինչպես ձուկը ծովից չի դուրս գա երեք, այնպես չի դուրս գա իմ սրտից Ստյոպայի սերը:—Հանկարծ ուրախ ձևաց և թեփս խփեց—տեսե՞ք, տեսե՞ք...

— Ի՞նչ պատահհեց, —հարցրի ես:

— Չե՞ք տեսնում, լուսանում է,—շարունակեց նա, —ահա հե-ռափիր, —ծոցից հանեց խնամքով ծալված մի թուղթ:—Երկու տարի գործուղման ժամկետը լրացավ, այժմ վերադառնում է: Մենք նրան կհանդիպենք հետելյալ նավահանգստում:

Երկուսով լուռ նայում էինք արշալույսի հետ սկսած ձկնախառնը ծովում: Խոսակցուհիս կարոտից վառվող անհամբեր աշքերն էր թարթում, նրա սիրուր անառիկ բերդի պես գրավել էր մի նամակեատ:

Իսկ ես համակված էի այժմ հիացմունքի և հարգանքի զգացմուրով գեպի այդ կինը:

Հանկարծ դարձավ նա ինձ.

— Ինչո՞ւ եք այդպես ապշած:

— Ոչինչ, ձեր սիրո պատմությունն ինձ հուզեց, ես ձեզ շատ հավանեցի, բայց...

— Ծովն է ինձ այսպես հիմարության չափ պարզսիրտ դարձրել, ես ձեր առջեւ իմ սիրուր բացի, իսկ դուք...

— Ես կյանք ու գեղեցկություն սիրող բանաստեղծ եմ...

— Ա՛, —բացականչեց նա, ետ-ետ քաշվելով:

— Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ վախսեցաք:

— Վախսենում եմ իմ պատմածները գրի առնեք և աշխարհով մեել անեք... —խոռվիան երեխայի նման գեմքը մոռալեց:

— Սխալվում եք, Անյա, —կանչեցի նրան իր անունով, —ես ձեզ այնքան հավանեցի, որ դժվար թե բառեր գտնեմ ձեզ նկարագրելու: —Կանացի ինքնասիրությունը շոյված, գոհունակ ժպիտ փայլեց դեմքին, նորից վստահ հայցաքով նայեց ինձ վրա:

— Դե, այժմ ես գնացի, Ծովիկս կզարինի, իրերը հավաքեմ, մոտենում ենք...

Քիչ հետո մայր ու աղջիկ պատրաստ դուրս եկան նավախցիկից, ես նրանց ճամպրուկները վերցրի: Նավից իջանք: Կինն անհանգիստ հայացքով փնտրում էր, հանկարծ շրջվեցի, տեսա երկու ուժեղ բազուկներ գրկել էին մորը և աղջկան: Կոռչ աշքերում կարոտի արցունքներ երևացին, իսկ տղամարդը և խրոխտ էր և քնքալի: Ես ճանաչեցի այն ծովային պաշտոնյա սովետական ասպետին: Ծովիկը թուշկոտում էր հոր գրկում, —խաղում նրա կրծքի շքանշանների հետ ու դոչում.

— Պապա, պապա...

Կինը ներկայացրեց ինձ իր ամուսնուն որպես հավատարիմ ուղեկցի: Պատկառանքի խոր զգացումով ես սեղմեցի ամուսնու

Ճեռքը: Բախտ չունեցանք երկար զբուցելու. ամուսինը շտապում էր—նրանք պետք է գնային:

Վերջին րոպեին ևս Անյայի ճեռքը համբուրեցի և ականջին շշնչացի.—շեմ մոռանա ձեր աշքերը մշտաժպիս:

— Բարձր ասեք, իմ Ստյուան չի խանդի, — պատասխանեց կինը ամուսնու թեկին խփելով:

Ամուսինը գլխարկը հանած շնորհակալություն էր հայտնում, Անյան ժպտում էր մեղմ ծովահարսի պես, իսկ Ծովիկը թիթեռնիկի պես թաթիկները թոթուացնելով կանչում էր. դրադյա՛...

Մենք բաժանվեցինք որպես լավ բարեկամներ:

Այդ հանդիպումը ևս չեմ մոռանում...

Որպես լուսաւտղ մնում է նա իմ հիշողության մեջ անմար:

ՍԵՎՈՅԱՆՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔԸ

Նովիրառ և Ստալինյան
նոր հետամյակին

Քարաշեն տան երկրորդ հարկի պատշգամբում հանդարտ զնում էր գալիս պարթևահասակ մի երիտասարդ։ Գարնան իրիկ նահովք խաղում էր նրա գլխի սև մազերի և շրթերի մեջ սեղմած գլանակի ծխի հետ։ Նա երեսն կանգ էր առնում և պատշգամբի առջև աճած սլացիկ բարդիների միջից խոհուն հայացքը սևեռում դեպի արևմուտք, ուր արևը հրաժեշտի պահին ոսկեղեն գոտի էր կապել երկրի մեջքին ու շոշափում էր շլացուցիչ փայլով։

Երիտասարդը իր մուգ-շագանակագույն կկոցած աշքերը շէր կարողանում պոկել հայրենի երկնակամմարից, նա ամբողջո՞չ վին կլանվել էր այդ հրեղեն օվկիանոսով, ուր ասես բազմաթիվ ճառագայթող ձեռքեր ոսկեծուցլ սյուներ ու խոյակներ էին վեր հանում, կրակե շաղախով պատերը զորում ու մի ակնթարթում կամարակապ դզյակներ կանգնեցնում։ Նրա աշքի առջև, ինչողիս կինո-ժապավենի վրա—արագ փոփոխվում էր տեսարանը։

— Զավե՛ն ջան, իրիկնացուրտը փշեց, պիջակդ առ, զցի ուսերիդ, — դիմեց կանացի հոգածու մի ձայն։

Արեկի վերջնաշողերում գծվեց գոնատ կնոջ կերպարանքը. դա երիտասարդի մայրն էր՝ Զաբել Սևոյանը։ Երիտասարդը շսեց մոր ասածը. նա վերջալուսի տեսարանով տարված, մտովին խոյակներ էր քանդակում և ոգեսրվում, հրճվում։

Նա վերջերս էր զորացրվել և այժմ հարազատ հարկի տանի վայելում էր ծնողների սերն ու գուրգուրանքը։

Մայրն իր կարուտը շէր առել որդուց, աշքը վախեցած ամեն

բրոպե որոնում, ստուգում էր որդու ներկայությունը, շարունակ կրկնելով «Ճա շմբսես, Հա որտե՞ղ ես...»

Մոր աշքում տղան շատ էր փոխվել, չորս տարի անընդհատ պատերազմին մասնակցելը անջնջելի կնիք էր թողել տղայի վրա, վաղաշաս սպիտակություն էր մաղել տեղ-տեղ նրա մազերին, աշքերի վճիռ, երեխայական ծիծաղին փոխարինել էր լրջախոն մի ժպիտ:

— Ա՞յս Զավեն ջան, չեմ իմանում ինչն է ալդպես ուշքրդ ու միտքրդ տարել, բան եմ ասում, չես լսում:

Մոր աղերսող ձայնը տղային սթափեցրեց. նա փութով շրջվեց գեսի մայրը և շոշափելով ուսերի պիշտակը զարմացած բացականչեց.

— Այս ե՞րբ, ի՞նչ Հրաշքով...—ապա ծիծաղելով բռնեց մոր նիշար ուսերն ու սկսեց թափահարել:

Մոր և տղայի նմանությունը շեշտվում էր նրանց դիմագիծը դիտելիս և ծիծաղելու միջոցին նրանց ձախ այտերին փոյտացող փոսիկներից:

— Ի՞նչ անշանգիստն ես, մայրիկ, ուազմաձակատում երբ կողքիս չեմ, ուսերս չեմ ծածկում, ձյունին, բուքին, սառուցներին դուրսը լուսացնում էի, ինչո՞ւ հապա ոչ մի անդամ չօֆիվանդացա, —ասաց Զավենը մեզմ հանդիմանությամբ:

— Այստեղ աշքը չեր տիսնում, ձեռքս չեր հասնում, բայց գիշեր-ցերեկ սիրոս մզկտում էր,—պատասխանեց մայրը ցավատանջ հայացքը՝ տղայի վրա:

Զավենն ակամացից աշքերը նորից սկսեց դեպի երկինք, ուր արեք շրացել էր, հետքից թողնելով ալ բռոսոր հրդեհ, որի շողքից քարպիների կատարները նույնպես բոցակիզվել սկսեցին:

Մի պահ նա հիշեց, զարհուքից, հետո հանդարտ ժպատց:

Ա՛չ, սա նման չեր այն հրդեներին:

Այստեղ թշնամին էր այրում հոգով ստորացած, այստեղ արեւի խոյանքներն էին վսեմ...

— Ի՞նչ տեսակ է երկինքը բոցոտել, —ասաց մայրը զարմանչքից աշքերը ճպճպացնելով.

— Ճարտարապետ եմ ասել, որ կարողանա արեւի ուժով նրան անմպով կառուցել, երկիրը ծածկել հրաշողուն շենքերով, որ ոչ

կոչուց, ոչ անձրեից շխունանան, չանհետանան փայլն ու գույները, որ դարերի մեջ շողշողան...—բացականչեց Զավենը բուռն աենշանքով, աշքերը փայլատակած:

— Հորդ կտորն ես, այստեղ քիչ է, եթե կարողանաք երկնքումն և շինարարությունն կարեք, —դարձավ մայրը ծիծաղի միջից:

— Ախ, ո՞ւր էր, թե...—արտասանեց Զավենը լիաթոք ծիծաղելով:

— Զավեն զան,—հնչեց մոր մտահոգիչ ձայնը,—այդ ամենը լավ, արև, աշխարհ իրենց կարգով կպնան, բայց որ քո ամուսնանալու...

— Սպասի՛ր, այդ հարցը...—տղան բնդհատեց մորը, առանձին խորհրդավորությամբ ծխախոտը վառելով:

Այդ ժամանակ դեպի պատշգամբ բացվող դռննվակ ներս մտավ բարձրահասակ, փոքր ինչ կորացած մեջքով, ալեխառն գլխով 60-ի մոտ մի մարդ:

Զարելը զմկամակությամբ շրթունքները հայնց և անհյուրընկալ հայացքներ նետեց դեպի նորեկը, որն իր մուտքով խանկարեց մոր և տղայի մտերմական խոսակցությունը: Ներս մտնողը տղայի հայրն էր՝ Մելքոն Սևոյանը: Հայր և որդի սիրալիր և հարգալից հայացքներ փոխանակեցին:

Տղան ետ քաշվեց, լուս ճանապարհ բացելով դեպի կապերատածածկ թախտը, որտեղ հայրը սովորություն ուներ աշխատանքից հետո թիկնել, հանգստանալ:

Բայց այս անգամ նա չգնաց իր մշտական տեղը, այլ կոշտացած ձեռները դարսեց մեջքին ու կիպ կանգնեց տղայի կողքին: Նրա խիտ հոնքերի տակ առկայծում էին խորհուրդով լի աշքերը, շուրթերը ծպծպացնելով, մերթ տղային էր նայում, մերթ կնոջը:

— Հը՛, էլի մտքումդ ինչ կա, ձու ածան հավի նման տեղդ շես նստում, սա էլ հո գործարանը չէ,—դիմեց կինը հեգնուժպիտը դեմքին, լավ ուսումնասիրած լինելով ամուսնու բնավորությունը:

Մելքոնը կարևորություն շտալով՝ կնոջ խոսքերին, խրոխտայնով դարձավ տղային:

— Ի՞նչ ժամանակնե՞ր ենք ապրում, չափվում ենք ու թունդ ենք շափում...—նա երկարատես լոեց, ծխախոտը կպցրեց տղայի ծխափումը:

խոտից, երբ կինը գնաց, մնացին հայր ու որդի. Հայրն ալեխառն գլուխը և ուսերը թափահարելով շարունակեց ավելի համարձակ.

— Երկու հարյուր հիսուն տոկոսն ինչ է, որ բանվոր Մելքոնը շերպողանա իր ուսերի վրա տանել հըմ...—քմծիծաղ տվեց քթի տակ ու շապասելով որդու միջամտության, շարունակեց ոգեվորված.

— Այսօր գործարանի ցեխերի հետ սոցմբցման պայմանագիր՝ էինք կնքում, երբ որ ես իմ պլանն առաջարկեցի, ձուլող վարպետ՝ զուկասը տեղից ֆսֆստաց, «վախեցիր պլանը քեզ շոքեցնի»՝ ասես գլուխս զնդանի խփեցին, ուրեմն ի՞նչ, ես փալա՛ս եմ, ոչ մեջք ունեմ, ոչ ձեռք, որ պլանն ինձ շոքեցնի,—մենամարտի ելածըմբիշի նման նայում էր տղայի աշքերի մեջ, ապա շունչ առնելով շարունակեց հանդարս.

— Նրան ես մի խոսքով պատասխանեցի՝ «կաշխատենք—կտեսնենք»: Բայց արի տես անիրավը մուրճը գլխիս մեջ դարկեց ասելով. «Տարիքիցդ վեր գործ ես բռնում»:

Զավենը ապշած նայում էր իր գեմ հումկու թափով օրորվուշ հոր ալեխառն գլխին, որ հառել էր որդու վրա իր կորով՝ հայացքը:

Ամպերի նման հոնքերը դիզվեցին, հանկարծ նա մոնշաց.

— Քառասուն տարվա բանվոր Մելքոնը, որ ոչ մի օր բեռանտակ չի տնքացել, ծերացած...

Հորը հանգստացնող խոսք էր փնտրում Զավենը, վառվուշ դլանակը նորից էր վառում ու հանկարծ վրա բերեց.

— Ով աշխատանքում պարտվում է, նա է ծերը...

Հոր դեմքի կնճիռներում ժպիտ շողաց.

— Հա՛, Զավեն ջան, ասա, բանվոր Մելքոնն իր բազկի ուժով ու դազգահով կյանքի հետ կոիվ է տվել, լույս աշխարհ դուրս եկել... Պատերազմի ժամանակ 250 շէ, մինչև 500—1000 հասցրէ իմ տոկոսները:

— Գիտեմ, հայրիկ, քեզ հետ միայն բաչերը կարող են մըրցել...—հարեց Զավենն ակնածանքով.

— Հա՛, Հա՛, մի անզուսպ քրքիջ դուրս թռավ հոր կըրծքից, ապա հպարտությունը շոյված, հանդարտ դարձավ տղային ծխախոտի ծուխը դուրս թռղնելով բերանից.

— Ուրեմն ասում ես Մելքոնը չի ծերացե՞լ, բազկի ուժը չվպակասե՞լ...—ոգևորված տղայի խրախուսիչ հայացքներից, ձեռքը մեկնեց դեպի արևմուտք և գոշեց.—Մարդ պետք է այսպիս արեկ նման իր մայրամուտն էլ գեղեցկացնի:

Զավենը հոր խոսքերում զգում էր մի անխորտակելի ուժ, տեսնում էր նրա խիտ հոնքերի տակ բոցավառվող ավելի հզոր մեջ մայրամուտ:

Զարելը գնում էր, զալիս ու տեսնելով ամուսնուն տղայի դեմ զլուխը թափահարելիս, քրթմնջում էր քթի տակ.

— Գործարանի կոփվը տանը նորոգում է, չի թողնում խեղճ տղայիս շունչ քաշի:

Այժմ էլ հայր ու որդի նստել էին կողք կողքի թախտին, լուռ ծխում էին, ամեն մեկն իր խոհերին հանձնված:

Երկնքում հրդեհը մարել էր, արևի երեսից նետած ամպաքողերն էին այս ու այն կողմ դեռևս ցոլցլում: Մթնշաղի մեջ օրորվում էին բարդիների կատարները միապաղաղ խշցոցվ:

Զավենի միտքը լի էր նոր որոնումներով, նոր հղացումներով, նրան այժմ զբաղեցնում էր մի հատակագիծ. մերթ աշքի դեմ բարդիների փոխարեն այն նորակառուցն էր խոյանում, այնժամ շփում էր ճակատն ու ծխի ամպիկները քամուն տալիս:

Այդ ժամանակ թոշնակրամի պես ծլվլալով, ծիծաղելով, ներսից պատշգամբ ելան մի խումբ աղջիկներ, դրանք Սևոյանների ընտանիքի ամենակրտսեր անդամի՝ 15-ամյա Աշխենի ընկերունեիներն էին:

Նրանց ետևից դուրս եկավ Զարելն ու դիմեց սիրալիր.

— Վերջացրիք, աղջիկներ ջա՞ն:

— Ո՞ւր է, թե վերջացրինք, մորաքույր,—աղաղակեց շարաճճի մի աղջիկ:—Վաղը հայոց լեզվից է քննություն, հետո էլ շա՞տ առարկաներից:

— Քննություն, հը՛մ, լավ բան է, մարդու արում է, — դարձակ Մելքոնը հայրաբար, — մենք էլ ենք ամեն օր քննության... — Հազը, խեղեց վերջին բառերը:

— Ախ, ե՞րբ պիտի վերջացնենք, ուրախ, անհոգ, վազվը գենք, — ճշաց Աշխենը եղբոր ականջի տակ:

Զավենը սթափվեց ու բռնեց քրոջ սև հյուսքերից:

— Դեռ ոչինչ շարած հոգնե՞լ եմ, — մատը թափահարեց քրոջ սև, փայլուն աշքերի դեմ:

— Ոչինչ չեմ արել, Հա քնում, արթնանում, կարդում եմ, պարապում եմ, — լացակումած ասաց Աշխենը, ապա ճարպիկ շարժումով հյուսքերն ազատեց եղբոր ձեռներից և շտապեց ընկերուհիներին ուղեկցելու: Փողոցից լսվում էին նրանց ուրախ ծիծաղն ու բացականշությունները:

Զավենը հանկարծ տեղից ելավ, գլխարկը ծածկեց, հիշելով որ ընկերոջը խոսք էր տվել այցելության գնալ:

Մոր այն խնդրանքին, թե՝ սպասի թեյդ խմի, նա պատասխանեց, որ շուտ է վերադառնալու, ապա սանդուղները թփթփացնելով իշավ, իր հետ տանելով ծնողների ուղեկցող հայացքը:

Ամուսինները մենակ մնալով սկսեցին իրենց առօրյա խոսակցությունը:

— Քանի պատերազմի մեջ էր, ասում էիր՝ ախ երբ պիտի հաղթություն լինի, Զավենս տուն գա. Հիմի եկել է, չես թողնում հոգին խաղաղվի, կրակ ես տալիս... Էլի պատերազմ Հո չի, — հանդիմանում էր կինն ամուսնուն:

— Նոր ինժեններ է, թող պլաններ գցի, երկրին օգուտ տա, ես ու դու էլ ուրախանանք, — մութի մեջ հնչեց Մելքոնի ձայնը:

— Եթե Զավենս դրանից նեղանում է... — շարունակեց նա հայիվ լսելի, զղացող տոնով:

Զարելը չկարողացավ ամուսնուն առարկել, խոսքն անմիջառ պես փոխեց.

— Զիս ասում տղադ քսանյոթի մեջ է մտնում, ամուսնանա, Հարս ունենանք, թոռ... — առանձին երազանքով արտասանեց նա վերջին բառը:

— Ես Հո զրան հակառակ չեմ, թո՛ղ ունենանք, — գլուխը տըմբացրեց Մելքոնը, ապա Հազը կոկորդում խեղեկով ավելացրեց.

— Իմ ու քո խառնվելը օգուտ չի տա, թող ինքը հավանի, տուն բերի:

Մինչ Զարելը խոսք էր փնտրում ամուսնուն առարկելու, Աշխենը վերադառնավ, կայտառ ալիքի նման ընկավ Հոր գիրկը: Հայրն իր կոշտ մատներով շոյում էր աղջկա սև մազերը և 22նշում,

— Լա՛վ սովորի՛ր, գառնուկ ջան, մարդ դառնատ, — հետո

Հըմ, հըմ անելով հրձվում էր աղջկա թիթի, ճարպիկ շարժումներով: Զարելը ներսից կանչեց Աշխենին: Մելքոնը նորից մենակ մնալով բնկդմվեց մտքերի ծովը:

Բոլորում էր վաթսուն տարին... բայց ոչ, չի վերջանում նրա աշխատանքի ու պայքարի ուղին: Նոր խնդիրներ են ծառացել: Նա պարտք ունի երկրի հանդեպ: Երբեմն աշխատանքից հետո զգում է մեջքի և բազուկների մեջ ասեղի ծակոցներ, բայց ի՞նչ փուլի, նա կարող է, պետք է լարի կամքն ու մկանները ու էլ ավելի հզոր թափով կյանքի պատուակները շարժի: Բարձրացել է նրա ճամփին մի նոր բարդի պարթեահասակ. դա իր որդին է. նայում է ժպտում: Որդու մանկությունն է անցնում կարկաչով, երբ նա դեռ փոքրիկ էր ու թոթով, սիրում էր փայտի, թիթեղի կտորներից տուն սարքել: Երբ բակի երեխաները քանդում էին նրա սարքած տնակը, նա ձեռք չէր քաշում, այլ քրտինք մտած, նորից էր սարքում: Մելքոնը տեսնելով այդ ամենը, որոշեց որդուն ճարտարապետ դարձնել: Զավենը նախ սովորեց միջնակարգ դպրոցում, ապա Պոլիտեխնիկ ինստիտուտն ավարտեց բարձր գնահատականներով:

Բայց դեռ շանցած աշխատանքի, պատերազմն սկսվեց. Նա մեկնեց ուազմաճակատ, Հայրենիքը պաշտպանելու: Բանվոր Մելքոնը ինչպես միշտ, այս անգամ էլ գլուխը չկորցրեց, ուժերը կրկնապատկեց, տոգորված մի գիտակցությամբ, որ եթե թիկունքը լավ աշխատի—ուազմաճակատը շուտ կհաղթի:

Նույնիսկ նա շթողեց կինը տանը նստեր, ասաց, լավ է գնաս գործարան, որդուդ փոխարեն աշխատես, քան թե տանը նստես ախ ու վախ անես: Կինը կարի գործարանում սկսեց աշխատել և բարես ձեռդ բանվորութի:

Այսպիսով Սևոյանների ողջ ընտանիքն էր ծառայում Հայրենիքին, մեկը՝ ուազմաճակատում, երկուսը՝ թիկունքում: Տանը փոքրիկ Աշխենն էր մնում, դպրոց էր գնում, տուն վերադառնում, ինքն իրեն զեկավարում:

Գործարանում բանվորները զարմանում էին Մելքոնի սառնասը բատության վրա՝ հատկապես պատերազմի ծանր օրերին: Երբ ասում էին գերմանացին Մոսկվա է հասել, Մելքոնը գլուխը մեքենացից չէր բարձրացնում, դեմքի արտահայտությունը չէր փոխում, հըմ էր անում ու պատասխանում. «Մտքներիցդ վատ բան

թող շանցնի, գերմանացու ոտը կկոտրվի, առաջ չի գնա...» Նա այնպիս համոզված էր ասում այդ խոսքերը, որ ցրում էր բանվորների տարակուսանքը և դեպի մեքենաները մղում նրանց:

Նույնիսկ հիվանդ ժամանակ խառատ Մելքոնը դադարէի մոտից չեռացավ. նա ուղմական պատվերներ էր կատարում ու թվում էր, որ ինքն էլ մարտնչում էր իր որդու հետ կողք-կողքի: Այժմ, եթե խաղաղություն էր, որդին տուն էր եկել, նրա աշխատ կյանքը մի նոր իմաստ էր ստացել, աշխատանքն էլ ավելի քաղցրացել, նա ուզում էր իր որդու հետ հավասար քայլել, նոր բարձունքներ գրավել:

Մատները եռում էին, ջուրթերը շշնչում.

— Օգնել է պետք՝ հասիր, վինա է ընկել՝ տեղը գցի...

Նիրճ էր իշել հոգնած աշքերին. ալեխառն գլուխը թեքվել էր աշ ուսին, ծխած գլանակը ընկել կողքին: Իրիկնահովն էր սըվ-սըվում—բարդիները մինում խշշում:

Զարելը ցնցում էր ամուսնու ուսերը.

— Վե՛ր կաց, անկողին ժտի:



Զախ ձեռքը ծնոտի տակ՝ Զավենը կոթնել էր սեղանին, ծխում էր. առջեւ փուլած սպիտակ թղթի վրա լողում էին աշքերը, ինչպես անափ ծովի վրա, դեռ չգիտեր ո՞ւր և ինչպես պետք է նավի. սպիտակագլուխ ու փորձված ճարտարապետները նրա հետ մեկտեղ նավելու էին ելել, բայց ո՞վ էր խիզախելու... Զավենը ծխած գլանակը նետեց մոխրամանի մեջ, աշ ձեռքի մեջ ամուր սեղմեց մատիտը, միտքը որպես ուղեցուցյ. թղթի վրա շափում էր խոշոր նորակառուցյի երկայնքն ու լայնքը: Գծագրական գործիքներով կղզյակների նման կետեր էր նշում ու հետզհետե սահմանները դառնում էին որոշ: Սկզբում դանդաղ, հետո արագ, սկսեց սահել ձեռքը թղթի վրա: Գծելու պահին մտքի տեսադաշտը բռնում էին հոյաշեններ. Հանկարծ նա մատիտը նետեց, ձեռքը փութով տարավ դեպի ծոցագրապանն ու հանեց մի հին, խունացած բլոկնու և հափշտակությամբ սկսեց թերթել: Այն խառն-խուռն գծված, աղտոտված էշերում, նա տեսնում էր պարզորոշ մարտերի ճանապարհները ու կրկին վերապրում ամեն մի ուազմական վիճակ:

Հարձակման անցած սովետական զորքերի հետ նա անցել էր շատ քաղաքներով։ Սովետական մարտիկի ու ճարտարապետի աշխից շէին՝ վրիպել տեսարժան շենքերն ու գործարանները։ Մի ձեռքում հրացանը սեղմած, մյուս ձեռքում մատիտը՝ թեթև ստվերագծեր էր անում բլոկնոտում։ Հեգնոտ ժամանակ ու գործարապետական աշխից, բայց երբ միտքը թափանցում էր հոյաշենի մինչև հիմքերն ու նպատակը՝ ամպրոպ էր ճայթում գլխին, դղիրդով փլվում ու փոշիանում էին հոյաշենները, տեղը մնում կծկված ու շղթայված մարդկանց բազմություններ։ Այն ժամ սովետական մարտիկը կատաղի մոլուցքով նորից նետվում էր մարտի մեջ իր հայրենի երկնակամարին հասնող գործարանների, ֆարբիկաների, լուսահորդ կոթողների համար։

Ահա աչքը անթարթ գամել էր բլոկնոտի վերջին էջին, որ ամենից շատ էր աղտոտված ու գծերը ջնջված։

Զավենն այն գծարեկորներից մտքում վերստեղծեց ամբողջ պատմությունը։ Կիսով շափ գրավել էին ^{Բ.} քաղաքը, որի համար մի քանի օր շարունակ կատաղի մարտեր էին ընթանում։ Տերստիլ ֆարբիկայի մոտ զումարտակը տեղավորվեց, Զավենը հարմար առիթ փնտրելով՝ բլոկնոտում գծում էր ֆարբիկայի առաջնամասը, երբ ահեղ մի որոտ ու նրան թվաց թե շենքը գլխին փլվեց։ Գլուխը բինթերով փաթաթած, աչքերը բացեց նա սանմասում. ոուս ընկերը սարսափած հանդիմանում էր նրան... «Թո այդ բլոկնոտը փորձանք է դարձել քո գլխին, մահվան բաժին էիր գտանում, արկը պայթեց կողքիդ, մազ էր մնում...» Հիվանդը ձեռքը տարավ դեպի ծոցագրապանը և մի աղիողորմ ճիշ թռավ չորացած շուրթերից՝ «ափսո՞ս, կորա՞վ...»

Ռուս ընկերը տեսնելով նրա աղերսական հայացքը, շինելի գրպանից հանեց բլոկնոտն ու պարզեց դեպի հիվանդը, ասելով. «ընկած էր փոշիների մեջ վերցրի, դիտեի, որ առանց դրան...»

Նրա խոսքը կիսատ՝ հիվանդը հափշտակեց բլոկնոտը և սեղմեց կրծքին որպես սպեղանի։

Ռազմի հանապարհներ շրջած այն բլոկնոտը Զավենի համար մի հազվագյուտ գանձարան էր, թերթում էր մերթ սարսուռով, մերթ հրճվալից։ Այն ժամանակ երկու պայքար ուներ նա իր հո-

գում, երկու նպատակի. նախ պատերազմն ավարտել հաղթանակով՝
ապա վերադառնալ հայրենիք և իր ճարտարապետական ծրագիր-
ներն իրագործել:

Կյանքի պայքարը ձգեց նրան հեռավոր ափեր. այսօր ահա
վերադարձել էր նորից և իր հայրենական խաղաղ ափերում խա-
րիսխ էր ձգել ու հառնել էր նրա մեջ հզոր թափով ստեղծագործ
ու շինարար կամքը:

Քլոկնուը խնամքով ծոցագրպանում պահեց. գլուխը հակած
թղթի վրա, գծում էր այն, որ միլիոններին էր պատկանելու, ուր
ընթանալու էր հանրագին աշխատանքը հեշտ ու թեթև որպես եր-
շանկության աղբյուր:

Օրօրին սեղանի սպիտակ թուղթը փոխվում էր, ուղղաձիգ
գծեր էին իրար հատում, մաս-մաս ձուլվում, ձև ստանում. ահա
մուտքի խոյակներ էր գծել, ճակատը շփում էր ու շշնչում.

— Պետք է լինի ամբաշեն ու գեղեցիկ:

Դուան մոտ լսվում էր ոտնաձայն, հազոր.—շրջվում էր դեպի
դուռը:

Կիսաբաց ճեղքից ալեխառն գլուխն էր երեսում, հարազատ
աշքերն էին վրան հառած, որ լուս մղում, կանչում էին դեպի
աշխատանքների մրցագաշտը: Դա Մելքոնն էր, որ չսպասելով
պատասխանի, դնում էր դեպի գործարան:



Վերջին ժամանակները հայր և որդի գրեթե չեին հանդիպում,
հայրը ուշ էր տուն գալիս, հոգնած էր լինում, շուտով անկողին էր
մտնում: Զավենն էլ տանը եղած ժամանակ իր գծագրությամբ էր
զրադիպում: Տան փոքրիկը՝ Աշխենը քննությունները վերջացնելուց
հետո չվել էր հովասուն սարերը՝ պիոններական ճամբարում ամա-
ռն անցկացնելու: Տանը հաճախ միայնակ էր մնում Զարեկը, որը
ընտանեկան հոգսերը հոգալուց հետո փնտրում էր զրոյցակից,
բայց չգտնելով ոչոքի—մի կար, մի դորձ էր ձեռքն առնում ու
քրթմնջում քիթ տակ.

— Ափսոս, Հիվանդությունս շթողեց նրանց հասնեի...

Զարեկը հիշում էր իր աշխատանքը կարի գործարանում, պա-

տերազմի օրերին ամբողջ գործարանը սպասարկում էր ուազմա-
ճակատին: Այդ ինքն էր մկրատը ձեռքին ձեռւմ ու թվում էր, որ
իր սիրտն էր կտորի փոխարեն բացվում... և նա ձեռւմ էր որ
նրանից զինվորական զգեստներ: Փարատվում էր մայրական սիր-
տը այն մտքից, որ իր հարազատ որդուն էլ բաժին էր ընկնելու
այդ զգեստներից: Զարեւը երիկամների հիվանդություն ուներ,
բժիշկները թույլ շտվին նրան գործարանում աշխատել:

Երբ որդին վերադարձավ, նա աշխատանքը թողեց: Այժմ ափ-
սոսանքով էր հիշում բանվորական կոլեկտիվը, որտեղ նա առա-
ջավորների շարքումն էր, զգում էր իր անհրաժեշտությունը ար-
տադրության մեջ:

Միագնում էր Հոգին մի պահ, հետո նորից պարզում, ամու-
սինը և որդին չեն որ աշխատում էին, իսկ ինքը այժմ տունն էր
կառավարում, հաճելի հոգս էր պաշարել ողջ էռթյունը՝ գա որդուն
ամուսնացնելու հոգան էր: Վեր էր կենում, վնարում որդուն, որ
այդ մասին նորից հիշեցնի, բայց որդին տանից գնացած էր լի-
նում, կամ սեղանին թերված՝ գծելիս:

Մայրական անհանգիստ միտքն այժմ էլ թեում էր գեղի սա-
րերը՝ փնտրում Աշխենին:

— Հը, սինի թե վայր ընկավ, ոտքը ցավեց, գետում լողա-
ցավ, մըսեց, — շնչում էր նա մեկուսի:

Ամիսները վայրկյանների նման սահեցին: Շարաթ երեկո էր:
Մելքոնը դուռը բացեց և ներս մտավ, արագ քայլելուց շնչա-
սպաս: Աւսերը շտկեց և բազմախորհուրդ նայեց գեմը եկած
կնոջ աշքերի մեջ: Կինը նրան դիմավորեց սովորականի պես: մի
կնոջ աշքերի մեջ: Կինը նրան դիմավորեց սովորականի պես: մի
փոքր էլ նախատեց ուշանալու համար: Իսկ Մելքոնը մրոտ ափերն
փոքր շտկելով հը'մ-հը'մ էր անում, աշքերի մեջ գաղտնի ուրախու-
թյան կայծեր էին շղում ու անհանգիստ որոնում էր տղային:
Հանկարծ թիթեռնիկի պես թուած՝ Աշխենը փաթաթվեց հոր պա-
րանոցին:

— Ե՞նչագես, ե՞րբ ես եկել, գառնուկս, — հարցնում էր Մելքո-
նը և կարոտով համբուրում աղջկա ճակատը, մազերը, ասես ծա-
ղիկների բույրը և զով քամիների թրթիռն էր առնում նրանից: Աշ-
խենը դարձել էր ավելի առույգ ու շարաձձի, արեից այրված, առող-

շացած դեմքին փայլում էին սև աչքերը: Նա չէր ուզում ուրիշի լսել, հարցերի պատասխանել—հեասպառ ինքն էր պատմում, թե ինչպես է ժամանակն անցկացրել պիոներական ճամբարում. շրջել սարեր, ձորեր, գետերում լողացել:

— Ա՞յս, ափսոս, որ շուտ վերջացավ,—բացականչեց Աշխենը Հոր գրկից պոկվելով:

— Զաբել, ուրախացիր, աղջիկդ իսկական պիոներ է, կրակի կտոր,—դիմեց Մելքոնը կնոշը, որն այդ ժամանակ զբաղված էր ներսում: Մելքոնը գնաց լվացվեց, բանվորական շորերը փոխարինեց մաքուր շորերով, ապա դիմեց դեպի իր սիրած տեղը՝ պատըշգամբ ու սկսեց քայլել, ծխել:

— Էլի տեսնես մտքումն ի՞նչ կա, տեղը չի նստում,—մտածում էր Զաբելը, երբեմն ամուսնու կողմը նայելով:

Մելքոնն այդ օրը արտասովոր արամադրության մեջ էր. ծխախոտի կայծերում ասես տեսնում էր նա նորից ժողովականների հայացքները, որ հառած էին նրա վրա—նա գլուխը տմբացնում էր ու խորհրդավոր հըմ անում, ժպտում:

Հետճաշյան հովն էր փշում զովացուցիչ: Զհայտնել Զաբելին, Աշխենին... կանգ էր առնում, բայց մի ուրիշ ձայն ներսից պատասխանում էր նրան—ո՛չ, սպասիր...

Հանկարծ մոայլության ամպ էր պատում ճակատը, ցնցվում էր, իսկ նախագիծը... հովանում էր նա իր որդու փոխարեն: Քանի գլանակ ծխեց, որքա՞ն մտքեր հոսեցին, բայց Զավենը չկար, Զաբելն էլ անհանգիստ ներս ու դուրս էր անում, թե ինչու էր որդին ուշանում:

Աշխենը վայրի ծաղիկներից կազմած ծաղկեփունջը, որ բերել էր եղբոր համար՝ շուտ-շուտ ձեռքն էր վերցնում, հոտոտում:

Մութն աննկատելիորեն իջավ, էլեկտրական լույսերը շողացին քաղաքի վրա:

Դուան մոտ լսվեց ոտնաձայն, Մելքոնն անհամբեր մոտեցավ դուանն ու ետ քաշվեց զսպված.

— Ոչ, չեմ ասի, մինչև որ շիմանամ...

Մեկն իր որդու հարազատ ձայնն էր, մյուսը ընկերոջ՝ Միւակի:

— Բարե՛, ընկեր Մելքոն, այժմ սրտանց պետք է ձեղ շնոր-

Հավորել...—աշխուժ բացականչելով պատշգամբ մտավ նիհարամազմ, գունատ դեմքով երիտասարդը:

Զավենը հանդիպելով հոր տարակուսած հայացքին, ընկերութը սաստեց.

— Սպասի՛ր...

Մելքոնն այդ նկատելով, էլ ավելի տարակուսած մերթ տղային էր նայում, մերթ նրա ընկերոջը, որ այդ ժամանակ լուռ հայացքներով ընդդիմախոսում էին:

Երեքի այդ խորհրդավոր լոռությունը խզեց Աշխենն իր ուրախ ձիշով.

— Սիրելի Զավե՞ն, եկել եմ, տե՛ս քեզ համար ծաղկեփունչ եմ բերել,—ապա հանդիսավոր կերպով ծաղկեփունչը տվեց եղբորն ու փաթաթվեց նրա պարանոցին:

— Հենց ժամանակին է ծաղկեփունչը, մեկ ուրախությանն ավելացավ երկրորդը, —բացականչեց Միսակը:

Աշխենը պոկվեց եղբորից ու համարձակ մոտեցավ, սեղմեց Միսակի ձեռքը:

— Սևացել, իսկական գնչուհի է դարձել քույրդ, —նկատեց Միսակը, դեպի Զավենի ձեռքի ծաղկեփունչը թեքվելով:

— Ի՞նչ հոտավետություն...

Աշխենը ոգեսրված մեկ-մեկ բերում, ցուց էր տալիս գետերից հավաքած գույնզգույն քարեր, շորացրած ծաղիկներ, տերևներ, բղեղներ ու թիթեռներ:

— Այդ հոկական բնագիտական թանգարան է, —ասաց Միսակը:

Այդ ժամանակ հայր ու որդի լուռ, խուզարկու հայացքներ էին փոխանակում և միևնույն մտքերն ունեին. «Իսկ եթե նա չէ...»

Միսակը ոգեսրված դիմեց Մելքոնին, որ նոր գլանակ էր վառում:

— Ընկեր Մելքոն, հիմա պետք է շնորհա...—նրա խոսքը դարձյալ կիսատ մնաց, որովհետև Զավենը, պատնեշի նման կանգնեց հոր և Միսակի միջև:

— Ինչ անհամբերն ես, սպասի՛ր...—շշնչաց Զավենը:

— Սպասիր, —մյուս կողմից միշտամտեց Մելքոնը, ենթադրելով,

որ Միսակը տեղյակ է այդ օրվա իրենց արտադրական խորհրդակցությունից:

Միսակը տարակուսած մերթ Զավենին էր նայում, մերթ նրա հորը՝ մտածելով «ինչ տարօրինակ մարդիկ են»:

Վերջապես նա համբերությունից ելած, ձեռներն իրար շփելով բացականչեց.

— Մորաքույր Զարել, օդի բեր, ես ուզում եմ ուրախանալ...

Մելքոնն օղու անունը լսելով աշխոժացավ.

— Միսակը ճշմարիտ է ասում, օդի բեր, սեղան բացի...

Զարելն արագ գործի անցավ, Աշխենն օգնում էր մորը, պատըշգամբում սեղան բացեցին. Հաց, պանիր, երշիկ ու մրգեղին դարսեցին, մեկ շիշ օդի էլ դրին սեղանի մեջտեղը: Մելքոնն ուսերը ցնցելով, առաջինը մոտեցավ սեղանին, գրավեց իր տեղը, Միսակը շապասելով Հրավերի, նստեց նրա կողքին. Զավենը և մայրը նստեցին նրանց դիմաց, իսկ Աշխենը ոտքի վրա սպասարկում էր: Միսակը բաժակները լցրեց օդիով, զվարթ տեղից կանգնեց և շնայելով ոչ Զավենի, ոչ Մելքոնի կողմը—ասաց.

— Այս բաժակով խմենք Հաղթողի կենացը, մեր սիրելի...

— Սպասի՛ր...

Հայր և որդի նորից ընդհատեցին Միսակին, որը շփոթվեց, շղայնացած բաժակը ցած դրեց, ապա վագեց սենյակ, բերեց, Հաղթական ժեստով սեղանին փռեց—մի փայլուն թուղթ...

Զավենը հուզմունքից կմկմաց.

— Ախր, ես չեի ուզում, որ առաջ...

Այդ թղթի վրա գամվեցին բոլորի աշքերը, զա Հասարակթուղթ չէր. զա խլել էր Զավենի աշքերից տառապալից անքուն զիշերներ, զա մի հոյաշեն գործարանի հատակագիծ էր:

— Մոսկվան Հաստատել է այս... խմում ենք ճարտարապետ Զավենի, Հաղթողի կենացը...—զնդաց Միսակի ուրախ ձայնը:

— Ասա, բերանիդ մատաղ...—Մելքոնն ուրախությունից չկարողացավ շարունակել. Հանկարծ մեկնվեց դեպի տղան, ուժգնությամբ բռնեց նրան ու համբուրեց ճակատը: Մյուս կողմից մայրը և քույրն էին համբռվում «Զավեն զան»: ասելով:

Իսկ Զավենը և ուրախ էր և թախծում էր մտածելով, ափսոս որ Հայրիկս էլ...

Դառնահամ օդին, մեղրաջրի պես կու գնաց Մելքոնի կոկորդով:

Նայում էր սեղանին փուած թղթին, դա ոչ թե սովորական գործարան էր, այլ հոյաշեն մի դղյակ՝ լուսառողող ու ընդարձակ և վեր խոյացած... բակում պարտեղ շատրվանով, շուրջը՝ ծառուղիներ...

— Հա՛, Հա՛, Հա՛,—բռնկեց հոր ծիծաղը և գիշերվա մեջ տարածվեց:

— Զիմանաս, որդիս, որ Հայրդ քեզանից ետ է...—Հայում նա և փնտրում էր պատեհ առիթ խոսելու:

— Այժմ խմենք տան Հիմքի, բանվոր Մելքոնի կենացը, — օղուց տաքացած գուշեց Միսակը:

Մելքոնն ուսերը ցնցելով և գլուխը բացասաբար շարժելով տեղից կանգնեց.

— Սպասի՛ր...

Զավենը կարեկցաբար նայում էր հորն ու անհանգիստ ոտներն իրար քսում. «Մինի թե ինքնասիրությունը վիրավորվեց» մտածում էր նա:

— Ես աշխարհի շափ ուրախ եմ,—հնչեց Մելքոնի ձայնը, — որ իմ Հարազատ որդին երկրին տվել է այսպիսի մի գործ: Այդպիսս գուք, չահելներդ պիտի Հաղթեք, որ մեր Հաղթությունն էլ տեղում շմնա, առաջ գնա, — նա լոեց, կոկորդը մաքրեց և շատ հանդարտ ավելացրեց.

— Այսօր իմ ցեխին հանձնեցին 30-ամյակի անվան փոխանցիկ գրուբ...

— Հայրիկ, ուրեմն դու է՞ւ...—ուրախ բացականչեց Զավենը և շսպասելով պատասխանի, անմիջապես վրա բերեց.

— Տեսար, որ Դուկասը...

Հայրը անհիշաշար, բարի ժամանութեամբ պատասխանեց.

— Դա անցած բան է, Դուկասի ցեխը ետ էր մնում, օգնեցինը, որ առաջավորներին հասնի...

Զավենը խոր ակնածանքով նայում էր հորը և պատասխանի խոսք չէր գտնում:

— Այ, ուզում եք երկուսի դաշտնիքն էլ բացեմ, — ասաց Աշխենը խորամանկ ծիծաղելով:

— Խոսքը պատկանում է պիոներին, — ասաց Միսակը խիստ հետաքրքրված:

Աշխենը պիոներական ձգվածությամբ՝ լուրջ արտահայտություն ընդունելով ասաց.

— Հայրիկը և Զավենը, — մատը պարզեց թե՛ մեկի և թե՛ մչուսի վրա, ամենքը լարված սպասում էին թե ի՞նչ պիտի ասեր փոքրիկ Աշխենը, հանկարծ նա վրա բերեց, բառերը հատ-հատ շեշտելով. — սոցմրցում էին կնքել...

— Սոցմրցում էին կնքել...

Բայց մի՛թե այդպիս էր. Աշխենը մի զարմանալի նորություն բացեց Զավենի, նրա հոր և մյուսների համար:

— Ահա թե ինչ, — բացականչեց Միսակը՝ աշքերի քողն ընկնելով: Ապա նա անմիջապես բաժակները լցրեց և առաջարկեց խմել ամբողջ ընտանիքի կենացը:

— Այս մեծ բան է, ընկերներ, մի ընտանիքում երկու հաղթանակ, երկու նվեր Հայրենիքին... — Հնչում էր Միսակի ոգեշումը ճառը: Զարելն ուրախությունից քիչ էր մնում պար գար և ահա օգտվելով բոլորի բարձր տրամադրությունից, սկսեց երկարացնելով:

— Այս ամենի համար շատ ուրախ եմ, բայց որ Զավենիս մի լավ հարսնա...

Միսակն իսկույն կռահեց Զարելի միտքը և նրան ընդհատելով շարունակեց.

— Կարող եք այդ էլ շնորհավորել, Զավենի հարսնացուն պատրաստ է, խոսք տված, խոսք առած...

— Ասա՛ մի հոգիս հանգստանա, — բացականչեց մայրը արտավախառն ծիծաղի միջից:

— Կնոջս ընկերուհին է, հեզ, սիրունիկ, — շարունակեց բացատրել Միսակը, — այս տարի ավարտեց Բժշկական ինստիտուտը, անունը՝ Սուսաննա...

Զավենը և Մելքոնը տարված էին խոսակցությամբ, չեին լսում Միսակի ասածները, միայն վերջին բառը հասավ Զավենի ականջին. նա շրջվեց դեպի Միսակը...

— Ճիշտ եմ ասում, այնպե՞ս չէ, ուրախացրու ծնողներիդ, — ասաց Միսակը և առանց հարցնելու ձեռքը տարավ ընկերոջ ծոցագորպանը, հանեց կանացի մի լուսանկար:

— Ահա ձեր հարսնացուն...

Զաբելն ուղղակի հափշտակեց նկարը, մոտեցրեց աշքերին...
նուրբ դիմագերով, հեղահայաց մի աղջիկ էր նայում այն լուսա-
նկարից:

Մելքոնի հայրական սիրտն էլ փղձկաց.

— Ես-ես բա չե՞մ ուղում, որ իմ Զավենը ամուսնանա, երջա-
նիկ լինի...

Զիմացան ինչպես Զաբելը ներս վազեց, մի փոքրիկ կապոց-
բերեց դրեց սեղանին, ասելով.

— Այս էլ իմ նվերը...

Տոլորը զարմացած նայում էին, թե կապոցում ինչ պիտի լի-
նի, երբ Միսակը հանդիսավոր բացեց կապոցի ծայրերը, մի ընդ-
հանուր ծիծաղ բռնկվեց. Միսակը մեկ-մեկ դուրս էր քաշում կա-
պոցից նորածին մանկան շորեր, փաթաթաններ, գլխարկներ և
օդում ծածանում:

— Զաբել, դու բոլորիս անցար:

— Հա՞՛, հա՞՛, հա՞՛,— հնչում էր Մելքոնի բարձր ծիծաղը:

Սկսյանների ընտանիքն ուրախանում էր: Զաբելը սեղմել էր
էրծքին ապագա հարանացուի նկարը:

Աշխենը թռչկոտում էր, երգում, նրան ձայնակցում էր Միսա-
կը իր թավ, բայց դուրեկան ձայնով:

Լուսինն անհոգ ժպիտը երեսին, դանդաղ սահում էր երկնա-
կամարով և լուսավորում խաղաղ գիշերը:

Ուրախ խշշում էին դիմացի բարդիները:

Օրորվում էր Մելքոնի առյօտաբաշ գլուխը: Նա ամուր սեղմել-
էր ձեռները: Թվում էր, որ նա փոխանցիկ դրոշն էր սեղմել իր
ձեռքերում:

Զավենը հենված պատշգամբի սյունին ծխում էր և բուռն-
տենչանքով սպասում վաղվան, որ լի էր կառուցման և սիրո վա-
յելքներով:

ՎԵՐԱԴԵՐՁԱԾ ԵԲՀԱՆԿՈՒԹՅՈՒՆ

ՕՉԱՆ ՀԱՅՐԻԿԻ

Հաղթաբեր գարուն բացվեց Հայկական Բերդ գյուղի վրա: Խաղաղության խնդալից լուրն արձագանք գտավ նաև այդ լեռնապարփակ գյուղում: Ու մարգկանց սրաերը լեռների հետ հպարտութեն վեր, ավելի վեր՝ ձգվեցին:

Հանդիպումի քաղցր զգացումը Համակեց ամենքին: Նրանք սրտատրոփ սպասում էին իրենց որդիներին, ամուսիններին, եղբայրներին: Օր չեր լինում որ բանակից տուն վերադարձող վիճներ:

Եվ Բերդ գյուղը սիրով թերերի տակ էր առնում իր ձագերին:

Ամառն անցնում էր. այժմ գեղնառուկի դաշտերը ծփում էին մարմանդ հողմերից: Կոլխոզնիկները դաշտերի առաջ բերքը պահեստներն էին տանում և ձմռան պատրաստություն տեսնում:

Բերդ գյուղի կոլխոզի պահակը, 65 տարեկան՝ մի ծերունի, որին իր Հայրական խորհուրդների և խրատների Համար ամենքը 0Հան Հայրիկ էին կանչում, նույնպես սպասում էր իր միակ որդուն՝ Սահակին, որ զինվոր էր տվել Հայրենիքին:

Օրվա մեծ մասը նա դուրսն էր անցկացնում: Նրա ձյունապսակ գլուխն օրորվում էր գյուղի ճամփաներում: Նա բարձրահասակ էր և ծերության գեմ մեջքը չեր կորացրել: Հայացքն աղղեցիկ էր. Հոնքերի գեղերի տակ տարիների մշուշի մեջ անթեղված աշքերն էին գեռնես բոցկւտում: Զմռան արևի պես երեմն ժպիտը ողողում էր գեմքը և աշքերը փայլատակում էին բարությամբ լի:

Հաղթության լուրն առանձին բերկրանքով ընդունեց 0Հան Հայրիկը և Հանկարծ շիրուխը ձախ բթամատի վրա թափ տալով կայտառ, երիտասարդական ձայնով բացականշեց.

— Իմ Սահակը, իմ աղիզն էլ տուն կգա, իմ օջախից էլ ծովու կրածրանա, ամպերին կհասնի:

Բերդ գյուղում մեծից մինչև փոքրը զիտեխն Օհան Հայրիկի ողջ կյանքը:

Բնության գրկում, երկնաշուալ լեռների մեջ էր կոփիվել նրա բնավորությունը: Իր երիտասարդությունն անց էր կացրել ազատ ու անահ որսորդական կյանքով: Երբ ձին կայծակելով սլացել էր լեռնալանջերով, խիտ անտառների արածետներով, նրան թվացել էր թե աշխարհն է առնում ոտքի տակ:

Բերդ գյուղում և նրա շրջակայքում չկար մի քար, թուփ, աղբյուր ու առու, որ նրան ծանոթ չիներ:

Նա կարող էր աշքերը փակ շրջել այդ վայրերը: Ամեն օր արեածագն ու արևմուտը նա լեռնալանջերին էր դիմավորում: Սիրում էր ամպրոպը, կայծակն ու քամին. Երբ խոժովովում, ալեկոծվում էր բնությունը, նա էլ էր ալեկոծվում և ձիու մշշրին կպած, հրացանն ուսին՝ անտառն ու սարերն էր ոտքի տակ առնում և շշնչում. «Զարն ու բարին իրար են դիպչում»: Եվ համոզված էր, որ միշտ բարին է հաղթելու: Ասես ինքն իր հոգու տարերքով օգնում էր բնության պայքարին, որ բարին հաղթի...

Փոթորկից հետո, երբ երկինքը խաղաղվում, կապում էր ոսկեցուռ ծիածան, նա էլ էր խաղաղվում և ժպտում հաղթորեն:

Երբեմն ծերունի Հայրը թախանձագին խնդրում էր նրան.

— Հերիք է, Օհան, շոլերն ընկած թափառես, արի տուն ու տեղիդ վրա նստի...»

— Զեմ կարող, ապի, ոնց որ սիրտս թեժ սնդուն գցես ու փակես, էնպես կթփրտա... էնտեղ արեն ու աստղերը աշխարքին հավասար աշքով են նայում, էստեղ մարդիկ իրար հավասար աշքով շեն նայում, — պատասխանում էր նա ու նորից սարերը փախչում:

Որպեսզի Օհանը տանով լիներ, խելքի գար, Հայրը նրան ամուսնացրեց Նարգիզ անունով մի հեղաբարո աղջկա հետ: Բայց Նարգիզն էլ իր սիրով շկարողացավ աղատասեր որսկանին սարերից պոկել:

Այսպես էր Օհանն իր ջահել ժամանակ:

Միայն սովետական կարգերը նրան սարերից պոկեցին: Իր վերածնված գյուղում, իր հարազատ հարկի տակ նա շերմություն գտավ ու կապվեց կյանքին: Այդ ժամանակ մի ուրիշ ուրախություն

մտավ նրանց տունը: Նարգիզը բաշխեց նրան մի տղա՝ որի անունը Սահակ դրին: Բայց ավագ, մի քանի տարուց հետո նարգիզը վախճանվեց՝ մանուկ Սահակին թողնելով հոր խնամքին: Վախճանվեց նաև Օհանի հայրը: Հայր ու որդի մենակ մնացին: Օհանը երդվեց Սահակի համար խորթ մայր չբերել: Եվ այդպես էլ իր վճռին հաստատ մնաց: Գյուղացիները զարմացել էին, թե ինչպես սարերի մարդը այդքան գթառատ, հայրական ջերմ սիրով խնամում էր իր որդուն:

Սահակը մեծացավ, դարձավ պարթև մի երիտասարդ. նայողը երանի էր տալիս նրա ծնողներին: Հայր ու որդի աշխատում էին կոլխոզում:

Օհանն իրեն երջանիկ էր զգում, մտածում էր որդուն շուտով ամուսնացնել, հարս ունենալ, սեռվկ, գիրուկ թոռնիկներով շրջապատվել: Բայց ամեն բան այնպես չի լինում, ինչպես մարդ մտածում է: Երբ վրա հաստավ Հայրենական Մեծ Պատերազմը, Օհան Հայրիկը պատերազմի դաշտ ուղարկեց իր միակ որդուն: Ու հպատակում էր, որ պատերազմի դաշտում զինվոր տղա ունի:

Ինքն էլ ձեռքերը շծալեց ու շհանձնվեց ծերության, այլ կըրկնապատկված եռանդով աշխատեց կոլխոզում:

Ողջ պատերազմի ընթացքում նա հսկեց կոլխոզի բարիքներին ու շնորհեց նրա մի շյուղը պակսեր: Հրացանն ուսին, հավատարիմ զինվորի պես շրջում էր ամեն օր: Ո՞վ կարող էր հին, փորձված որսկանի աշխից վրիպել, նրա ահից պահեստի կողքով անցնել:

Պատերազմի ժամանակ գյուղում Օհան Հայրիկին ավելի լավ ճանաչեցին, և ավելի շատ հարգեցին:

Երբ նրա ծերությանը խղճալով կոլխոզնիկներն ասում էին Օհան Հայրիկ, տուն գնա, մի քիչ հանգստացի, նա դրանից սաստիկ վիրավորված, մի դառն հեգնանք զեմքին պատասխանում էր.

— Քանի բերնումս շունչ կա, պիտի աշխատեմ, հանգիստը մենակ՝ էն աշխարքում կառնեմ: — Այնպիսի վճռականությամբ էր նա այդ խոսքերն ասում, որ այլևս ոչ ոք չէր համարձակվում ընդդիմախոսել: Հետո նա ավելացնում էր գլուխը տմբացնելով, կատակի տալով.

— Ուզում եք ասել՝ ծերացել եմ, հա՞... Ախ, էդ ծերությունը դեմ ու դեմ թշնամի չէ, որ գյուղաշ կաշես, գետնով տաս, ոչնչաց-

նես... Մերությունը քո միջումն է, թե ոչնչացնես, քեզ պիտի ոչըն-
չացնես...

Զրուցախոս, խորհրդատու այդ ծերումին միշտ շրջապատված
էր կոլխոզնիկներով: Մեծերից ավելի երեխաներն էին կապված
նրան, որովհետև նա սիրով և համբերությամբ պատմում էր
նրանց շատ հերիաթներ և իր որսորդական կյանքից հետաքրքրա-
կան գեղքեր:

Նա խոր հառաջելով պատմում էր մի դեպք, որ ուժեղ էր տպա-
վորվել նրա հոգում. պատմում էր, թե ինչպես մի անգամ, իր շա-
հել ժամանակ, որսորդության օրերին, Արծվասարում արծվի ձագ
էր խփել: Եվ արծվամայրը թևերը փռած ճախրել էր հանդուգն
որսորդի գլխավերերը, որ վրեժ առնի նրանից: Օհանն արծվամոր
վրեժից զարհուրած՝ հաղիվ իրեն գյուղն էր գցել:

Հայրը նախատել էր նրան ու ասել. «Մի հարամու ձագ կամ
ուրուրի խփեիր, ամպերի հետ թև տվող արծիվն ի՞նչ էր արել
քեզ, որ մոր սիրտը մղկացրիր...»

Այժմ, երբ իր որդուց լուր շոներ, հաճախ այն թևատարած
արծվամորն էր մտաբերում ու արծվաձագը՝ արնաթաթավ իր
ոտների տակ ընկած, և շշնջում էր մեկուսի. «Ախ, ես նամարդու-
թյուն արի...»:

Այժմ, երբ խաղաղություն էր նորից, նա և ուրախ էր
հաղթանակի համար, և տիսուր, որ իր որդուց լուր շոներ:

Նա շրջում էր հրացանն ուսին, ժիրոված ծխում էր շարունակ
և ձնշող մտքերը շարան-շարան թռչունների պես ճամփում էր
հեռու...

Երբ ասում էին՝ Օհան հայրիկ, տղերքը գալիս են, նա սթափ-
վում էր իր մոռայլ մտքերից ու պատասխանում զվարթ ձայնով.

— Թո՛ղ գան, գրանց արևին մատաղ, թո՛ղ ամենքը գան:

Ով գյուղ էր վերադառնում, առաջինը Օհան հայրիկն էր գնում
աշքալուսի: Նահապետի տղայի, Սարգսի փեսայի, Մատթեոսի
եղբոր գալստյան առթիվ Օհան հայրիկը բաժակը վերցրեց ու
սրտանց ասաց.

— Են սիրտը սիրտ չի, էն մարդը մարդ չի, որ ուրիշի ուրա-
խությամբ շուրախանանա... Հերոս տղերք ջան, ձեր շնչից իմ Սահա-
կի շունչն եմ առնում: Ախ, ձեր եկած ճամփին մատաղ, ձեզ տուն
ուղարկողին էլ մատաղ...

Ջրնդում էին բաժակները Օհան Հայրիկի շուրջը և ամենքի հետ
ամեն սեղանի մասնակցում և ուրախանում էր նա:

Վերջերս Օհան Հայրիկը քիչ էր խոսում, նրա շիբուխը չեր
հանգչում և շարունակ հառաջանք էր դուրս թռչում կրծքից:

Գյուղում արգեն սկսել էին խոսել այն մասին, որ Օհան
Հայրիկի որդու մահվան լուրն է ստացվել: Բայց ոչ ոք չեր համար-
ձակվում այդ մասին նրան հարցնել: Ինքն էլ ոշինչ չեր ասում:

«Դարդը սարերի համար չի, մարդի համար է. Օհան, դիմացի,
ապա, իմը որ չիներ, ուրիշինը պիտի լիներ, նրանք էլ ինձպես
չիդյար ունեն, հայրեր են ու մայրեր»—ասում էր նա ինքն իր մեջ
և արցունքը խեղդում կոկորդում:

Դուրս շրջելուց երբ հոգնում էր, տուն էր մտնում, դուռն
ամուր ծածկում և երկյուղած քայլերով մոտենում հին—պապենա-
կան փայտե սնդուկին, որտեղ սրբությամբ պահում էր Սահակի
նոր սապոդները, նրա շորերը և հանգուցյալ նարգիզի հարսանե-
կան նախշուն շալը: Որդու բույրն էր զգում, նրա կարուտն էր առ-
նում սապոդներից ու շորերից: Ասես Սահակը նորից սկսում էր
քայլել նրա առաջ իր պարթե հասակով:

Ծերի աշքերը փայլատակում էին խանդաղատանքով.

— Ման արի, բալա ջան, քո տան գետինը տրորի, սիրտս էլ
հետք...—ասում էր դողդոջուն շուրթերով:

Ապա շալի ծալերը մի փոքր ետ տանելով՝ ավելացնում էր.

— Էս շալը մուրազով պահել էի հարսնացուիդ համար...
Թոռնիր պիտի ունենայի...—Եվ ասես շուրջը ոստոստում էին
թռոնիկներն իրենց պայծառ աշխիներով և զնդուն ծիծաղով: Օհան
Հայրիկը մի անսովոր ժայռ գեմքին, ձեռքերը պարզած՝ քայլում
էր նրանց հետքից, ուզում էր նրանց բռնել: Հանկարծ գեմ առնե-
լով սառը պատին՝ սթափվում էր, ապա ինքն իրեն նախատում.
«Օհան, խելագարվել ես, քեզ հավաքի, բա տղամարդ չե՞ս»: Արագ
փակում էր սնդուկը և իրեն դուրս նետում տանից, նորից շրջում
ճամփեքի վրա, աշքը գցում հեռուներին, վիշտը տալիս սարերին ու
շշնջում.

— Այ ծառ, այ թուփ, ինչ կլինի հանկարծ Սահակս դառնաք, գաք փաթթաթվեք վզովս...

Օհան հայրիկին կոլխոզնիկները մենակ չէին թողնում, շրջապատռմ էին, սկսում զրուցել դեսից-դենից, որ տխրությունը ցրեն:

Կոլխոզի երեխաներն էլ հասկացել էին Օհան հայրիկի վիշտը և կարեկից աշքերով էին նայում, առաջվա նման չէին անհանգըստացնում նրան, որ իրենց հեքիաթ պատմի:

Օհան հայրիկը իր մեծ վշտի հետ ավելի գթոտ, ավելի բարի հայացքով էր նայում երեխաների վրա և լուռ գլխիկները շոյում: Գիշերները քուն չէր գալիս աշքին, հինավուրց անտառի հողմերը գալիս էին դուռը ծեծում: Վեր էր թռչում ծերը, կարծելով, թե Սահակն է եկել: Ապա հուսախաք նորից անկողին էր մտնում: Շատերը քաշվում էին Օհան հայրիկին լուր տալու, որ այսինչի կամ այնինչի տղան վերադարձել է, ենթադրելով, որ դրանով նրա վիշտը կմորմոքվի: Մինչդեռ Օհան հայրիկը հակառակն էր մտածում.

— Ասեք էլի, ով է եկել, գոնե դրանով մխիթարվեմ, նրանց ծնողների ուրախության շողքից իմ սիրտն էլ շողք ընկնի:

Կոլխոզնիկները խոսք մեկ արին՝ հայր Օհանի վիշտն սփոփել իրենց հոգածու վերաբերմունքով: Մի օր կոլխոզի նախագահը դիմեց նրան.

— Օհան հայրիկ, պատերազմի ժամանակ դու լավ աշխատեցիր, կոլխոզի բարիքը աշքիդ լույսի պես պահպանեցիր: Հիմի պատերազմը վերջացել է, արի դու մի աշխատի, կոլխոզն իր հոր նման քեզ կպահի, քո ոչ մի բանը պակաս չի թողնի...

Օհան հայրիկը հուզմունքից դողալով պատասխանեց.

— Աշխատանքն է ինձ աշխարքի հետ կապովը, եդ էլ որ մինի, ասա զնա մեռի... Քանի բերանումս շունչ կա, պիտի աշխատեմ...

Կոլխոզի նախագահը հանցավորի պես գլուխը կախեց.

— Լավ, Օհան հայրիկ, որ քեզ համար շաշխատելը դժվար է, էլ չենք ասի: Այնուհետև այդ մասին խոսք բացող շեղավ:

Զմեռնամուտ էր: Լեռնագագաթներն սպիտակին էին տալիս: Եղությունը էին ձնաբեր քամիներ: Ի՞նչ փուլի, թե ցուրտ էր ու ձյուն, ոչ ժամանակ Օհան Հայրիկը դուրսն էր, չէր ուզում տանը մենակնալ:

Մի առավոտ այդպես մտքերի մեջ խորասուզված՝ շրջում դուրսը, մեկ էլ գլուխը բարձրացրեց, տեսավ իր հարևան Սիւնի փակ դուռը ծեծում է մի զինվորական, մի խումբ երեխաներ ուրջը խմբված:

«Կա, շկա՝ Սիւնի թոռ Սեղրակն է»—մտածեց ծերը և հանարձ ցնցվեց, չէ ո՞ր Սիւնը մեռել էր, տանն էլ ոչ որ չկար: Նա սկսույն շիրուխը բերանից հանեց, թևերը պարզած առաջ վաղեց և փաթթվեց զինվորականին:

— Սեղրակ ջան, ինչ լավ է, որ դու էլա եկար...—համբուրում ու չէր թողնում, որ նա շունչ քաշի, խոսի:

— Արի գնանք, մեր դուռը բաց է, արի...

Աւ նրա թեկից քաշքշելով տարավ իր տունը:

Օհան Հայրիկն ուրախացել—չէր իմանում ինչպես պատվի Սեղրակին: Իսկ Սեղրակը տիրամած կրկնում էր.

— Վայ իմ խեղճ ապի, գոնե ինձ տեսներ հետո...—ու չէր կարողանում շարունակել:

— Ոչինչ, Սեղրակ ջան, դու ողջ-առողջ լինես,—մխիթարում էր Օհան Հայրիկը,—ծերացած մարդ էր, շարդ տարավ, մենք բոլորս ենք մեռնելու, ով հավիտյան ապրի, թող պարծենա:—Ապա շարունակում էր ձայնը ցածրացրած.

— Թող ես մեռնեի, իմ Սահակն էլ էպիկս տուն մտներ...

Քիչ հետո Օհան Հայրիկի տունը լցվեց կոլխոզնիկներով: Նրանք եկել էին Սեղրակին տեսնելու: Իրենց հետ բերած կոլխոզի բարիքներով սեղանի երեսը լցրին և աշքալույսը Օհան Հայրիկին էին տալիս: Վաղուց էր, ինչ Օհան Հայրիկին այդպես աշխույժ չէին տեսել: Նրան թվում էր, թե իր Սահակն է վերադարձել: Սեղրակի բոյի-բուսի, ծիծաղի մեջ իր Սահակի ծիծաղն էր տեսնում և մի թաքուն ուրախություն էր շարժվում ծեր կրծքի տակ:

Կոլխոզնիկները Սեղրակի կենացն էին խմում, իսկ Օհան Հայրիկն ասում էր ոգեսրված:

— Կերեք, խմեք, ուրախացրեք մեր Սեղրակին, որ ապնի համար շատ շմտածի: Ես էլ էսօր-էգուց քոչս հավաքում եմ... դուք ողջ լինեք, շահելներդ...—ու նորից կրկնեց հառաշանքով.

— Թող ես մեռնեի, Սահակս էդպես տուն մտներ...—նա երեսը շնոր տվեց, շշարունակեց:

Բոլորը հասկացան ու խոսքը փոխելու համար սկսեցին Սեղրակին հարց ու փորձ անել, նրա կրծքի շքանշաններն ու մեղալները ցույց տալով:

— Սա մեր բոլորի պատիվն է, մեր ուրախությունը...—Ապա օհան հայրիկին ուրախացնելու համար, կոլխոզի նախագահն ասաց.

— Օհան հայրիկ, մեր կառավարությունը մի շքանշան էլ քեզ պիտի տա, կոլխոզում լավ աշխատելուդ համար:

— Ճիշտ է, ճիշտ է,—վրա բերին ամեն կողմից:

— Թող մեր աշխարհը շեն լինի, խաղաղ լինի, ինձ համար շքանշան է ու ամեն ինչ,—ասաց օհան հայրիկը օղու բաժակը շրթունքներին մոտեցնելով: Երբ ամենքը գնացին, Սեղրակն էլ վեր կացավ իրենց տուն գնալու, բայց օհան հայրիկի հրամայական աղդու հայցքը նրան ետ պահեց:

— Ո՞ւր ես գնում էն ցուրտ ու մենակ տունը. էս էլ տուն է ու օջախ... Պառկի հանգստացի...

Այդ զերմ ու հայրական վերաբերմունքից Սեղրակն զգացվեց ու պառկեց թախտի վրա: Հոգնած էր, շուտով բունը հաղթեց: Օհան հայրիկը վառարանի կրակը թիժացրեց, Սեղրակին ծածկեց ու տանից դուրս եկավ: Նա ամենքին, աշխարհին ուզում էր պատմել, որ իր տանը բանակից վերադարձած զինվոր կա: Մի անսովոր բան էր կատարվում նրա հետ. ասես սրտի դատարկությունը լցվել էր. տունը մագնիսի նման նորից ձգում էր: Ներս էր մտնում, լսում Սեղրակի շնչառությունը, ապա շշարունակեց:

— Քնիր, հանգստացիր...

Իրիկնադեմին Սեղրակն աշքը բացեց, տեսավ կողքին մի գույգ նոր սապոդներ. զարմացավ:

— Էս ո՞ւմն է...

Առաջին անգամ օհան հայրիկը նորից վառարանի մոտ նըստած ծխում էր իր շիբուլը: Հենց որ Սեղրակը գլուխը բարձրացրեց, նա էլ տեղից մի փոքր բարձրացավ ու ասաց.

— Հագի, ման արի, որ իմանամ իսկական Սահակն ես...

— Ծնորհակալ եմ, Օհան Հայրիկ, բա մեր տո՞ւնը, — Հարցրեց Սեղրակն ու վերկացավ գնալու: Այդ ժամանակ Օհան Հայրիկի փիշտը նոր ուժով կոկորդը սեղմեց, Հաղիվ կարողացավ երկու խոսք ասել.

— Ես էլ մենակ, դու էլ մենակ, ո՞ւր ես գնում... — արցունքները գլորվեցին սպիտակ միրուքի վրայով: Սեղրակն զգացվեց, փաթաթվեց նրան և ասաց.

— Օհան Հայրիկ, քեզ մենակ չեմ թողնի:

— Հա, որդի, — ուրախությունից գողաց Օհան Հայրիկի ձայնը, — որ մեռնեմ, Սահակիս տեղն էլ երեսիս մի բուռ հող կլցնես, իմ տունը քո ապնի տանը կմիացնես ու լայն կապը:

Սպա ձեռքը պարզեց դեպի բակի գույգ բարդիները.

— Էս բարդիները կանաչ կպաշեն: Սահակս դրանց տակ խաղացել է:

Սեղրակի վերապարձը Օհան Հայրիկի կյանքում մեծ փոփոխություն մտցրեց, նա մի նոր նպատակ և հենարան գտավ ապրելու:

Ջյունը թափվում էր, խոշոր փաթիլներով ծածկում գետինը: Առաջին խաղաղ ձյունը...

Օհան Հայրիկը քայլում էր ձյան վրա, մի խորհուրդ ճակատին, մեղմ Հայրաբար ժապաւմ աշխարհին.

— Կամուսնացնեմ, տոն տեղ կունենա, օջախիցս ծուխ կը բարձրանա, — շշնչում էր նա:

Ջյան փաթիլներում իր Սահակի աշքերի փայլն էր նորից տեսնում, նրա շշունջն էր լսում սիրիք նրան իմ ելքոր պես...

Նորից իր երազած թոռնիկների աշխիներն էին աստղերի պետքում ու խենթորեն շուրջը պարում:

Օհան Հայրիկը պարզում էր ձեռքերը, որ նրանց բոնի, կը բժիշկին սեղմի... բայց սառը փաթիլները սթափեցնում էին նրան: Նա քայլում էր ճակատը հողմերին տված, աշքերն իմաստությամբ լիր:

Մի քանի օր հետո գյուղում տարածվեց, որ Օհան Հայրիկը Սեղրակին որդեգրել է ու չի թողել նրան իր տնից գնա-

ՎԻՇՏ ԵՎ ՍՓՈՓԱՆՔ

Զարուհին Հիսումին մոտ, բարձրահասակ, թուխ և գրավիշ դիմագծերով կին էր: Վաղոց չէր, ինչ ամուսինը վախճանվել էր, երկու զավակներին թողնելով կնոջ խնամքին: Մեծը տղան, տասնինը տարեկան էր, անունը՝ Բագրատ, որն իր արտաքինով, բարձր հասակով, ու աչքով ու հոնքով թխադեմ մորն էր քաշել: Փոքրը՝ աղջիկն էր, ինը-տասը տարեկան, եղբոր հակապատկերը՝ շեկավուն, խաժ աչքերով, կայտառ-կլորիկ Սոնիկը, որ հորն էր քաշել, հանդուցյալ Կարապետին:

Իդնատենց Զարուհի ասելով՝ գյուղացիները հասկանում էին խաղաղություն և պարկեցաւություն: Նրա լուսկեցության պատճառով երբեմն մոռանում էին նրա գոյությունը: Տղան մոր պես լուս և աշխատասեր էր: Նրանց տան միակ աղմկողը շեկլիկ Սոնան էր, որ վազվում էր, թռչկուտում ու զանգակի պես ձայնը հնչեցնում տանն ու բակում:

Զարուհին այնքան հանդարտ բնավորություն ուներ, որ դեռևս ոչ ոք չէր լսել նրա բարձր խոսելը: Նա չէր բամբասում, ուրիշին վատություն չէր անում, նույնիսկ չէր թողնում, որ իր հավը հարեանիքանչարանոցը մտնի, կովն ուրիշի արտը տրորի, երեխան ուրիշերեխացին մատով կպչի, լացացնի:

Զարուհին կոլխոզում աշխատանքը վերջացնելոց հետո իր տանն ու դուստրն էր զբաղվում: Գործ՝ ինչքան ասես. կովին էր խնամում, բանջարանոցի հողը փորփրում, մշակում:

Հարեաններից ոմանք գովում էին Զարուհուն, որ ամուսնուց հետո գլուխը չի կորցրել, չի տրտնջում իր բախտից, այլ, ընդհակառակը, նամուսով ու պատվով ապրում է իր երեխաների հետ:

Ֆսկ չար լեզուները հակառակն էին ասում, թե անհոտ ծաղիկն, և այլն:

Սակայն ինչ փուլիթ Զարուհուն, թե ովհ՝ ինչ էր մտածում նրա մտախն, շատ բան ականջի հետեւ էր գցում. նա միմիայն մտահոգված էր իր երեխաների խաղաղ և բարեկեցիկ կյանքի ապահովությամբ:

«Թող շատեն՝ Կարապետից հետո երեխաների վիզը ծուռ թողեց, նամուա շարավ, տուն ու տեղը քամուն տվեց...»—այսպես էր մտածում Զարուհին և երբեմն էլ տղայի կողքին նստած՝ խրատում:

— Բագրատ ջան, Համերաշխ ու հաշտ ապրելուց լավ բան չկա: Ընկերներիդ խաթրին մի կպշի, յոլա գնա, Հարգիր ու սիրիր:

Բագրատը մոր հետ համաձայն՝ լուռ ժպտում էր, և որովհետեւ նա իրենց տանը միշտ համերաշխություն էր տեսել, զարմանում էր, որ երբեմն ընկերները մի հասարակ բանի համար միմյանց անպատճեն էին, նույնիսկ բռունցը դիմում:

Պատերազմի փոթորկաբեր ալիքը մտավ ամեն տուն, ալեկոծեց ամեն սիրտ: Ինչպես հանդարտ ջրի մեջ քար նետելիս, այնպես ալեկոծեց իդնատենց Զարուհու ընտանիքը: Հարեւանուհիներից մի քանիսը շար ժպիտներ փոխանակեցին. «Հիմի տեսնենք իդնատենց Զարուհին ո՞նց է Հրեշտակ ձևանում. թող Բագրատին բանակ կանչեն, տես ո՞նց է գլուխը կորցնում...»:

Հակառակ նրանց սպասածին՝ Զարուհին ոչ ոքի մոտ և ոչ մի նշանով շարտահայտեց որևէ դժգոհություն կամ շփոթվածություն: Նա միայն մի բան գիտակցեց, որ պետք է կովեն ամենքը՝ իրենց հարազատ Հայրենիքի համար:



Ամառվա տաք առավոտ էր: Գյուղն արտասովոր իրարանցման մեջ էր. կանաքը, ծերերը, երեխաները հավաքվել էին հարազատներին, եղբայրներին, որդիներին, ամուսիններին հանապարհ գցելու դեպի բանակ, դեպի կոփվ: Ե՛վ վիշտ կար նրանց աշքերում, և բուռն ատելություն դեպի թշնամին: Բագրատն առաջուց

Քրաժեշտ էր տվել իրենց տանն ու ծառերին, ջերմորեն համբուրել էր քույր Սոնայի այտերը, մոր ձեռքերը: Սոնայի համար ուրախ տոն էր, նա ճշվում էր ճնճղուկի պես ու փաթաթվում մերթ մոր, մերթ Բագրատի ոտներին:

Բագրատն այդ օրը փաղաքշող աշքերով էր նայում մորը, քրոջը, հարազատ ու ծանոթ մարդկանց: Զարուհու վրա խոր էին տպավորվել գյուղովետի նախագահի հորդորանքները. «Առանց լաց ու կոծի, ճանապարհ դրեք ձեր որդիներին, ամուսիններին, որ նրանք էլ հաջողակ գնան, զան ու զիգարով կովեն ու հաջողակ տուն գառնան»:

Զարուհին էլ նույնն էր մտածում ու արցունքները թաքցնում: Որքան մոտենում էր բաժանման պահը, նույնքան հուղումնալից էին դառնում սրտերը: Հանկարծ Զարուհու աշքին ընկան իր ամենամոտ հարկանուհիները՝ նազոն ու թառլանը, որոնք արցունքուտ աշքերով, շվար կանգնել էին կողք-կողքի: Նազոյի մինումարն էր գնում՝ Մարկոսը, • Թառլանի էլ երեք տղաները: Զարուհին իր սեփական ցավը մոռացած՝ կարեկից հայացքը շուտ-շուտ դարձնում էր նրանց կողմը, կարծես ուզում էր ասել՝ «մի տանջվեք, մենակ չեք, ես էլ ձեզ հետ եմ...»:

Նա մի ներքին մղումով մոտեցավ նազոյին, թևից քաշեց ու կամացուկ ասաց.

— Նազո քույրիկ, հերիք մղկտաս, առանց լացի ճանապարհ դնենք մեր տղաներին:

Նազոն սթափվեց, ձեռքի ափով սրբեց աշքերը, — նայելով Զարուհու մտերիմ, կարեկից աշքերին՝ նրա սիրտը թեթևացավ: Զարուհին ուժ առավ, ամրապնդվեց, երբ նազոյին մի փոքր հանգստացրեց, այժմ էլ թառլանի ականջին մի քանի խրախուսական խոսք շշնչաց ու նրան էլ հանգստացրեց:

— Մարդ ստեղծված է աշխատելու համար, մինչև օրս աշխատել ենք, հիմի ավելի շատ կաշխատենք, թող մեր տղաները գնան մեր հողը պաշտպանելու:

Նազոն ու թառլանը լուռ հայացքներ էին փոխանակով՝ «Սա մեր ճանաչած Զարուհին է...», մտածում էին նրանք:

Բագրատը գնալիս մորը պատվիրեց՝ «Անեմ-շիմանամ լաց լինես, ինչքան այստեղ խաղաղ եմ եղել, այնտեղ, թշնամու դեմ կատաղի եմ դառնալու»:

Զարուհին այդ խոսքերի դեմ ոչինչ չկարողացավ ասել, միայն բարի ճանապարհ և հաջողություն մաղթեց ամենքին:

Որդուն բանակ ճամփելուց հետո ընտանիքի հոգան ամբողջութիւն ընկավ Զարուհու ուսերին: Բայց նա դարձյալ չէր տրանջում իր վիճակից, այլ ընդհակառակը, ինքն իրեն ասում էր. «Ինձ ինչ կա, ես ուժ ունեմ, աշխատել կարող եմ»:

Պատերազմը Զարուհու սրտին խոռվություն բերեց. առաջվարպես խաղաղ չէր. նա մտածում էր ուազմաճակատի մասին, իր որդու մասին, գուռ ու դրկից Հարևանների որդիների մասին:

Այժմ ավելի վաղ էր արթնանում, ավելի եռանգով էր աշխատում կոլխոզի գաշտում, ասելով՝ «Իմ փոխարեն և Բագրատիս փոխարեն»: Առաջ շատ քիչ էր մասնակցում ժողովներին, այժմ ժողովները բաց չէր թողնում, ասում էր՝ գնամ տեսնեմ ինչ են ասում պատերազմից, կավող կողմերից ու մեր տղաներից:

Ամռանը հաջորդեց աշունը, աշնանը՝ ձմեռը, եկավ գարունը՝ իսկ թշնամու դեմ մղվող պատերազմը շարունակվում էր, ծավալվում ու սաստկանում: Քաղաք ու գյուղ անդուզ աշխատում էին ուազմաճակատի համար: Զարուհին ամենքի հետ պայքարի ու աշխատանքի դժվար տարիներ անցկացրեց, սովետական զորքերի մղած մարտերով ոգեսրվեց, որդուց ստացած նամակներով շնչեց և իր երկրի հետ միասին մտավ պատերազմի շորորդ հաղթական տարին: Կարմիր Բանակը զախչախում և գուրս էր վոնդում ֆաշիստներին սովետական հողից: Այդ լուրն ուրախացնում էր ամենքին, ուրախացնում էր նաև հեղաքարտ կոլխոզնիկուհի Զարուհի իգնատյանին: Դրա հետ նա ուներ նաև մի ուրիշ ուրախություն, այդ իր որդու՝ Բագրատ Իգնատյանի բարի համբավն էր, որ տարածվել էր գյուղում: Այդ մասին Բագրատն իր նամակներում ոշինչ շեր գրում: Նա միայն գրում էր «ողջ-առողջ եմ, կովով առաջ ենք գնում...»:

Թերթերից էին իմանում, ընկերներն էին գրում նրա հերոսությունների մասին: Մեծ ու փոքր նրա մասին էին խոսում, նրա կատարած քաջագործություններն էին միմյանց պատմում: Երբեմն էլ զարմանքով իրար ասում էին՝ անմեղ գառը սուս ու փուս

Բագրատից ո՞վ կսպասեր այդ տեսակ արարքներ, ո՞վ կսպասեր
ուր նա կայծակի թուր կդառնա թշնամու դիմաց:

Ամենքը շնորհավորում էին Զարուհուն, աշքդ լույս, ասում
էին, տղադ հերոս է դարձել: Նա պատասխանում էր սրտանց՝
աշքալույսի կեսն էլ ձեզ, ևսօր էգուց ձերոնց բարի անունն էլ
կտարածվի... Մայրական սիրտը և ուրախանում էր, և տըրտ-
մում,—«տեսնենք ողջ առողջ կմնա»,—մտածում էր նա:

Իր տիրության և ուրախության ժամերին նա չէր մոռանում
Հարեանուշի նազոյին ու Թաղանին. Հենց որ Բագրատից նամակ
էր ստանում, վազում էր իմանալու նրանք էլ նամակ ունեն: Եթե
տեսնում էր, որ նամակ չունեն, ասում էր էգուց-էլօր էլ դուք կըս-
տանաք, իմ Բագրատից էլ մի բանի ամիս նամակ չէր գալիս: Զա-
րուհու բարի հայացքը, բարի ցանկությունները հույս էին ներ-
շընչում և միսիթարում մայրերի մորմոք սրտերը:

Աշնանը հաջորդեց ձմեռը, ողջ գյուղը, դաշտ ու անտառ
ծածկվեցին ձյունով: Զարուհին երկար ժամանակ որդուց նա-
մակ չէր ստանում: Անհանգիստ էր, գիշերները չէր քնում, առա-
վոտն արթնանում էր ծանրացած գլխով. «սա Բագրատից չի, մի
բան կա...»,—շընչում էր նա ու գոմն էր գնում Մարալ կովի մոտ
սիրտը բացում:

— Մարալ ջան, ախր Բագրատից նամակ չի գալիս...

Նայում էր, նայում կովի աշքերին ու անպատասխան, նորից
դուրս գալիս գոմից: Շքզում էր բակում, ճամփերին, նայում, տես-
նի որտեղից ովէ գալիս ու ի՞նչ նոր լուր պիտի հաջորդի: Նորից տուն
էր մտնում, գուլպան ձեռքն առնում, սկսում գործել: Ճաղերի հետ
միտքը գնում էր հեռու, հեռու, հասնում ուզմանակատ, խառ-
նը գում սովետական մարտիկներին, նրանց մեջ փնտրում էր իր
Բագրատին, ահա գտնում էր ու հանկարծ աշքից կորցնում—ճաղե-
րը խճճվում էին, գուլպան ընկնում էր ձեռքից: Զարուհին պրտնե-
ղած ուրիշ գործ էր սկսում, որպեսզի ցրի իրեն տանջող մտքերը:

Բագրատ իգնատյանի մահվան լուրը լսելով ողջ գյուղը սկաց:
Նա հերոսաբար զոհվել էր ֆաշիստների դեմ մղվող մարտերից
մեկում:

Հարեաններն ու բարեկամները չէին համարձակվում այդ
մասին հայտնել Զարուհուն, մտածելով, թե նա չի դիմանա: Որոշ

ժամանակ թաքցրին, Հետո որոշեցին հայտնել, որ Հանկարծակիթ շգա:

Ապա սկսեցին գյուղում խոսել այն մասին, թե Զարուհին որդու մահվան լուրը լսելով քարացել է, լաց չի եղել:

Սիմոն ապին ամենքին պատմում էր զարմացած. «Ես էսքանտարի ապրել եմ, Հազար խել ու շառ եմ անցկացրել գլխովս, Համա էդ տեսակ կնիկ չեմ տեսել ոնց Զարուհին է: Նրա ջիգյարի մեջը կրակ ընկալ խորովեց, Համա մեղ մոտ ցուց շտվեց, ունդն ու ուշը գցեց, Համա լացը պահեց, մենակ ասավ՝ Բագրատ ջան... ու բերանը փակեց: Էն սարի շափ դարդը փորումը ո՞նց Հալեց, մեղ էլ ասավ՝ ապի ջան, ինչ կլինի: Իմ դարդի Հետինձ մենակ թողնեք... Ասի, բա ոնց կլինի, վայ թե մենակ... Մնաց-մնաց ու էն տեսակ մի պատասխան տվեց, որ ոտի վրաշշմած մնացի, — ասավ, ապի, Հենց դիտես ես ինձ ավելի՝ եմ սիրում, քան Բագրատի՞ս... Թող աշքս դուրս գա, ապրեմ ու տանջվեմ... Էլ պատասխան շտվեցի — սուս ու փուս դուրս եկա»:

Զարուհին խուսափում էր ցավակցություններ լսելուց, նարուզում էր Բագրատին միշտ կենդանի պատկերացնել: Ո՞վ տեսավ, ո՞վ լսեց նրա ձայնը: Գիշերն աշքը բաց լուսացրեց, և այդ դիշեր ձյունն իջավ, դուսը կտրեց: Լուսը որ ընկալ աշքին, կրծքին թեքած գլուխը բարձրացրեց: Աշքերը մշուշված էին, դեմքը դունատ, օրորվեց տեղում — ըստ դուրս փակ նստի, թե վերկենա, դուրս ու ներս անի: Նա պայքարում էր ինքն իր հետ: Նայեց Սոնայի կողմը, որն անմեղ ժպիտը դեմքին՝ քնած էր մուշմուշ: Քիչ Հետո նա կարթնանա ու հաց կուպի... իսկ Մարալին ո՞վ պիտի խոտ տա: Մի ուժեղ, աներեւույթ ձեռք նրան ոտքի հանեց գնա, մի՛ քարանա... Վեր կացավ անդգայացած, դուռը կամացուկ բացեց, շեմքի ձյումը ետ տվեց ու թարմ ձյան վրահետքեր թողնելով, օրորվելով, դանդաղ գնաց խոտի դեղի մոտ, կանգնեց այնտեղ, որտեղ Բագրատն էր միշտ կանգնում. սառնօդը ներս քաշեց ու շշնչաց «էստեղ շունչ ես քաշել, Բագրատ ջան, սար ու լանջին մտիկ տվել, սիրտդ փառավորել»: Ապա մի խուրձ խոտ դուրս քաշեց դեղի միշից՝ ու մտավ դոմը:

Կիսամութ գոմում փայլատակեց մի գույգ լապտեր, դրանք կովի աշքերն էին: Կովն ասես սպասում էր նրա ներս մտնելուն,

դունչը մեկնեց: Այգալես նա դունչը մեկնում էր դեպի Բագրատը՝ Զարուհին խոր հառաջեց ու շեշտակի նայեց կովի աշքերի մեջ, ուներ ուզում հասկացնել, ու ծանրորեն խոտը լցրեց կովի առջև:

— Բագրատիս դալար ձեռքերը սիխտի խոտ տային քեզ, Մարալ ջան, և ոչ էս շորացած ձեռքը...— շշնչում էր նա ու կովի աշքերի մեջ ասես փնտրում որդու պատկերը: Նա չկարողացավ կանգնած մնալ, լուս շոքեց կովի կողքին, կովն ասես հասկանում էր մոր վիշտը, պարանոցը բում էր մսուրի կողին և չէր ուտում խոտը:

— Խոտդ կեր, Մարալ ջան, իմ տեղն էլ, Բագրատի տեղն էլ եմ աշխատել: Աշխօթերի դիմաց եմ ստացել: Կեր, որ Բագրատս չնեղանա:— Այնպես աղերսալի, այնպես քնքանքով էր դիմոնմ կովին, ասես կովը հասկանում էր նրա լեզուն: Զարուհին կովի մոտ բացել էր իր վշտահար սիրտը և չէր կարողանում տեղից կանգնել:

— Ուրիշից արտասուբս պահում եմ, ախ ու վախս մեջս խնդրում: Ասա, ինչի՞ եմ ապրում, էլ ո՞ւմ համար կաթդ տանեմ... Այդ ժամանակ կովն սկսեց խոտն ուտել:

Զարուհին սթափվեց:

— Կեր, Մարալ ջան, խոտդ պակաս չեմ անի...

Հանկարծ գոմի դուռը բացվեց, ու լաց լինելով, կիսահագնված վիճակում ներս ընկավ Սոնան:

— Վայ, մայրիկ ջան, էդ ո՞ւր ես գնացել...

— Բալա ջան, ո՞ւր պիխտի գնամ, տեսնո՞ւմ ես Մարալին խոտ եմ տալիս.— ու մոտ բաշեց, աղջկա գլուխը սեղմեց կրծքին, նրա աշքերը շորի փեշով սրբեց,— ճիմի Մարալին կկթեմ, կաթը կրերեմ, կխմես:

Աղջիկը մոր խոսքերի վրա ձայնը կտրեց՝ ու ձեռքը մեկնեց դեպի կովը: Կովն սկսեց լիզել աղջկա ձեռքը:

— Բա սրանց ո՞վ պահի, կոլլսողում ո՞վ աշխատի, բա պատերազմի վերջը, բա հաղթությունը ես շտեսնե՞մ,— շշնչում էր Զարուհին: Ու մի կենսաբեր ուժ նորից նրան մղում էր դեպի կյանք, դեպի աշխատանք:

Սոնան աշքերը շուծ հետաքրքրությամբ նայում էր, թե ինչ-պես կովը կանգնել էր հնագանդ, իսկ մայրը ֆըշֆըշացնելով կթում, դատարկում էր նրա լիքը կուրծքը:

Զարուհին դույլով կաթը Սոնայի հետ բռնած տում տարավ:

Ապա մտքերի մեջ խորասուզված՝ կաթը եփեց, մի բաժակ լցրեց տվեց Սոնային խմելու, մի մեծ աման կաթ էլ մի կողմ դրեց, որ Սոնան նազոյի համար տանի:

Ասես Բագրատի կենդանի հայացքն ամեն կողմից նրան հետապնդում էր ու հրամայում՝ այս արա, այն արա, և Զարուհին, ենթակա այդ հրամաններին, շարունակում էր իր առօրյա աշխատանքները. «Թող Բագրատիս ձեռքն ամեն տեղ հասնի, շիմանան, թե Բագրատս չկա»: Դրա մեջ նա տեսնում էր կյանքի նեցուկը և սրտի սփոփանք:

Հարեւանները զարմանում էին, երբ տեսնում էին Զարուհու տունն ու դուռը առաջվանից մաքուր, կանոնավոր հավաքած:

— Տեսնես ո՞վ է գալիս սրա տունն ու դուռը էսպես վեր քաղում, մաքրում,—ասում էին միմյանց ու չեին հավատում, որ Զարուհին իր վշտոտ սրտով ամեն ինչ հասցնում է ու առաջվակարդ ու կանոնով տանում:

Զարուհին հույսը չէր կտրում, աշքը չէր պոկում ճամփեքից. «Ո՞վ իմանա, մեկ էլ տեսար՝ հրաշք դառած՝ եկավ Բագրատս»,—մտածում էր նա:

Այսպես անցնում էին օրերը: Զարուհին, բացի իր հոգսից, նազոյի, թառլանի հոգսն էլ էր վերցրել իր վրա: Շուտ-շուտ թակում էր նրանց դռները և հարցնում, թե նամակ ունե՞ն տղաներից: Երբ ասում էին «չէ», այդ բառը դանակի պես ծակում էր նրա սիրտը: Բագրատի վիշտն էլ ավելի էր ծանրանում նրա սրտին: «Ճերիք չէ ես տանջվում եմ, սրանք էլ տանջվե՞ն»,—մտածում էր նա ու սկսում առանձին-առանձին հուսադրել նրանց:

— Բան չկա, համբերություն է պետք, էսօր-էգուց նամակ կդա:—Երբ տեսնում էր, որ իր խոսքերը հույս ու ծիծաղ էին բերում նրանց երեսը, ինքն էլ էր զվարթանում:

Ժողովի էին կանչում, Զարուհին գնում էր ժողովի ու այդպես աննկատելի թելերով նորից ամուր կապվում կյանքին:

Մի օր գյուղովետի նախագահի դուռը բացեց և շեմքում կանգնեց Զարուհին: Նախագահը զարմացած նայում էր, թե ինչո՞ւ է նա սպրդնած և ի՞նչ պիտի ասի:

— Բա մարդու խիղճը կտանի: Թառլանի կտուրը քանդվել է, հողն ու ջուրը թափվում է գլխին... անմարդ կնիկ, տղերքն էլ ֆրոնտում, ուրեմն մենք պիտի սարքենք, միք ուշացնիւ...

Նախագահը խոստացավ, որ այդ մասին կմտածեն ու կսպա-
քեն:

Զարուհին այդ խոստումով շբավարարվեց. մի քանի օր շա-
րունակ գնաց-եկավ, մինչև որ մի կիրակի գյուղացիները հավաք-
վեցին, գերան ու հող բերին ու թառլանի տանիքը սարքել սկսե-
ցին: Զարուհին նրանց հետ հավասար աշխատեց, և երեկոյան
տանիքը պատրաստ էր:

Երբ թառլանը գոհունակ ժամաց, այն ժամանակ Զարուհին
էլ ժամաց, ասես Բագրատը դեմն էր գալիս ու ասում՝ «Ապ-
րես, մայրիկ, հասիր, օգնիր ամենքին»....

Սնցնում էին օրեր, շաբաթներ: Սովետական զորքերի հաղթա-
նակների համբավը թնդում էր աշխարհով մեկ,—ուղիոն էր հըն-
շեցնում, թերթերում էին գրում, մարդիկ էին պատմում: Զարուհին
լսում էր մեծ ուշադրությամբ ու նրան թվում էր, որ հազար-հա-
զարների հետ Բագրատի ձայնն է իր ականջին համնում:

Այն առավոտ Զարուհին արագ քայլերով մտավ գոմը, ասես
մի արտասովոր բան էր կատարվել նրա կյանքում: Կովի ճակատը
համբուրեց ու թերթ սովորած՝ սկսեց կթել:

— Մարալ ջան, էսօր կաթ շատ տուր, տանելու հմ Մարկո-
սին. նա էլ մի մոր բալա է, ֆրոնտից է եկել, կրակների միջից:

Կովի կաթն առատորեն ֆշում էր գույի մեջ: Զարուհին տուն
գնաց, կաթը եփեց, Սոնայի բաժինը լցրեց մի ամանի մեջ, մնա-
ցած կաթն էլ լցրեց մի ուրիշ ամանի մեջ, վերցրեց ձեռքը և շալի
մեջ փաթաթված, տնից դուրս եկավ:

Գարնանային առավոտ էր. արեկ տաքուկ շողերը խաղում էին
ձյան վրա, ձյունը հալվում էր, ու շերտ-շերտ բացվում էր գե-
տինը:

Զարուհին մի թանկ բան էր փայտիայում սրտի մեջ: Դա նա-
զոյի ուրախությունն էր: Նա գնում էր աշքալուսի: Նրան թվում
էր, թե այնտեղ Բագրատին է հանդիպելու:

Այդ օրն առաջինը Զարուհին բացեց նազոյի դուռը, հեա-
լով ներս մտավ, կաթի ամանը դրեց սեղանին, աշք ածեց ու
տեսավ շինելն ուսերին՝ կարճ ու կլոր երեսով Մարկոսին:

— Մարկոս ջան, բարով ես եկել...

Մարկոսը մի փոքր կաղալով առաջ եկավ ու հարդանքով
սեղմից Զարուհու ձեռքը:

Զարուհին Մարկոսի կրծքի մեղալները երբ տեսավ, ակնածանքով ժապաց ու ավելացրեց, — շնորհավոր... — ապա գնաց փաթաթվեց նազոյի վզովը, որ այդ ժամանակ Մարկոսի շորերն էր կարգի բերում:

— Աչքդ լույս, քույր ջան! Մարկոսը մենակ քո ուրախությունը չէ, բոլորիս ուրախությունն է:

Նազոն ուրախության արցունքն աչքին՝ չէր իմանում ինչ աւտասխանի վշտաբեկ մորը:

— Հենց իմացիր քո Բագրատն է, կարոտգ առ, Զարուհի ջան, — հազիվ շշնչաց նազոն և այլես չկարողացավ շարունակել:

Երկու մտերիմ կանայք, երկու մայրական սիրու լուռ հայացքներ էին փոխանակում, հասկանում միմյանց:

Մարկոսը ժամանակին նայում էր նրանց ու դժվարանում էր որևէ բան ասել:

Զարուհին հանկարծ հիշեց ու հրավեր կարդացող հայացքով ասաց, — Մարկոս ջան, թե ինձ սիրում ես, քանի կաթը տաք է, խմիր:

Մարկոսը հարեանուհուն հարգելու համար կաթը լցրեց բաժակի մեջ, քաշեց առաջն ու սկսեց խմել:

— Վաղուց այսպես անարատ, համով կաթ չեի խմել, — ասաց նա գոհունակությամբ:

— Հալալ լինի, խմիր, — պատասխանեց Զարուհին, — ես փափում էի իմ կովի կաթից քնիլ բաժին հանել:

Մարկոսը կաթը խմում էր, հետն էլ պատմում իր գլխովն անցածը և թե ինչպես վերջին անգամ վիրավորվել էր ու գոսպիտալում պառկել: Նազոն ու Զարուհին բերանաբաց լսում էին նրա զարմանալի պատմությունները:

Քիչ հետո նազոյի տունը լցվեց գյուղացիներով: Գալիս էին շնորհավորում, ամեն մեկը ուազմաճակատի դրությունից, իր որդու, եղբօր ու բարեկամի մասին էր հարցնում. «Մի գուցե տեսած լինես...» — այս խոսքերով էին դիմում նրան:

Գյուղացիները զարմանում էին, թե ինչպես Մարկոսը տաշվել, հղկվել էր, առաջ իսկի խոսել չեր իմանում. այժմ ամենքին սիրով պատասխանում էր և հարտար լեզվով պատմում կոփվների մասին, թե այսինչ կամ այնինչ ճակատում ինչ տեսակ կոփվներ

Եին մղել, ինչպիսի հերոսություններ էին կատարել սովորական մարտիկները:

Զարուհին ամենքին ուրախ պատմում էր, որ Նազոյի տղա Մարկոսը վերադարձել է ու մեղալներ ունի կրծքին շարած: Նա դրանից թիթեռություն էր զգում—սրտին շոքած վիշտը ետ էր մղվում, աեղի տալիս նոր ուրախության: Ամեն առավոտ վաղ կովը կթում էր ու Մարկոսի բաժին կաթը Սոնայի ձեռքով ուղարկում:

Մարկոսի ժամկետը լրացավ, առանձինգ օր մոր մոտ մնալուց հետո նորից պիտի վերադառնար իր զորամասը:

Մորից ոչ պակաս հովված էր Զարուհին: Նա մի քանի օր առաջ պատրաստություն էր տեսնում. խմոր հունցից, հաց թխեց, հավերի ձուն հավաքեց, ճուտ մորթեց, երկու զույգ բրդե գուզագրից ու մի կապոյ պատրաստեց:

Կիրակի առավոտը կապոցը ձեռքին դուրս եկավ ու գնաց դեպի Նազոյի տունը, տեսավ Մարկոսին՝ շենք ու շնորհքով զինվորական շորերը հագուծ, մեղալները կրծքին շարած, պատրաստվել է գնալու:

Եկան հավաքվեցին բարեկամները, հարեանները Մարկոսին ճանապարհ գցելու: Ավ ինչ կարող էր՝ ճամփի պաշար, նվերներ էր բերել, Մարկոսը խոր երախտագիտությամբ Զարուհու նվերն ընդունեց:

— Այսքան բանը ես ո՞նց տանեմ, սա մի ամբողջ զորամաս կկերակրի, — ծիծաղեց նա ու սկսեց բոլորի ձեռքերն ամուր սեղմել ու մնաս բարով ասել:

— Բեռլին ենք մտնելու, լավ իմացեք, Բեռլինից հեռագիր Էմ տալու ձեզ, — ասում էր նա ուրախ տրամադրությամբ:

— Ամենքս սպասում ենք էդ սուրբ օրվան, որ աշխարհքին մի խաղաղություն լինի, մեր բալեքն էլ հաղթանակով տուն դան, — պատրասխանում էին գյուղացիները:

Մարկոսը ձեռքը մեկնեց, որ Զարուհուն մնաս բարով ասի:

Զարուհին ետ քաշվեց:

— Դրա ժամանակը չէ, ես ուղում եմ մի քիչ հետդ գալ:

Նազոն ու Զարուհին կապոցները վերցրած՝ Մարկոսին ճանապարհելու գնացին:

— Ախը մեղք եք, ետ դարձեք, ո՞ւր եք գալիս,—շուտ-շուտ
կրկնում էր Մարկոսը:

Բայց ո՞վ էր նրան լսողը:

— Զէ, մինչև գյուղի ծայրը քեզ հետ պիտի գանք,—ալատաս-
խանում էին երկու մայրերը:

Մեկն իր հարազատ որդուն էր ճանապարհում, մյուսը՝
հարեանի տղային, բայց նրան թվում էր, թե հարազատ որդու
հետեւ է քայլում: Գարնան արևի տակ շողշողում էին
դաշտ ու անտառ, ասես մարգարիտներ էին փոել: Մի կողմը կի-
սահալ ձյունն էր, մյուս կողմը՝ նորածիլ կանաչը...

Մարկոսը լիաթոք շնչում էր հայրենի դաշտերի ու անտառնե-
րի թարմ օդը, նոր ուժ ու կորով ստանում:

Գյուղի ծայրին նրանք պետք է բաժանվեին: Նազոյի աշքերը
լցվեցին—գլուխը գրեց Մարկոսի կրծքին:

— Սաղ-սալամաթ տուն արի, Մարկոս ջան,—ասաց նա:

Զարուհին ձեռքը մեկնեց:

— Մարկոս ջան, գնա, թող ձեր ճամփեքին վարդ-մեխակ
փուլի, հաղթանակով գաք,—հուզմունքից կոկորդը սեղմվեց, մի
փոքր դադարից հետո շարունակեց,—իմ բալին վառված սրտիցս
բարե տար,—աշքերը թրչվեցին, շուրթերը դողացին, կմկմաց,—
ասա մայրդ սիրտն աշխարհին է տվել...

Մարկոսի աշքերումն էլ արցունքներ շողացին. նա երկար
ժամանակ բառ չէր գտնում վշտահար մորը սփոփելու:

Զարուհին հանկարծ զգաստացավ:

— Մորդ շուտ-շուտ նամակ գրի, մեղք է, շատ է մտածում...

— Մոքիր ջան, մինչև օրս իմ մորս քույր ես եղել, հարազատ
ես եղել, էլի եղիր,—ասաց Մարկոսը Զարուհու ձեռքն ամուր սեղ-
մելով,—նա շատ-շատ շնորհակալ է քեղանից: Սպասեցեք մեր
հաղթանակին:

Այս խոսքերն ասես սպեզանի լինեին Զարուհու վերքոտ
սրտին: Ուրեմն ինքը պետք էր ուրիշին, և դրանից նրա մեջ ուժե-
ղանում էր ապրելու կամքը:

— Ամենքիս կողմից բարե տար մեր բոլոր կովող հերոս մար-
տիկներին,—ասաց Զարուհին Մարկոսի հետեւ, որ արդեն մի բա-
նի քայլ հեռացել էր և գնում էր դեպի երկաթուղու կայարան:

— Կսպասենք հաղթանակին, կսպասենք ձեզ վերադարձին, — 22նշում էր Զարուհին: Նա դուրս էր եկել, իր սեփական վշտի ափերից ու խառնվել կյանքի մեջ հոսանքին:

Երկու մայրեր գեռ երկար կանգնած նայում էին Մարկոսի հետևից:

— Նազո՞ ջան, մի՛ տիսրիլ, շուտով... — ասաց Զարուհին, բարի, հանդարտ հայացքով նայելով Հարևանուհուն: Նազո՞ն հավատում էր Զարուհու խոսքերին, աշքերը սրբեց և ժպտաց.

— Քո էդ սուրբ բերանով ասա թող հաղթություն լինի, թող ամենքի կորածը ետ գա...

Զարուհին և թախծում էր և ապրելու կարոտ էր զգում, արեկ շողերի մեջ, ամեն մի ծիլ ու կանչի մեջ նա զգում, տեսնում էր իր որդու հայացքը, նրա աշքերի փայլը և սփոփված 22նշում.

— Հաղթության հետ, ամենքի հետ տուն կմտնի և իմ Բագրատում...

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Գարնան վաղ արշալույսին արթնացած մի հեծվոր էր անցնում նոր վարած դաշտերի միջով։ Արշալույսի շողերի տակ սևահող դաշտը ընդարձակ ծովի պես կլանում էր հեծվորի կարոտ հայացքը։ Հողի արբեցուցիչ բույրը նա ծծում էր ագաճորեն, սանձն ամուր պահած, գլուխը բարձր՝ ձին քշում առաջ։ Սև, առույգ ձին վրնջում էր ու ասես փորձելու համար տիրոջ ուժը երբեմն թափ էր տալիս նրան ուժգնորեն։

Կաթնամշուշը դանդաղ բարձրանում էր հեռվում ձգվող լեռներից, որ կապույտ ուղտերի պես իրար հենված՝ բռնել էին անվերջ մի ճանապարհ։

Հեծվորը սանձը թուլացրեց, ձին դանդաղեց, նա թռավ ձիու մեջքից, և երբ ոտքերը դիպան հողին՝ ասես հպվեց իր սիրածին և մի հրճվալից ժափտ շողաց աշքերում։ Թուխ, դրավիչ դիմադծերով երիտասարդի բարձր հասակը ձգվեց դաշտի սև ֆոնի վրա։ Հագի շինելը և զինվորական գլխարկը վկայում էին, որ նա եղել էր բանակում։

Նրա հետախուզիչ հայացքը թափառում էր հողի մակերեսույթով ու տեղ-տեղ դեմ առնելով շվարած հողակտորի՝ ասես խարսդանված դժկամորեն կծկվում էր դեմքը։

Ձին հոտոտում էր հողը, կանաչ ոստեր էր պոկոտում, ծամում։ Ցուրտ հովը խաղում էր երիտասարդի մտադբաղ ճակատին ու ականջի տակ հնչում էր նորից կոլխոզի փոթորկալի ժողովը։

Հարազատ ձայներին ունկնդիր նստել էր նա լոին ու մտասույզ։ Ե՞րբ էր այդքան անուշ թվացել ամեն, ամեն ինչ, ինչպես այժմ, ուղմաճակատից վերադառնալուց հետո։ Իսկ կոլխոզնիկները վիճում էին, մեկը մյուսից առաջ անցնում։

— Ովկ կովել է ջիգյարով, ով արյուն է թափել Հայրենիքի համար, նա էլ ջիգյարով կկովի հողի արդար բերքի համար, կոլխոզի բերքը ծով կուպանի...

— Վաղոյին ենք ուզում, թող նա լինի մեր տնտեսության ղեկավարը, մեր կոլխոզի նախագան...

— Կերաղարձել է պատվով, շքանշաններով, դրանից ավելի հնչ լինի, — գոշում էր մի պատկառ ծերումի ձայն:

— Համաձայն ենք, — աղաղակեցին ամեն կողմից, ու ձեռքիրն անտառի պես բարձրացան:

Իսկ նա ձգվել էր զինվորական կեցվածքով, ու թվում էր, որ մի նոր մարտական խնդիր է ստանձնում՝ այժմ ել աշխատելու Հայրենիքի խաղաղ դաշտերում:

«Բերքը ծով կդարձնի», կրկնում էր նա մտքում կոլխոզնիկների պատգամը: Հանկարծ աշքի դեմ, վարած դաշտը փոխվեց անվերջանալի ալենածան ոսկեղին ծովի...

Չիու շատ մոտիկ փնչոցից նա սթափվեց և աշքն ընկավ ճամփակրին բուսած ձնծաղիկներին. այժմ էլ նա պատանու խանդով ոկտեգ քաղել քնքարբուր, կապտավլուն ձնծաղիկները, որոնք վկաէին եղել իր առաջին սիրուն: Մի վաղ գարնան, երբ շահել սրտերն էլ սիրո ծիլ են արձակում, աղջիկ-տղա դաշտի քարերը հավաքելիս՝ նա այգահս փնջեց ձնծաղիկներն ու տվից կողքի աղջկան, որպես սիրո նշան:

Շուշանը՝ բոյը բարակ, վարդագույն երկուով, ձայնը զանգակ, գյուղի ամենագեղցիկ աղջկին էր, նա շմերժեց Վաղոյի սերը:

Վաղոն փայտայում էր ցուրտ ձնծաղիկները, ասես սիրածի այտերը լինեին մատների տակ: Վաղոյի սերն ուժեղ էր, ամուսնացավ ու շեր թողնում Շուշանի մատը փշի առնի, ոտը քարի դիպչի, որի համար պառակ մայրը միշտ հանդիմանում էր. «Կնկան էդքան շնու սիրի, երես կառնի»:

Մի տարի լրիվ նա շվայելեց Շուշանի սերը, երբ պատերազմն ոկտեգ, գյուղի շատ երիտասարդների հետ Վաղոն էլ ուզմաճակատ մեկնեց: Սիրո խաղաղ օրերին փոխարինեցին ուղմի անհամպիստ օրերի:

Երբ հաղթանակից հետո խաղաղությունը վերահամտատվեց՝ նա տուն վերադարձավ, տեսավ սար, ձոր ու դաշտ իրենց տեղումն էին, չեին փոխվել, բայց փոխվել էր իր կյանքը: Տանը

պառավ մորը և երեք տարեկան տղային գտալ, որ ծնվել էր իրենից հետո, իսկ սիրած կինը չկար...

Վաղոն խոր հառաջեց: Զնծաղիկները բոց դարձան ու այբեշ սկսեցին մատները: Նա ուժեղ մատների տակ ճզմեց ձնծաղիկներն ու նետեց հողին՝ շշնչալով. «Նա կորավ ինձ համար, դուք ել կորեք...»:

Զին անտարբեր պոկոտում էր կանաչ ծիլերը, իսկ տերը ձիու աշքերի մեջ ուզում էր կարդալ իրեն սփոփող մի խորհուրդ.

«Ասա՛, ի՞նչի այդպես եղավ...», հարցնում էր նա լոիկ:

Հողմի մի ուժգին ալիք պոկեց նրան իր դառնատրառունչ մտքերից: Նա բարձրացավ տեղից, վստահ հայացքը մի անգամ էլ պատեցրեց հողի մակերևույթով, ապա մի ոստյունով թռավ ձիու մեջքը, նայեց երկնքին. մարել էին վառ գույները, արել վեհորեն բարձրանում էր: Գործնական մտքերը եկան, պաշարեցին նրան: Զիու սանձը ձգեց:

Կոլխոզի առույգ ձին արելի տակ շողին տալով՝ սլանում էր դաշտերի միջով ու հպարտ էր ասես, որ տանում էր իր մեջքին: Կոլխոզի նորընտիր նախագահ Վաղոյին:

Գյուղն արթուն՝ շարժման մեջ էր, հանդիպած ծանոթ հայացքներ ուղեկցում էին հեծվորին իրենց մեջ մտմտալով.

«Մեր նախագահն արելից առաջ է զարթնում, ձիով գնում դաշտը, պտտում ու ետ գալիս»:

Նա ձին քշեց գեպի քարե, միշտ կարկանի շենքի բակը, որտեղ կոլխոզի գրասենյակն էր:

Հենց որ ձիուց ցած թռավ, բակում խաղացող երեխաների խոմբը վազեց գեպի նա:

— Ընկե՛ր Վաղո, ընկե՛ր Վաղո, ի՞նձ տուր, ի՞նձ...

Երեխաները իրար ձեռքից խլում էին ձիու սանձը: Մանր աշքերով, լայն քթով փոքրիկ Վանիին վիճակվեց ձիու սանձը բռնելու մինչև ձիապան Մաթոսի գալը:

— Վա՛յ, ո՞նց փախցրեց, — ասում էին տղաները միմյանց ու նեթ նայում ճարպիկ Վանիին:

Իսկ Վանին շնորհակալ այդպիսի մեծ վստահության համար, հպարտ տեսք ընդունած՝ ման էր ածում ձիուն բակում: Վանին իր մտքում որոշեց, որ Վաղոն լավ էր, քան առաջվա նախագահը,

նա իսկի ձի չէր նստում ու երեխաներին միշտ քշում էր գրասենյակի դռնից:

Վաղոն կրտսեր ընկերների բարեկամական հայացքներին բարի ժպիտներով էր պատասխանում, գրանից երեխաներն ավելի էին ոգևորվում ու մտերմանում նրան:

Հանկարծ նա իր մոտ կանգնած երկու փոքրիկների ուսերին թեթև խփելով, ասաց.

— Հա՛սկա մի ձեզ տեսնեմ, այս բոպնին ծտի պես թռե՛ք ու այստեղ կանչեցեք տրակտորիստ Մխոյին, Սեթին,—ասկա մի փոքր պառազայից հետո դժկամությամբ ավելացրեց,—էն Հովանին...

Խոսքը գեռ շվերջացրած Պողոսիկն ու Դրաստը թռան, իսկ Վանին ձիու սանձը բռնած ման էր գալիս, ասես ինքը լիներ ձիու տերը և կոլխոզի նախագահը:

Վաղոն գործնական քայլերով գնաց, նստեց գրասեղանի առաջ, բացեց դարակը, թուղթ, մատիտ հանեց և սկսեց նշումներ անել, անուններ գրել:

Երկու փոքրիկ տղա դուն ճեղքից նայում էին ու իրար ականչի շի շնչում.

— Տեսնես մի ձեռքը ինչի՞ չի շարժում...

— Զե՞ս իմանում, կտրված է,—պատասխանեց մյուս ընկերը:

— Բա էլ չի՞ դուրս գա, —հարցրեց փոքրը:

— Սո՞ւս, կլսի, —սաստեց ընկերը:

Երկու փոքրիկները մի քանի բոպե լուր նայեցին դուն ճեղքից, ապա ձանձրանալով վազեցին Վանիի մոտ ու նրան զայրացնելու համար սկսեցին գոտիկից քաշքանել:

— Տե՞ս, ձին կքենմ ձեզ վրա, —սպառնաց Վանին:

Փոքրիկները պուկ փախան, իսկ Վանին ծիծաղում էր նրանց հետեւց.

— Վախեցա՞ք...

Քիչ հետո գրասենյակը լցվեց կոլխոզնիկներով: Նրանք վարի, ցանքի վերաբերյալ զանազան հարցերով դիմում էին Վաղոյին: Նա լսում էր համբերությամբ ու ամեն մեկին պատասխանում մտահոգ ու բանիմաց տոնով:

Այդ ժամանակ ներս մտան երկու երիտասարդ: Մեկը թխագեմ, առողջակաղմ տրակտորիստ Մխոն էր, մյուսը՝ շիկացեր, նիւ

Հարակազմ արակտորիստ Սեթը: Եկան ու կիսլ կանգնեցին գրա-
սեղանի առաջ:

— Ի՞նչ կա, ընկե՛ր Վաղո, — Հարցրին արագացած շնչառու-
թյամբ:

— Հասարակ բան, — դարձավ Վաղոն հեգնոտ ու խիստ, ապա
ծխախոտ հանեց, վառեց մի ուրիշ կոլխոզնիկի ծխախոտից:

— Մի ամիս շկա մենք ձեզ հետ միասին լոզունգ ենք ընդու-
նել՝ ո՛չ մի թիզ հող առանց վարելու շթողնել, կովտուր ձևով աշ-
խատել, — շեշտեց վերջին խոսքը, ինչպես իր սեփական գյուտը,
ապա ծովսը քթանցքներից բաց թողնելով շարունակեց.

— Բայց մեր խոսքը գործից ետ է մնում, դաշտից եմ դալիս,
աշքովս տեսածն եմ ասում, տեղ-տեղ շորովէ է մնացել, տրակտո-
րը չի բանել...

Այնտեղ հավաքված կոլխոզնիկները գլուխները պտտացրին
ու կամացով իրար ասացին.

— Սրան շես խարի, նախագահ Բալաբեկը չէ, որ եշի ական-
ջում քնի, սրան ֆրոնտի Վաղո կասեն, քոքված է եկել, պատաս-
խան տվեք:

Տրակտորիստ Սեթը, որ ճարպիկ էր ու լեզվով, շեկ մազերը
շփելով պատասխանեց.

— Ծնկե՛ր Վաղո, այսր չե՞ս իմանում, մաշինան մին քարի
է դեմ առնում, մին սատանա մտած իմարսվում, ուզածդ երիշով շի-
պնում:

— Մերը չմեռնի Սեթի, ուզում է լեզվակոխ անի, դուրս
պրծնի, — շնչում էին կոլխոզնիկները:

Միոն և Հոնքերը վեր-վար անելով՝ քիթ տակ մրթմրթում եր-
նրան դուր չեին գալիս նախագահի նկատողությունները. ժնաթա-
ընկանք ընտրեցինք, ափսոս չե՞ր Բալաբեկը, իսկի մեզ չեր ասում
աշքներիդ վերելը հոնք կա, ուսում էինք իրար հետ եղ-
բոր պես», մտածում էր Միոն:

— Էն խափան տրակտորի համար ի՞նչ կասեր, — Հանկարծ
Վաղոն հիշեց հողում խրված տրակտորը:

Այդ Հարցի ժամանակ ներս ընկավ Պողոսիկն ու շնչակտուր
Հայտնեց.

— Ընկե՛ր Վաղո, Հովանն ասավ, որ հիվանդ է, դալ չի կարող ու հետեւցս էլ վատ-վատ խոսքեր, թե կորի՛, լակո՛տ...—Պողոսի-կը հազիվ արցունքները զսպեց:

Վաղոն գլուխը կախեց, սեղանի թուղթը բռունցքի մեջ տրուեց, ու թի՛ տակ քրթմնջաց.

— Դա տղամարդություն չէ, տեսնենք ո՞վ կփոշմանի...

— Խափան տրակտորը Հովանի տրակտորն է, ոչ դրստում է, ոչ բանեցնում, վերջերքս մեջը սատանա է մտել,—վրա բերեց Սեմը՝ կամենալով ստուգել Վաղոյի վերաբերմունքը:

Կոլխոզնիկներն իրար երես նայեցին խորհրդավոր ու բանիմաց:

— Հերիք չէ ֆրոնտ չփնաց, ուրիշի կնիկը խլեց, հիմի էլ լոդրություն է անում,—կամացուկ ասաց ծեր Ավետիսը իր մոտի կոլխոզնիկի ականջին:

Վաղոն գլուխը բարձրացրեց ու անմիջական պատասխանի փոխարեն զսպված ասաց.

— Քեզ ու Մխոյին խնդիր եմ տալիս՝ այսօր և եթ գնացեք ու ձեր մաշինաներով կիսատպուատ շորով տեղերը վարեցեք: Խափան տրակտորը ես սարքել կտամ ու մեր տրակտորիստուհի Հայկուշին կիսատպնեմ, թո՛ղ բանեցնի:

Վաղոյի վերջին վճիռը բոլորի վրա աշխուժություն բերեց:

— Հենց իմացեք ֆրոնտումն եք, — շարունակեց Վաղոն ծիծաղի միջից: — Ի՞նչ ֆրոնտ, ո՞չ կրակ, ո՞չ զնդակ, ո՞չ մահ ու սարսափ... Այստեղ խաղաղ դաշտն է ու խաղաղ երկինքը, մնում է ամենքս աշխատենք սիրով:

— Ճշմարիտ է ասում ընկե՛ր Վաղոն, — միջամտեց ծեր Ավետիսը, որն ամենից շատ էր ոգեսրպում Վաղոյի խոսքերով, — էնտեղ դժվար էր, քանց մեր դաշտի ու քոլի աշխատանքը:

Մխոն ու Սեմը նբանց խոսքերից ազդված՝ շուռ եկան գնացին իրենց գործին:

Այժմ էլ Վաղոյին սերմացուի հարցն էր զբաղեցնում. նեղն էր գցել նա պահեստապետին, որին շաղության պատճառով կոլխոզնիկները կլոր Սաղաթել էին կանչում:

Վաղոյին հետաքրքրում էր, թե ո՞րքան զտված ու անզտել

սերմ կար պահեստում. կլոր Սաղաթելն էլ քիթը վեր քաշելով
մանր աշքերը կկոցած՝ պատասխաններ էր տալիս կցկտուր:

— Դե ի՞նչ իմանամ. նրանից էլ կա, նրանից էլ...

Առաջին անգամն էր նա հանդիպում այդ տեսակ ուշադիր նախագահի: «Բալաբեկի ժամանակ՝ ո՞վ էր հարցնում, զտված, անզտել, խառը լցնում էինք հողի բերանը: Զէ, սա մեր գիտեցած Վաղոն չէ, փոխված է եկել», — մտածում էր կլոր Սաղաթելը:

— Հողի բարձր բերքատվությունը մեր ձեռքի միջումն է, — շարունակեց Վաղոն բարձրածայն, — եթե ուղենանք լեռ ապառաժից էր առատ բերք կստանանք, իսկ որ չուղենանք, կուզտուրա չունենանք՝ գաթի խորիզի պես փխրուն հողն էլ մեզ մի հատիկ չորեն չի տար:

Վաղոն խոսում էր կոլխոզի շահերից. ո՞վ կարող էր նրան, պոարկել:

— Մտիկ ես տալիս, երեկվա երեխան է, համա խոսքն ու խելքը հազար մեզ պես սպիտակ գլուխ կքաշի, — ասում էր ծեր Ավետիսը կողքի կոլխոզնիկին, որ գլուխը տմբացնելով պատասխանեց.

— Վուազում ես, դեռ գործին մտիկ տանք, ճտերն աշնանն են հաշվում...

Ծեր Ավետիսին գուր չեկավ հարեւանի թերահավատությունը՝ նա երեսը շրջեց նրանից ու խորհրդածությունների մեջ ընկավ:

Մի պահ նրա առաջով անցավ Վաղոյի ողջ կյանքը, նրա ընտանեկան պատմությունը, որ հայտնի էր գյուղին: Պատերազմ երբ սկսվեց, շահել կնոջն ու պառավ մորը թողեց, Վաղոն ռազմաճակատ գնաց: Երկար ժամանակ նրանից նամակ չէր ստացվում, ու մի օր էլ նրա մահվան լուրը գյուղում տարածվեց: Միայն պառավ մորը այդ լուրը շնասավ...

Վաղոյի ընկերը՝ Հովանը, որ փորի պատովածքի համար բանակ չէր գնացել, օգտվելով այդ լուրից, սկսեց հետապնդել Շուշանին, որին գեռ աղջիկ ժամանակվանից աշք ուներ: Շուշանը երեք տարի սպասելուց հետո հույսը կտրեց, ինչպես գյուղացիներն էին ասում, շահել խելքը տվեց Հովանին ու ամուսնու տանից գնաց, բայց երբեք Վաղոյին մտքից շնանեց:

Շուշանը ուզեց իր երեխային, երեք տարեկան Սոսին հետը տանել, բայց պառավ Սոփին ոտքը առաջ դրեց ու ասաց. «Գնա՛

Աս քեզ երեխա շեմ տա, իմ թոռը, իմ տղայի ժառանգը, իմ միակ միսիթարությունը ինձ մոտ պիտի մնա»:

Ոչ գյուղը պառավ Սոփիի կողմը բռնեց, նրա շահերը պաշտպանեց և խուլ ատելությամբ լցվեց դեպի Շուշանը և Հովանը:

Պառավ Սոփիին միսիթարվում էր փոքրիկ թռոնիկով և քաղաքում ամուսնացած մեծ աղջկա նամակներով: Մայրը համառ կերպով սպասում էր իր որդու վերադարձին. «Մենակ թող շունչն ինձ հասնի, էլ ուրիշ բան շեմ ուզում», այս էր նրա ամենամեծ բաղձանքը:

Եվ ահա պատերազմից հետո բոլորովին անսպասելի Վաղոն ուզմաճակատից տուն վերադարձավ:

Պառավ մոր ուրախությունն աշխարհով մեկ եղավ, բուռն կարոտով խորշումած երեսը քսում էր նրա շինելի փեշերին, նրա ձեռքերին:

— Զեմ հավատում, Վաղո՛ ջան, որ դու եկել ես,— կրկնում էր նա: Իսկ գյուղացիները և՛ ուրախացել, և՛ կարեկցում էին, որ այն հաղթակազմ, առողջ տղան վերադարձել էր առանց մի ձեռքի, կինն էլ ամուսնացել էր ուրիշի հետ:

Ոչ ոք չէր համարձակվում Վաղոյի ներկայությամբ Շուշանի կամ Հովանի մասին խոսել՝ մտածելով, որ կրակի վրա յուղ շեն լցնի:

Վաղոյին ուզմաճակատը կոփել էր, նա լռությամբ էր տանում այդ ամենը: Ամեն մեկը մի տեսակ էր բացատրում նրա լռությունը. ասում էին պատվին թույլ չի տալիս, ոմանք թե՛ Շուշանին դեռ իր մտքում սիրում է և այլն:

Շեր Ավետիսը սթափվեց իր մտքերից, երբ Վաղոն դիմեց կլոր Սաղաթելին.

— Գնա՛ պահեստը բաց արա, այսպես խմբովին գնանք մեր սերմացուն մեր աշբով տեսնենք:

Կոլխոզնիկների խումբը Վաղոյի հետ զրուցելով գնաց դեպի պահեստը:

Իսկ կոլխոզի երեխաները՝ Պողոսիկը, Դրաստը, Վանին իրար հրմշտելով վազեցին նրանց հետեւից:

Մի երեկո, երբ անձրևից հետո ծաղկած ծառերի բույրով էր հագեցած օդը, Վաղոն հոգնած, մտքերի մեջ խորասույզ տուն էր գալիս, հանկարծ տեսավ մի կին իրենց տանից դուրս եկավ և դեմք ծանոթ աշքերը փայլատակեցին: Կինը գլուխը խոնարհեց ու արագ կողքից անցավ: Դա Շուշանն էր, որ երբեմն Վաղոյի բացակայության ժամանակ գալիս էր Սոսին տեսնելու:

Վերապարձից հետո Վաղոն առաջին անգամ նրան հանդիպեց: Ինչո՞ւ էր այդպիս դողում, ինչո՞ւ արագացավ շնչառությունը՝ զարմանում էր իր թուզության վրա, դժգոհում էր ինքն իրենից: Չէ՞ որ Շուշանը նրա համար այլևս չկար, մեռած էր:

Միբար մտքից անկախ թպրում էր. ա՞յս, թի կարողանար նա այդ սիրտը փշուր-փշուր անել, որ չզգար ու չմատներ իրեն:

Խոնավ երեկոյում սփռված ծաղկիների բույրը գրգիռ ու թախիծ էին բերում նրա հոգուն:

Թեպետ նա գիտեր, որ Շուշանը իրենց տուն էր գալիս երեխային տեսնելու համար, բայց ոչ ինքն էր այդ մասին մորը հարցնում, ոչ էլ մայրն էր ասում:

Նա տուն մտավ այլայլված ու մի անկյուն էր փնտրում առանձնանալու: Ամեն անգամ պառավ Սոսին նայում էր տղայի աշք-հոնքին, տեսնի բան շի՞ պատահել. այս անգամ էլ նայեց, ստուգեց ու բերանի ափերի մոտ կնճիռները շատացան, ձայնը դողդողաց.

— Ասա՛, ինչի՞ ես նեղացած...

— Ինչի՞ և ո՞ւմնից նեղանամ, —պատասխանեց Վաղոն՝ խորհառաշելով:

Նա ինչպես մի գանձ գտներ, հանկարծ վազեց գրկեց անկյունում խոռվ կանգնած փոքրիկ Սոսին:

Երեխայի աշքերը թաց էին, լաց էր եղել մոր հետեւից, տատը հացի մի մեծ կտոր էր տվել նրա ձեռքը:

Երեխան հացը խսկույն ձեռքից գցեց, կախվեց հոր վզից ու սկսեց ծիծաղել, թաթիկներով խփել նրա երեսին:

Սոսի այտերի գույնը Շուշանինն էր, աշքերը, նայվածքը հիշեցնում էին Շուշանի նայվածքը, երեխան թոթովում, ծափ, ծափ էր անում:

— Ծա՛փ, ծա՛փ, Սոս ջան, — կրկնում էր վաղոն՝ Հետը շշնչում. — Բա մայրդ կենդանի լինի, դու մտիր շոնենաս. վա՛յ, անջիպյա՛ր Շուշան...

Վաղոն երեխային մոր գիրկը տվեց, ծխախոտը հանեց, կպցրեց վառարանից ու սկսեց ծխել: Նորից տխուր մտքեր պաշարեցին նրան: Տբամության մեջ նա կոփվն էր հիշում և իր կյանքի ամենածանր պահը:

Բեոլին հասնելոց առաջ, ամենաթեժ կուլի մեջ նա ծանր վիրավորվեց, գիտակցությունը կորցրեց: Երբ առավոտը աշքերը բացեց՝ տեսավ հիվանդանոցում պառկած է. ուզեց շրջվել ձախ կողքի վրա, բայց ձախ ուսի ծակող ցավը թույլ չտվեց: Առողջ ձեռքը տարավ, ուզեց շոշափել ձախ ձեռքը ու երբ շգտավ այն՝ մոնշաց, աշխարհը գլխին մթնեց: Բայց որ տեսավ շուրջը իրեն նման վիրավոր մարտիկներ լուս պառկած՝ ատամները ուժով սեղմեց, ձայնը խեղդեց կողորդում:

«Ինչի՞ եմ պետք, ո՞ւր եմ ապրում», — շշնչում էր նա. ապա բժշկական քրոջ մայրական, զթոտ հայացքին հանդիպելով՝ հանդարտվեց:

«Եհօ գործի համար... արիություն ունեցիր, տոկա. մերոնք թեոլինն էլ գրավեցին...» կարգում էր ոռու կնոջ խաղաղաբեր վճիռ հայացքում: Ամեսներ շարունակ վերքը բուժեցին խնամքով, վաղոն հաշտվեց իր վիճակին, հիշում էր զոհված ընկերներին և ամաշում իր փոքրությունից: Եկավ հույսերով. խաղաղ ու սիրով իր ընտանիքում հանգիստ առնելու: Եվ պատահեց հակառակը: Մեծ ճիգ գործադրեց շընկճվելու համար:

Մայրը երեխային քուն էր դնում, իսկ նա ծխում էր ու մտածում. «այն կոփվն ավելի հեշտ էր, քանց սրտի կոփվը, այնտեղ ձեռքս գնաց այստեղ սրտիս կեսը»:

Տան ամեն մի անկյունը հիշեցնում էր Շուշանին, չէ՞ որ ման էր եկել նա աշքի առաջ, սիրել, գուրգուրել էր նրան: Այժմ ուրիշ աշքի առաջ, ուրիշի գրկումն էր նա: Նոր ծխախոտ կպցրեց: Մայրը քորում էր Սոսի գլուխը, որ քուն բերի նրա աշքերին. միաժամանակ ուզում էր վաղոյին ուրախացնել.

— Ամենքը ինձ երանի են տալիս, որ վերապարձել ես բա-

նակից, քանի՛ մայր ու քույր են մղկտում, ասում են՝ թո՞ղ մեր հարազատների շոմալ մեզ հասնի. է՛լ բան չենք ուզի:

Մայրը տհսավ Վաղոն իր խոսքերին անտարբեր է, շարունակեց ավելի բարձրաձայն.

— Ասում են տաշած քարը գետնին չի մնա. շթողին գետնին մնայիր, փառք ու պատվի արժանացրին, կոլխոզի նախագահ ընտրեցին:

— Ա՛յ մեր, ես շգիտեի, որ դու կարգին ճառել ես իմացել, — կատակեց Վաղոն:

Պառավ Սովին ավելի ոգևորված շարունակեց.

— Ես հո քեզ էղպիս շեմ թողնի, էն կնկանից մեկն էլ կըդտնի, հաղարը թևող քաշող կլինի... Կամուսնացնեմ, որ քո արեվիդ ձենն ածես, նոր այն ժամանակ հանգիստ կմեռնեմ...

Վաղոյին դուր շեկան մոր վերջին խոսքերը:

— Ա՛յ մեր, այսօր մի լավ բան եմ արել, մի քանի կոլխոզնիկի հալաքեցի՝ գնացինք Աշխենի տնամերձ հողը փորեցինք:

— Եղ հո խերումը լցվել ես, Ազասին ֆրոնտից չեկավ, Աշխենը երեք երեխով մնացել է... — պատասխանեց մայրը՝ ուրախանալով Վաղոյի բարի գործի համար:

— Եղի ուրիշ բանակայիների ընտանիքներ կան, Հերիքնազը, Հոռոմենց Նատաշը, Սաղաթելի հարսը, — նա թվեց մի շարք անուններ, որոնք կարիք ունեին օգնության:

— Վաղո ջան, ինչքան կարող ես, ձեռքիցդ գալիս է, լավություն արա, — պատասխանեց պառավ Սովին:



Գարնանային պարզ, մեղմ առավոտ էր: Վաղոն դուրս եկավ տանից՝ Սոսին գրկած: Սոսը թռչունի պես թառել էր հոր աջ բագկին: Օրը տաք էր, Վաղոն շինելը հանել՝ բլուզով էր, կրծքի ձախ կողմը շքանշանների փոխարեն ծիածանագույն ժապավենների երեղներն էին շողշողում: Պառավ Սովին դուրս եկավ նրանց հետեւ սոթտած ու ասաց.

— Երեխին տար ման ածա, թող սար ու դաշտով լինի, թե շետանը ժանդուվում է, ես էլ լվացքիս լինեմ:

Սոսը հոր ուսի վրայից տատին էր նայում, թրթոռում,—տառի՝, գնո՞ւմ եմ, տա...

Վաղոն քալերն ուղղեց դեպի գյուղից դուրս գետափին գտնվող կոլխոզի այգին:

Հոր կըծի վրա ծլվում էր փոքրիկ Սոսը և մատը պարզած կրկնում.—էս ի՞նչ է, էն ի՞նչ է:

— էս ծիտիկ է՝ ծի՛վ, ծի՛վ, էն շնիկ է՝ հա՛ֆ-հա՛ֆ... էն պապիկ է ձեռնափայտով...—Վաղոն զրադեցնում էր տղային, այդ ժամանակ նրանց առաջից մի հորթուկ էր վազում: Վաղոն ավեցացրեց.—Սա էլ բիժո-բիժո...

Սոսը թաթիկները պարզեց.—Բիժո-բիժո եմ ուզում...

Եվ այդպես աննկատելիորեն նրանք գուրս եկան գյուղից: Հեռվում երկում էր կանաչ ծառերի մի շերտ՝ տեղ-տեղ սպիտակին տվող փնջեր. զա այգին էր իր ծաղկած ծառերով:

Դաշտի մաքուր, բուրումնալից օդը առույգություն էր բերել հոր և մանկան վրա: Վաղոն արագացրեց քայլերը: Սոսին թվում էր, որ ինքը թռչում է օդում, ծառ, թռվի, քար արագ անցնում էին աշքի առջևից, և այդ ամենը նա դիմավորում էր ուրախ բացական-շություններով: Վերջապես հասան գետեղրին փուլած այգուն: Մեղունների բզզոցը միախառնվելով գետի խշուցին՝ օդը լցորել էին հաճելի երածշատությամբ: Այգի մտան: Բոլոր ծառերի արմատների տակ փորված էր, բները սպիտակ կրաշրով պատած: Մի խումբ կոլխոզնիկունիներ ծառամիջի բաց տարածությունների մարգերում քակլայի, բողիկի և այլ սերմեր էին տնկում:

Վաղոն Սոսին ցած դրեց ու կոլխոզնիկունիներին բարեկելով անցավ ծառերի միջով: Խնձորենի, տանձենի, սալորենի, բալենի, չրանք էին այգու հիմնական ծառերը:

Յուրաքանչյուր ծաղկած ծառ շցում էր Վաղոյի սիրտը, ասես նրա սրտից լիներ ծաղկած, և նա շշնչում էր հրճվանքով.

— Ծաղկեցե՛ք, պտղակալեցե՛ք, թող կոլխոզի բերքը ծով դառնա:—Իսկ Սոսը ընկել էր մարգերի մեջ շարածնի խնդությամբ ու վաղվզում էր դես ու դեն: Ամեն մի կոլխոզնիկունի իր գուրգուրանքի բաժինն էր հասցնում Սոսին: Այդտեղ էր ուզմածակատում դոհված մարտիկ Աղասի Մարկոսյանի կինը՝ Աշխենը. նա համբուրում էր Սոսին և երախտագիտությամբ ասում:

— Քո հայրը մի անգին լույս է: — Ու հուղված ձայնով սկսեց պատմել կողքի կանանց: — Տնամերձ հողս փորել տվեց կոմսոմոլ-ներին, ինքն էլ օգնում էր, աղաշում էի, թե, ընկեր Վաղո, դու մի՛ անի, բայց ո՞ւմ էր լսում:

Այդուխորից Վաղոն եկավ գոհ, որովհետև մի շարք ծառերից, որ նա հույս չուներ, դալարել էին ու ծաղկելու մոտ էին: Նա փնտրում էր Սոսին, հանկարծ շրջվեց, տեսավ ծայրամարդում նստած կապտաշոր կնոջ գիրկն էր ընկել: Կինը կրծքին սեղմել էր երեխային, որը գտել էր իր հարազատ մորը: Կոլխոզնիկուհիները խորհրդավոր փսփսուկով նայում էին այդ տեսարանին:

Վաղոյի համար անսպասելի այդ տեսարանը շատ տհաճ էր... նախատում էր մտքում իրեն՝ թե ինչու եկավ այդի, կամ ի՞նչու լսեց մորը, Սոսին հետը բերեց: Բայց չ՝ որ ինքը, ոչ եւ մայրը շփտեին, որ Շուշանը այդում կլինի:

Սոսին ի՞նչ, ուրախ ճշում էր, քաշքում մոր մազերից, ձեռքերից՝ մամա՝ կանչելով: Նրա ձայնն էր այդում արծագանք տալիս: Կոլխոզնիկուհիները հասկանալով Վաղոյի և Շուշանի համար ստեղծված անհարմար վիճակը, ամեն կերպ աշխատում էին Սոսին պոկել մոր գրկից, բայց Սոսը այդ զգալով ավելի էր մոր կրծքին կպչում:

— Ուրիշ մարդ լիներ՝ կթքեր, կմրեր, բայց տեսնո՞ւմ եր անթեք ծառի պես կանգնած մի խոսք չի ասում, — շշնչում էին կանայք ու հարգանքով նայում Վաղոյի կողմբ: Վաղոն ծաղկած բաւկնուն հենված՝ ծխում էր ու մտածում, ինչպես ետ կանչի Սոսին:

Վերջապես նա ծխախոտը գեն նետեց, կտրեց բալենու ծաղկած մի ճյուղ և օգում ճոճելով կանչեց.

— Սո՞ս, արի ծաղիկ տա՞մ...

Հոր ձեռքի ծաղկած ճյուղը երեխայի աշքում մի լուսացոլք խաղալիք թվաց, նա այժմ էլ մորը թողած՝ վաղեց դեպի հայրը, որ դեռ շարունակում էր ճոճել ծաղկած ճյուղը:

Սոսը թաթիկները պարզած, աշքերը շռած վրա ընկավ, հոր ձեռքից ճյուղը հափշտակեց և նորից ուզում էր դեպի մայրը գնալ, երբ Վաղոն հետեւից բռնեց.

— Գնում ենք տատին... Տա... — մանկական լեզվով բացականչեց Վաղոն: Երեխան լացակումեց ու ոտները խփեց գետնին:

— Զե՞մ, չե՞մ...

Վաղոն ուժով գրկեց նրան ու դուքս Եկավ այդուց:

Ամենքը քարացած, լուր նայում էին հոր և մանկան հետեմ, մեղուների բզբղջը և գետի միալար խշշոցն էր նրանց ուղեկցում: Շուշանը շփոթվել, շփտեր մատերն ինչպես էր շարժում, սիրաը պոկվել էր ու մանկան ոտներին ու թաթիկներին փաթաթված՝ գնում էր:

«Երանի թե դառը խոսքեր ասեր, Հայոցեր, էսքան չէի վառվի», — մտածում էր Շուշանը՝ խուսափելով իրեն ուղղված հայցքներից:

Վաղոն արագացրել էր քայլերը, շուրջը ոշինչ չէր տեսնում. նա և՛ ափսոսում էր, և՛ դայրանում, և՛ ատում:

— Ո՞ւմ համար, ինչի՞ ես տիրում, — հանդիմանում էր իրեն: Նա, ով կոփվ ու մահ էր տեսել, հաղթություն էր տեսել, ալեկոծվում էր մի պահ և այնուշետև սիրտն ընդարձակ ծովի պես ծփում. «Ո՞ւմ համար, ինչի՞ ես տիրում», — շշնչում էր մեկուսի և կանաչ դաշտերը, ծաղկած այգին ձգում, տանում էին նրա ուշքն ու միտքը:

Վաղոն սթափվեց, և ի՞նչ տեսնի. քիչ էր մնում Սոսր գրկից ընկնի, նրա ձեռքում մնացել էր միայն մերկ ճյուղը. որի ծաղիկները պոկոտել գցել էր ողջ ճանապարհին, այժմ էլ ձեռքը պարզած՝ թիթեռնիկ էր ուղում, որ գույնգույն թևիկներով հախրում էր օգում:

— Թիթեռ, բզեզ, ամեն ինչ կտամ, մենակ գու լոց լինես, բալիկ, — ասաց Վաղոն. Հենց այդ ժամանակ գյուղի ծայրին նրանց դեմ ու դեմ վազեցին Պողոսիկն ու Դրաստը:

Վաղոն իր փոքրիկ օգնականներին տեսնելով ուրախացավ, բացականչեց.

— Այ, թիթեռ ու ծիտ բռնողնե՞ր...

— Ընկե՛ր Վաղոն, Սոսին տուր մեզ, — բացականչեցին երեխաներն արագ վազելուց քրտնամխած:

Սոսր փոքրիկ աղաներին տեսնելով աշխուժացավ ու թռավ նրանց գիրկը: Նախ Դրաստը փախցրեց Սոսին, իսկ Պողոսիկը մեծավարի քայլում էր Վաղոյի կողքից ու մանկական աշքերում գոհունակ մի ժպիտ, ձեռքը գրապանում անհանգիստ շարժելով՝ պատմում.

— Ընկե՛ր Վաղո, երեկ մեր բախչեն ցանեցինք, մենք շատ շնորհակալ ենք քեզանից, — ապա շարունակեց իր զրուցը տիրամած. — Են կոփներում իմ հորը շտեսա՞ր. բա չի գալու, բա անհեր հնք մնալո՞ւ:

— Ինչո՞ւ եք անհեր մնալու, սովետական իշխանությունը, կույսողը հոր պես ձեր թիկունքին կանգնած է, — պատասխանեց Վաղոն Պողոսիկի տարակուսանքը փարատելով:

Պողոսիկն այդ խոսքերից սրտապնդված՝ ուրախ տրտինդ տվեց ու փախավ հասնելու Դրաստին, որ հեռու էր տարել Սոսին:

Աշխենի տղայի, Պողոսիկի խոսքերը Վաղոյին սաստիկ հուզեցին: Նա զգում էր իր ուսերին մեծ պարտականություն. «Արանց պատասխանը մենք պիտի տանք, սրանց հոգաը մենք պիտի քաշենք, հայրերը զոհվեցին, երեխաները երջանիկ պիտի ապրեն», մտածում էր նա հասնելով իրենց տանը:

Պողոսիկն ու Դրաստը Սոսին հասցրել էին տան շեմքը, երբ Վաղոն կանչեց.

— Տվեր տատին, քնեցնելու ժամանակն է... — իսկ ինքը թերվեց զեպի կոլխոզի գրասենյակը:

Մինչ պառավ Սոսին դուրս եկավ տանից, Վաղոն հեռացել էր:

— Չեկավ, հաց չկերավ, բա էղպես կլինի: Եկավ չեկավ, օրը ցերեկով երեսը շեմ տեսնում, — գանգատվում էր մայրը:

Եվ այդպես ամեն անգամ, շնայած մոր թախանձանքներին, Վաղոն ամբողջովին գործով տարված՝ շատ քիչ էր տանը լինում:

Կոլխոզնիկները գրասենյակում հավաքված վիճում էին բարձրածախն, ծերունի Ավետիսը ձեռքը խփում էր սեղանին ու գոռում.

— Բողեք ես դրա գլուխը կջարդեմ, նա հայհոյի՝ մեր նախագահին:

— Բալաբեկի հետ միացել, ամեն տեղ Վաղոյի միսն են ծագում, թե երեկվա բրիգադավարը, որ ձենը փորից դուրս չէր դալիս, գնաց կոփմ՝ ասլան դառավ, հիմի կոլխոզ է կառավարում, — Հուզված պատմում էր կոր Սաղաթելը:

— Բալաբեկին որ մնար՝ կոլխոզը կքայքայեր, մեր էս ջանք դեմ տվինք, մեր բերքից բաժին հասցրինք ֆրոնտին՝ Բալաբեկի Հոմարը չէր, մեր հունարն էր, — միջամտեց մի ճակատացինի

հայր, որին Բալաբեկը շատ անգամ էր վիրավորել ճշմարտությունները երեսին ասելու համար:

— Հովանը նամարդություն արեց, — շարունակեց ծերունի Ավետիսը, — Հետո ախաղերություն արած վաղոջի կնիկը իրանով արեց, հիմի լեզուն իրեն չի քաշում...

— Ֆրոնտում վաղոն դիմում է գրել, պարտիայի մեջ է մտել, ավելի լավ կովել, — միջամտեց սակավախոս Մարկոսը, որի տղան բանակից նոր էր վերադարձել:

— Ճիշտ է ասում նա ֆրոնտումը, թոփի գյուղի տակ պարտիայի մեջ է բնդունվել: — Մարկոսի խոսքը հաստատեց ծեր Ավետիսը, ապա մի փոքր պառազայից հետո ավելացրեց, — զրա համար էլ բանող խոփի պես սրվել, ավելի է խելքովացել...

Այդ խոսքի վրա ներս մտավ վաղոն, բարեկց ու գարմանքով հարցրեց:

— Ենչ եք խառնվել, ասես թշնամու օդանավ եք տեսել օդում, — նրա այդ խոսքը բոլորին հանդարտեցրեց և ուզեցին խոսակցության նյութը փոխել:

Վաղոն հասկանում էր, որ կոլխոզնիկներն իրենից թաքցնում են անախորժ բաները, ինքն էլ գտնում էր, որ նրանք ճիշտ են վարվում, իրեն ազատ պահելով ավելորդ հուզումներից:

— Մաթոսն ո՞ւր է, որ ձին թամրի, գնամ արտերը, — ասաց վաղոն:

— Էս ջրապուպուզը որտեղից, — բացականչեց ծեր Ավետիսը՝ շեմքում ցցված տեսնելով փոքրիկ վանիին:

— Ընկե՛ր վաղո, քեոի Մաթոսին կանչե՛մ, — դիմեց վանին աշխույժ:

— Գնա՛, վանի՛, դու մեր ճիռու շեֆն ես, — պատասխանեց վաղոն ծիծաղելով:

Վանին չքացավ:

Երեկոներն ազատ ժամերին կոլխոզնիկները սիրում էին հավաքել վաղոյի գլխին, որը նրանց հետաքրքիր դեպքեր էր պատմում ուղմանակատից:

— Գնում ենք ազատացիայի, — ասում էին իրար և դիմում դեպի կոլխոզի ակումբը:

Այսպիսի մի երեկո տղամարդ, կին, երեխա հավաքվել էին վաղոյի շուրջը:

— Վաղո՞ ջան, կոիվ տեսած, աշխարհ ման եկած մարդ ես, պատմիր, մենք էլ լսենք, — դիմեց ակումբի մշտական այցելու ժեր Ավետիսը:

— Ի՞նչ եք ուզում, որ պատմեմ, — հարցրեց Վաղոն պատրաստակամ:

— Պատմի տեսնենք էդ գերմանի զորքերն ի՞նչ տեսակ գիշահարներ էին, որ ամրող աշխարհը խառնակեցին, — ծեր Ավետիսի հարցի վրա բոլորը լոեցին և սպասում էին պատասխանի:

— Ավետիս ապի, էն տեսակ զիվահարներ էին, որ զենքով աերոպւանով, տանկով, զոռով-զամանով եկան ուզեցին մեր հսկա երկիրը գրավեն, համա գիծ քամու պես եկան, գեմ առան մեր երկաթե զորքերին... մնացածն էլ գուք գիտեք, թե ինչ օրի գրեցինք նրանց:

Օրը-օրին որքան տարածվում էր Վաղոյի Հաջողությունների լուրը, այնքան մռայլ ու անհանգիստ էր դառնում Հովանը: Նա Վաղոյին հանդիպելիս գլուխը կախում էր կամ երեսը շրջում: Իսկ Վաղոն իր արհամարհական հայացքներով սպանում էր Հովանին:

Դյուլում սկսել էին խոսել, որ Հովանը օր չի տախի Շուշանին, նրա ոտքը կտրել էր ամեն տեղից, թույլ չեր տալիս գնա իր երեխային տեսնի: Քանի գնում՝ Շուշանի կյանքը Հովանի հետ անտանելի էր դառնում, մոմի պես հալվում էր նա: Հովանը տուն էր մտնում գաղաղած ու մի պատճառ էր փնտրում Շուշանի հետ կովելու, նախատական խոսքեր շպրտելու:

— Բալաբեկը մարդ էր՝ ձեռով-ոտով, սա եկել է թաղա ֆորմերով, չես իմանում ի՞նչ տեսակ է կառավարում կոլխոզը, — ասում էր Հովանը Շուշանին խայթելու համար և որքան շատ էր վարկարեկում Վաղոյին, այնքան ավելի Վաղոն բարձրանում էր Շուշանի աշքում, և տանջանքները կրկնապատկվում էին:

Հովանի քույրը՝ Լուսոն իր միջամտություններով ավելի էր խորացնում նրանց ընտանեկան լարվածությունը. նա շարունակ մրթմրթում էր.

— Արել ես՝ քաշի, էնքան լուսի պես աղջիկներ կային շուշեցիր, ուրիշի կծած խնձորը տոմ բերիր:

Շուշանը խուսափելով մեծ կոփիներից՝ շատ անգամ ներս էր գցում, չեր պատասխանում և շշնջում էր մեկուսի, — նոր եմ հասկանում՝ ուր Հովհանը, ո՞ւր Վաղոն...



Աշնան մշտաշուտ ու անձրեսու երեկո էր, անձրես խշշում էր ու տղողում գյուղը, տանիքները, դաշտերը, լեռները: Ու թվում էր որ ամեն տեղ, աշխարհի ամեն մի մասում անձրև էր թափվում:

Ասես քամին ուժով զարկեց, բացեց դուռը ու այնտեղից դուրս նետվեց սպիտակ շալի մեջ փաթաթված մի կին:

— Գնա՛, աննամո՛ւս, սովոր եւս մեկից մյուսին...

— Թո՞ղ մի ձեռնանի մարդիդ տանը մնայիր... — դոռում էր մի կանացի ձայն:

Իսկ փախստական կինը չնայելով անձրեին, ցեխին՝ վազում էր: Նա վախեցած չորս կողմն էր նայում, նրան թվում էր, որ բազմաթիվ ահավոր բերաններ բացված վազում են իր հետեւից, տղում են կուլ տալ իրեն:

— Ել չեմ դիմանա ձեր թուք ու մրին: Ել չեմ մնա ձեր երեսին, — շշնջում էր կինը հեասպառ:

Դա Շուշանն էր, որ տանից հալածված իրեն հանձնեց անձրեին, քամուն:

Կոլխոզի ժողովից տուն էր եկել Հովհանը ինչպես վիրավոր մի արջ մոնշացել. «Քո երեսից ինձ վրա խոսեցին, ինձ փետրեցին: Ալաղոն հետո թշնամացել, ասում են կոլխոզի աշխատանքներին, բերքահավաքին չեմ մասնակցել... Քանի նա շեր եկել՝ պատիվ ու հարգանք ունեի»: Մյուս կողմից կուսոն էր դադել իր թունավոր խոսքերով:

Շուշանն այլևս չկարողանալով տանել այդ վիրավորանքները՝ վճիռ էր կայացրել. «Աավ է գնամ հեղեղատար վինեմ, քան էսպիս անպատիվ ապրեմ»:

Մթին ու նեղ փողոցներով վազում էր նա, երբեմն ցլոպ ընկնում լճացած ջրերի մեջ: Մթան մեջ երբեմն ճրագներ էին ցոլցում կարեկից աշքերի պես ու ճանապարհ ցուց տալիս նրան:

Նա՛ կանգնեց երկու խաշաձևվող ճամփի վրա, մտմտում էր ո՞ւր գնամ...

Մեկն իր եղբոր տան ճանապարհն էր, մյուսը դեպի իր մանկանը տանող ճանապարհը: «Եղբորս տուն չեմ գնա», հիշեց խըստաբարո հիվանդ եղբորը, իսկ հայրն ու մայրը վաղուց մահացել էին:

Նա մի քայլ գցում, նորից էր կանգնում: Իսկ անձրես խշում էր, նրան թվում էր, որ իր սրտից էր վարար անձրես թափվում աշխարհի վրա:

Հանկարծ մութի մեջ երկու ժպտում աշխիներ վառվեցին, մանկան երկու թաթիկներ, կանչում էին՝ արի...

— Սո՞ս, Սո՞ս,— շշնչաց Շուշանը. նա ստրը դրեց մանկան մոտ տանող ճանապարհը:

Անձրեսի շիթերի մեջ վատթում, բազմապատկվում էին մանկան աշքերը, թաթիկները կանչում էին շարունակ:

Շուշանը քայլեց, քայլեց ու հանկարծ դեմ առավ ծանոթ ցանկապատին՝ լորենու բնին և ուզեց նրա ճյուղերի տակ պատրսպարվել:

Այդտեղ էր նա առաջին անգամ վաղոյի հետ հանդիպումներունեցել, մի շրջուն, մի ոտնաձայն լսելիս ծլկել...

Այժմ նորից էր եկել, բայց դիմավորող չկար: Շառի ճյուղերից կախված խոռվ ու մի խիստ հայացք նախատում էր նրան՝ ինչո՞ւ ես եկել...

Այս, ի՞նչ կտար, միայն թե նա չնախատեր: Նա թրջվել էր տակետակ, բայց չէր զգում, մեջքը ծառի բնին հենած՝ մտածում էր. «Ի՞նչ կասի պառավ Սոփին, որին լքել էր ինքը... Միայն Սոսն էր ներող ժպտում ու տուն կանչում՝ արի...»:

Այժմ՝ նա գնաց կանգնեց ցածրիկ պատուհանի տակ ու գաղտագողի նայում էր ներս:

Տանը պառավ Սոփին էր, որ Սոսին գոգը դրած՝ ուզում էր շորերը հանել, քուն դնել, իսկ շարաձմին դեռ խաղում էր ու տատին շարշարում: Տատը նեղանում, խփում էր Սոսի թաթիկներին, որ չին ուզում հանգտանալ:

Շուշանը ցնցվում էր, ասեն իր սրտին էր խփում: — Քնի՛ Սոս, բալի՛կ շան, — շշնչում էր: Նա անհամարձակ քայլերով մոտեցավ դռանը. այդ դռնից էր կախված նրա բախտը — կամ պիտի քացվեր նրա առաջ, կամ չէր քացվելու ընդմիշտ...

Նա ողջ ուժերը հավաքեց ու սկսեց կամացուկ ծեծել դուռը:

Պառավ Սոփին կարծեց քամին է, ուշք շղարձրեց, իսկ երեխայի սուր լսողությանը որոշակի հասնում էին թակոցները. նաաշըերը չուած, մատը պարզեց դեպի դուռը՝ տա՛տ, տա՛տ, կանչելով:

— Ո՞վ ես,—կանչեց պառավը ներսից՝ համոզված, որ դաքամին է և ոչ մեկ ուրիշը:

Դուռը բացվեց, և շեմքում կանգնեց շալի մեջ փաթաթված, թրչված կինը: Զուր կաթիթում էր նրա շորերից, պառավը սկզբում՝ շճանաշեց. Սոսը նրան գլխի զցեց, երբ ճշաց մամ...

— Ծուշա՛ն...—զարմացած շեշտով ասաց պառավը՝ մի քանի բոպե լուս նայելով ու աշքերին հնավատալով: Ծուշանը խուսափելով նրա զննող հայացրից՝ գլուխը խոնարհեց:

— Ես մթին, անձրեին, ցեխին ի՞նչ ես իմացել, — շարունակեց պառավը:

— Սոփի՛ ազի, թքեք, մրեք; Համա եկել եմ Սոսիս պահելու, թե կընդունեք կմնամ, թե չէ գլուխս կառնեմ...—ձայնը կերկերաց, շկարովացավ շարունակել:

Ծուշանի արարքից վշտացած, նրա դեմ զայրացած պառավը ուզեց մի քանի ծանր խոսքեր շպրտել նրա երեսին, բայց տեսնելով երեխայի պարզված թաթիկները, տեսնելով մոմի պես դալկացած Ծուշանին՝ մտածեց. «Էլ նոր ինչ իրանն իրան է հասել», ու զայրույթը զսպած դեմեց նրան.

— Շալդ գեն զցի, արի նստի...

Պառավ սկեսրոջ վերաբերմունքից Ծուշանն ավելի հուզվեց:

— Նստելու արժա՛ն եմ, որ նստեմ, — ու փղձկաց խուլ հեկեկոցներով:

— Երեխիդ մտիկ տուր, իրան կերավ, — ասաց պառավը և նրա ցամաքած աշքերում նույնպես արցունքներ շողացին:

— Հիտլերն է մեղալոր, թո՛ղ կրակի մեջ այրվի, փոթոթվի, որ ամենքիս իրարից զցեց...—ավելացրեց պառավը՝ միաժամանակ վախ ունենալով սրտում, թե Վաղոն ինչպե՞ս կընդունի Ծուշանին:

Ծուշանը գրկել էր Սոսին, շոշափում էր նրա գլուխը, ձեռքերը, ոտները. Սոսը մեծացել էր, ծանրացել...

— Ազի՛ զ ջան, — շշնջում էր Ծուշանը և իր արարքի պատասխանը փնտրում նրա խելացի փայլատակող աշքերի մեջ:

Պառավ Սովին Շուշանի շալը փոեց լուսամուտի գոգում:

— Եդ կոլխոզը իմ Վաղոյի ուշքն ու միտքը գրավել է. աշնան քերքահավաքի թունդ ժամանակն է, պատահում է, որ գիշերներով տուն չի գալիս, լավ է ցորենը կալերից տուն բերին, թե չէ հեղեղատար կլիներ, — ասում էր պառավը՝ նոր զրուցակցի հայացքը որոնելով:

Իսկ Շուշանը բռնը գտած թոշունի պես մեկ իր ձագին էր նայում, մեկ իր շուրջը ու պառավի շատ ասածներ չէր լսում, բայց գլխով համաձայնության նշաններ էր ցույց տալիս: Հանկարծ նրա աշքն ընկավ պատից կախված Վաղոյի շինելը, որի ծալքերում կովի հաղթանակի պատմությունն էր կարդում, տան մի անկյունում սապոններն էին դրված, որոնց դիմեց նա աղերսանքով. «Ասեք, Վաղոն կընդունի», թե դուրս կշպրտի...»:

Պառավը կրակի վրա թեյ էր //եփում:

Այդ ժամանակ դուռն ուժգին բացվեց, ներս մտավ Վաղոն՝ հետը բերելով անձրևի և քամու ցուրտ հուշանը: Շուշանը հուզմունքից ամուր սեղմեց կրծքին Սոսին, նա ուզում էր ստվեր դառնալ ու շերեալ Վաղոյի աշքին:

Վաղոն զարմացած կանգնեց սենյակի մեջտեղը, նրա կրծքի տակ հանկարծ բռնկվեց Շուշանի սերը: Մի պահ մոռացավ ամեն ինչ՝ ուզեց գնալ, երկու ձեռքով գրկել սիրած կնոջը ինչպես առաջին անգամ, բայց մի ցավոտ զգացում նրան պաշարեց, գունատ ու մոալ կախեց գլուխը, հիշեց արյունոտ ձեռքը, ապա սիրած կնոջը ուրիշի գրկում...

Ռազմաճակատի և ոչ մի աճեղ կոփվ չէր եղել այդպես դժվար, ինչպես նրա հոգու կոփվը: Նա գողում էր ամրող մարմնով, ուզում էր գոռալ, անարգել նրան: Ո՛չ, քաջություն չէր լինի դա, այլ թուզություն, ետ էր պահում նրան իր վճոփից ներքին մի ուրիշ ձայն:

Մայրը տեսնելով որդու խոժոռ ու վարանոտ հայացքը՝ աղերսաբար մոտեցավ նրան ու Սոսին մատնացուց անելով, հաղիվ քառերը բերանից փախցնելով ասաց.

— Եկել է երեխին պահի, շնեղանաս:

Շուշանը միայն իր շնչառության ձայնն էր լսում, ուրիշ ոչինչ նա գլուխը երեխայի թաթիկների հետեւ թաքցրած՝ սպասում էր,

Հնչպես ճամփորդն է սպասում մթագնած լեռան գլխին ճայթող ամպրոպին:

Մորը պատպախանելու փոխարքն, Վաղոն լուս հանեց ծխախոտը, վառեց ու սկսեց ծխել, և հունի մեջ մտած ջրերի պես մըտքերը խաղաղվեցին:

— Թող երեխին պահի, — հնչեց նրա հանդարտ ու առնական ձայնը:

— Ես էլ էդ եմ ասում, թող իրա երեխին պահի, — աղատշունչ քաշեց պառավը:

Մանր էր Շուշանի վիճակը, նա չէր հասկանում, թե ի՞նչ է կատարվում իր հետ: «Թող շոռ ու ցավ ասի, հայնոյի, որ սիրու հովանա», մտածում էր նա ու մերենայորեն համբուրում Սոսի պլուխը, որ ամուր սեղմելոց՝ թիշ էր մնում երեխան ցավից ձշա:

Այդ օրը Վաղոն ուրախ տրամադրությամբ էր տուն եկել, բերքահավաքի արդյունքները հիանալի էին, ցորենն ու այգու պատուզները սպասածից ավելի էր ստացվել:

Հանկարծ նա մոտեցավ սեղանին ու գրպանից հանելով լիքը բռու ցորենը՝ լցրեց սեղանին.

— Այ մեր, տե՛ս կոլխոզի արդար վաստակը, հողից ոսկի մնը քամում...

— Էսօր մեր տունը երկու ուրախություն մտավ մեկը՝ Շուշանը, մեկը՝ օրհնած հայը, — ասավ պառավ Սոսին և ուրախությունից պտտվում էր սենյակում:

Սոսը մոր գրկից թռավ սեղանին ու սկսեց սեղանի երեսով մեկ շաղ տալ ցորենի խոշոր հատիկները:

Վաղոն հայրական մեզմ ժպիտը դեմքին՝ հետեւում էր Սոսի աշխույժ շարժումներին: Պառավ Սոսին ուզեց թեյի պատրաստություն տեսնել, Շուշանը տեղից կանգնեց.

— Սոսի՛ մայրիկ, դու տեղդ նստի, ամեն ինչ ես կանեմ...

Պառավին դուր եկավ Շուշանի վարմունքը, գոհունակությամբ շրթունքները ծլպացրեց.

— Ես էլ էդ եմ ասում, տանդ կնիկություն արա. — ու գնաց նստեց թախտին: Տան բոլոր անկյունները ծանոթ էին Շուշանին, նա ընտել տանտիրուհու պես սեղանին դարսեց լուսի պես սպի-

տակ լավաշը, պանիրը, ապա բաժակները լցրեց թեյով և լուս հրավեր կարդաց.

Վաղոն խաղում էր Սոսի հետ և գաղտագողի հետեւմ Շուշանին, նրա ծանոթ ուսնաձայնը, շորերի շրջունը նորից շերմությամբ և սիրով էին լցնում տունը:

Վաղոյի վերագառնալուց հետո առաջին անգամ նրանք լրիվ կազմով սեղան նստեցին:

Շուշանը հետզետե ընտելանում և համարձակ էր նայում Վաղոյի աշքերին: Վաղոն փոխվել էր, նրա ճակատին, աշքերի մոտ կնձիռներ էին գոյացել, սև մազերի մեջ սպիտակ թելեր էին ընկել: Վաղոյի լուրջ, առնական հայացքը նորից իշխում էր Շուշանի վրա: Սոսն էր այդ տան ամենաերջանիկ բնակիչը. նա ոչ քնել էր ուզում, ոչ հանգստանալոյ հոր գրկից մոր գիրկն էր սստնում թոշնիկի պես: Սոսը որպես հաշտության և խաղաղության օղակ՝ երկու սրտեր նորից մոտեցնում էր միմյանց:

Ուշ գիշեր էր, գուրաը այլևս անձրել չէր խշում, քամին չեր թակում գուռ ու պատուհան: Ներսը պառավ Սոսին և Սոսը քնել էին: Արթուր էին միայն երկուսը:

— Արի՛, մոտիկ նստի, — շշնչաց Վաղոն սիրակարոտ աշքերը Շուշանի վրա հառած: Շուշանը հնագանդ մոտեցավ Վաղոյին ու լացակումած ասաց. — Վաղո՛ ջան, ախր քո առաջ ես մեղավոր հմ, — ապա գլուխը զրեց նրա ծնկներին ու սկսեց հեկեկալ:

Զղջումի և սիրո արցունքները թրջում էին Վաղոյի ծնկները:

— Սոսի համար մոռանանք ամեն ինչ, — հանգստացնում էր Վաղոն:

Վաղոն իր մատների տակ նորից շոյում էր Շուշանի այտերը ինչպես սիրո առաջին ձնձաղիկները:

Թարմ ցորենի և Շուշանի մազերի բույրը լցրել էր սհնյակը: Վաղոն ուրախ էր վերադարձած երջանկության համար:

Ա.Ռ.ՋԻՆ ԿԻՆԸ

Սև փայլուն աշքերն աշխուժորին պտտացնելով ներս մտավ նա կոլտնտեսության նորակառույց ակումբը:

Առաջին կինն էր, որ նշանակված ժամանակից վաղ եկավ:

Հագել էր ծաղկավոր շթի շրջազգեստ, որ իշխում էր մինչև կրունկները, գլխին կապել էր գունավոր թաշկինակ: Նրա ձախ այտի սպին մի առանձին խորհրդավորություն էր տալիս արեց ու քամիներից այրված դեմքին: Նստեց պատի տակ դրված նըստարանի վրա, հողից կոշտացած ձեռքերը դարսեց ծնկներին ու սկսեց դիտել շրջապատը: Նոր էին նստարանները, սեղանները, գրքի պահարանները:

Ակումբի դուռը նորից բացվեց, շտապ ներս ընկալ կոլտընտեսուհի նինոն ու զարմացած բացականչեց.

— Ե՞ս, չեն հավաքվել, ետ գնամ:

— Դու ետ գնաս, ես էլ վեր կենամ ու ետ գնամ, ուրիշներն էլ գան ու չսպասեն, էն ժամանակ ո՞վ կմնա, — ասաց առաջին կինն առանց տեղից շարժվելու:

Ուսերը ցնցեց, շրթունքները կրծեց, կարծես դժկամեց նինոն առաջին կնոջ պատասխանից, բայց նստեց և սպասեց:

Դուռն անընդհատ բացվում փակվում էր, գալիս էին, շատանում, հարազատ ու ծանոթ մարդիկ:

Նախագահ ընտրվեց կարճահասակ կլոր երեսով մի կոլտնտեսական, որին բոլորն անվանում էին կոլոտ Սերոր:

Նախագահը կանգնեց ու խոսեց ամեն մի բառը շեշտելով:

— Գարնանամուտ է, ընկեր կոլտնտեսականներ, հողը մեզ է կարոտել, մենք էլ հողին ենք կարոտել: Մեր կամքն ու ձեռքերն

հն պետք գարնանացանի համար:—Ապա նա ավելացրեց շտա-
պով, կարծես վախենում էր ուշանալ.

—Այսօր մենք կնքելու ենք մեր բրիգադաների հետ սոցմքցման-
պայմանագրեր, որ գործը պլանով գնա ու ամեն մեկն իմանա թե-
ո՞ւմ հետ և ինչպես պետք է աշխատի:

Աղմկահույզ մի ալիք անցավ ժողովի վրայով, երբ նախագա-
հը շոշափեց կոլտնտեսական առօրյան և այրող հարցերը:

Այդ պահին մեկը մյուսին հարցնում էր, մեկը մյուսին ստո-
ւում:

Առաջին կինը դեռ լուռ էր, միայն տեղում անհանգիստ-
շարժումներ էր անում, մերթ ճակատի կնճիռները խտանում էին,
մերթ նոսրանում: Նրա շուրջն աղմուկը սաստկացավ:

Խոսում էին գարնանացանի նախապատրաստման բոլոր հար-
ցերի շուրջը, խիստ քննադատում էին հողբաժնի, ՄՏԿ-ի, գյուղ-
սովետի, կոլտնտեսության վարչության աշխատանքները:

Աղմկում էին դաշտերի մարդիկ, անհանգիստ էր ներքուստ
առաջին կինը:

Արդեն երեկո էր: Գյուղի էլեկտրական լույսերը վառվեցին,
լուսավորվեց նոր ակումբը:

— Դե, ընկերներ, անցնում ենք բուն խնդրին, սոցմքցման-
պայմանագրեր կնքելուն,—հայտարարեց նախագահը:

Այդ ժամանակ առաջին կինը, որ մինչ այդ լուռ էր, կարծես-
թափ առավ, շտապ տեղից կանգնեց, մոտեցավ նախագահի սե-
ղանին, ձեռքը մեկնեց, պայմանագիր էր կնքում: Ժողո-
վը լոեց, բոլորը սպասում էին: Լույսն ընկավ կոլտնտեսություն աշ-
քերի մեջ, նա տնտղում էր տողերը, նա կարդում էր: Ապա հան-
կարծ ժապաց, ցուց տալով սպիտակ ատամների շարքը, հետո
համարձակ դարձավ ժողովին.

— Ինչ ասեմ հիմի, մենք ձեզ անդ հետ դաշտում կհանդիպենք,
այնտեղ կշափենք մեր աշխատանքը:

Երբ կոլտնտեսությին սկսեց խոսել, մի ընդհանուր շատուկ ան-
ցավ ժողովի վրայով.—Սալոմն է խոսում:

Փոքր դադարից հետո, Սալոմը՝ զլսի թաշկինակն ուղղելով
ու շեշտակի նայելով շրջապատի կոլտնտեսականներին, ավե-
լացրեց.

— Հիմի, ընկերներ, մի հաստատ խոսք կասեմ միայն, թող
բոլորն իմանան, որ ուժերս չեմ խնայի, որ մեր դաշտերը մեկին
հազար տան...

Նախագահը ձեռքերը շփեց ու այս անգամ ինքն սկսեց.

— Լսեցե՞ք, ընկեր կոլտնտեսականներ, այս երգումը, որ
արեց Սալոմը, հաստատ երդում է, աղնիվ երդում է:

— Մենք էլ ենք երդվում...—լսվեցին բազմաթիվ ձայներ:

Նախագահն արգեն խոսքը վերջացրած պայմանագիր էր կըն-
քում:

— Մոտ եկեք, Սահակ, Գևո, Աշոտ...

— Նիգյարին ես իմ բրիգադի մեջ չեմ վերցնի, վատ է աշ-
խատում,—բղավում էր Սահակը:

Նիգյարը մի նիհար կոլտնտեսութի էր, սուր քթով, ձվաձև
երեսով, որը կուշ էր եկել պատի տակ, խոսք էր ուզում խնդրել-
րայց ձայնը դուրս չեր գալիս: Այդ ժամանակ Սալոմը տեղից
կանգնեց.

— Ընկել նախագահ, ես Նիգյարին վերցնում եմ իմ բրի-
գադայի մեջ, մենք նրան կառվորեցնենք աշխատել:

Նախագահի գեմքին գոհունակ ժպիտ փայլեց, որովհետեւ Սա-
լոմը նրան ազատեց Նիգյարի հարցից, որի շուրջը դեռ ով իմանա-
ինչքան պիտի վիճեին:

Սահակը կոկորդը մաքրեց և այլևս խոսք շղտավ ասելու,
նստեց տեղը:

Սալոմի առաջարկի հետ Նիգյարը մի քիչ ձգվեց, բերանն էլ
բացվեց ու շնչաց ինքն իրեն.

— Ախ Սալոմ ջան, ես քո լայն սրտին մատաղ, հիմի ես էն-
պես կաշխատեմ, որ երեսդ պարզ լինի:

Սալոմն առանձնացրեց իր բրիգադի անդամներին՝ մի խումբ
կանանց ու աղջիկների, ու սկսեց նրանց հետ հանդարս զրուցել:

— Հինգ մատիս պես ճանաշում եմ ձեզ, գիտեմ ձեր ուժն էլ-
ձեր թույլ կողմերն եւ: Տաս այսպիսի պլան կկատարենք, թե որ
դուք էլ ինձ հետ կուրծք տաք, կանգնենք մի մարդի պես: Հոռ-
թը շասի թե մարդիս գլուխն է ցավում, նինոն էլ շասի թե էսօր-
խմոր եմ հունցել...

Սալոմի ճակատին շողշողում էին քրտնքի մանրիկ կաթիլներ: Ես մի քայլ առաջ եկավ և թաշկինակի ծայրով ճակատը սըրբելով ավելացրեց:

— Թե լավ աշխատեցինք, հողին, պտղին կտիրանանք փառքով, վատ աշխատեցինք՝ մեր կոյեկտիվի ու ողջ մեր երկրի ամութանքը կդառնանք:

Լուր լսում էին, ոչ ոք չէր ուզում կտրել Սալոմի մտքի թելք, միայն Նիդիարն էր շշնչում:

— Սալոմ ջան, կաշխատեմ, կտեսնես որ լավ կաշխատեմ: Ժողովը վերջացավ: Սոցմբցման պայմանագրեր կնքեցին բրիգադաների միջև:

Սալոմի բրիգադան պատրաստվում էր դաշտ դուրս գալու:

* * *

Երկինքը շառագունել էր, արեք ծագում էր: Դուռը ճռաց, դուրս եկավ նա իր անից, նայեց նարնջագույն երկնքին ու կարծես հեղնեց արեին, որ իրենից ուշ էր արթնանում:

Շտապ կռացավ, լվացվեց տնամերձ առվակի ջրով, երեսը սրբեց թաշկինակով, ապա ճակատը շփեց, ձեռքերը տրորեց և ագահորեն սկսեց ծծել վաղորդյան թարմ օդը:

Նայեց շուրջը, ապա հայացքը ուղղեց հեռուն, մի փութաշան ժպիտ ուղղեց նրա դեմքը և քայլերն արագացրեց:

Գյուղը գեռ չէր արթնացել, երբ առաջին կինը գնում էր: Ինչոր մի հզոր ուժ ձգում էր նրան, կարծես նա պիտի գնար այդպիս անընդհատ: Արագ անցավ գյուղի փողոցներով, դուրս եկավ գյուղից:

Առավոտյան ցուրտ քամին սվավում էր դաշտերի վրա, ու շարաձձի, հաճելի խաղում դաշտերի կնոջ երեսին:

Պարզ երկնքի դեմ՝ նոր վարած դաշտերը բացել էին իրենց սկ, խոնավ կուրծքը: Հողն արեին էր կարոտել, հողը շերմություն էր ուզում...

Երկաթի ձիերի պես տրակտորները պատռել էին հողի կուրծքը, խրվել հողում և սպասում իրենց տերերին, որ նորից ընթացք ստանային:

Նա գնում էր հաստատ քայլերով, նոր վարած արտերի եղանակը: Նրան թվում էր, որ դաշտն անսահման մի աշխարհ էր, ուր գալիս էին իրենք նվաճելու: Առաջին զինվորն էր նա, որ այդ առավոտ հայտնվեց դաշտերի ֆոնի վրա և իր նվաճող հայացքով նայեց սև, ալիք-ալիք բարձրացած հողին:

Թեերը սոթտեց, գոգ արավ, կռացավ և սկսեց քարերը հավաքել: Հանկարծ ոտքը դեմ առավ մի մեծ քարի, ցնցվեց, ձեռքը տառավ դեպի ձախ այտը, շոշափեց սպին: Մի ակնթարթում հիշեց նա մի տիսուր պատմություն, մի ցնցող դեպք: Ուր ոտք էր դրել նա, կռացել, ուր այժմ փիսրուն հողն էր, մի ժամանակ այդտեղ այն միջնակներից մեկն էր, որ բաժանում էր գյուղացիների հողերը իրարից: Այդ միջնակներից մեկի վրա նրա թարմ երեսի արյունն էր ծորացել: Այդ հուշն ամսի պես մի պահ մթագնեց նրա երեսը: Այն ժամանակ երբ այդ դեպքը պատահեց, Սալոմը նորահարս էր, թովում մի ջահել:

Նոր բացված գարուն էր: Առավոտը պառավ սկեսուրը հացի կապոցը տվեց Սալոմի ձեռքն ու ճամփեց իրենց արտը՝ Հակոբի մոտ: Սալոմն էլ ուրախ երգելով, մանուշակ քաղելով, գնում էր արտը—իր ամուսնու մոտ: Երբ հասավ արտի ծայրը, տեսավ Հակոբը թիակը ձեռքին միջնակի վրա կռվում էր հարևան գյուղացու հետ, որի հողը սահմանակից էր Հակոբի հողին: Հակոբը պնդում էր, որ հարևան Մուկուշն իր հողից գողացել էր:

Հակոբը թե—ես իմ սահմանը գիտեմ, էս մեծ քարն էստեղ շէր ընկած, էն մյուսն էլ թե—իմ պապական հողն է, սուս ես ասում... Այդպես կռվում էին նրանք մի թիզ հողի համար: Տաք-տաք վիճեցին, խոսքերն իրար հասավ ու թիակները բարձրացրին, ուզում էին իրար գլուխ պատռել: Սալոմը վազեց ճշալով, հացի կապոցը ձեռքից գցեց ու երկուսի մեջտեղը կանգնեց, աղերսական հայացքով.

— Ամա՞ն, ինձ խնայեցեք...

Հակոբը գազաղած, արյունն աշքն առած—հայհոյեց Սալոմին, որ խառնվում էր տղամարդկանց գործին:

— Հաց եմ տալիս, բոլաղդ լցնում, կեր ու վեր ընկի, տղամարդկանց գործին մի խառնվի...

Այդ ժամանակ հարեւան Մուկուշն էլ բղավեց, ձայնն ավելի բարձրացրած.

— Իմ պապենական հողն է, ես իմ սահմանը լավ գիտեմ, փուշ անիրավ, դուք էն զլսից եք անբարիշ, քու հերն էլ չեր բարիշում իմ հոր հետ...

Հակոբի դառը խոսքերից վիրավորված — Սալոմը տխուր նըստել էր միջնակի վրա — արցունքը խեղդում էր կոկորդը:

Մեկ էլ տեսավ թիերը նորից իրար եկան, Սալոմը վեր թռավ, էլլի ուզեց միջամտել, բայց այս անգամ զազաղած Հակոբի թիակը իջավ նրա երեսին:

Սալոմն ուշաթափ ընկավ գետին, սիրուն երեսի թարմ արյունը կաթ-կաթ ծորեց միջնակի վրա...

Սալոմն աշքերը բացեց տանը, այն ժամանակ, երբ սկեսուրը մազերն էր փետում, մայրն էլ զլսավերել կանգնած լաց էր լինում: Հակոբը գլուխը բռնած նստել էր շեմքի վրա:

— Սև լիներ ձեր միջնակը ձեր զլսին, — բզավում էր Սալոմի մայրը, — ազգկանս աշքն էիր հանում, նախշուն երեսը փշացրիր...:

Հակոբը բարի պես լուս էր:

Այդ օրվանից Սալոմն ատեց իր կյանքն ու իր ամուսնուն:

Ուզում էր փախչել ամուսնու տնից, բայց մոր և սկեսուզ աղաշանքները կապում էին նրա ոտը: Կաշկանդում էր նրան հինգ աղաթը: Այդ օրվանից նա լուսկյաց ու մոռալ դարձավ:

• Դրա համար նրան գյուղում ասում էին մունջ Սալոմ:

Նա կրում էր անցյալ կյանքի դառնությունն իր սեփական մարմնի վրա: Այժմ շոշափում էր երեսի կոշտացած սպին:

Նորից պայծառացավ նրա դեմքը, նա հիշեց թե ինչպես այցլես միջնակներ չկային, ու հողն առհավիտ հանձնված է կոլխոսպին: Էլ ավելի պայծառորեն նա զգաց նոր կյանքի շերմությունն ու հմայքը: Նա շիմացավ թե ինչպես արցունքի երկու խոշոր կաթիլներ աշքերից կաթեցին հողի վրա: Այդ ուրախության արցունքներն էին:

Արել բարձրացել էր, առաջին շողերը խաղում էին դաշտերի վրա ու առաջին կնոջ դեմքին, երկաթի ձիերն արգեն բանում էին, դաշտը կենդանացել էր:

Եկավ նիգյարը թերերը սոթտած ու սկսեց Սալոմի հետ քարերը հավաքել: Վազեց նինոն թիկունքի կողմից, երկու ձեռքով բռնեց Սալոմի աշքերը, կատակում էր, նիգյարը բզավում էր՝ Սալոմ, իմացիր ով է:

Սալոմը մի քանի անուններ տվեց իրար Հետեից, Հետո շոշափեց Նինոյի ձեռքի սպին ու բացականչեց, —իմացա, Նինոն է:

Բրիգադի բոլոր՝ անդամներն արդեն հավաքվել էին ու ծիծաղում էին Նինոյի առաջին կատակի վրա:

— Խոստացել էինք արեից շուտ դուրս գալ տներից, ո՞ւր էիր, — Հանդիմաննեց Սալոմը:

— Ախր Հիմի գեռ քարերն ենք հավաքում, — ասաց Նինոն:

— Քաղանի ժամանակ էլ կասենք գեռ քաղան է, ինչ գործ էլ որ լինի, դիսցիալին է, — պատասխաննեց Սալոմը:

— Հեքիաթում ասածի նման ես էլ ձեր ոտներից թել պիտի կապեմ, լուսագեմին ձիգ տամ, ու բոլորիդ միանգամից զարթնեցնեմ:

Նրանք աշխույժ ծիծաղեցին Սալոմի սրամտության վրա, Հետո սկսեցին նրան ուրախացնել:

— Մի՛ մտածիր, բալշեիկ Սալոմ ջան, լավ կաշխատենք:

Սալոմը մի քանի տարվա պարտիական էր և հպարտանում էր, երբ իրեն բալշեիկ Սալոմ էին ասում:

Լայնածիր դաշտերի սև ֆոնի վրա շատացան աշխատող բրիգադաները: Դաշտերի կողեկտիվ տերը բռնել էր նրա սկիզբն ու նրա վերջը:

Ամեն առավոտ գնում էին դաշտերի մարդիկ ու թերը սովորած գնում էր բոլորից վաղ՝ առաջին կինը:

առաջին առ աշխատ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԽՈՒ ՕՐԱԳՐԻՑ

Ո՞վ կկարծեր, որ կոլտնտեսուհի Զարոն օրագիր էր պառամ, կամ երբեմն գիշերները թաքուն շարադրում էր իր մտքերը թղթի վրա:

Զմռան երկար գիշերները, երբ խաղաղվում էր գյուղը, շուրջը լուր էր լինում, նա նստում էր իր փոքրիկ սեղանի առջև ու մեկ առ մեկ վերհիշում իր կյանքի հետաքրքիր դեպքերն ու շուրջերը կրծոտելով անվարժ ձեռքով գրում օրագրում:

Օրը հանդարտվել էր, գիշեր էր: Նստած էր նա իր տնակում երկու կնճիռ ճակատի վրա իշած, առաջը փռել էր մի հաստ տետրակ, ինքն էլ մտազբաղ հենվել սեղանին:

Դա մի կոլտնտեսուհի էր միշին տարիքի, թուխ, գրավիչ դիմագծերով: Արևից ու քամիներից այրված դեմքի վրա շողշողում էին զույգ սև աշքերը:

Աշ ձեռքի ցուցամատով թերթում էր նա իր տետրակի առաջին էջերը, հետո միշինն ու վերջինը: Մերթ կանգ էր առնում, ժպտում մերթ մոայլվում:

Թերթենք նրա հետ այն կապույտ տետրակն ու բացենք մեկ-մեկ նրա կյանքի էջերը:

Գրված է անվարժ ձեռքով, խոշոր, ծուռ ու մուռ տառերով: Զնշումներ կան տեղ-տեղ ու դժվար ընթեռնելի տողեր:

Գրիշը սեղմել է ուժով ամեն մի տառը գրելիս ու գրել է համառ կամքով իր կյանքի պարզ նկարագիրը: Կարդում ենք Զարոյի տետրակը:

Գրում եմ իմ մինուճար աղջիկ Արևիկի համար, որ մեծանա, այս տետրակը կարդա ու մոր անցած ճամփան լավ ճանաշի: Եվ երկրորդ գրում եմ նրանց համար, ովքեր կկարդան ու իմ կյանքը կհասկանան:

Լավ գրագետ չեմ, ոչ էլ գրչի սովոր մարդ, բայց երբեմն սիրում եմ թուղթ ու թանաքը և փորձում եմ գրի առնել իմ գլխու անցածը:

Գրում եմ անվարժ գրչով, դժվար, բայց մեկ-մեկ սրտիցս եմ գրում:

Սկսում եմ մի փոքր հեռուներից:

Մեր գյուղում ինձ ասում էին Սաքուենց սիրուն հարս, կամ թե Սաքուենց սիրուն Զարո:

Երեսիցս արյուն էր կաթում, կարմիր էի Գյանջի նոան պես: Աև հյուսքերս մինչև կրունկներս էին հասնում, թևերումն էլ ուժ կար անշափելի: Նոր էի ոտ դրել 14 տարուս մեջ, երբ հարս բերին ինձ Սաքուենց տուն:

Ախ սև լիներ այն օրը ու երանի մտքիցս միշտ ջնջվեր:

Ես շէի ուզում Սաքուենց տղին—շեշու Սողոյին, ուրիշի էի սիրում: Ինձ մարդատեղ շղին, ոչ էլ կամքս հարցրին ու զոռով տվին Սողոյին:

Միտս է ոնց այսօր ու դեռ դողում է սիրտս: Մեր կանաչ ուսի ծառի տակ հայրս ինձ ծեծեց, հետո կապեց ոտներս...

Առաջին օրերը մի երկու կանֆետ պատիկ արին ինձ կեսրանցս տանը, մի երկու քաղցր խոսք լսեցի մարդիցս ու թռավ աղջկությունս:

Մեր գյուղի շատ աղջիկների պես ես էլ կին դարձա ու թոնրին գերի:

Քանի գնում, խոր ակոսի պես խորանում էր ցավս:

Ոնց որ ծաղիկը պոկես ու դնես կրակի մեջ, այդպես ինձ դրին կրակների մեջ: Սողոյի հոր—կեսարիս կրունկները կողքերս ջարդեցին, պահանջում էին հնագանդությունն, համբերությունն: Իսկ ես մեր սարի խաշխաշ ծաղկի պես ազատ էի սիրում...

Կեսրանցս տանն անհնազանդ էի ու լեզվանի, բայց ճարմ ինչ, աշխարհն էր վատ...

Նուան հատերի պես կաթ-կաթ երեսիս կարմիրը դնաց, դարձա մի ճմլված գեղնածաղիկ:

Սյու ժամանակ մեր զյուղումն էլ ինձ սիրուն Զարո չեխն ասում:

Հիմի էլ ճանաշում էին ինձ որպես Սաքովենց ծեծված հարս: Խեղճ մայրս մեկ-մեկ կոխվ էր գալիս Սաքովենց մեծ հարսների վրա, որ գլխիս քիչ բամփեն և թողնեն շունչ առնեմ...

Բարկանում էր նա ու շրթունքները գողում էին. ասում էր.— Ետ տվեք իմ աղջկան, Ետ տվեք տանեմ,— Հետո... համբուրում էր ինձ պատի տակ թարուն ու ետ էր գնում տուն արցունք թափելով:

Մայրս էլ ինձ նման անբախտ էր ծնվել ու հորս ձեռքին օր չեր տեսել:

Զդիմացավ, շուամենուավ: Հետո էլ ոչ ոք չեկավ ինձ տեսության: Անմեր մնացի ու անպաշտպան: Մարդս էլ իր եզան կոտոշն իմ գլխից բարձր էր դասում:

Էսպես անցավ օրս: Կեսրանցս տանն աղքատ ապրեցի, Սաքունքն թեպեաւ կով ու կիթ ունեին, բայց այնտեղ էլ ավելի վատ, ծեծված ապրեցի: Այստեղ փակում եմ իմ դժվար կյանքի վարդույթը:

Սկսում եմ նորը:

Ոնց որ ծագում է արեւ, այնպես էլ ծագեց մեր նոր օրը: Բորբ տվին մեր սրտերին ու բոցն ելավ աշխարհն առավ...

Իշխանությունը փոխվեց, Սովետական դարձավ:

Բատրակ Ավոն բալշեիկ էր դարձել, իմ հորաքուցի թոռ Աթոն կոմմոնոլ: Հիմի դրանցն էր զյուղի հարգն ու պատիվը, զյուղի իշխանությունը:

Փետրոս աղայի շահիցը չեր այս իշխանությունը, նա ատամնեց հանած գայլի պես մրթմբում էր պատերի տակ բալշեիկների վրա:

Շատ բան եւ տեսա, շատ բան ես լսեցի ու հիմի պատմեմ ինքս ինձանցից:

Սաքուլը վաղուց էր մեռել, տղերքն ու հարսներն էլ բաժան-
պել էին հոր տնից ու բաժան էին ապրում: Մարդս տիֆով ծանր
հիվանդացավ ու մեռավ, երեխաներցս երկուսը մեռան, մնա-
ցինք ես, ամենափոքր աղջիկս ու Շեգան կովը: Իշխանությունն էլ
մեր կողմից էր, մեր շահերի պաշտպանը:

Չեմ ուզում գլուխս գովել ու պարծենալ, գրում եմ ճշմարիտը:
Սիրեցի Սովետների իշխանությունը, ինչպես որ երեխա ժամա-
նակս գժի նման սիրում էի սարի ծաղիկը:

Շատ բան հասկացա նոր կարգերից, շատ բան էլ չէի հաս-
կանում: Այդ նոր ճամփի վրա ունեցել եմ ես էլ իմ մեղքն ու
դժվար տեղերը:

Այստեղ գիրս առաջ շի գնում, բարկանում եմ ինձ վրա ու փա-
կում եմ տեսրակս, մինչև որ վաղը նորից կնստեմ ու կշարունա-
կեմ իսկականը գրել:

Ինչքան էլ որ պատիվ չեն բերելու ինձ այդ տողերը, բայց
իմ խոր համոզմունքով լավ է իսկականը գրել, բան թե սուտ ու
թաքուն պահել աշխարհից ու մեր ժամանակից:



Տեսրակիս մեջ նոր երեխներ եմ գրում:

Մեր գյուղի էն կանանց—Նարգյուղի, Աննիկի, Փառոյի Հետ-
և էլ թարավեցի: Սիրոս սև էի արել, նստել ու չեմ ուզում կո-
ւեկտիվը:

Սիրում էի Շեգան կովիս ու բաղժիս մարգերը: Հենց գիտեի
թե զրկելու եմ այն բոլորից ու դառնալու եմ անբուն կկու...

Մեր գյուղի կոմունիստներն ու կոմոմոլոները, որ ասում էին՝
Զարո, կոլեկտիվ մտիր, լաց էի լինում, ու ասում չէ, որ չէ:

Էն նարգյուղն էլ մի կողմից էր ականջիս տակ հազար ու մի
բան քչփշում, միտքս պղտորում: Մի քանիսն էլ, խակ ու խամ
մարդիկ, լավ չեին վարգում մեզ Հետ գյուղում: Զոռ էին տալիս, թե
հավն ու ձիվը մեջաեղ բերեք կոլեկտիվ գրիվք:

Մեղքս զոր ուրիշի վրա շգցեմ, գրում եմ, հետն էլ ինձ մե-
ջաղպում, որ ժանդոտել էի ու ինքս էլ ինձ չեմ ճանաշում:

Անում եմ դժվար օրերն էին այդ օրերը:

Մի քիչ հաստակողություն արեցի, մռութս կախեցի:

Ընկեր կարդացողներ, խնդրում եմ համբերություն ունենաք ու շատ շմեղագրեք ինձ: Ես այս իշխանության հարազատ զավակն եմ: Այստեղ մի ախ քաշեցի ու գրիշս մնաց թանաքի մեջ:



Մի իրիկնապահ, երբ արևի շողքն ընկել էր շեմքիս վրա, եղ ժամանակ ոնց որ թառլան մի զուշ թառեց իմ շեմքի վրա—ըատրակ Ավոյի Թառլան կինը: Հագել էր նա պուտ-պուտ սիրուն շթից թաղա դեյրա: Նրան մեր գյուղում թառլան զուշ էին ասում, որովհետև սիրուն էր, բոյով-բուսաթով: Էս Թառլանը կանգնեց գուանսգոռող-գոռող ու ասալ ինձ.

— Աչքդ գուրս դա, մենատնտես, զու հենց մենակ ծվարի քո Սաքուլի հին օջախի վրա... Մենք հրեն թագա տուն ենք շինում, հին փլեկները կրակ ենք տալու, նոր կոլեկտիվ օջախ ենք դառնում: Ես ու մեր Ավոն էնքան աշխօր ունենք, որ ստացածից տնով տեղով կլիանանք, զեռ մի բան էլ կավելանա:

Ես գլուխս կախ գցած, սուս ու փուս լսում էի...

Մենակ այսքան ասացի՝ խոսի Թառլան, լավ ես խոսում:
Թառլանը շարունակեց.

— Ի՞նչ ես նստել մեն-մենակ, քո կրակն էլ մեր կրակից չես վառում, կոլեկտիվ չես մտնում: Թե ասենք առաջներում լավ ես ապրել, այդպես չի, թե ասենք իշխանությանը հակառակ եմ, այդպես չի: Աղջի, բա զու մոռացել ես Սաքուլի կրունկների տեղը մարմնիդ վրա, դե միտդ գցիր, թե ի՞նչ օրեր ես քաշել: Իսկ դիտեսթե ի՞նչ են խոսում ու ինչ կա աշխարհում: Կանանց աշքը նոր է լույս եկել, հասկացիր, որ մենք տղամարդկանց հետ հավասարութ ենք, հավասար իրավունք ունենք:

Թե Թառլանն էր ճարտար խոսում և թե ես էի երազի մեջ ընկածի պես լսում...

Թառլանը խոսեց, ուզում էր գնալ, ես մոլորված երեխայի պես քաշեցի նրա փեշից ու մի խոսք ասացի միայն, մի հաստատ խոսք:

Առաջի, Թառլան, գու ինձ հաղթեցիր:

Զես շուտ է հոգնում, գրչի սովոր չի, շատ որ գրում եմ՝
մտքերս էլ շաղվում են: Մնացածի մասին կգրեմ մի ուրիշ անդամ:



Այսօր ձեր ճանաշած Զարոն կոլտնտեսուհի է:

Ուժերիս վրա մի նոր ուժ ավելացավ, էլ չեին ասում ինձ մենատնտես Զարո, այլ ասում էին կոլտնտեսուհի Զարո:

Արևը դիպշում է, քամին սլսլում մեր շեն ու առատ դաշտերի
վրա: Ես գուրս եմ գալիս կուրծքս դեմ տված, հողի ու սարերի
հոտը շնչում ազատ կրծքովմ ու սկսում գործս:

Երբ ձեռքերիդ ուժը կամքովդ ես տալիս, այդ ուժը հազարա-
պատիկ է դառնում:

Հիմի իմն է:

Քաղհան եմ անում, քաղհանիս չեն հասնում մեր կոլտնտե-
սության հարսներն ու աղջիկներից: Բամբակ եմ հավաքում, իմ
քաղին չեն հասնում նրանք:

Ճիշտ է, Թառլանի պես ճարտար խոսող չեմ, բայց գործի մեջ
նրանից և ուրիշ զալում կոլտնտեսուհիներից արդեն անցել եմ:

Այս աշուն երկու ձմեռվա ապրուստ վաստակեցի, տունս ու-
ղիո է մտել, պատեֆոն ունեմ:

Անունս տարածվել է մեր գյուղով մեկ, դեռ ավելի հեռուն,
մեր ողջ պետության մեջ: Ասում են ինձ հարվածային Զարո:

Ուղում եմ թաքուն մի բան ասել ձեր ականջին ու սրտումս
գաղտնիք չպահել:

Կոլտնտեսական Մոկացն էլ աշք է գցել ինձ վրա, նոր շահել
չեմ, համա դեռ սիրտ ունեմ սիրելու:

Իմ աշքումն էլ նա է մտել, աշխօր շատ է վաստակում, լայն
կոլտնտեսական է:

Այստեղ հանգիստ եմ տալիս ինձ, հետո կշարունակեմ:



Ուղում եմ գրել իմ սրտի անշափ ուրախությունը:

Իմ միակ աղջիկ՝ Արևիկը պիոներ է դարձել:

Ուրախու ու անուշ գարուն էր բացվել: Լավ գարուն:

Արևի շողի պես ներս մտավ աղջիկս մի փունջ վարդ գրկած:

Բոյ է քաշել, մատաղ բոյին, կուրծքը լայն ու երեսը կարմիր: Վզի կարմիր կտորն էլ ոնց որ սարերի ալվան ծաղիկը, փնջել էր բիի տակ: Աղջիկս փաթաթվեց վզովս, փունջը զրեց ծնկներիս վրա ու սկսեց խոսել բաղցր ու ճարտար լեզվով.

— Մայրիկ ջան, զիտես, մենք պիոներներս ենք մեր կուտանտեսության վարդենիները խնամել ու տես ի՞նչքան լավ են բացվել մեր սիրունիկները:

Սիրտս այնպիսի ուրախությամբ լցվեց, որ խոսք չփառ ասելու, պինդ համբուրեցի աղջկանս:

Աղջիկս բացված վարդերի փունջը զրեց մի ամանի մեջ, սեղանի վրա:

Բուրմունքն առել էր տունս, մայիսը բացվել էր մեր տան մեջ:

— Ուխայ, ի՞նչ անուշ են բուրում մեր կուտանտեսության վարդերը, դու էլ բալաս, մի կարմիր վարդ ես, վարդերի մեջ,—տսացի ես:

Աղջիկս թռվուալով երգում էր պիոներական մի բաղցր երգ:

Մտնեք տունս չեք ճանաշի:

Սաքուենց շունչն ու հոտը կտրվել է խսպառ մեր տնից:

Կճումները հավաքել եմ պատերի տակից, այժմ մաքուր է սենյակս: Պատերը նոր եմ սպիտակացրել: Լենինի—Ստալինի նկարներն եմ կպցրել պատերիս վրա:

Լուսամուտներիս վարագուցըներ եմ քաշել, ունեմ սեղան, աթոռ, երկաթե մահճակալ, ու դեռ էլի շատ բան եմ առնելու տանս համար:

Աղջիկս վազեց թի՝ մայրիկ ջան, ես գնում եմ պիոներական պարապմունքի: Ասացի՝ գնա, բալա ջան, ծլի ծաղկի այս մեր նոր աշխարհում:

Նոր պատվի արժանացա: Ուրախությունից ձեռքերս դողում են: Մեր կուտանտեսության նախագահն ասաց.—Զարո, դու բրի-

պադիր ես, քեզ վրա զնում ենք մեծ պարտականություն: Ես ուսեածը շարժեցի, նա շարունակեց ոգեորդված:

— Մեր կոլտնտեսությունը ընկեր Ստալինի անվան է, այնպես պետք է աշխատենք, որ աշխարհի պարծանք այդ մեծ անունը պատվով կրենք:

Ես հասկացա, ինչպես որ պետք էր հասկանալ:

— Դե, խոսքով ինչ ասեմ, զործով ցուց կտամ: — Սիրտս տրուխում էր, մտածում էի, որ կոլեկտիվի ինձ գործ է հանձնում, պատվով պիտի գուրս գամ: Առաջ մենակ ինքս ինձ էի ղեկավարում, Հիմի էլ բրիգադը պետք է ղեկավարեի, հեշտ չեր:

Բրիգադիս անդամներին հավաքեցի ու մի քիչ զրուց ունեցա նրանց հետ, առաջի, մենք բրիգադ ենք, լավ պիտի աշխատենք: Էս է բամբակը բացվում է, շանաքի ենք գուրս գալու:

Ասում էի, որ ոչ ոք իրեն թերեք շպիտի խնայի, քանի որ կողեկատիվ ուժ ենք, ոչ թե բամբակ, այլ սարեր կհավաքենք, թե որ ուզենանք:

Գիշերները մտքումս պլան էի կազմում, թե որ շարքից պետք է սկսենք շանաքն ու ինչքան տեղ պիտի գնանք: Որոշում էի, թե բանի բարդան պիտի լցնենք ու բրիգադիս անդամները ո՞վ ուժ հետ պիտի կանգնի:

Տունս մաքուր հավաքած՝ առավոտը արեք դեռ չծագած, ես գաշտումն էի:

Հավաքում էի իմ բրիգադի անդամներին բամբակի արտի մոտ: Չորս աղջիկ, ութ կին, դրանք իմ բաժինն էին:

Սպիտակ ձյունի պես բամբակը փոփում էր մեր աշքի դեմ:

Մինչև շանաք սկսելը մի երկու խոսք էի ասում, դասավորում էի մերոնց իրար հետ, ասում էի զալբություն շանեք, զուք ձեզ շխնայեք ու ինքս թերեք քշտած առաջ էի ընկնում:

Մեկ էլ տեսնում էի ծտերի պես սկսեցին բամբակին վրա տալ: Էլ ո՞վ կարող էր մեզ հասնել:

Բայց շկարծեք թե ամեն բան հեշտ էր լինում:

Բրիգադիս երկու անդամներին չեի հավանում, մեկը Շուշոն. էր, մյուսն էլ Վարդոն:

Դրանք լեզվին էին զոռ տալիս, իսկ գործը վատ կատարում:

Այդ բանից սիրտս վառվում էր, վախճանում էի, դրանք մեր

գործը փշացնեն: Շուշանը կեղտուր էր հավաքում բամբակը, վարդոն էլ ուշացած էր գալիս ու այնքան էլ կամաց էր շարժվում, կարծես կուրած սայլ լիներ:

Իսկ բրիգադիս մնացած անդամների մասին վատ խոսք չեմ կարող ասել, իմ ուզածի պես, ծտի նման թեթև թոշում էին ու բամբակը թուլալով պոկում:

Վերջը հնարը գտա, Շուշանին ինձ հետ վերցրի, վարդոյին էլ նազոյի հետ գցեցի:

Մենք սրանց ձիգ տվինք, խոսքով—օրինակով ու էս վատ աշխատողներն էլ սկսեցին լավ աշխատել: Մեր քեֆին քեֆ չէր հասնում: Ամեն օր բամբակը սարի պես դիզում էինք դաշտում:

Թառլանին պատահեցի շանաքի ժամանակ, նա էլ էր բրիգադիր, ևս էլ:

Սսացի ոնց է, Թառլան շան: Զարոն քեզ հասավ, թե չէ:

Թառլանը մի քիչ մտմտաց ու ասաց ծիծաղելով.

— Հիմի էլ դու ինձ հաղթեցիր, քո բրիգադն ինձանից առաջ ընկավ:

Ամառը լավ աշխատեցի, շանք շմնայեցի, ոնց են ասում հողի հետ քամվեցի, արկի հետ վառվեցի: Դաշտում մատով էին ցույց տալիս ինձ: Ուրիշներն իմ օրինակով աշխատեցին ու ինձ հասան:

Մեր բրիգադն առաջավոր դուրս եկավ ու հաղթանակը տարավ:

Ինձ նկարեցին, լրագրի մեջ դցեցին. սրանից ավելի պատիվ...



Ափսոսում եմ, շատ եմ ափսոսում, որ իմ մայրը կենդանի չէ, ինձ հետ չի ուրախանում:

Չի իմանում, որ իր աղջիկը սև ու սպիտակը չոկում, գիր է անում, տետրակ պահում:

Արկիկս քնած է մուշ-մուշ: Այս գիշեր նստեցի մինչև աքլորականշը: Վերջանում է տեսրակս, գրում եմ վերջին տողերը, շուտով գարունը բացվելու է, կանաչել են մանուշակի թփերը. նոր եռանդով, նոր ուժով կսկսենք աշխատել դաշտում:

Հողին ու բերքին սովոր մատներս եռ են գալիս:
Գարունը բացվում է... Դաշտերը մեզ կանչում են...

Խոստանում եմ գալիք ձմեռը գրել մի նոր տետրակում մեր
կոլտնտեսության հետաքրքիր պատմություններից: Այն ժամանակ
դրիչս ավելի պարզ կդրի ու խոսքս էլ ավելի հարուստ կլինի:
Դեռ մնաք բարով, իմ հարգելի կարդացողներ...

Կոլտնտեսուհին փակեց տետրակը և մի բուռն կարոտ դեմ-
քին՝ պատուհանից նայեց դեպի դաշտերը:
Լուսանում էր:

ՊԵՐՏԻ ԶԵՆԵՐ

Ա.ԲՅՈՒՆՈՏ ՎԱՐԴԵՐ

Մայիսին վառ կանաչով է բնոթյունը զուգվում, բացվում են վարդերը, բուրում են թարմ...

Մարդկանց սրտերը սիրով ու քնքշությամբ են լցվում...

Զարթոնքի երգերն են՝ հորդառատ բխում, աշխարհով մեկ գրնգում...

Այսօր մայիսմեկյան լույս առավոտն է նորից թակում ամեն մի դուռ, ամեն մի պատուհան:

Ազատության խինդով արբած ելնում են մարդիկ, հոսում գեպի փողոցները, մայթերը...

Ցնծագին հանգես է լինելու, արևն է վերեկց իր ոսկին թափում... Մայիս է, ազատության ալ վարդերի շքնար ամիսը:

Վարդագույն փողկապը կրծքի վրա ծածանելով, վարդերի փունջը գրկած եկալ պիոններ աղջիկը, եկալ կանգնեց մոր առջեւ ու պարզեց նրան մի կոկոն վարդ...

— Մայրիկ, հոտոտիր վարդ մայիսմեկյան...

Մայրը նայեց իր թրթուն աղջկան, որ պոկվել էր ընկերների ուրախ շարքից ու բերել իր աշքերում և՛ կյանք, և՛ արև...

Մայրը քնքշագին կարոտով վարդի կոկոնը հոտոտեց, ժըպ-աւաց...

Վարդի թերթերը թափիշ՝ մոր այտերին քսվեցին ու գետի պես հանկարծ խշացին.

— Հիշո՞ւմ ես Գ...ին...

Մայրը լուռ էր ու անհանգիստ, վարդի թերթերը փոխվեցին այրող աշքերի, ամեն մի թերթիկից նայում էր ծանոթ ու հարազատ մի հայացք:

Աղջիկն ուրախ երգելով վարդի փունջը դրեց ծաղկամանի մեջ ու բացականչեց.

— Սյնքա՞ն հաճելի է գուրսը, այնպես ուրախ է մայիսի մեջը... մոր աշքերի ուրախ փայլը չքացել էր ու թախիծն էր անձրեցւոմ:

— Ես էլ քեզ պես զնդուն ձայնով աղջիկ էի անվիշտ, սիրում էի կյանքը, վարդերը...—սկսեց մայրը ցածրաձայն.

— Սիրում էի մի բանվոր տղայի՝ առողջ, աշխատող, բազուկները երկաթի պես ամուր: Ընկերներ էինք, պարզ մաքուր սիրտ, հիշում եմ ինչպես այօր, գարուն էր, բանում էր նա ողջ օրը, իրիկունք տուն էր վերագառնում քրտնած... կոկոն վարդեր էր բաղում իրենց պարտեզից ու ծոցում պահած գալիս էր ինձ ահեսության: Ես էլ բնից փախած թռչունի պես սպասում էի նրան մեր ցանկապատի տակ: Հանդիպում էինք կարոտնվ, վարդերը մեկ-մեկ հանում էր ծոցից ու տալիս ինձ... խոսում էինք, կատակում ու իրադից բաժանվում, վաղվահանդիպումի հույսը մեր սրտերում:

Մի մայրամուտի նա եկավ վարդեր նվիրեց, բայց ուշը վրան չէր, աչքերն անսովոր փայլ ունեին. բաժանվելիս նա ինձ անհանդիստ շեշտով ասաց.

— Վաղը մեզ մեծ պայքար է սպասում, վաղը մայիսի մեկն է... Պետք է կովենք մինչև որ մեր կյանքն էլ վարդի պես կարմրի... Կրակոտ խոսքերը սրտիս մեջ ընկան վառվեցին, այդ օրը նա իմ աշքում ժայռ դարձավ անպարտելի... Գ...ն գնաց, ես մենակ մնացի ու առաջին անգամ նրա խոսքերի վրա, պայքարի մասին երկար մտածեցի... Եյն գիշեր անհանդիստ քննեցի... Մեզ պանիս վրա գրված վարդերը շշնչում էին միալար.

— Վաղը Մայիսի 1-ն է...

Երբ առավոտն աշքերս բացեցի, արևի շողերը խորձ-խորձ ներս էին ընկել իմ պատուհանից, իսկ սեղանիս վարդերը ալկարմիր շշնչում էին միալար.

— Գնա՞... գնա՞...

Պատուհանից գուրս նայեցի, մայիսյան առաջին, ջինչ առաջ վռտն էր ինձ կանչում, կյանքը, բնությունը...

Մազերս արձակ ուսերիս թափված գուրս վազեցի, ուզում էի խնդալ-ուրախանալ... Հանկարծ լսվեց պայթյուն, կրակոցներ... Բակից գուրս թռա փողոց:

— Ինչո՞ւ են կրակում, ի՞նչ է պատահել, — հարցնում էի շփոթված:

Ոչ ոք ինձ չէր ուզում պատասխանել, ամենըը հուզված այսու այն կողմ էին փախչում: Սրտի ահով նորից հարցրի.

— Ինչո՞ւ են մարդիկ փախչում...

Մի պառավ կին մոտեցավ ինձ, ասաց.

— Աղջի, տուն կորի, քո տեղը չե... ցարի զինվորները կրակում են մի խումբ բանվոր ցուցարարների վրա...

Այդ ժամանակ մի փոքրիկ տղա անցավ մեր կողքից բղավելով.

— Արյուն... սպանություն...

Միրտս մղկտաց, վաղեցի, տեսա փողոցի վերջում սարսափած գեմքերով մարդիկ էին հավաքվել... Ամբոխը ճեղքեցի ու առաջ անցա. մեկը փուլել էր գետնին—ճակատը ձյուն, կուրծքը կարմիր... Նա էր՝ բանվոր Գ-ն, իմ ընկերը. ճշացի.

— Անխիղմ, անգութ մարդիկ...

Իսկ ընկերս նայում էր հանդարտ, ձեռքը կրծքին սեղմած ու կրծքի վրա ես տեսա արնաշաղաղ կոկոն վարդեր թափված...

— Իմն են, ինձ տվեք վարդերը,— շշնչացի ու չեմ հիշում ինչ սացին հավաքված մարդիկ:

Լսեցի ըմբոստ երգի ձայնը... արյունոտ վարդերը վերցրի ու կրծքիս սեղմած վաղեցի: Աշքերիս արցունք, շրթերիս ազատության երգ՝ միացա ցուցարարներին... Այդ ժամանակ ասես ընկերս կենդանացած, աշխուժ երգում էր մեզ հետ, նրա ձայնն էր ականջիս տակ շարունակ հնչում:

Հետո չեմ հիշում ինձ հետ ինչ կատարվեց: Աշքս բացեցի մեր տանը, անկողնուս մոտ մայրիկս էր կանգնած, այնպես գթոտ, այնպես վշտոտ էր մորս հայացքը: Ես հիվանդ էի:

Նայում էի սեղանիս վարդերին, որ թառամել, հեկեկում էին. վարդեր, որ ընկերոջս հայացքն ունեին:

Այդ օրը ես հանաշեցի կյանքն ու պայքարը և ազատությունը սիրեցի, որ արյունով է եկել...

Մայր ու աղջիկ անշշունչ նայեցին իրար:

Գնա աղջիկս, աղատությունը սիրեր, ալ վարդեր սիրիր, որ
ցողված են պայքարում ընկած մեր ընկերների ազնիվ ու սուրբ
արյունով...

Մայր ու աղջիկ նայեցին փարթամ բացված վարդերին—բույ-
գը առան նոր կյանքի ու երջանկության:

Փողոցից լսվում էր ցնծության երգը...

Կեցե՞ Մայիսը, աղատության, ալ վարդերի շքնաղ ամիսը...

ՊԱՐՏԻԶԱՆԵՐԸ

Սարից իշան մի խումբ ձիավորներ ու բռնեցին անտառի ճամփան: Թափ ընկած ձիերը քշում էին անտառի փեշերով: Նրանք թվով տասը հոգի էին, միամփուշտակալները կապած, հրացան-ներն ուսերով գցած:

Գնդակի պես սրբնթաց, քամու պես թեթև սլանում էին նրանք իրար հետևից: Անտառը գողում էր ձիերի դոփյոնից:

Նրանցից որը յափունցի էր հագել, որը գորշ շինել, փափախ-ները ետ դրած, բաց ճակատները ծեծում էր անտառի պաղ քամին:

Նրանց հպարտ կեցվածքն ու անխոնչ հայացքը վկայում էին, որ կտրել, անցել էին սար ու ձոր, կովի-կրակոցների մեջ անքուն գիշերներ էին լուսացրել, բայց չեր ընկճվել նրանց առնական հոգին. անխորտակ կամքով դիմադրել էին ամեն մի դժվարություն ու կայտառ էին այժմ նրանց մազապատ դեմքերը, իսկ աշ-քերում վառվում էր արիություն ներշնչող պայքարի բոցը:

Մթնշաղ էր, տերևաթափ. աշնան քամին վարժ վարպետի պես բռերով պոկոտում էր ծառերից գույն-գույն տերեններն ու գետնին փոռում անձեռակերտ աշնան գորդը:

Թոլորի առջեկից սլանում էր սև ձիու մեջքը երկու ստքով գրկած մի հաղթամարմին երիտասարդ: Նա հագել էր սև յափուն-ջի, որի փեշերը փովել էին ձիու մեջքին, ոտներին սապողներ, շեկ փափախը գագաթին դրած, գլուխը դեպի ետ, կուրծքն առաջ պարզած, սանձը ձեռներում ամուր պահած:

Կարծես մոռացել էր նա, որ իրեն հետևում էին ընկերները, սև աշքերը կետ նպատակին հառած, մարտ էր մղում թշնամու հրոսակների գեմ, աջ ու ձախ փոռում թշնամու զինվորներին, հե-փում էր կրակ կրած զինվորի սիրտը:

Այդպես ամեն մեկը մտքով սլացած՝ որը դիրքում կրակում էր, որը գնդացիրն էր լարել, մի ուրիշը հետախուզական արջավանքն էր կատարում... ու շղգացին թե ինչպես արեք մայր մտավ, անտառը մուգ գույնով ներկվեց, քամին էլ շարացավ ու խճճվեց ժառերի մեջ:

Առաջին ձիավորը հանկարծ ձիու գլուխը մի փոքր ետ թեքեց ու բղավեց խզված ձայնով.

— Սեթ, — ասաց ձեռքը պարզած դեպի ձախ, — կարձ ճանապարհը այստեղով է, այժմ կմտնենք Քաջքերի ձորը, այնտեղից դուրս կդանք Կաթնաղբյուրի մոտ և լուսաղեմին մերոնց կմիանք:

— Զան վիթխար Շերուն, բերանիդ մատաղ, — ձիու մեջքին ձգվելով, պատախանեց կոլոտ Կարոն: Պարտիզանական ջոկում իրենց հրամանատարին իր բարձր հասակի համար «Վիթխար Շերուն» էին կոչում: Կոլոտ Կարոն աշխատում էր իր ձին հավասարեցնել հրամանատարի ձիուն, բայց առջևից խանգարում էր պարտիզան Սեթի ոչպակաս սրարշավ շեկ ձին:

— Նո՞ւ, նո՞ւ, — զայրանում էր Կարոն վեր թռչելով թամբին: Նա հասակով կարձ էր, բայց ճարպիկ: Պարտիզանական Յ-րդ ջոկի փորձված հետախուզական էր: Երբ հրամանատարը դիմում էր նրան հետախուզական խնդրով, Կարոն առանց երկար մտածելու, մանրիկ աշքերը կկոցած, հաստ շրթումքները սեղմած՝ կպչում էր մոխրագույն ձիու մեջքին ու արշավում սարերը: Հետախուզության մեջ նա դեռ շեր զիշել ոչ մեկին: Կարոյի տգեղ գեմքը գեղեցիկ էր թվում ընկերներին, որովհետև նա միշտ ուրախ էր ու ամենածանր բռակեներին կատակներ էր անում, ընդհանուր ծիծաղ առաջացնելով: Նա լեզուն վարժեցրել էր, կարողանում էր զանազան թռչունների պես ծլվլացնել և կենդանիների պես ձայներ հանել: Նա ուներ կարձ կենսագրություն. շքավոր գյուղացու տղա էր, զշլաղ գյուղից, հայրը սպանվել էր իմպերիալիստական առաջին կովում, մայրը մեռել էր տիֆովէ: Պատանի Կարոն հին կարգերի դառնությունը կրելով՝ ելք էր փնտրել կյանքի և ազատության՝ հրդեհել էր իրենց հարևան տանուտերի տունն ու իր աղբբեցանցի ընկերոց՝ Աբդովի հետ փախել, միացել պարտիզանական ջոկատին:

Մի քանի անգամ դժվար հետախուզական առաջադրանքներ

կատարելով, նա վստահելի, կարմիր պարտիզանի կոչում
ստացավ: Երեկ նա գնացել էր Կաքավասարի գյոլերն ու
լուր բերել պարտիզանական առաջին ջոկից: Դեռ գյոլերին շնա-
սած, սարալանջին սկսել էր կանչել հոպոպի պես: Իրիկնադեմ էր-
պարտիզանները գյոլերի մոտ խարույկ էին վառել ու շուրջը նըս-
տոտել: Հենց որ լսում են պայմանական ձայնը, խսկույն վեր են
թռչում և ուրախ բացականչում՝ «Յ-րդ ջոկի հոպոպը եկավ»:

Կարոն անձրեկից թրջված է լինում. բերում են իրենց մոտ,
հանում են նրա թաց շորերը, վրան մի ուրիշ յափունջի գցում,
ապա խարույկի վրա շորացնում են նրա շորերը: Ընկերական հո-
գատարությամբ շրջապատելով սկսում են հարց ու փորձ անել
Յ-րդ ջոկատի վիճակից, հետո իրենք են պատմում, թե ինչպես
երկու օր առաջ օձերի կիրճում ջախչախել են թշնամու մի ոհմակ և
միայն մի զոհ են տվել, ամենքից սիրված Ավոյին:

Պարտիզանի մահը վշտացրել էր նաև Կարոյին, հետո հան-
դարտ զրուցել էին հաղթության մասին ու մոռացել վիշտը:

Կարոն պատմում էր աշխուժությամբ, մերթ գեղանի գյոլերը
հիշելով, թե ինչպես խարույկի բոցն անդրադարձել էր զրերի մեջ,
իսկ վայրի բագերը օրորվելով լողում էին զրի երեսին: Պարտի-
զաններն էլ թինկ տված խոսում էին և զրերին ակնապիշ նայում:
Հանկարծ պայթում է հրացանը: Կարոն շուռ է գալիս և ինչ տես-
նի,—բագերը թևերը թափահարելով փախչում էին այս ու այն
կողմ. պարտիզաններից մեկը—մի գնդակով սպանում է երկու
բադ:

Կարոն երբ պատրաստվում էր ճանապարհ ընկնելու, ջոկի
հրամանատարը ծնկներին դրած հրացանի կոթի վրա նամակ է
գրում ու տալիս Կարոյին: Կարոն քափ-քրտինք մտած վերադառ-
նում է ընկերների մոտ ու նամակը հանձնում հրամանատարին,
որը բարձրածայն կարդում է:

«Սիրելի ընկեր պարտիզաններ, առլանի ճուտերը ե՞րբ են
թուրացել, որ մենք թուլանանք վշտի դեմ, մի քանի օր
առաջ, կատաղի կովում մենք մի ազիզ ընկեր կորցրինք, համա-
շնք թուլանում:

Ավոյի արյունը թանկ նստեց թշնամուն, շարդ տվինք նրանց,
մինչև վերջին զինվորը:

Ավոն ընկավլ պարտիզանին վայել քաջությամբ, մինչև վերջին շունչը՝ հրացանը շճեց ձեռքից:

Սիրելի պարտիզաններ, հաղթությունը մոտ է, շուտով կտեսնք վեճը, մերոնք ամեն տեղ գրավում են քաղաքները, մենք վախ շունչներ...

Պարտիզանական քաջարի բարեներ՝

1-ին ջոկի հրամանատար՝ Մարտին»:

Կարոն անդիր էր արել նամակին ու կրծքի վրա փամփուշտակալի տակ էր պահում, որ չկորցնի, այժմ էլ հիշել էր այն տողերն ու 22նշում էր, — հաղթությունը մոտ է...

Կարոյի ձիու գլուխը դիպավ Սեթի ձիու գլխին, Սեթը ծիծաղեց, երբ տեսավ Կարոն ճգնում էր հավասարվել Շերունին, նա ետ քաշեց ձիու գլուխն ու ասաց դիշող տոնով, — անցիր...

Սեթը, խոժոռապեմ այդ պարտիզանը, երկաթգծի սլաքավար էր եղել, մասնակցել էր բանվորական գործադուլներին, այժմ էլ վիթխարի Շերունի օդնականն էր, նրա աջ թեր. Սեթը խիստ էր, սիրում էր կարգապահություն, բայց Կարոյի նկատմամբ միշտ ներողամիտ էր:

«Պարտիզանը տուն չունի, պարտիզանը սրտում առ շունի, պարտիզանը մի նպատակ ունի միայն — կովում հաղթել նենդ թշնամուն».— ամեն անդամ ասում էր Սեթն ընկերներին, կամ երբեմն շշնշում մեկուսի:

«Ճանապարհը թիքվեց դեպի ձորը, մութը թանձրանում էր, ձիերի սմբակներից կայծեր էին թուզում»:

Հրամանատարը ճանապարհը գիտեր, դրա համար համարձակ առաջ էր ընթանում ու կամացուկ շշնշում ձիու ականջին.

— Թոցրու, Սել ջան; ճնշվածներս եղացրացանք, սարերն ընկանք ու թշնամուն դեմ-հանդիման կովի գոշեցինք... Եռու, բաշդ թափ տուր, հասցրու մեր նպատակին...

Կարծես ձին հասկանում էր տիրոջ լեզուն — սանձը կրծում. էր, ունգերից փրփուր թափում, գլուխը հպարտ թափահարելով սլանում առաջ:

Սերունի դեմքը պայծառանում էր, երբ հիշում էր պարտիզանական մյուս ջոկատներում կովող ընկերներին, ապա հիշեց սիրած աղջկան՝ կարմիր այտերով, խաժ աշքերով, այն աշխույժ վերգոյին, որը հրաժեշտի պահին կտրել էր իր շեկ մա-

վերից մի փունջ ու տվել Շերունին, ասելով. «Վերդո՞ն չի մոռանաքեզ, դու էլ նրան շմոռանաս: Թող թուրդ միշտ կտրուկ լինի, հավանի թրի պես, փորձանքներից դուրս գաս պատվով»: Հետո վերդո՞ն թաքուն սրբել էր աշքերը և ուրախ բացականչել. «աիրտս վկայում է, որ ետ կգաս անփորձանք»: Գրկախառնվել էին նրանք վերջին անգամ Վերդոյենց գոմի պատի տակ:

Շերունի մտքերը շատացան ու թեռում էին նոր-նոր ափերով, իսկ Վերդոյի պատկերը վայրի ծաղկի պես միշտ մնում էր Շերունի մտքի ափերին:

Շերունի հայացքը լուսարձակի պես ընկավ խոր ձորը, ծանոթ վայրեր էին, նա կարող էր գնալ աշքերը փակած:

Գյուղում, երբ բատիքակ էր, այդ տեղերով էր քշում ոշխարհեր. այդ ձորում թփուտների մեջ էր թաքնվել նա, երբ անհամբեր դանակահար էր արել զորքա Գաբոյին, հարեանի հարսին առեանդելու համար: Շերունի ըմբոստ հոգին չէր հանդուրժում մարդկանց վատ արարքը, երեսներին պարզ ասում էր, հետո դիմում բռնցքակովի: Զորքաները չէին սիրում Շերունին, նրան անվանում էին «ամբարիշտ նորար»:

Շերունը հիշեց, թե ինչպես մի անգամ, գիշերը—գյուղի բատրակները դարբին Սահակի առաջնորդությամբ եկել էին հենց նույն այդ ձորը ժողով անելու:

Դարբին Սահակը երկար տարիներ ապրել էր Ռուսաստանում, հետո նորից վերադարձել էր իրենց գյուղը և նոր-նոր մտքեր էր քարոզում գյուղում: Նա ամենից գիտունն էր համարվում, ճարտար լեզու ուներ, կարողանում էր գյուղացիներին գրավիլ: Այն օրը, երբ խոսում էր նա մութ ձորում, աշքերը վառվում էին իր դարբնոցի քուրայի պես. ասում էր, «կուլակն ու քյոխվան դժոխվեն դարձրել, ծծում են գյուղացու արյունը, ասելով աշխարհը դմակ է, մենք դանակի»: Հետո ավելացրել էր ձեռներն իրար շփելով. «աշխարհն այսպես չի մնա, ունոլուցիւա կլինի, մենք ել ձեռներս ծալած չենք նստի»:

Կես գիշերին Սահակը խոսում էր ահավոր ձորում, իսկ բատրակ ճնշվածները աղաղակում էին. «մենք ձեզ ցուց կտանք, արյուն ծծող զորքաներ»:

Զի մոռանում Շերունը առաջին ժողովն այդ ձորում և Սահակի վառվող աշքերը, չի մոռանում և այն դաժան դեպքը, երբ

Աշնամին իմանալով Սահակի բոլշևիկ լինելը, մի գիշեր սրախող-խող են անում նրան հենց իր դարբնոցում: Ծերունն առաջին անդամ էենինի մասին և ուսուցիոն մտքերը՝ Սահակից էր լսել (ու սիրել էր նրան ողջ հոգով:

Պարտիզան Վասոն թի' դեմքով, թի' բնավորության գծերով՝ հիշեցնում էր դարբին Սահակին, դրա համար Ծերունը շատ էր սիրում Վասոյին: Դարբին Սահակին հիշելով, նա հիշեց Վասոյին ու բղավեց.

— Վասո, քեֆդ...

— Դու որ լավ ես, ընկեր Հրամանատար, ես էլ եմ լավ,— պատասխանեց Վասոն, որ վերջին ձիավորն էր՝ թեթև գնդացիրը մեջքին գցած, փամփուշներով իրանը պատած, հետեւում էր ընկերներին և ամենից քիչ էր խոսում:

Կարոն ասում էր կատակով, որ Վասոյի լեզուն գնդացիրի մեջ է: Վասոյից առաջ գնում էին Արդուլը, Հակոբը և մյուսները, որոնք մի-մի վարժ հրացանաձիգներ էին:

Այդպես յուրաքանչյուր պարտիզան իր պատմությունն ուներ: Նրանք կովի էին ելել միասին ու դարձել պայքարի անդավաճան ընկերներ: Նրանցից ամեն մեկը մի քանի անդամ վիրավորվել էր, լավացել ու նորից կովել առանց տրտունջի: Պարտիզանի հատկությունն էր կյանքը շխնայել ուսուցիչից համար, ով թուլանար, կամ գլուխը պահեր, ասում էին «վործանք պարտիզան» ու աշրից գցում:

Անտառը նոսրացել էր, խիտ թիւտներն էին կախվել ձորաբերանին, ձիերը խրխնջալով ծառս ելան հանկարծ:

— Տղերք, աշքներդ սրեք, Քաջքերի ձորն է, ինձ հետեւցեմք, իրար չկորցնենք,—ըղավեց Ծերունը ձիուն ասպանդակելով:

Լուս էին ձիավորները, նրանք խավարը ճեղքելով բարձրանում էին ձորն ի վեր, արշալույսի վառ կարոտը սրտերում:

Հանկարծ Ծերունի ձին սկսեց անհանգստանալ, կարծես ուզում էր սանձը բերնից գուրս նետել, շննթարկվել տիրոջը: Ծերունը գայրանալով սանձը ձգեց, այդ ժամանակ լսվեց մի կրակոց, մյուս ձիերն էլ սկսեցին անհանգստանալ:

— Տղերք, պատրաստ մնացեք, շխառնվեք, Քաջքերի,

և' Պուշմանի ձոր են ասում սրան, — զոչեց Սերունը, հրացանը՝ և փամփուշտակալը շոշափելով:

Կոլոտ Կարոն սկսեց դեղձանիկի պես շվշվացնել, որպեսզի ստուգեր նրանց ով լինելը, արդյո՞ք պարտիզաններ էին, թի թշնամիներ:

Պատասխանի փոխարեն հաջորդեցին նոր կրակոցներ:

— Օ՛ո, սրանք թշնամիներ են, — մրթմրթաց Կարոն հրացանը պատրաստ պահած:

Լսվում էին խառը ձայներ ու մեկի խռպոտ հրամանը.

— Կրակեցեք ծո, գյուղախորով արեք, բալշեիկ...

Սերուն առանց շփոթվելու իր ջոկատը դիրքավորեց ձորի եզրին ցցված կարմիր քարի տակ:

— Վասո, գնդացիրդ լարիր, աճա այս կողմից. — պատվիրեց Սերունը, որի աջ կողմից կրակում էր Սեթը, ձախից Կարոն: Սերունը անընդհատ կրակում էր: Վտանգի պահին ձափերը շուրջը հավաքած առյուծի նման մոնչում էր նա: Հանկարծ շոշափեց իրանը, տեսավ փամփուշտակալը դատարկվել էր, մի քանի փամփուշտ էր մնում միայն. նա շրթունքները կրծոտեց, ապա գգաց, որ գնդացիրն էլ այլևս չէր տկտկում, իսկ հակառակորդի կողմից հատ ու կենտ գնդակներ էին գալիս միայն:

Սերունն ուղեց ստուգել ընկերների վիճակը և անոն անոն կանչեց նրանց. բոլորը պատասխանեցին առույգ, միայն Վասոյի, Հակոբի կողմից պատասխան շտացվեց:

Վերջապես լույսի շողբն ընկավ ձորը, խավարը ցրվում էր, նրանք հազիվ կարողացան իրար նշամարել: Սերունը ետ նայեց, տեսավ՝ Վասոյի սպիտակ ձին թամբը գցել էր վրայից, կրծում էր սանձն ու գլուխը քսում կարմիր քարին: Մի ակնթարթում Սերունը թուավ այնտեղ, տեսավ՝ ձիու ոտների առաջ ընկած էր Վասոն գնդացիրն ամուր գրկած:

Սերունը կուցավլ շարժեց Վասոյին, բայց Վասոն շշարժվեց, սառած աշքերը շմարթեց:

— Վասոն զոհվեց, — հառաչեց Սերունը:

— Նաև Հակոբը, — մյուս կողմից հայտնեց Սեթը հազիվ լսելի ձայնով:

Պարտիզաններն իսկույն շրջապատեցին սպանված ընկերներին:

կուսանում էր, երկինքը շառագումել էր, երբ ութ պարտիզան՝ անհավասար կամից ելած՝ զո՞հ տալով երկու հոգու՝ բարձրանում էին գեղի Կաթնաղբյուրը, ձիերի վրա տանելով՝ զո՞հված ընկերներին:

Հասնելով աղբյուրի մոտ, նրանք զգուշորեն ցած դրին Վասոյի և Հակոբի մարմիններն ու լուս հանեցին գլխարկները:

Քչջում էր Կաթնաղբյուրը հանդարտ ու զուզալ, դիմացի բարձր սարից փշում էր քամին ու շփում հոգնած զինվորների ճակատը:

— Մնալուցիան առանց արյունի չի գալիս... Վասո, Հակոբ, գուք զո՞հ գնացիք մեր վերջին կովում, ափսոս շտեսաք հաղթությունը... ազիդ ընկերներ, ձեր արյունը թանկ նստեց թըշնամուն, ջարդ տվինք գաղաղած շներին,—ասաց Ծերունը աշքերը սրբելով ու կուցավ, համբուրեց նրանց սառը ճակատները:

— Մնաք բարով, ընկեր պարտիզաններ, մենք կպատմենք աշխարհին, թե ինչպես դուք պարտիզանական կոիվներում հերոսացաք, չի մոռանա պարտիզանը կովում ընկած իր ընկերներին,—ասաց հրամանատարի օգնական Սեթն ու ինքն էլ կուցավ նրանց ճակատը համբուրեց:

Կոլոտ Կարոն շոյում էր Վասոյի ձիու բաշն ու գլուխը թամբին դրած հեկեկում...

— Վասո ջան, գնդացիրդ ժամացուցի պես տկտկաց, կուրծքդ դեմ տված ձեռոդ շթուլացրիր մինչև վերջին շունչդ: Ո՞նց մոռանամ սիրտ կտրատող ձայնդ, երբ մահվանդ բռպեին ասացիր. Կարո, ուժս հատնում է, խփված եմ, գնդացիրը դու բանեցրու:

— Վասո ջան, ձիդ կտանենք մեղ հետ, անունդ չի կորչի...

Բոլորը նայում էին Կարոյին, որին այդշափ վշտահար երեք շեխն տեսել:

Հողը տնքաց և ջերմ սիրով իր գրկի մեջ առավ կովում զո՞հված հերոսների մարմինները: Մի թարմ հողաթումբ բարձրացավ Կաթնաղբյուրի մոտ:

Վիթխարի Ծերունը կանգնել էր գլխիկոր՝ հողաթումբի առաջ, յափոնջին ընկել էր ուսերից ցած, ու աշքերը պղտորված էին, դեմքը գումատ էր... լուս էին մյուս պարտիզանները:

Հանկարծ Սեթը նկատեց Ծերումի գունատությունը, ապա նրա ձախ թիկի թացությունը, վախեցած բղավեց.

— Ծերուն, դու վիրավորված ես և ոչինչ չե՞ս ասում...

— Բան չկա, ոչ ցավ եմ զգում, ոչ էլ անհանգստություն, — պատասխանեց Ծերումը ժպատով:

Սեթը գրպանից հանեց թաշկինակը, խնամքով կապեց Ծերումի վիրավոր թիկը. Կարոն ցատկեց, բարձրացրեց Ծերունի յափունջին ու գցեց նրա ուսերին.

— Հագիր, վերքդ շմբուի մինչև քաղաք հասնելը...

Ծերունն ընկերների օգնությամբ բարձրացավ ձին ու կարդարեց իր ջոկին ճանապարհ ընկնելու:

Նրանք վերջին անգամ հրաժեշտ տվին թարմ հողաթմբին, դեռևս տեսնում էին կենդանի վասոյի մտածելու խաժ աշքերը, միշտ մի կետի սկզբած, ապա Հակոբի տոկուն հայացքը, որ շեր հեռացնում ընկերների վրայից:

Կարոն գնդացիրը կապեց վասոյի ձիու մեջքին, բարձրացավ իր ձին ու րոնեց վասոյի ձիու սանձը: Նրանք ճանապարհ ընկան, ասջեկից գնում էր Ծերունը, նրա կողքերից Սեթը և Կարոն: Արդուլն էլ իր ձիու կողքից տանում էր Հակոբի ձին:

Դժվար ճանապարհը հետևում թողած, այժմ հարթ դաշտավայրով սլանում էին ութ պարտիզանները:

Վիշտը մոռացած Կարոն սկսեց երգել ուազմաշունչ մի երգ:

Երգը տոգորեց ամենքին: Ամենից բարձր հնչում էր Կարոնի ձայնը:

Նրանք չնկատեցին, թե ինչպես մոտեցել էին քաղաքին, հեռվում նշմարվեց եկեղեցու գմբեթը. որքան մոտենում էին քաղաքին, այնքան անհամբեր էին դառնում, ասպանդակում էին ձիերին՝ հրեղին թափ առած:

Արդեն քաղաքի սկիզբն էր, խաշաձեռղ ճանապարհի եղրին օրորվում էին բարձր բարդիները. Հենց այդտեղ նրանց ականջին հասան հնտերնացիոնալի հնչունները. սրտները թունդ առած երար նայեցին մի նոր աշխուժով:

Վիրավոր հրաժանատարի գեմքին ուրախությունը շողշողաց այնպես, ինչպես հարազատ մորը տեսնելիս ուրախանում է մանուկը. նա արագորեն արձակեց թիկն փաթաթած արնաթաթախ

Յաշկինակը, անցկացրեց հրացանի սվինի ծայրին ու բարձրացրեց վեր իր առողջ ձեռքով:

— Կեցցե՞ ուսուցիան, — աղաղակեց նա ու աչքերից արցունքի կաթիլներ գլորվեցին մայր Հողի վրա, Հաղթության և ուրախության արցունքներ...

Կարոն չէր իմանում, թե ինչպես արտահայտի իր ուրախությունը: Նայեց Ծերունի կողմն ու մեքենայորեն ինքն էլ սրբեց աշքերը շինելի թևով:

Սեթը և մյուս պարտիզաններն ուռա էին կանչում:

Ս Պ Ա Ս Ո Ւ Մ

Մթին ու ամպամած գիշեր էր. քաղաքի վրա կախվել էին երերուն լապտերները:

Օդը խոնավ էր, փշում էր աշնանային ցուրտ քամին, որ ժիր սպասավորի պես բերում էր իր թեթև թերին հեռվից հնչող ուսուցիոն երգի ձայները:

Проверьте прицел,
Заряжайте ружье,
На бой, пролетарий,
За дело свое.

Երգում էին ուսուցիոն զինվորները, նրանց երգին արձագանգելով թնդում էր ողջ բնությունը:

На бой, пролетарий,
За дело свое.

Ու գիշերը դառնում էր պայքարով լի, երգի պես հզոր Այդ միջոցին քարապատ մի շենքի մոտից լսվում էր երգունդհատող քայլերի ձայն:

Շինելի մեջ փաթաթված, գլխարկն իշեցրած մինչև աշքերը, գիշերապահն էր գնում-գալիս՝ հրացանն ամուր սեղմած կրծքին:

Մթության մեջ կարելի էր միայն որոշել նրա բարձր հասակը, հրացանի փողը, խոշոր քիթը, որ միանալով խիտ հոնքերին՝ դեմքը դարձնում էր լարված աղեղնալար:

Նա մերթ խոխուացնում էր կոկորդը, կարծես քարերի շեղչեր էին կուտակվել այնտեղ, որոնցից ուզում էր ազատվել, բայց չեր կարողանում, ապա ոտներն անհանդիստ քսում էր գետնին:

Զէր կարողանում համաշափ ու հանգիստ քայլել, կարծես ուտների տակ սառուց էր գոյացել, վախենում էր սայթաքելուց, կամ թե խանգարում էին նրա քայլերին երդն ու քամին: Իսկ ականջի թմբկաթաղանթին շարունակ թրթում էին ուազմաշումչ երգի ալիքները.

На бой, пролетарий,
За дело свое.

Դա հերոսական բանակի հաղթական երգն էր:

Պահակը երբեմն մեխվում էր տեղում, երկար ստվերը ձգվում էր պատն ի վեր, նա վիճում էր ինքն իր հետ:

Նա իր սեփական աշքերով էր տեսել ունուցիայի՝ ոռու, հայ, ագրբեցանցի, վրացի և ամեն ազգի զինվորներին: Այժմ մեն-մենակ սարսում էր այդ բանակի հզորության երգից: Կարծես մե-կը շիկացած լարերով խփում էր նրա երեսին, նա ուրախ էր, որ ոչ ոք չէր տեսնում իր ծամածովող դեմքը, ապա երբեմն շշն-ջում էր.

— Զէ, չի վերջացել ամեն բան մեզ համար...

Հանկարծ լսեց մոտից անցնող ոտնաձայներ ու խոսակցություն:

Նա զգաստացավ ու նորից սկսեց քայլել:

— Բալշկիկները հաղթեցին...

— Կարմիր աստղը մեր երկրի վրա էլ շողշողաց:

— Երգեցե՛ք, հերոս զինվորներ, այդ երգը մեր ազատության երգն է, — հնչեցին գիշերվա մեջ խրոխտ ձայներ:

Ապա ձայները հեռացան, անցորդներն անհայտացան: Ո՞վեր և ո՞ւր էին գնում այդ ուշ պահին, գիշերապահը շկարողացավ իմանալ: Միայն մի բան հասկացավ, որ այդ մարդիկ ուրախ էին բալշկիկների համար, ուրախ էին սովետների հաղթության համար:

Պահակն սկսեց ստուգել իրեն ոտից մինչև գլուխ: Փոթորկի պահին նա անցել էր հաղթանակած զինվորների կողմն ու ոչ չէր կասկածել: Նա կարողացել էր իրեն պահել կարմիր զինվորին արժանավայել:

Հաղթության պահին, ուրախության արցունքներ էին շողացել աշքերում: Նույնիսկ ցուց էր տվել անձնազոհություն՝ ազա-տելով իր ընկերոջը թշնամու հետապնդումից: Այդ դեպքից հետո

թե՛ շարքային զինվորները և թե՛ հրամանատարը վստահում էին նրան, որպես անձնուրաց զինվորի:

Դեմքի աղեղնալարը թուղացավ, շրթունքները ետ գնացին, մթության մեջ միայն գծվեց մի մեծ բերան: Նա ժպտում էր:

Ահա տեսնում էր դեմք ելած՝ այն հասարակ, բայց քաջարի հրամանատարին, որը քուն չուներ, դադար չուներ, կոխվներում կոփված՝ կոփվ էր զեկավարում:

Եեկ, ծաղկատար երեսով հրամանատարը սիրում էր իր զինվորներին ինչպես գորովագութ հայրն իր զավակներին: Վիրավոր զինվորների վերքերը երբեմն ինքն էր փաթաթում, իսկ կովի մեջ թշնամու գեմ ծառանում էր առյուծի պես:

Զինվորները պատմում էին, թե ինչպես հրամանատարի գընդակը զարմանալի դիպուկ էր, չեր վրիպում նշան բռնած ոչ մի թշնամուց, երբեմն շատ քիչ զինվորներով համարձակ տուած էր գրոհում՝ պաշարելով հակառակորդի դիրքերը: Ահա այդ նույն հրամանատարն էր, որ պատվիրել էր ու վստահել այժմ շրջուղ հերթապահին:

— Լավ պահպանիր զինանոցը, դաշնակ և ամեն տեսակ թըշնամիներ վիստում են այժմ մեր շուրջը, վտանգի ժամանակ կրակի՞ր...

— Լսում եմ, ընկեր հրամանատար, — պատասխանել էր նա, աշքերում ժպիտը հավատարմության վահան դարձրած:

— Լավ պահպանիր, — հանկարծ կրկնեց նա ու մարմնով անցավ ծակծկող սարսուռ:

Ցուրտ քամին էր թափանցում մարմնի մեջ, թե ներքին մի դող էր բռնել, այդ նա չէր կարողանում որոշել: Զորանոցից դեռ լսվում էին ուսուցիչոն երգի հնչունները, իսկ հեռվում շողացող զորանոցի լույսերը երբեմն կայծակների պես շանթահարում էին պահակի սիրտը: Նա ողջ մարմնով թուղացած ուզում էր փախչելուայց շգիտեր ուր:

— Ուշանում են... — շնչաց ու հրացանը ձեռքում դողաց կոկորդի խոխոսոցը սաստկացավ, բայլերն արագացրեց:

Գլխարկը երկամթե կափարիչի պես ճնշում էր գլուխը, զինելը կապկապում էր մարմինը, գուրս նետվելու տեղ չուներ:

• Նա տեսնում էր մերկացրած սվիններ ու սվինների հետեից կոմունարների մի հակա անտառ, որ շարժվում էր դեպի նա:

Քիչ էր մնում ազաղակեր, երբ ուշի եկալը երեսին տեղացող անձրեփ ցուրտ կաթիլներից:

— Նրանք հազար-հազար են, իսկ մենք...—կարծես շշնչացնա վերջին անգամ, որ շրթունքները փակեր ընդմիշտ:

Երգը գաղարեց, քամին սաստկացավ, բարակ անձրեւ էր շաղում:

Քաղաքի լույսերն ավելի երերուն դարձան, ուր որ էր կարծես քամու ուժգին հոսանքից բոլորը պետք է մի ակնթարթում մարեխն ու քաղաքը թաղվեր խալվարի մեջ:

Անձրեից պահակի ուսերը ծանրացել էին, շինելի փեշերը երկարել, նա անհանգիստ շրջում էր ու սպասում:

Հանկարծ մի բան փաթաթվեց նրա ոտներին, անհանգիստ սիրաը դող բռնած՝ ուզեց հանդիմանել:

— Ինչո՞ւ եք ուշա...—գեռ բառը շվերջացրած, տեսավ ոտների արանքում մի ոսկրոտ շուն, որը նույնպես դողում էր, ըստ երևութին ուզում էր պատսպարվել շինելի փեշերի տակ:

Պահակը սաստիկ զայրացած հրացանի կոթով խփեց շանմեջքին, շունը կլանչելով փախավ ու մի քանի քայլ հեռու կանգնած, սկսեց պոշը պտտացնել:

Պահակն ատամները կրճտացնելով հրացանի փողն ուղղեց դեպի դողացող կենդանին:

Շունն ամենեխն չվախեցավ, այլ համառ անփութությամբ պոշը պտտացնելով՝ նայում էր պահակի անհավասարակշիռ շարժումներին:

Պահակը նորից ընդունեց իր նախկին դիրքը, հրացանը կըրծին սեղմելով:

«Սատկած շուն էլ ինձնից չի վախենում», — մտածեց նախնքն իրենից ամաշելով:

Անձրեի կտկոցի մեջ լսվեցին ոտնաձայներ:

Պահակը լսողությունը լարելով, աչքերը լայն բացած գնաց դեպի աջ: Այդ միջոցին կարծես քարապատ շենքը շոնդաց, լսվեցին թնդյուններ, պահակը շփոթված էր:

Պատի տակով, ստվերների պես դադտագողի և անձայն մի քանի մարդիկ անցան:

Պահակն ու անհայտ մարդիկ մոտեցան, ինչ-որ բան շշնչացին, կարծես վաղուց բացատրվել, հասկացել էին իրար, այժմ

շատ քիչ բան էր մնում ասելու: Գիշերվա մեջ վառվող գայլի աշ-
քերով նրանք նայում էին իրար, ապա զինանոցի պատերին:

Գիշերն ավելի էր մթագնել, անձրևը վարարել:

Վարար անձրևի միջից լսվում էին հատ ու կենտ բառեր և
անորոշ շշունջներ:

— Զէ, էս կողմից հարմար է:

— Ես ասում եմ դուան մոտ:

— Թո՛ւ, վախկոտներ,—մըթմըթում էր մի ուրիշը:

Այդ պահին մեկը փաթաթված ու շալի մեջ, գիշերային ուր-
վականի պես մոտենում էր ձախ կողմից: Նա այնպես էր հեռաւ,
որ քիչ էր մնում սիրտը պայթի:

Երբ անհայտ մարդիկ ուղղում էին իրագործել իրենց վճիռը,
պահակը հրացանը ձեռքից վար նետեց ու ինքն էլ միացավ
նրանց: Այդ պահին օդը ճեղքեց կանացի սուր ճիչ:

— Չմոտենաք, իժե՞ր...

Այդ ճշացողը մի կին էր, որ վազեց դեպի զորանոցը:

Կնոջ հետևից մի քանի գնդակ արձակեցին, բայց նա վազում
էր սիրտն ու ոտքերը կրակ դարձած: Նա շղաց, թե ինչպես ձախ
կրունկը ծակեց մի գնդակ ու դուրս եկավ, երբ քիչ հետո աշքերի
դեմ շողշողացին զորանոցի լույսերը:

Հերթապահ զինվորները կանգնեցրին կնոջը:

— Ո՞վ ես և ինչի՞ ես կես գիշերին անձրևի տակ վազում:

Կնոջ ուսերից շալը սահել էր ու փուլել ցեխի մեջ, նրա գու-
նատ գեմքին ցրիվ էին եկել ու մազերը, նա սաստիկ թրչված էր,
ջուրը ծլծլում էր գեմքից ու մազերից: Հուզմունքից չեր կարողա-
նում խոսել, ուսերը ցնցվում էին: Նա հազիվ կարողացավ ասել.

— Փրկեցե՞ք զինանոցը... Թշնամին...—Ու շիմացավ թե ինչ-
պես մի ակնթարթում զորանոցը ոտքի կանգնեց, զինվորները
սլացան:

Երկինքը որոտաց, որոտացին մարդիկ, լսվում էին կրակոց-
ներ...

Կնոջը պառկեցրել էին զորանոցի պահակատեղում, վիրավոր
կրունկը խնամքով փաթաթել էին սպիտակ մառլայով, գլխի տակ
բարձի տեղ փաթաթած շինել դրել:

Ո՞վ էր այդ կինը և ինչի՞ էր դուրս եկել գիշերվա ուշ ժա-
մին, ֆուցե մի բախտախնդիր էր, կամ գուցե նրա հարթած ամու-

աինն էր ծեծելով գուրս զցել տանից, — Հարցնում էին զինվորներն ֆրար ու չէին կարողանում ճիշտ պատասխան դտնել:

Կինը երիտասարդ էր. գուրեկան դիմագերով, սև, նշանակ աշ-քերը խարուցիների պես վասվում էին գումատ դեմքին: Նա լուռ էր և չէր ուզում խանգարեին իր անդորրությունը: Միայն երբեմն անդուս շուրթերը շարժվում էին, շշնչում այնպես, որ դժվար էր որոշել բառերը:

— Մատնիշներ, հրեշներ... ուզում են խլել մեր ազատությունը...

— Մաշա, իմ հարազատ քույրիկ, իմ ու քո ազատությունը... Մեր զինվորը, որ գտնվում էր պահակատեղում, նայում էր այդ տարօրինակ կնոջը և ուսերը շարժում: Կոփներում փորձված, համարձակ զինվորն այժմ չէր համարձակվում խանգարել այդ գնոջն իր հարցերով: Վերջապես համբերությունը հատած, խոսեց.

— Քույրիկ, այս հրացանս վկա, որն իմ անբաժան եղայրն է, ազատությունը քեզ հալալ է, քեզ նման կնկան ասում են իգիթ:

Կինը նայեց, նայեց, ժպտաց, անհուն սեր տածելով դեպի ծեր զինվորը:

Դուրսն անձրե էր, քամի, կրակոցներ, իսկ պահակատեղում պիրավոր կինն էր ու մտքերի մեջ ընկղմված ծեր զինվորը: Կինը մտածում էր, թե ո՞ւր էր ընկել և ինչպես այդ բոլորը կատարվեց—իսկ զինվորը հիշում էր, թե ինչպես այն աշեղ կռվում, որպես հմուտ հետախուզ թափ ընկած ձին քշում էր սարերով:

— Քույրիկ, ուղիղ եմ ասում, որ իսկական զինվորացու ես, ոչ ցեխ, ոչ անձրե հարցրիր, ոչ էլ ասիր, թե կին ես, վագեցիր, իմաց տվիր դավադրությունը, — ընդհատեց լուռթյունը ծեր բանակայինը:

Դուրսն աղմուկը շատացավ, վերագառնում էին, ներս էին մտնում զինվորներն ու շրջապատում կնոջը, նրանք բերում էին իրենց հետ գիշերվա գեպքի աղմուկն ու անձրեկի խոնավությունը:

Թրջված էին շինելները, կոմունարկաները, հրացանները, իսկ իրենք կայտառ էին ու հաղթական, ինչպես միշտ:

— Սրիկան թշնամի դուրս եկավ, — ասում էին մեկը մյուսին:

— Այնպես էլ իր պատիժն ժտացավ, — պատասխանում էր մի ուրիշը:

Կինը հայացքը սեեռել էր դեպի զինվորները և ուզում էր կլանել նրանց բոլոր խոսքերը, բոլոր մտքերը:

— Թշնամի Դավիթը բալշեիկ ձևանալով, ուզում էր պայթեցնել...—ներս մտնելով ասաց շեկ, ծաղկատար երեսով հրամանատարը: Նա վրովված՝ մի քանի անգամ արագ գնաց-եկավագալաքար:

— Քաղաքացիական կոիվներում թշնամու յոթ գնդակ է ծակել մարմինս, բայց այս գնդակն ամենից թունավորն էր լինելու, նրա համար, որ ևս հավատում էի...

— Մատնիչը մեր հաղթությամբ ուրախանում, լաց էր լինում, երբեք չէի կասկածութ, որ կարող էր թշնամի լինել: Եթի մի դաս մեզ համար, թշնամոն ճանաչիր որպես թշնամի, մի հավատա ոչ ծիծաղին, ոչ էլ լացին: Ապա մի փոքր դադար առնելով տարակուսած ավելացրեց:

— Հրացան չէ, որ կրակես, փորձես, ձեռի նոնակ չէ, որ զորությունն իմանաս, գեմդ կանգնած բաց թշնամի չէ, որ շափ վես, այլ նենդ, խարող, ներս սողոսկած իժ է: Մատնիչ, հոգին խորն էր պահել... պետք է կարենալ ուղղուցիոն սվինով սիրտը ծակել...

Կինը շանթվածի պես գլուխը բարձրացրած հրամանատարի խոսքերին էր հետեւում, երբ մի խոր հառաջ բաշելով, նորից գլուխը ցած դրեց: Կարծես գլխում թնդանոթ պայթեց, կարծես ոտները, ձեռքերը կծկվում էին ու փոթորկահույզ աշքերը չէր հեռացնում հրամանատարի երեսից:

— Քուրիկ, վերդ է նեղացնում,—հարցնում էին զինվորները, երբ կինը ցնցվում էր:

Ոչ ոք շիմացավ, որ վերքից էլ ծանր մի ուրիշ վերք էր բաց-վել նրա սրտում:

— Պատիվ, հարգանք կին զինվորին, որ մեր շարքերից դուրս, բայց մեզ հետ եկավ, հայտնից վտանգի մասին,—ասաց հրամանատարը մեղմ ու հանդարտ նայելով կնոջ կողմը:

— Քանի որ ամեն տեղ ձեզ նման զինվորներ կան, ոչ ոք չի կարող խլել մեր ուղղուցիան մեր ձեռքից, ապա դեմքը պայծառացավ, կարծես արև ծագեց աշքերում, ոգերքված շարունակեց:

— Մենք՝ կարմիր աստղավորներս անպարտելի ենք, քանի որ մեզ զեկավարում են կենինը—Ստալինը:

Կինն ագահ աշքերով նայում էր հրամանատարի շուրթերին, կարծես չէր ուզում, որ երբեք այդ շուրթերը փակվեին: Ո՞րքան նման էր նա իր ծանոթ ուսւ զինվորականին՝ Ֆյոդորին, աշքերը նրա աշքերի պես կապույտ էին, երեսը շեկ ու ծիծաղկոտ:

Իսկ Մաշան՝ իր ուսւ ընկերուհին ինչ կասեր, որ իմանար այդ դեպքի մասին,—մտածում էր կինը:

Հրամանատարը հրաժեշտ տվեց կնոջը, սեղմեց նրա ձեռքը և պատվիրեց կողքի զինվորներին, խնամքով տանել նրան իր տունը:

Մի ուսւ զինվոր ներս ընկավ, երգելով.

Эх, Дунька, Дунька...

Дунька, милочка моя...

— Ճամփա՛, տովարիշչւ, — ասաց մի հայ զինվոր և առաջ գնաց: Նա բերել էր հրացանի սվինին գցած այն շալը, որ վազելու ժամանակ ընկել էր կնոջ ուսերից, թրջվել, տրորվել ցեխի մեջ: Նա շալը կամացուկ գրեց կնոջ կողքին.

— Սա քոնը կլինի, քուրիկ, — ասաց զինվորը ակնապիշտ նայելով կնոջ երեսին: Կինը ոչինչ շասաց, միայն թարթիչներն էր անընդհատ թարթում, կարծես կոպերը հրդեհվում էին: Ներս ընկավ մի ուրիշ զինվոր հաղթանդամ կազմվածքով, արիություն ներշնչող գեմքով, կանգնեց մի պահ լուս, ապա հանկարծ հիշելով, բացականչեց.

— Լավ դաս տվինք թշնամուն, չեն խրատվում, ուզում էին զինանոցը պայթեցնել, բայց սխալվեցին իրենց հաշիվների մեջ. — Նա շոյեց հրացանի փողը, մոտեցրեց շրթունքներին, համժուրեց, ավելացնելով, — այ մեր անբաժան ընկերը: Տեղը եկած ժամանակ չի դավաճանում մեզ. պժտում է ու դիպում հենց թթշնամու ճակատին: Կրակիր, կրակոցիդ մատաղ, ոու մեզ շատ պետք կգաս դեռ: Վերջացրեց նա իր խոսքը, հրացանը ոտների արանքում սեղմելով:

— Լավ, հերիք է ոգեսրվես, կամաց, այստեղ կին կա, այն էլ միրավոր... — Հանդիմանեց ծեր զինվորը, ձեռքը գնելով նրա ուսին:

— Այս, շատ ներողություն, — ասաց ոգևորված զինվորը և
հայ քաշվեց:

Վիրավոր կինը մեծ հետաքրքրություն էր առաջացրել զին-
վորների մեջ ուզում էին իմանալ, թե ո՞վ է նա, որ քաջ զինվորի
պես սիրտն ամրապնդած չէր վախեցել ոչ մութ գիշերից, ոչ կրա-
կոցներից:

Հումանում էր: Նա ուժերը հավաքեց, նստեց և խնդրեց իրեն
տուն տանել:

— Քույրիկ, գլուխդ կմրսի, — ասաց ծեր զինվորը և իր կո-
մունարկան հագցրեց կնոջ գլխին. մի ուրիշն էլ իր շինելը գցեց
նրա ուսերին: Երբ կինը դուրս էր գալիս զորանոցից, շեմքում
խմբված զինվորներն աղաղակեցին նրա հետևից.

— Դու ուսուցիայի զինվոր գրվեցիր, մենք քեզ կհիշենք...
Առաջին անգամ կինն զգաց իր ուժը, որի համար հպարտ
էր, բայց միևնույն ժամանակ մորմոքված, — Դավիթ անունը գըն-
դակի պես ծակել էր նրա սիրտը:

Խաղաղ էին փողոցները, տները, մարդիկ գեռ քնած էին:
Գիշերվա անձրես դադարել էր, բայց քաղաքը խոնավ էր, փողոց-
ները ցեխ:

Այդ առավոտ քաղաքում ոչ ոք չիմացավ, որ շինել հագած,
կոմունարկան ծածկած այն վիրավորը կին էր...

Այդ պատահեց 1920 թվի աշնանը ուսուցիայի առաջին օրե-
րին:



Այն օրից ի վեր երկրի վրայով պայծառ գարուններ անցան,
սովետական գարուններ:

Փոխվեց ողջ Հայաստանի պատկերը: Փոխվեց, անճանաչելի
դարձավ այն քաղաքը, ուր սկսվեց այն կնոջ պատմությունը:

Այժմ քաղաքի վրա աղոտ ճրագների փոխարեն կախվել են
Էլեկտրական շողշողուն լույսեր:

Ցածրահարկ, քանդված տների փոխարեն այժմ ամեն տեղ
բարձրանում են տուֆաշար բաղմահարկ շենքեր: Ասֆալտած փո-
ղոցներով տրամվայն է ոլանում զնդոցով:

Երջանիկ է ապրում ժողովուրդը:

Հայրերն ու մայրերը լծված են սոցիալիստական շինարարությանը, իսկ նրանց երեխաներն ուրախ ու կայտառ վազում են դպրոց, մանկապարտեզ:

Զարաձմի քամին՝ փողոցների գիշերային այցելուն՝ խելակորուց պարողի պես, ծառերի կատարներից իջնում էր մինչև մայթերը, ապա մայթերից թափով թռչում էր շենքերի տանիքներն ու այդպես անընդհատ իր գիշերային, պարն էր բոլորում:

Ահա այն փողոցը, ուր մի ժամանակ քանդված տներ էին, ուղարերի պես չորած փոշեպատ քարակուլտեր, այժմ նրանց փոխարեն ասֆալտած փողոցն է ձգվում որի ափերին բարձրանում են նորակառուց շենքերը՝ կյանքով լի, լուսով ողողված:

Այդ շենքերից մեկի երկրորդ հարկում արտասովոր հուզմունքով մի սիրոտ էր զարկում: Նրան թվում էր, որ իր սրախ զարկերը հասնում էին աշխարհի բոլոր ծայրերը:

Այդ բնակարանում վառվում էին բոլոր լույսերը. նա անհանգիստ գնում էր գալիս:

Նա քառասունհինգ տարեկան, նիշաը մարմնով, տանջված դեմքով, բայց գուրեկան կին էր: Նրա դիմագծերը ծանոթ էին, աշքերի մոտ գոյացել էին կնճիռներ, բայց աշքերի արտահայտությունը չէր փոխվել:

Համեստ կահավորված երկու սենյակը խնամքով հավաքվ. ծէր, բոլոր իրերն իրենց տեղումն էին ու կարմիր հատակը փայտեցրած էր հայելու պես:

Կնոջ անհանգիստ հայացքը միշտ դռան կողմն էր, երբեմն արագորեն բացում էր պատուհանի փեղկը, նայում փողոց և էլի փակում:

Նա այդ օրն ավելի քան աշխուժ էր: Տուն էր եկել գործարանից, շուրջը մաքրել, հավաքել, բայց էլի ժամանակը շատ էր երկարում:

Նա քայլելուց հոգնեց, կանգնեց սենյակի մեջտեղում, հետո մոտեցավ մահճակալին, նայեց պատին փակցրած երիտասարդի նկարին ու ժպտաց: Դա որդու նկարն է:

Այդ առավոտ տղան աշքերը բացել էր արտասովոր ուրախությամբ և որդիական ջերմ սիրով մորը խնդրել, որ սպասի իր վերադարձին:

Մայրն սպասում էր իր տղային և շռնդալից, վարաբ մի լուսաբացի, ուր հազար-հազար սրտեր պիտի կյանքով լի բարախիին։ Աշխարհն էր սպասում։

Կինը հիշեց մի այլ սպասում, որ նման չէր այդ օրվան։ Այն ժամանակ կյանքն ուրիշ էր. Վալողը կրծքի երեխա էր, ինքն էլ շահել, անփորձ։

Հիշողությունների քշքշան առուն գաբճավ հորդուն գետ ու խշշաց գլխում։ Նա ձգվեց համարձակ, գոմքը խոժոռեց, կարծես պատրաստվում էր հարձակվել մեկի վրա, որ մի ժամանակ մթագնել էր նրա հոգին։

Այդ ժամանակ զուտն ուժգնորեն բացվեց, շեմքում կանգնեց մի բարձրահասակ, թիազեմ երիտասարդ։

Ինչպես արևից երկինքը պարզվում է, այնպես մոր դեմքը շանկարծ պարզվեց ու ժամաց տղայի գեմ։

— Մայրիկ, ի՞նչ է, քնից նո՞ր ես վեր կացել, աչքերդ տրութում ես,—ասաց տղան, թափահարելով մոր ուսերը։

— Չէ, վալոդ ջան, իսկի քունս տարել է, որ աշքերս տրութեմ,—պատասխաննեց մայրն ամոթիսած աղջկա պես գլուխը կրծքին խոնարհելով։

— Ուրախնացի՛ր, ասավոաը զնում ենք մայր ու որդի հավասար իրավունքով ընտրելու, —շարունակեց տղան, զնալով դեպի սենյակի մեջտեղը, մորն ուժիկ բազուկների մեջ առած։

Մայրը լուռ լսում էր տղայի շեշտված, հատու խոսքերը։ Ներքին շերմությունից տղան նեղվում էր, պիշակն ու գլխարկը հանեց, մի կողմ նետեց ու նստեց։

— Ծնտրելու անձնվեր, ճշմարիտ մարդկանց, որոնց խոսքն ու գործը մեկ պետք է լինի, —շարունակեց տղան։

— Անձնվեր, ճշմարիտ մարդկանց, —կրկնեց մայրը խոր հառաշելով։

— Մայրիկ, քեզ ի՞նչ է պատահել, մի տեսակ պղառը ես. Հինի թե գործարանում քեզ նեղացրել են, կամ թե ինձանից ես դժգո՞՛, որ ուշացել եմ։

— Չէ, որդիս, ոչ մեկն է, ոչ էլ մյուսը, մորդ սիրուը այդքան նեղ չէ, որ չնշին բաներից վշտանա...»

Տղան այլևս հարցապնդումը շարունակեց, այլ ասաց՝ ձեռքերը շփելով։

— Իսկ ես, տես պ'նց եմ ուրախացնելու քեզ:

Մայրը փորձված ուսուցչութու պես նստեց տղայի կողքին, Վարձես քննություն էր պահանջում իր աշակերտից:

— Արտադրական ամիսը պատվով ավարտեցինք, — սկսեց առղան աշխուժ տոնով: — Մեր ձուլող ցեխը 250 տոկոսից անցավ: Արտադրությունը մեր ձեռքումն է, մեղանից է ուժ ուղղում, մենք այդ ուժը տվինք: Այսօր ինձ շատ գովեցին մեր գործարանի բան-վրական թոռուցիկ միտինգում նրա համար, որ ես մեր երկրի մեծ ընտրության օրը գիմալորում եմ ոեկորդային նորմաներով: Մեկ էլ շուր գամ, տեսնեմ, բոլոր բանվորներն ինձ են նայում: Դեռ սկզբում շփոթված էի, խոսքերը չեի լսում, հետո զգաստացա: Ասում էին Վալոդն ստախանովական է, երկրին տվեց այս-քան արտադրություն... Ասում էին, Հնարագետ, կարգապահ կոմե-րիտական է: Մտածում էի, ինչ կլինի այդքան լավ խոսքեր շառեն, այնքան դժվար է, երբ երեսիդ գովում են քեզ, ամոթից գլուխ չեի բարձրացնում: Եա որ թեժ կրակից չեի քրտնում, գովասանք-ներից քրտնել էի: Ճիշտ չե՞մ ասում, մայրիկ, — Հարցը նա, պատասխանի շապասելով, — ոչ մի Հնարագիտություն չեմ արել, միայն աշխատել եմ և աշխատել:

Տղան խոսում էր արագ, շնչառպառ լինելով, կարծես հազար-Հազար աշքեր նրան էին հետեւում և շտապեցնում:

Տղայի խոսելու միջոցին մայրը մերթ նրա բլուզի օձիքն էր ուղղում, մերթ թեքերը, չգիտեր ինչպես արտահայտեր մայրական Հոգատարությունն ու սերը:

Տղան տեղից վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում:

— Մայրիկ, մաքումս գրի աշխատել Ստախանովի պես: Միշտ աշքիս առաջ էր նա ու չեր Հեռանում շախտյորական շորերով ու գրւ-խարկով այն հերոս մարդը՝ աշքերում միշտ կրակ, մուրճը թափով ձեռքին բռնած: Արիս վկա, ասում էի, առյուծների հետ սա կշափ-պի, ես էլ չփորձե՞մ... ուժ էր գալիս վրաս, ուժ, ինքս էլ չգիտեի որտեղից: Արտադրական Հին նորմաները ինձ չեին գոհացնում, շափվել էի ուզում հերոսների հետ:

Մայր ու որդի նստեցին սեղանի մոտ: Տղան դեռ պատմուժ էր, իսկ մայրը գլխի շարժումներով համաձայնում էր նրա հետ ու մտածում: «Կա՝ աշխարհում մի մայր, որ շուրախանա իր որ-դու ուրախությամբ»:

Նրանք լուռ խմում էին թեյը, նայում իրար երեսի, հրճվում բաժակները դպտարկեցին, մայրը նորից բաժակները լցրեց ու դրեց սեղանի վրա:

Պատի ժամացուցը զարկեց երկու անգամ. գիշերվա երկուսն էր: Տղան նայեց ժամացուցին, հետո մորը:

— Մայրիկ, դու ինչո՞ւ լուռ ես:

— Վալոդ ջան, ինչո՞ւ ես շտապում, հերթը կգա ինձ, ես եւ կխոսեմ, մեկ է մինչև առավոտվա հինգը նստելու ենք, ամենից առաջ մենք ենք գնալու, — ասաց մայրը:

Տղան հոգնած, թիկնեց թախտի բարձերին ու սպասում էր:

Մայրը մի քանի րոպե լուռ, մատները պտտեցնում էր սեղանի վրա, խոսքի սկիզբն էր որոնում, ոտքը ոտքին զցեց, աչ ձեռքը հինեց ականջի տակ ու սկսեց.

— Արդեն հասուն տղա ես, իրավունքի տեր, ինքոդ էլ ստախանովական բանվոր, գիտես աշխարհի լավն ու վատը իրարից ջոկել: Հիմի էլ լսիր մորդ:

Նա իր խոսքն ընդհատեց, նայեց տղային, կարծես ստուգում էր որդու պատրաստակամությունը, ապա շարունակեց դանդաղ.

— Ամեն ժամանակ կյանքը մեկ չի լինում, այն ժամանակ կյանքն ուրիշ էր, ուրիշ մարդիկ էին, հիմա նոր կյանք է ու նոր մարդիկ:

Ես լսեցի քո պատմությունը, գե այժմ էլ լսիր մորդ պատմությունը, որ մեկ պղտոր պիտի հոսի, մեկ էլ զուլալ քչըշա...

Հոսս տանը ճնշված ապրեցի: Մայրս ծիծաղկոտ կին էր, անուշ ձայն ուներ: Հայրս նրա հակառակն էր, սևակնած մի ամպի պես կախվել էր մեր տան վրա: Նա պապենական մի տեսակետ ուներ հին, միշտ կրկնում էր, — «կնկանը երես շպիտի տալ, երես որ տվիր, աստառ կուզի, տղամարդը պետք է գոռա, հայնոյի ու բռունցքը միշտ կնկա գլխին պատրաստ պահի, որ կինը հասկանա տղամարդի ուժը»: Այդպես էլ վարվում էր: Հայրս արշեստավոր էր, ձեռքից ամեն ինչ գալիս էր, թե՛ երկաթիշե՛ փայտի գործ: Ապրում էինք գյուղում, հորս գործն էլ վատ չէր գնում, բայց որ տուն էր գալիս, ձայնը գցում էր գլուխն ու դռն:

պրծար: Վայ էր թե մի քիչ ուշ հասնեինք հրամանին, մռնշում էր կատաղած, վախեցած պատերովն էինք դիպլում բոլորս:

Ես էլ փոքր աղջիկ էի, տան կոփվները տեսնում էի ու պատերի տակ կուշ գալիս: Մորս շատ էի սիրում, ինձ վրա չէր բարկանում, խաղս չէր խանգարում, չէր ծեծում, շուտ-շուտ գլուխս սեղմում էր կրծքին ու արևի պես տաքացնում:

Հորս չէի սիրում, անսիրտ կերպով մազերս քաշում էր, գլխիւրամփում:

Բայց իմացիր, մայրս խեղճ չէր, կամքով ուժեղ էր, չէր հպատակվում հորս, հասակով մեկ կանգնում էր տան մեջտեղում ձեռքերը կողքերին կանթում, սիրուն երեսը պղտորած, հոնքերը վեր թառում ու հորս վրա բղավում,—«այ սարի արջ, այ շար քոթուկ, ես քո ծառան շեմ դառնա, մտքիցդ հանի...»: Հայրս մռնշալով վերցնում էր ձեռքն ընկած իրը, որ շպրտի մորս գլխին, բայց մայրս եղնիկի պես ճարպիկ, դուրս էր թռչում դռնից ու օրերով տուն չէր գալիս:

Ես չէի իմանում, հայրս էլ չէր իմանում մորս տեղը, մենակ հարևանների հարսներն էին պատերի տակ քշիչում ծածուկ:

Մի օր էլ մայրս ինձ գրկեց, լաց եղավ, գոգս կանֆետ լցրեց ու ասաց. «Հուսիկ ջան, ինձանից քեզ խրատ, որ մեծանաս տղամարդի առաջ վիզդ շծուս»: Լաց էր լինում, երեսս համբուրում չէր ուզում պոկվել, ոնց որ ձեռքիցն ինձ խլում էին:

Ես կանֆետ էի ծծում, բան չէի հասկանում: Այդ օրվանից մորս անուշ երեսն ալես շտեսա: Գյուղում լուր տարածվեց, որ մայրս գնացել էր Ռուսաստան իր սիրած դարբին Ավոյի հետ: Հայրս ավելի գազազեց, մորս վրեմն ինձանից էր հանում: Նրան դադարցյուն արեց ու դիմեց իմ ջանին, կաշիս ու ոսկորս թողեց:

Մի օր շատ որ հոգուս հասավ, լեզու դարձրի, ասացի կփախշեմ, հեռու տեղ կերթամ, քեզ մոտ շեմ ապրի... Հետեկիցս հասավ, մազերիցս բռնեց, տուր թե կտաս: Վայ, մայրիկ ջան, կանչելով՝ այնքան բղավեցի, որ հարևանները եկան ձեռքիցը խլեցին, թե չեսպանում էր ինձ:

Հետո էլ խորթ մոր ձեռքում մաշվեցի. նա էլ ջոկ էր գլխիւրամփում, մորս արարքները երեսովս տալիս:—Այստեղ մայրը

դադար առավ, ապա խորը հառաշելով ավելացրեց.—այդպիս էր իմ կյանքը հորս տանը:

Ժամանակն էր վատ, մենակ ես չէի, ինձ նման շատ աղջիկ-ներ կային տանջված, ոչ խոսք էր հասնում մեզ, ոչ իրավունք, ո՞վ մեզ ձեռք կտար այդ ժամանակ, մեր գարդին կհասներ:

Գյուղում կյանքը վատացավ, հայրս տեղափոխվեց քաղաք: Այդ ժամանակ ունուցիան էր սկսվել:

Ապրելը դժվար էր, խորթ մայրս չէր հաշտվում ինձ հետ, հայրս ուզեց ազատվել ինձանից: Ամուսնացրեց ինձ իր ուզած մարդի հետ, ասում էր պաշտոնով տղա է:

Մտածեցի, որ հորս տանը ճնշված ապրեցի, մի գուցե մարդիս տանը լավ ապրեմ: Այդ հույսով էլ համաձայնեցի:

Մի անգամ տեսնվացինք իրար հետ ու խոսք տվինք: Հայրդ բարձր բոյ ուներ, տեսքով լավ տղամարդ էր, բայց ի՞նչ իմանայի սրտում ի՞նչ կար: Շատ էի ջանել, տեսքով մորս նման էի, մորս պես սիրում էի երգել, ծիծաղել, հարկանների մոտ գնալ-գալ, սրտաբաց խոսել: Հայրդ գլուխը կախ, քշախոս մարդ էր, դժվար էր նրան իմանալ: Սիրտս լավ խոսքի կարոտ մնաց, այդ լավ խոսքը մարդիս տանն էլ լսեցի: Մի քանի տարի էդ մարդու հետ ապրեցի, ոչ դրա սերն իմացա, ոչ բնավորությունը:

— Ի՞նչ աշխատանք էր տանում հայրս,—տղան ընդհատեց մոր խոսքը:

— Որ դեռ նոր էի ամուսնացել, նա դատական քննիչ էր, հետո կոիվ տարան, զինվոր գարձավ: Շատ ժամանակ երեսը շտեսա, մի օր էլ վերադարձավ շենք ու շնորքը փոխած. բալշեիկ եմ դարձել, ասաց:

— Բա ինչի՞ հորս չես հավանում, —աշխուժ բացականչեց տղան:

Մայրը դժկամեց, կարծես չէր ուզում, որ տղան ուրախանար, շրթունքները շղաձգորեն կրծում էր:

— Ի՞մ ուրախությանն էլ չափ սահման չկար, —շարունակեց մայրը զսպված տոնով: —Մտածում էի՝ բալշեիկ անունով եկավ, չիմի մարդատեղ կդնի ինձ, մի օր մի քաղցր խոսք կասի, աշքա լույս կգա:

Բայց այդպես չեղավ. իմ միտքն ուրիշը լուսավորեց, իմ ուրախությունն ուրիշ տեղ սկսվեց:

Ռեզուլցիայի օրերին մեզ մոտ նոր հարևան եկավ, մեր տան մեջ բնակվեց, մի ոռւս կին Մաշա անունով, մարդն էլ զինվորական: Այդ ոռւս կինը ճիվանդացավ, պահող չուներ, մարդը օրերով, շաբաթներով տուն չէր գալիս զինվորական գործից:

Ես որ հարևանություն սիրում եմ, այս հարևանիս անտեր շթուփի, քրոջից, մորից էլ լավ պահեցի, լավացրի: Մաշայի կողքից չէի հեռանում, ճակատին սառը քաթան էի քցում, քրտնած ջուրերն էի փոխում, լվանում: Այս կինը լավացավ ու չէր իմանում իմ լավության տակից ո՞նց դուրս գար, մարդը եկավ շատ շնորհակալ եղավ, այդքանն էլ ինձ հերիք էր: Այդպես, այդ ոռւս տան հետ սիրտս կպավ ու պոկ չեկավ: Մաշան ու նրա ամուսին Ֆյոդորը շատ բան տվին իմ սրտին, իմ մտքին, դրանք երկուսն էլ կրակ կտրած բալշեիկներ էին, համ գործերն էր պարզ, համ սրտերն էլ լայն ու բարի: Մեկը մյուսից լավն էր՝ թե՛ մարդը, թե՛ կինը: Նրանք ինձ քրոջից շատ էին սիրում, չէին թողնում հոնքս կիտեմ, կամ ներսրտեմ, մի էն տեսակ խոսք, կամ խրատ էին ասում, որ ուզեիր, շուշեիր սիրտդ բացգում էր:

Իմ տունն ինձ համար նեղ էր դարձել: Մաշայինց տունն էր իմ ուրախության օջախը: Մարդկանց երեսին ծիծաղ տեսա, լավ խոսք լսեցի ու շատ բան սովորեցի:

Մաշան իմ տարիքի շահել կին էր, սպիտակ լուս երեսով, աշքերը երկնքի գուցն, քիթը ոսի, մազերը շեկ, խոսում էր, ծիծաղ դում սրտանց. ասում էր. այս ամառն ահա երես, խմորն այս ամառն ահա երես, ամառն ահա երես, ամառն ահա երես, ամառն ահա երես:

Որ երգում էր, ես էլ էի երգել ուզում, մի խոսքով, արևի շողք էր ընկել իմ տան շեմքին»:

Պատի ժամացույցը դարկեց երեք անգամ: Ժամանակ դեռ կար, փողոցը լուս էր, քամին դադարել էր, իսկ սենյակում նըստած էին մայր ու որդի հուշերով ալեկոծ:

Մայրը վախենում էր, որ տղային քունը հազմեր, հարցըց հանկարծ.

— Որդիս, քնիլ չե՞ս ուզում: — Տղան գլուխը շարժեց բացաւսաբար.

— Ի՞նչ քնելու ժամանակ է, պատմի՛ր:

Մայրը շարունակեց աշխուժացած:

— Մաշայի սիրտը աշխարհ էր: Նա ինձ կուսիկ չէր ասում, կույայ էր կանչում: Դուքս էր գալիս շեմքը, ձեռքը դնում բերանին ու կանչում. կո՞ւյա...

Ես էլ սովոր եղնիկի պես դուրս էի գալիս մեր տանից ու նրանց գոնովը դիմում:

Մաշան ծիծաղից թուզանում էր, երբ որ ոռուերեն էի կոտրատում:

Մաշան ասում էր Յոլշևիկ խօօշ, ես պատասխանում էի: — խօօշ, да, ուշեած խօօշ.

Տանը մենակ էինք մնում իրիկները, ես ու նա նստում էինք իրար կողքի, Մաշան պատմում էր Ռուսաստանի քաղաքացիական կոփներից, թե ո՞նց էին կովել կարմիրները սպիտակների դեմ:

Ես հասկանում էի նրա լեզուն. մի նոր աշխարհ էր բացվում աշքերիս առաջ, որ ոչ տեսած էի, ոչ լսած:

Մաշայի հորը, շքավոր գյուղացի նիկիտենկոյին կովում սպանել էին սպիտակները, մայրը մեռել էր սովոր, մնացել էր Մաշան բոլորովին որբ:

Հարեւանի տղա Ֆյոդորը քաղաքում բանվոր է լինում, հետո կոփվ է գնում սպիտակների դեմ, էն թունդ կոփների ժամանակ ինչպես է լինում, մի օրով ընկնում է իրենց գյուղը հորն ու մորը տեսնելու: Այդտեղ էլ Ֆյոդորը Մաշային է հանդիպում, նա հասած աղջիկ է լինում արդեն, տղան հավանում է աղջկան, ու հետև առած ֆրոնտ տանում:

Հարցնում էի: — Մաշա ջան, դու կովել գիտե՞ս, — պատասխանում էր: — կովել գիտեմ, տղամարդ զինվորի պես:

Ասում էր Ֆյոդորին սիրել է կովի կրակոցների մեջ: Ասում էի: Մաշա ջան, բահե բօյալած, պատասխանում էր, նետ, սավսեմ:

Նա զինվորների համար կաշա էր եփել, իսկ Ֆյոդորն ու իր ընկերները կովել էին քաջարար: Տեղը եկած ժամանակ կրակել է խրամատներից, ձի նստել, նամակ հասցրել կարմիրների մյուս թիկունքը:

Եղ որ պատմում էր, մտածում էի, սա կի՞ն է, թե՞ հերոս մի-
առամարդ:

Մեկ էլ տեսնում էի Մաշան իր երկնագույն աշքերով նայում
է ինձ ու ծիծաղելով ասում.— Լիօսա ты харошая, но...

Այդ «մոն» սիրոս ծակում էր, գիտեի, որ իմ մեջ մի մեծ
բան էր պակասում...

Մատս թափ էի տալիս, ասում էի՝ Մաշա, մի ասի նո, հետո
խնդրում էի, որ պատմեր կովի մասին:

Կարծես ֆրոնտում լիներ Մաշան, գնդացրի պես վրա էր
տալիս, չէի կարողանում մտքին հասնել, թեիցը քաշում էի, ասում
էի: Տիխօ, ու, տօրօն, չեմ հասկանում:

Նա գանդաղում էր, քիչ հետո էլի վարարում:

Մտքով թոշում էինք կովի վայրերը, առյուծ կտրած կարմիր
զորքերի մոտ, շնչակտուր էինք լինում, կասես քամին էր երես-
ներս ծեծում, թնդանոթները թնդում ծուխն ու փոշին աշքներս կա-
պում, աշքս չէի ուզում ճպել, որ մերոնց հետքը չկորցնեմ:

Մաշան պատմում էր, որ Ֆյոդորն անվախ կովող էր, իսկա-
կան բաշեիկ, ոչ կրակից էր վախենում, ոչ գնդակից: Թեժ կովի մեջ
երեք գնդակ էր մտել մարմնի մեջ, բայց չէր խեղճացել, ճօլօյ
էր բղավել ու ձին առաջ քշել...

Չէի գիմանում պատմության ուժին, լաց էի լինում, քիչ էր
մնում սիրոս դուրս թոշեր:

Իսկ Մաշան պատմելու ժամանակ, երբեմն երգում էր կար-
միրների ուզմի երգը: Այն օրվանից երգը մնաց ականջիս մեջ:

Տղան առաջ էր նետվել և ակնապիշ նայում էր մորը, որի
աշքերում ասես տեսնում էր կենդանի Մաշայի պատկերը, լսում
էր Մաշայի զիլ երգն ու սարերը սլացող արծվիկների թերի
թափը:

Ֆյոդորն էր անցնում աշքերի առաջից հսկայի պես, ապա ուկո-
լուցիայի զորքերը կարմիր դրոշները պարզած արշավում էին գե-
պի քաղաքները:

— Վալոդ ջան, ես մեկ ասեմ, որ հարյուր հասկացիր, թե
ինչ տեսակ էր Մաշան,— հնչեց մոր ձայնը նորից:

Ֆյոդորը տուն էր մտնում թե չէ, Մաշան քամու պես թեթև
պաթաթվում էր նրա վզովը: Ֆյոդորը կարճահասակ, շեկ երեսով,

աշքերը բարի զինվորական էր: Նա շոյում էր Մաշայի շեկ մագերը, ևս իմ մտքում նախանձում էի այդ երկուսի սիրուն:

Համեմատում էի իմ ամուսնական կյանքի հետ, կոկորդախեղվում էր: միտս է այսօրվա պես, հայրդ տուն մտավ, շինել հագած, կարմիր աստղավոր կոմունարկան գլխին, ասես աշխարհը տվին ինձ, վրա վաղեցի, որ փաթթաթվեմ, կրծքիս ուժով հրեցու ասաց՝ ժամանակ ես գտել սիրաբանելու:

Թէ որ զլուխ զնեի մի մեծ կոփի զուրս կգար: Սրտիս մեջ միրան ընկավ զրնդալով, փշրվեց ու աշքերս թաց, կախվեցի օրորոշիդ վրա շշնչալով.

«Հայրդ Շոդի շունի...»

Մայրը տիսավ, որ տղան տիրեց, խոսքի ընթացքը փոխեց:

Մաշան երեխա չուներ, շատ էր մտածում, էլ ո՞նց ասեմ թե ինչքան էին մարդ ու կին երեխա սիրում: Մաշայի, Ֆյոդորի ձեռների վրա գումեծացար: Քո անունը Վիգեն էր, Մաշան ու Ֆյոդորը քեզ կանչեցին կենինի անունով՝ Վալոդ, այդպես էլ անունդ մնաց:

Ասում էին Յոլոյա բարեկանութեան Վոլոճակ:

Տղան հրճվանքով ուզեց մորը զրկել, բայց մտածեց շխանգարել պատմությունը, որ չեր ուզում երբեք վերջանար:

Ինչքան մարդս վատ էր վարվում ինձ հետ, այնքան շատ էր կապվում Մաշայի ու Ֆյոդորի հետ: Իմ կյանքի զուռն այնտեղ էր: Մաշայի պատմածները խոր էին գրվում սրտիս մեջ, տեսնում էի, որ փոխվում էին մտքերս...

Ասում էի, Մաշա ջան, ուրիշ իշխանություն չեմ ուզում, կենինի—Ստալինի Սովետներն եմ ուզում: Մաշան շատ էր ուրախանում, երբ տիսնում էր իր ցանած սերմերն անպառը չեն մնում:

Առանց Մաշայի բան չի ուտում, Մաշան էլ առանց ինձ չեր մնում: Հենց որ տուն էր գալիս գործից (նա գնդումն էր աշխատում), մեկ էլ տեսնում էի բղավեց՝ Լիօսյ:

Պատասխանում էի. Մաша, որից

— Ըկորей,—պատասխանում էր այնտեղից:

Մաշայի լեզուն լավ հասկանում էի, մենակ խոսել էի դժվարանում: Նա ինձանից հայերեն էր սովորում, ևս էլ նրանից ուսերեն էի սովորում: Այժմ ինչքան ուռաերեն գիտեմ, պարտական էմ Մաշային: Մենակ ես չի, որ սիրում էի Մաշային, նրան սի-

րում էին մեր թաղի հարսներն ու աղջիկները: Նա գիտեր վարվել գիտեր գրավել իր պատմություններով: Նա պարզսիրտ էր ու մարդասիր: Մաշայի դուռը բաց էր բոլորին համար, ով տանից նեղանում էր, նրա մոտ էր վազում: Իրիկնապահերին, երբ Մաշան տանն էր լինում, հավաքվում էին աղջիկները, որը ձեռագործն էր բերում, որը կարն ու կարկատանը:

Մաշան նստում էր կենտրոնում, ևս էլ քեզ գրկած նստում էի Մաշայի կողքին ու սկսվում էր կարմիր աստղի պատմությունները: Մաշայի տունը դարձել էր խսկական ակումբ, ուսումնարան, ով հասկանում էր Հո լավ, ով չէր հասկանում, ևս նորից բացատրում էի Հայերեն:

Ինքս էլ շիմացա, թե ոնց դարձա Մաշայի օգնական ագիտատորը: Մաշան դեռ սկզբում կոտրատված հայերենով կատակներ էր անում, աղջիկների երկար մազերից քաշքցում, ծիծաղեցնում, հետո սկսում բարակ, քաղցր, շեշտված ձայնով պատմել: Բերանին էինք նայում, որտեղից ոչ թե բառեր էին դուրս թռչում, այլ կենդանի պատկերներ.—Սենկան, Պյոտրը, Ֆյոդորը՝ ձիերը հեծած; մեջքերը փամփուշտապատ ոնց մի-մի առյուծ:

Սենկան Ֆյոդորի մոտ ընկերն էր, քաջ կովող կազակ: Ընկերների մեջ հայտնի կատակներ անող ու լավ երգող: Նա հիանալի Վոլգա, Վոլգա էր երգում: Ահա այդ Սենկան մի անդամ ձինքել էր կայծակ կտրած ու երեք օր չեր երեացել, մինչև որ գտել էր Հորին ու սպանել իր գնդակով: Հայրը լրտես էր եղել, մատնել էր բալշեիկներին:

Ափսոս Սենկան սպանվեց բաղաքացիական կոհիկներում, ողզուով լաց էր լինում նրա համար: Սենկայի սիրած աղջիկը, կազաշկա նատաշան հագավ Սենկայի շինելը, ծածկեց կոմունարկան ու գնաց կոփվ, ասելով. «Սենկային կովում կփոխարինի նատաշան ու կմեռնի ուկոլուցիայի համար»:

Լսողներս իրար էինք նայում, տեսնում էինք մեր փոքրությունը ու մեր սիրտն էլ: Էր ուզում հերոսություն: Մաշան պատմում էր էլի կովից մի դեպք:

Ֆյոդորը գնացել էր, բոլորը գնացել էին մի դժվար տեղ սպիտակների դեմ կոփվ:

Մաշան մնացել էր մի պառակ գեղջկունու խրճիթում, ողզաիշերը չեր քնել, սպասել էր, լսել էր կրակոցներ, սիրտն անհան-

գիստ էր, պատկերացնում էր Ֆյոդորին սպանված, ձին փախչում էր առանց տիրոջ, սարերն ընկած: Խեղճ պառակն էնքան էր աղեր-սում դուրս շգալ տանից, բայց Մաշան չի համբերում, հազնում է Ֆյոդորի հին շինելը, հրացանը վերցնում, դուրս է գալիս ու վա-զում, ինքն էլ շիմանալով թի ուր:

Լսում է կրակոցների ձայնը, գնում է այն կողմը: Վազում է ու մտածում. Ֆյոդորն իր կցանքը չի խնայել, ինքն ինչի՝ պիտի խնայի. Հետո հիշում է հերոս Նատաշային ու չի սարսափում այլևս: Այդպիս վազելով, քրտնամթած դուրս է գալիս մի բաց-դաշտ, որտեղ քամին մարդ էր թոցնում. մեկ էլ տեսնում է դիմա-ցից մի ձիավոր է գալիս ու բղավում շուրջ. Մաշան կանգնում է շշկլված ու ինքն իրեն հացցնում. «տեսնես մերոնցից է, թե՝ սպի-տակներից»:

Մաշան չի պատասխանում, ձիավորը հրացանը բռնում է դե-պի Մաշան ու ասում. «Տե՛ս, կսպանեմ, դու սպիտակներից ես»:

Մաշան սիրու առած ճշում է. «Գնդակդ պահիր թշնամու հա-մար»:

Զինվորը ճանաշում է հարազատ ձայնը, թուլացած ընկնում է ձիու մեջքին: Մաշան վազում է դեպի ձիավորն ու ճանաշում իր Ֆյոդորին: Ուսա՞ կանչելով հասնում են նրանց հաղթանակ տարած դինվորները: Հանդիպում են դաշտի մեջ, քամու բերանին երկու զինվորի իրար փաթաթված, ճանաշում են Ֆյոդորին ու նրա կնոջը՝ Մաշային: Մի հուզմունք է լինում, որ...

Ասում է Ֆյոդորն այդ ժամանակ վիրավորված էր շատ ծանր, բայց չէր հայտնում: Մաշան նրա ձեռքի թացությունից է իմա-նում, արյուն էր կաթկթում:

Այդտեղ Մաշայի աշքերը շրակալեցին. նա, որ իսկի տխրել չգիտեր, այդ միջոցին շրթունքները դողացին:

Մաշան շարունակեց որ Ֆյոդորի վերքն անվտանգ էր, շուտով առողջացավ ու նորից կոխվ գնաց:

Պատմությունից հետո սկսվում էր իսկական երգը:

Мы красного фронта
Отряд боевой
И мы не отступим
С пути своего.

Մաշան գարմոշկա ուներ, լավ նվազում էր, հետն էլ պարում, ուստի աղջիկների ձևերն էր անում պարի ժամանակ: Մենք ուրախուրախ ծիծաղում էինք:

Երբ ուշ գիշեր էր լինում, Ֆյոդորն էլ գալիս էր, նոր ցրվում էինք մեր տները:

Քանի գնում, հորդ հետ անհաշտ էինք ապրում—տան կոխվները շատանում էին: Նա հարկանների տուն գնալ-գալ չէր սիրում: Մաշան ու Ֆյոդորն էլ իսկի նրանից չէին հարցնում, շփտեմ ինչի:

Հորդ ասում էի, որ Մաշան, Ֆյոդորը լավ բալշեիկներ են:

Քթի տակ մրթմրթում էր.

Չէի հասկանում ի՞նչ կար այդ մարդու սրտումը, ոչ կնկա, ոչ երեխի վրա սիրտն իսկի չէր տաքանում: Այդ ժամանակ մորս խոսքն էի հիշում. «առղամարդի առաջ վիզդ շծոես»: Մի օր շատ նեղացած ասացի. «սիրած ունես, գնա, քիթ ու մոթով կողքիս մի մնա»:

Նա կատաղեց, ձեռը խիեց սեղանին ու մի քանի անպատճառ խոսքեր թափեց բերանից:

Վալոդը դժկամեց, աշքերը մշուշվեցին: Ամեն անգամ հոր պատկերը ծխի նման ծածկում էր Մաշայի ու Ֆյոդորի ջինչ պատմությունը, դրա համար նա ընդհատեց մոը.

— Մաշայից, Ֆյոդորից պատմիր:

— Շատ էլ դարդ չէի անում, վալոդ զան, վանդակիս դուռը բացվել էր, տանը մենակ չէի նստում: Մաշայի մոտ էի վազում, փողոց էինք դուրս գալիս միասին: Քեզ գրկած տանում էի հետո ամեն տեղ, երբ թևերս հոդնում էին, Մաշան էր քեզ վերցնում իր թևերի վրա: Ինձ տվել էի դրսի աշխարհին, էլ ժամանակ չէր մնում մտածելու հորդ բնավորության մասին:

Քաղաքացիական կոհիների ժամանակ Մաշան ու Ֆյոդորը իմ սրտի մեջ կրակ դրին ու ամեն բան մոռացած ես մտածում էի ուղղուցիւմ մասին:

Նրանք միշտ ասում էին.—Լուսյա, բալշեկիկ կդառնաս։ Այդ որ չէին ասում, սիրտս թևավոր դառած, դուրս էր թռչում ու պտտվում աշխարհի վրա...

Մի օր նրանց տանը նստած էի գլուխս կախ, դու էլ ծնկներիս վրա լաց էիր լինում, չէիր հանգստանում։ Տեսնեմ մարդ ու կին իրար են նայում, ծիծաղում։ Ես չէի հասկանում, թե ի՞նչ կար մտքը-ներում։ Մաշան ուրախ-ուրախ մոտեցավ ինձ ու աշքերիս գեմ բռնեց լենինի ու Ստալինի նկարները։ Ասաց՝ մեղանից քեզ նվեր։ Ուրախությունից զփառեի քո լացը կտրե՛մ, թե՛ նրանց շնորհակալություն հայտնեմ։ Քեզ լաց լինելով թողեցի նրանց մոտ, իսկ ինքս վազեցի տուն ու պատին կպցը մեծ մարդկանց նկարները։ Տունս արև ընկավ։

Մի պահ լուելուց հետո, մայրը շարունակեց.

— Դեպքը պատահեց մի քամի, անձրևոտ, մթամած գիշեր։ Դու մի տարեկան երեխա էիր, օրորոցումդ մուշ-մուշ քնած։ Քունս չէր տանում, ճրագր վառում էի, հանգնում, նորից վառում։ Հայրդ կովեց ինձ հետ գնաց, ու տասը օր էր տուն չէր եկել։ Հազար մի բան էր գլխովս անցնում։ Մտածում էի կամ սիրեկան է պահում, կամ դաշնակներն են սպանել...

Այդ օրը միտինգ էի գնացել Մաշալի հետ, բալշեկի խոսողի ճառն ականջումս էր՝ «պարտված թշնամին այժմ գազազած է, ով սիրում է ուելուցիան, աշքը պետք է սուր պահի»։

Ասես մեկն ասում էր, թե շպիտի քնես, վեր կացա, շորերս հագա, մի քիչ պտտվեցի օրորոցիդ շորս կողմը, տեսա շատ ամուր ես քնած։ Կոացա թաթիկներդ համբուրեցի, չէի դադարում տեղս, կասես մեկը դուրս էր մղում ինձ տանից։

Շալումս փաթաթվեցի, դուռը կամաց վրադ փակեցի ու դուրս եկա փողոց։ Ինքս ինձ վրա բարկանում էի, թե կինն այս ժամին դուրս կգա՝ տանից։ Մտածում էի, կամ գժվել եմ, կամ հիվանդ եմ։ Բայց խելքս լավ էր գործում, առողջ էի զգում ինձ ինչպես երբեք։ Անձրևախառն քամին շփում էր երեսիս, հանկարծ մարդկանց փսփսոց լսեցի, մեր պատի հետեւ պահվեցի, թեպետ նրանք ինձ չէին էլ նշմարի, այնքան որ մուբն էր։

Սիրտս թրթոռում էր, ասացի կա շկա սրանք վատ բանի համար են գնում։ Հիշեցի Մաշալին, նատաշալին, որ մութ գիշերները մե-

նակ դուրս էին եկել ու քաջ զինվորի պես գնացել հրացանն ուսերին:

Ես ինչով էի նրանցից պակաս. սրտապնդվեցի ու սկսեցի հետեւ այդ կասկածելի մարդկանց:

Նրանք գնում էին, ես էլ էի գնում...

Շատ շանցած նրանք մոտեցան մի քարաշեն պատի: Այդտեղ պահակ էր ման գալիս, հրացանը կրծքին սեղմած:

Գրանք մոտենում էին պահակին, կատվի պես ոտների ծայրերի վրա, պահակն էլ էր մոտենում: Սպասում էի, որ պահակը պիտի գոռա, կամ կրակի: Տեսնեմ չէ, հրացանը ցած դրեց ու ինքն էլ վագեց պատի տակ, գլուխները մոտեցրին—ասացի վայ, այստեղ սև գործ կա:

Ճշացի ինչքան ուժ ունեի ու վագեցի դեպի զորանոցը, որ շատ հեռու չեր այդտեղից: Իմ հետեւ նրանք կրակել ան, ես շեմ իմացել, ու ականջներումս միայն սրտիս ձայնն էր գնդակի պես դժուում: Վազելու ժամանակ մենակ այն իմացա, որ ձախ կրունկու այրվեց, բայց ցավ շղգացի:

Տղան ցատկեց տեղից, ուզում էր մորը գրկել, բայց մայրը շղային շարժումով հրեց նրան:

— Ես միրավոր պառկած էի, զինվորները շրջապատել էին ինձ, հպարտ էի, որ նրանց հավասար մարդ էի ու կարող էի ուղուցիւացին գեթ մի կաթիլ օգուտ բերել: Վալողը նայում էր զարմացած ու չէր հավատում աշքերին: Այն սովորական վտիտ մոր փոխարեն կանգնած էր մի արիակամ կին:

— Հպարտությունս շատ շտեմ, — շարունակեց մայրը ընկը ճըված տոնով:

Տղան ահաբեկված մոր վերջին խոսքերից, սպասում էր թե ի՞նչ էր լինելու:

— Դանակ խրվեց սրտիս մեջ, երբ զինվորներից մեկը հայտնեց, թե դավաճանը Դավիթն էր...

Դուրս էինք եկել իրար գեմ, մեկս մյուսին շիմանալով: Հայրդ թաքնված թշնամի դուրս եկավ:

Վալողը գունատվեց, բռնեց գլուխը, որ կարծես պոկվում էր տեղից: Դեռ նրա հոգին չէր պղտորել այդշափ վտա բան: Առաջին անգամ իր կյանքում ծանր հարված զգաց:

Նա հազիվ կարողացավ շշնչալ.

— Իմ հայրը դավաճան...

Նախատինք էր զգում, ամսթ, նվաստություն, երբ մայրը հանդիմանեց տղային.

— Ես չպատմեցի, որ թուանաս, տղամարդի պես լսիր շարունակությունը:

Երբ ինձ տուն բերին, վաղեցի դեպի օրորոցդ, տևսա այնքան էիր լաց եղել, ձայնդ կտրվել էր, նվում էիր, ասացի երեխաս ձեռից գնաց, բայց տեսա թաթիկներից նորից խաղացրիր: Ընկա օրորոցիդ վրա, լաց էի լինում, որ հայրդ դավաճան էր, լաց էի լինում ամոթից ու մտածում, թե Մաշան ու Ֆյոդորն ի՞նչ կասեն: Գժվածի պես համբուրում էի թաթիկներդ:

Այդ օրը տանից դուրս չեկա, Մաշան էլ ձայն շտվեց ու շեկավ: Հորդ բարեկամներից ու ծանոթներից ով եկավ լընդունեցի, ասացի, գնացեք ձեր մեռելի վրա ձեր տներում լաց եղեք: Ես իմ սկատիվն էի լաց լինում, ի՞նչ երեսով մտիկ տայի Մաշային ու Ֆյոդորին:

Մայրը հոգնած, նստեց տղայի կողքին, որի համառ հայացը խնդրում էր նրան շարունակել պատմությունը:

— Մի օր անցկացավ այդ դեպքի վրայով, — շարունակեց հանդարտորեն մայրը: — Մյուս առավոտը նստած քեզ կերակրում էի, դուռը բացվեց ու շտապ ներս ընկավ իմ ոռա, աղիզ ընկերութին: Մաշան փաթաթվեց վզովս. Ես լաց էի լինում, բան չեի կարողանում պաել:

Ինչպես երեսում էր Ֆյոդորն ամեն բան իմացել էր ու Մաշային պատմել: Այդ հասկացվում էր Մաշայի խոսքերից, ասում էր. օհ եղած աշխատանք, ա տապահած աշխատանք, ա տապահած աշխատանք ու ապահած աշխատանք, որ իր տված դասերը զուր չեին կոռել:

Մաշան գրկեց քեզ, դու փափլիկ, թուխ երեխա էիր, մի զլուկա ուզում էիր, որ քեզ թոցնեն թերի վրա:

— Գուշ, գուշ, կանչեց, թոցրեց քեզ, սիս, սիս խօօշ, չետնայի ծովածանում էինք: Մաշան կողքիս կանգնած էր, երկուսով քեզ վրա ուրախանում էինք: Մաշան կողքիս կանգնած էր, երբ քեզ

քուն էի դնում և օրորոցիդ մոտ երգվեցի Հորդ մասին պատմել թեղ այն ժամանակ, երբ խելաճաս տղաժարդ կդառնաս:

Այդ օրը եկավ, ահա, պատմեցի, որ դու ճանաշես աշխարհի լավն ու վատը:

— Ինչ կլիներ, մայրիկ, Հորդ մասին իսկի շպատմելիր:

Ժամացույցի սլաքը մոտենում էր 5 թվանշանին, նրանք երկուսով էլ չզգացին, թե ինչպես ժամանակը թուավ ու գիշերն անքուն լուսացրին:

— Մայրիկ, էլ չե՞ս պատմելու:

— Այսքան որ պատմեցի գլուխդ շցավե՞ց: Ախ, Մաշա ջան, անուշ ընկերուցի ջան,—շարունակեց մանկան Հրճվանքով մայրը.—ասաց շմտածես, քեզ կտանեմ գործարան, կաշխատես, քո երեխացին կպահես: Այն օրվանից մինչև հիմի աշխատում հմքեզ մեծացրել եմ, դու էլ ես աշխատում:

Մի օր տեսնեմ Մաշան ուրախ-ուրախ վազում է, դու մի ասի Ֆյոդորի բլուզի կտորից զինվորական փոքրիկ բլուզ է կարել քեզ համար, բերեց հազգրեց: Այն մյուս օրն էլ կոմունարկա կարեց, կարմիր աստղ կպցրեց Ճակատին ու դրեց գլխիդ: Վալոր ջան, էդ ինչ տեսակ սազեց քեզ: Բշերդ ուղանում էիր, մեծ մարդու նման մեզ մտիկ տալիս, հենց որ Մաշան մատը թափ էր տալիս, լացակումում էիր, մենք ծիծաղից թուլանում էինք: Մաշան քեզ համար կոմունարների երգն էր երգում, ասում էր վալորը լավ կոմունար է լինելու:

Ախ ի՞նչ կլիներ, Մաշա, հիմի դուքս գայիր այստեղ: Վալոր մեծացել, ստախանովական է գարձել, լուսյադ իսկական բալշեկի է, գործարանում բանում է և ագիտատոր է իր ցեխում: Բայց քո այն անուշ ձայնին, այն ճարտար լեզվին շեմ հասնում, Մաշա ջան:

Ափսոս շատ քիչ, մի տարի մնացին նրանք մեզ հարեան, հետո հրաման եկավ Ֆյոդորին փոխեցին Մոսկվա, զինվորական ուրիշ մաս:

Շատ տիսրեցի, կասես մորից, Հորից էի բաժանվում: Իսկի հարազատ դավակն իր մոր հետեւ այնքան լաց չի լինում, ինչ-

պես ևս էի լաց լինում ոռւց ընկերներին Մաշայի ու Ֆյոդորի հետեւից: Նրանք ինձ հանգստացնում էին, ճարչեր լինում, աշբերից գրլ-գրլ թափվում էր արցունքը. ասում էի, ախր դուք ինձ հարազատի պես եք նայել, կյանք ու հույս եք տվել, գարունը դուս եք բերել:

Հարեանները հավաքվել էին, մեզ էին մտիկ տալիս: Ես գնացի կայարան, շատերն ինձ հետ եկան նրանց ճանապարհ դցելու: Մեր հարեանի տղան, Հակոբը, որ կարմիրբանակային էր, եկել էր Ֆյոդորին ճանապարհելու:

Քեզ հագցրել էի Մաշայի կարած բլուզն ու աստղավոր կոմունարկան: Այնպես ուրախ էիր, հենց գիտեիր մենք ենք վագոն նստելու, թաթիկներդ օդում թափահարում էիր, Մաշան վագոնի լուսամուտից գլուխը հանած օդային համրուց էր ուզարկում: Ֆյոդորը ձեռքը դրել էր Հակոբի ուսին և ասում էր. Կա, բրատ, քաջայ, վերեւումք.

Ախ այդ ինչ տեսակ օր էր, երբ գնացքը շարժվեց սիրտս էլ տեղից պոկվեց ու անիվների հետ գնաց: Ասացի գնաք բարով, թող ձեր ճամփին վարդ, մեխակ ծաղկի միշտ:

Մայրը հանեց սեղանի գզրոցից մի քանի ծալ թղթի մեջ փաթաթած Մաշայի, Ֆյոդորի լուսանկարները: Վալոզը խլեց մոռ ձեռքից նկարները և նայում էր հափշտակված: Նա որոնում էր նրանց հայցքներում մեծ ռեռլուցիայի պատմության էջերը: Մաշան ժայռում էր պայծառ աշքերով, Ֆյոդորի դեմքը հաղորդում էր ոռւս զինվորի պատրաստակամությունը թշնամու դեմ անվախ դրոհելու:

— Վալոզ, ի՞նչ ես դու այդ պատմությունից հետո: Ֆյոդորը, Մաշան հերոսներ են եղել, արյուն են թափել կովում, իսկ դու քո ցեխում հանգիստ բանում ես.—ՀՀՆՉաց տղան, ապա ավելացրեց համարձակ. մեր գործն էլ հերոսությունն է պահանջում, նրանք ձին հեծած թշնամու թիկունքն էին գրավում, մենք էլ արտադրության մեջ մեր մկաններով շտեսնված նորմաներ ենք գրավում...

Մայրը խնամքով նկարները նորից փաթաթեց թղթի մեջ ու ասաց.—Մի քանի անգամ նամակ ստացա Մաշայից, գրում էր, թե գործից աշք շեն բացում, Ֆյոդորը զինվորական մեծ պաշտոն էր ստացել, գրում էր, որ Վալոզին շատ են կարոտել: Հետո էլ նամակ շտացա, չիմացա թե ի՞նչ եղան: Լավ մարդիկ, ազիզ մար-

Դիկ միշտ կհիշվեն. քանի՛ տարի է անցել, բայց այս օրվա պես պարզ հիշում եմ նրանց գործերն ու պատկերը:

Մայրը հոգնած ետ նստեց մեջքը պատին հենելով,—իսկի շենք ասում ժամը մոտեցել է, վեր կաց, չուշանանք: Նա վեր կացավ տեղից բացեց պատուհանի փեղկը, նայեց դեպի փողոց, երբ տեսավ դռնապանին դուրս էր եկել փողոցը մաքրելու, աղա-դակեց.

— Վալող զան, ախր որոշել ենք ես ու գու ամենից առաջ մեր ընտրական տեղամասում լինել:

— Հենց գիտես մենակ ես ու դու ե՞նք որոշել, այժմ այնքան ընտրողներ են այդպիս որոշել, — ասաց տղան վեր կենալով: Նա արագ հագավ պիշակը, գլխարկը ծածկեց: Մայրը հագավ կապույտ վերարկուն, գլխին կապեց մի մուգ գույնի թաշկինակ: Ժամացույցը զարկեց հինգ անգամ: Դրանք բյուր սրտերից ելած սպասումի զարկեր էին:

Մայր ու որդի նայեցին իրար մեծ լուսաբացի շղթքն աշքերում, ապա շտապ քայլերով դուրս եկան տանից: Քիչ հետո մայր ու որդի երջանիկ ժայիտը գեմքերին՝ ընտրական տեղամասը մըտան: Նրանք մենակ չէին, արդեն հավաքվել էր ընտրողների մի մեծ բազմություն:

ՊԱՐՏԻԶԱՆԻ ՏՂԱՆ

1.

Գյուղի եղբին, անտառի մոտ մի մենավոր տնակ կար կանգնած—պատերը գորշ, տանիքը՝ ծղոտով ծածկած:

Այդ տնակին շուրջ էին տալիս շուրջն աճած բարձրակատարբարդիները, որոնց ճյուղերին գարնանը հավաքվում էին սարյակները խմբերով ու ճովուում, զժղթում...

Այդ տնակը մի անսովոր հետաքրքրություն էր առաջացրել գյուղում, մանավանդ երեխաների շրջանում:

Տարվա բոլոր եղանակներին երեխաները սիրում էին մենավոր տնակի մոտ հավաքվել: Ամեն տեսակ աղմկոտ խաղեր բարդիների տակ էին սարքում, որովհետև այնտեղ խաղաղ էր, ոչ նրանց շեր խանգարում ու շեր տեսնում: Մեկ էլ տեսար լիաթոք կանչկրտոցով լախտի էին խփում, իսկ մութն ընկնելիս հարմուլա կանշելով՝ դուրս էին թռչկոտում թաքնված տեղերից:

Անտառը մոտիկ էր, երբեմն գրազ էին բռնում, շնչակտուր վագում մինչև երկվորյակ կաղնիները: Առվակի շուրջը հոսում էր բարդիների տակից, լճանում, իսկ ձմեռը սառչելով երեխաներին հարմար տեղ էր պատրաստվում ֆռուան զցելու և սահելու համար: Բուքն ու ցուրտը շեին ահաբեկում երեխաներին. մեկ էլ ահա սառուցի վրա ուրախ ճիշերով, կարմրած քթերով շար էին ընկնում գյուղի շարաձճիները:

Գարնանը սովորաբար այդտեղ աղմուկը սաստկանում էր. սարյակներ փախցնելու մրցականը էր սկսվում: Անհանգիստ տղաները քարեր էին նետում բարդիների կատարներին և մեծ հաճույք զգում, երբ սարյակները հալածական թևերը թափահարելով, օդը վշշացնելով թռչում էին այս ու այն կողմ: Երեխաներն

այնքան էին խաղում, աղմկում, մինչև դուրս էր գալիս մենափոր տան բնակիչը՝ 15 տարեկան մի պատանի՝ ու նշանակ, վառվուն աշքերով, լայնաթիկունք, քայլվածքը հաստատ, հագին մի խունացած ու հնամաշ բլուզ։ Նրան կիպո էին կանչում։

Սկզբում նա շատ հանդարտ, ձեռքերը գոտու մեջ խրած, հայցքը լուրջ՝ տնտղում էր ամեն մեկին ոտքից զլուկս ու կամաց-կամաց առաջ շարժվում։ Այդպիսի բողեներին տղաներից ոչ մեկը չէր համարձակվում նրան մոտենալ, հրել, կամ ոտքերի առաջ ընկնել։ Երեխաները գիտեին, որ նա չէր սիրում խաղի մեջ անկարգություն։ Հանկարծ աշխուժանում էր կիպոն ու հա՛պ-հո՛պ գոշում։

Կիպոյի «հապ-հոպ»-ից հետո խաղը նորից էր սկսվում։ Որ խմբի կողմն էր անցնում կիպոն, այն խումբը հաղթող էր դուրս գալիս, ամեն տեսակ խաղերից։ Կիպոն թույլ տղաների հետ կույի չէր բռնվում, ասում էր. «Փետուրի պես թեթև են, փշեմ կթռչեն»։ Միայն ուժեղների հետ էր շափվում։

Գյուղի տղաները հերթով փորձել էին նրա ուժը և համոզվել, որ կիպոյին հաղթելը հեշտ բան չէր։

Ամենից վարժ կիպոն էր լողում խոր գետերում, ամենից արագ նա էր վազում, երբեմն օձագալար բարձրանում էր բարդիների կատարներն ու սարյակների բներից ծագեր դուրս բերում, ամենից անվախ նա էր քարեր նետում գամմիռներին։ Նույնիսկ շշուկներ էին պտտվում, թե կիպոն մեն-մենակ դայլ էր սպանել երկվորյակ կաղնիների տակ։

Ամեն անգամ կիպոն էր խաղերը կազմակերպում, նրանից մի քանի տարով մեծ տղաները նրան էին ենթարկվում, որովհետև և՛ ուժով, և՛ հնարագիտությամբ կիպոն մրցում էր նրանց հետ։ Այդպատճառով երեխաները խաղի ժամանակ միաբերան աղաղակում էին. — Թո՛ղ կիպոն մեզ զեկավարի։

Առանց կիպոյի խաղն անհետաքրքիր էր անցնում, երեխաները շուտ էին պառակտվում և իրարից խրոված քաշվում պատերի տակ։ Իսկ երբ կիպոն նրանց հետ էր լինում, խաղն ընթանում էր կանոնավոր, հետզհետե աշխուժանում էր ու բորբոքվում։

Մի խումբ տղաներ, որոնց հայրերն ունենոր էին, կիպոյից և վախինում էին, և՛ չեին սիրում նրան։ Նրանց տան մասին սուս-

Հուբեր էին տարածում. որպես թե կիպոյի հայրը գյուղից փախել էր իր վատ արարքների համար. ասում էին տղան էլ ամբարիշտ հորն է գցել: Խորեր էին տարածում, թե ինչքան խառնակովցուն-ներ էին լինում գյուղում, անպայման մենավոր տան բնակիչներն էին մեղավոր:

Դրան հակառակ, շքավոր և բատրակ գյուղացիների երեխա-ները սիրում էին անվախ ու քաջ կիպոյին: Հաճախ նրա մոտ էին վազում իրենց վեճերը հարթելու, մենամարտի ժամանակ նրան էին օգնության կանչում, իրենց ուրախությունն ու տիրությունն ուղում էին անպայման նրա հետ բաժանել:

Լիպոն իր ազգեցիկ բնավորությամբ կարողանում էր նրանց հաշտեցնել, և դատաստան տեսնել խարդախ ճուտիկների հետ, որոնք անտեղի վիրավորում, ծեծում էին, անպաշտպան երեխա-ներին:

Ահա թե ինչու խորհրդավոր և սիրելի էր դարձել այն մենավոր տնակը և նրա 15 տարեկան բնակիչը:



Կրկին գարուն էր. սարյակները բարդիների ճյուղերի վրա հարսանիք էին սարքել, ճուղում էին, բայց երեխաների առաջ-վա խաղերը պակասել էին: Գյուղում կյանքը փոխվել էր, խոռվությունն էր ներսում: Գյուղացիները ամբողջ ժամանակ կոփվներից էին խոսում: Լիպոն օրերով դուրս չէր գալիս խաղալու, ընկերները չէին իմանում թե ո՞ւր էր հաճախ նա անհայտանում: Երեխաներն է՛լ ավելի զգայուն և կովարար էին դարձել: Հաճախ մի քանի քայլ իրարից հեռու կանգնած լեղվակոփվ էին սկսում, աքլորների նման գլուխները ցից իրար դեմ վազում, հետո վեճը փոխվում էր իսկական տուր ու զմբոցի, քարեր էին նետում իրար վրա, քիթ, ճակատ արյունոտում: Այդ կոփվներից հաճախ շքավոր երեխանե-րը հաղթող էին դուրս գալիս, որովհետև քանակով շատ էին ու իրար եզրոր պես պաշտպանում էին:

Ունկոր-զոռբաների տղաները սպառնում էին շքավոր երե-խաներին իրենց ծնողների կարողությամբ, որ «տեսե՛ք-տեսե՛ք, մեղ-լավ տուն ունենք, ձի, ոշխար ու կով, սապոգներ ենք հագ-նում, իսկ դուք քաղցած եք ու տկլոր»: Բայց այդ խոսքերը նրանք

Հեղտ չէին մարսում, անպայման ընդհարում էր տեղի ունենում խմբերի միջև ու առաջիններն իրենց արժանի պատիժն ստանալով՝ պովկ էին գալիս, փախում՝ «վաշ», նանի՛ ջան» կանչելով:

Այդպես մի խոմք երեխաներ մթնշաղին բարդիների տակ խաղում էին. խաղից ձանձրացած սկսեցին սովել, ծղրտալ, որպեսզի լիպոն դուրս գա ու մասնակցի խաղին: Բայց հակառակ նրանց սպասածի՝ լիպոն դուրս չեկավ: Այդտեղից վեճ բացվեց, թե ինչո՞ւ լիպոն վերջերս քիչ է երևում, նրանց խաղերին չի մասնակցում: Շատերի համար հանելովկ էր դարձել, թե ո՞վ էր նրա հայրը: Ոմանք ասում էին, թե լիպոյի հայրը քաղաքում բանվոր է, ոմանք էլ պնդում էին, թե քաղաքից վերադարձել, այժմ սարերումն է ապրում, տուն չի գալիս: Ավելի գիտակ տղաներն ասում էին, թե լիպոյի հայրը, Ալեքը քաջ կովող է ու չի սիրում հարուստ զորբաներին:

Մազերը գզգզված մի աղջիկ, որ միացել էր տղաների խըմբին՝ ընդհատեց նրանց խոսակցությունն ու սկսեց պատմել, թե ինչպես իր հայրը տեսել էր լիպոյի հորը՝ հրացանն ուսին, ինչպես կազմակ անտառից իջնելիս: Այս փաստը խստ տպագիշեր ժամանակ անտառից իջնելիս: Այս փաստը խստ տպագիշեր էր. երեխաները խորհրդավոր լուսամբ նայեցին միմյանց:

Կլոր, կարմիր երեսով մի տղա՝ անունը Արմո, հանկարծ հարց տվեց կարճիկ, նեղ երեսով, պատառոտված շորերով մի ուրիշ տղայի, որի անունը Արտո էր.

— Դու տեսե՞լ ես լիպոյի հորը:

— Տեսել եմ,—պարծեցավ Արտոն հոնքերն աղեղի պես ձգած, ձեռքերը պատառոտված անդրավարտիքի գրպաններում խաղացնելով:

— Ի՞նչ տեսակ է,—այրող հետաքրքրությամբ հարցրին երեխաները:

Նրանց հետաքրքրությունն ավելի բորբոքելու համար, Արտոն նախ և առաջ կոկորդը՝ մաքրեց, ապա հեգնանքով պատասխանեց.

— Ինչ տեսակ է, դրան բալ-շկիկ են ասում... Վերջին բառը վանկերի բաժանելով ասաց նա շուրջը նայելով, գրեթե շուրջով:

— Բալշկի...—կրկնեցին երեխաներն առանց հասկանալու բառի իմաստը, զարմանքից աշքերը շուած:

— Բա շորերը, — հարցրին նորից խմբովին: — Շորերը, չեք իմանում, զինվորի, էլի...
— Բա ում կողմի զինվոր է, — հարցրեց Արտոն, որ ամենից շատ էր հետաքրքրվում մենավոր տան բնակիչների կյանքով:
Արտոն սիսեռի պես մանր աշքերը ոլորեց, ապա ասաց վանկ-վանկ.

— Չեմ ի-մա-նում, էլ չեմ ա-սի՛...
— Ասա, ասա, ուրիշի շենք պատմի, — աղաշագին խնդրեցին երեխաները:

— Չէ, չեմ ասելու, — բարկացած ասաց Արտոն. — Հենց իմա-նում եք հանա՞ք բան է, բայ որ տատս լեզվիս վրա աղ լցնի՛...

Արտոն ձեռքը դրեց թերանին, ամուր փակեց, որ ավելորդ բաներ չասի:

Այդ խոսակցության ժամանակ բոլորը հայացքները դարձրել էին դեպի մենավոր տնակը, որ այնպես համառորեն կանգնած էր գյուղի եզրին: Այնքա՞ն, այնքա՞ն բաներ էին անցնում երե-խաների գլխով, մեկի աշքում հրացանավոր մարդն էր տա-նիքից նայում, մյուսի աշքում՝ այն մարդը հրեղեն ձին նստած սարն էր սլանում...

— Ասում են կիպոյի հայրը շար մարդ է, — հանկարծ լուս-թյունն ընդհատելով մեջ մտավ կատվի պես աշքերը պլշած շել Մոսին:

Այդ ժամանակ Արտոն ընդհատեց նրան սպառնալով:

— Զարը դու ես, սրան մի տես, ճստան. Կիպոյի հայրը լավն է, մի անգամ ձեռը գլխիս քանց, շոյեց ու ասաց. «Սիրով ու խելոք ընկերներ եղեք կիպոյի հետ»:

— Հիմի դո՛ւ, դո՛ւ, — ուզում էր բոռնցքն իշեցնել Մոսիի գլխին, բայց զսպված ետ քաշվեց:

Արտոյի բացատրությունից հետո բոլորն ազատ շունչ քաշեցին ու խեթ-խեթ նայեցին շեկ Մոսիին, որպես զրպարտչի:

Մոսին իր կարծիքը հաստատելու համար ավելացրեց դողա-ցող ձայնով.

— Ուզո՞ւմ եք, հարցրեք Դավոյին, նա...

Խոսքը կիսատ մնաց:

— Սո՞ւտ ես ասում, — վրա վաղեց Արտոն, որին շատ ան-գամներ կիպոն ազատել էր շար տղաների հանկերից:

Հենց ուզում էին շեկ Մոսիին մեջտեղ քաշել ու դատաստան տեսնել ինչպես հարկն է, երբ արջերի պես երկու մեծ տղա վրա տվին երեխաների խմբին: Ինչպես երկում էր նրանք ամբողջ ժամանակ դարձնամում՝ լսել էին երեխաների խոսակցությունը:

Դրանք գյուղի հարուստի՝ Գաբոյի տղաներն էին, մեկը Ղաղոն, որ կտուցի պես կեռ քիթ ուներ, մյուսը՝ Թևոսը, որը հայտնի էր երեխաների շրջանում որպես ծովզ և շատակեր:

— Տկլոր Արտո, փախած Ալեքին ես պաշտպանում, — գոռաց Ղաղոն:

Երեխաների մեջ շփոթություն ընկալվ, անմիջապես բաժանվեցին երկու խմբի: Կորիլ ծագեց, բռնցքամարտ:

Շեկ Մոսին վախից կապտել էր, թուքը ծորում էր բերանի ափերից. մի ոտքը մի խմբի կողմն էր, մի ոտքը՝ մյուս խմբի. որ կողմն ուժեղանում էր՝ անմիջապես այն կողմն էր անցնում:

Ուս-ուսի տված՝ անտառից երկու տղա էին իշնում, հենց որ տեսան կորիլ է, անմիջապես, առանց շուրջը նայելու, անցան Արտոյի խմբի կողմը: Մեկը մենավոր տան բնակիչ՝ կիպոն էր, մյուսը՝ նրա ընկերը, Սարի Սամոն: Լիպոյի գալուց հետո, ինչպես ժայռ փլվեր գլխներին, ցրիվ եկան հակառակորդ տղաները, նրանք կիպոյի ուժը նոր շեխն փորձում:

— Ո՞վ է խառնել ձեզ, ի՞նչու եք կովում, — ասաց կիպոն կուրծքը դեմ տված, լայն թիկունքը թափահարելով, — ով քաջ է թող մեջտեղ գա, ես այստեղ եմ...

Արտոն, Արմոն ոգեսրված բաց շեխն թողնում հակառակորդներին. առ հա, բկին չոքի, — գոշում էին միմյանց:

Ղաղոն ու շատակեր թևոսը ոխը սրտներում՝ շուռ եկան, ճանկեցին Սարի Սամոյին: Լիպոն իսկույն հասավ բռնեց նրանց ձեռքերը, ոլորեց ուրի ճյուղերի պես:

Ղաղոն իր նիշար մարմինը, ինչպես մոմած պարան, դուրս պրծացրեց կիպոյի ուժեղ ձեռքերից ու գոռաց.

— Ալեքի ճուտ, տկլոր...

Լիպոն վագրի պես անզուապ ցատկեց, այս անգամ բռնեց Ղաղոյի կոկորդը. — Ել կանհ՝ ս, բերանդ շաղ կտա՞ս, — հեռում էր զայրույթից:

Խմբի մյուս տղաները բռնել էին շատակեր թևոսին ու խաղագնդակի պես դես ու դեն էին գլորում:

Մոսին տեսավ կոփից բարդանում է, փախավ բարդիների հետեւ, այնտեղ պահ մտած սպասեց մինչև կովի վախճանը:

Լիպոն Ղազոյի կոկորդից բռնած, քարշ տալով հասցրեց մինչև Կակոյինց ջրաղացը, հա՛պ հո՛պ արեց, գետնով տվեց ու ասաց.

— Էստեղ քեզ մի լավ գաս կտամ, որ մյուս անգամ շհամարձակվես երեխաներին ահ տալ, հայհոյել:

Ղազոն վերջին ճիգերը գործադրելով փորձեց Լիպոյի փորին քացով խիել. Լիպոն նրա կոկորդից բռնած տարավ գլուխը թաթախեց ջրաղացի ջրում:

— Վա՛յ, խեղդվեցի, — գոռում էր Ղազոն:

Սամոն իմանալով Լիպոյի բռնկուն բնավորությունը՝ հասավ այնտեղ, մեծ ճիգ գործադրելով բռնեց ընկերոջ պողպատի պես ամուր ձեռքերը.

— Թո՛ղ այդ վախկոտին, հերիք է...

Լիպոն ծանոթ ձայնը լսելով շուռ եկավ, իսկ Ղազոն հազիվ պոկվեց ախոյանի ձեռքից, ահագին տեղ վազեց թրչված խոզանակի պես գլուխը թափ ու թափ տալով ապա ինչքան ուժ ուներ սպառնալից գոռաց.

— Իմ հերը քո հոր հետ կխոսի... Գողե՞ր...

— Ի՞նչ ես կլանչում, — Լիպոն ուզեց նորից հասնել՝ Սամոն ոտքը գցեց նրա ոտքի առաջ:

— Զարժի...

Թևոսն ու Ղազոն և նրանց կողմնակից մի քանի տղաներ հերհեւ փախան:

— Գնացե՛ք, վախկո՛տ նապաստակներ, ձեզ վրա ծիծաղեցեք, — ասաց Լիպոն վախչողների հետեւ:

Տղաներն ազատ շունչ քաշեցին և խմբվեցին Լիպոյի և Սամոյի շուրջը. նրանք շդիտեին ինչպես արտահայտեն իրենց սերը, երախտագիտությունը Լիպոյին, որ վտանգի րոպեներին ամպից թռած կայծակի նման իշնում էր Հակառակորդի գլխին. Արտոն հենվել էր Լիպոյի ուսին, երջանկությունից փայլում էին նրան սիսեռի պես մանր աշքերը, ուր կարդացվում էր. «Տեսի՛ք, ի՞նչ լավ, ինչ քաջ է մեր Լիպոն»:

Արմոն խնձորի պես կարմրած այտերի քրտինքն էր սրբում՝ հետն էլ՝ արմունկներով ուրիշներին հրելով առաջ անցնում դեպի Լիպոն։ Եեկ Մոսին հեռու կանգնած ծոծրակն էր քորում և իրեն մեղավոր ճանաշելով չէր համարձակվում մոտենալ խմբին։ Կենտրոնում կանգնած Լիպոն հաճելի ծիծաղում էր, կարծես ոչինչ չէր պատահել։

Բարդիների կատարները մթնում խշշացին։ Մենավոր տնակի լուսամուտից լույսի շիթեր ընկան գետնին։ օդը ցրտեց, ուշ երեկո էր։

Արտոն հանկարծ շշնչաց Լիպոյի ականջին, խեթ-խեթ նայելով շեկ Մոսիի կողմը, որն այդ բոպեին գող կատվի պես աշքերը պլշացրել էր ծառերի արանքից։

Հակառակ բոլորի սպասածի, Լիպոն ամենեին շրարկացավ, այլ ժպտաց և Մոսիին իր մոտ կանչեց։

— Արի՛, Մոսի, անհեր, անմեր, բատրակի թոռ, այդ ինչո՞ւ ես լեզուդ ծոել, ճստճստացրել, սուտ-սուտ բաներին ինչո՞ւ ես հավատում։

Լիպոն ավագ եղբոր պես շոյում էր Մոսիի գլուխը, կեղտից կոշտացած նրա մազերը։ Մոսին մրմռաց, քիթը քորեց։ Ինչ լավ, ինչ բարի է Լիպոն, — մտածում էր նա, ուզում էր այժմ մի լավ խոսք ասել Լիպոյին, մեղքը քավել, բայց խոսք չէր գտնում։ Կարծես մեկը դիտմամբ բերանը ծեփել էր, որպեսզի նա տանջվի, խղճի խայթ զգա, չիշիացնում էր շրթունքներն ու լուս ձեռքերը տրորում։

Երեխաները մոռացել էին տուն դնալու ժամանակը, թոշուն-ների պես կտուց-կտուցի քաղցր ու անուշ զրուցում էին։ Այդ միշտոցին օդը պատռեց մի կանացի բղավոց։ Մենավոր տնակի դուռը բացվեց ճոռալով, դուրս եկավ Լիպոյի մայրը վախեցած։ Կոփվ էր եկել նրա վրա զազոյի և թևանի կորամեջք տատր։

— Ասում եմ տղիդ խրատի, թե չէ մեկ-երկու համբերությունից դուրս կբերի, իրեն համար վատ կլինի։ Էսօր քիչ է մնացել թոռիս խեղդի... Մեր կողմերում որ բռնել եմ՝ վիզը քոռ դանակով կկտրեմ...։

Լիպոյի մայրը շալն ուաերին, հուզմունքից դողալով կանգնել էր շեմքում, շգիտեր ինչ պատասխանել։ Վերջում միայն մի խոսք

ասաց. — Նանի, ի՞նչ ես գլուխ դնում երեխաների հետ. թո՛ղ կովկն էլ, բարիշեն էլ...

— Սուտ է, սուտ է, կիպոն մեղավոր չէ, — վրա տվին ամեն կողմից երեխաները:

Վերջապես շեկ Մոսիի համար հանցանքը քավելու առիթը ներկայացավ. նա վազեց մտավ կիպոյի մոր և զազոյի տատի արանքն ու ամենից բարձր սկսեց գոռալ. — Ես էլ եմ ասում կիպոն մեղավոր չէ...

— Ես կատվածագն ինչ է մեջ ընկել, հը՝, — տատը մի լավ բամփեց Մոսիի գլխին և դնաց իր ճամփան կոփը շարումակելով:

Արմոն ճամոզում էր կիպոյի մորը, որ կիպոն մեղավոր չէ, այլ մեղավորը զազոն ու շատակեր թեռսն էր, որ իրենց տկլոր և ուրիշ շատ վատ բաներ էին ասել: Երեխաները ցրվեցին իրենց տները, գիշերը վերմակները գլխներին քաշած՝ պատմում էին իրենց կրտսեր եղբայրներին ու քույրերին այդ օրվա դեպքի մասին:

Կիպոյի մայրը երբ բարկացած էր լինում, կիպոն չէր հանդընում խոսել: Այս անգամ էլ նա մոր հետեւց անխոս տում մտավ. նստեց հին կապերտով ծածկված թախտի ծայրին: Տան ամբողջ կահ-կարասին՝ մի թախտ էր, մի սեղան ու մի քանի աթոռներ: Այդ տան միակ զարդարանքն էր տղայի գլխավերկը պատից կախած մանկական փայտե հրացանը:

Զարքաշ կյանքի կնիքը դեմքին, տենդուտ շրթումքները դողդողալով՝ մայրը հանդիմանում էր իր որդուն.

— Քանի ասում եմ խելքի եկ, խելքի շես գալիս: Չե՞ս տեսնում ինչ օրեք ենք ապրում: Զուրը կամրջի գլուխն է անցել, կոփվ է ամեն տեղ... Հայրդ էլ կոփվների մեջ... Դու նոր կաթնակեր երեխա շես, հասկացի՛ր, ի՞նչ գործ ունես հարամու տղաների հետ... Թե որ ձեռն ընկնի՛ հորդ արյունը կիսմի նրանց հերք:

Տղան մոր վերջին խոսքից դեմքը խոժոռեց՝ կամացուկ կը կնելով. «Արյունը կիսմի...»

— Նրանք ինձ փախածի ճուտ են ասում. — Հանկարծ պոռթ-կաց նա՝ զայրույթն ու արցունքը կոկորդում խեղեկլով:

— Թո՛ղ ասեն, համբերություն ունեցիր, վերջն է գովելի,

Հետո կերեա թե ով է փախած, դու այնպես պահիր քեզ, որ մեղ ոլրա խոկի կասկած չտանեն: Թե չէ մեր տունն ու տեղը կկրակեն...

Իիպոն շուղեց այլևս բարձրածայն վիճել մոր հետ, իմանալով նրա հիվանդությունը, որ շատ հուզվելուց կարող է ուշագնայինել:

Տղան լուռ հանվեց, մտավ անկողին: Մայրը ճրագը հանգը ցըրեց: Տղան երկար ժամանակ շիր կարողանում քնիլ, լսում էր մոր անկանոն շնչառությունը և անհանգստանում:

2.

Ուշ գիշեր էր. քնած էր ողջ գյուղը, քնած էին և խորհրդավոր առնակի բնակիչները: Երկինքը մթագնած էր, աստղեր չեին շողում, քամին օրորում էր բարդիների կատարները, սվավում ծղութե տանիքի վրա:

Իիպոն խոր քնի մեջ երազ էր տեսնում. Հայր ու որդի մի նեղ կածանում շրջապատված էին գայլերով... ոտների տակ անդնդախոր ծոր էր: Հայրն անահ կրակում էր գայլերի վրա, գայլերն իրար հետեւից գլորվում էին ծորը: Իիպոն քափ-քրտինք ժտած ընկել էր վերջին գայլի հետեւից, ուզում էր անպայման իր հրացանով սպանել, բայց որքան շարշարվում էր՝ հրացանը չէր պայցիում: Հանկարծ տրա՞ք՝ լսվեց հայրիկի հրացանի պայթյունն ու վերջին գայլը թավալգոր ընկապ ծորը:

Այդ միջոցին ծեծում էին նրանց պատուհանը: Մեկ, երկու ոնդհատուում, նորից մեկ, երկու... կարծես փայտփորիկ էր ծառի բնին կտկտացնում:

Առաջինը մայրն արթնացավ՝ նստեց անկողնի մեջ, լսողությունը լարեց ու ճանաչեց պայմանական թակոցը: Պատուհանի երկարությամբ ձգվել էր մի ստվեր: Մայրը ոտքերի ծայրերի վրա կամացուկ մոտեցավ դռանն ու ճեղքից ստուգեց, հետո գուրը բացեց:

Տնակի մեջտեղում սարի պես ձգվեց զինվորական շինել հագած մի մարդ: Կինը վառեց ճրագը. լուսի շողը խաղաց նորեկի երեսին. նա քառասունի մոտ մարդ էր, նրա դիմագծերը հիշեցնում էին անկողնում պառկած փոքրիկ տղային:

Մարդն անհամբեր մոտեցավ տղայի անկողնին, կռացավ համբուրեց նրա ճակատը. տաք շունչ զգալով երեսին՝ տղան արթնացավ, ճանաշեց հորն ու փաթաթվեց նրան: Հոր խոժոռ դեմքը պարզվեց, լուս շոյում էր իր միակ որդու գլուխը: Մայրը դուռը փակեց ու ճեղքից նայում էր դուրս՝ ստուգելու համար՝ թե արդյոք չէի՞ն հետևում կասկածելի մարդիկ:

Տղան հորից պոկվելով բացականչեց.

— Հայրիկ, ո՞ւր է հրացանդ...»

Մայրը տղայի բերանը ձեռքի ափով փակեց. — կամաց...

Տղան խիստ վախեցած, աշքերը շունց, զգաց որ չէր կարելի ձայնը բարձրացնել, քանի որ հայրը գաղտնի էր եկել և նրան հետևողներ կային. մայրիկն էր այդ մասին մի քանի օր առաջ պատմել:

Մոր հանդիմանությունից հետո տղան լոփկ մատները խաղցնում էր հոր փամփուշտակալի վրա: Մի՞թե կար ավելի մեծ ուրախություն նրա համար, քան այն, երբ հայրը զինված տուն էր մտնում: Այդ բոպեներին թվում էր տղային, որ աշխարհում իր հորից ուժեղ մարդ չկար: Հայրը քիչ էր ապրել գյուղում, բայց տղան նրա հետ շատ էր կապված ու շատ էր սիրում: Ամեն անգամ հիշում էր այն երջանիկ օրը, երբ մի քանի ամիս առաջ հայրը վերադարձավ քաղաքից, որտեղ նա բանել էր երկար տարիներ: Ինչպես ինքը ուրախությունից ճշաց, մայրիկը լաց եղավ: Հետո անհամբերությամբ սկսեց հայրիկի ճամփորդական պայուսակը քանդել ու այնտեղ գտավ իր նվերը՝ փոքրիկ փայլուն մի հրացան, որ հայրիկը բերել էր քաղաքից: Լիպոն այլևս ոչ մի բանի չնայեց, անմիջապես հրացանն ուսը գցեց դուրս եկավ, հպարտ-հպարտ քայլեց, ամբողջ օրն ընկերների հետ խաղաց: Հլթացրեց: Երեխաները գյուղում տարածեցին, թե լիպոյի հայրիկը հրացան է բերել նրա համար, այն էլ իսկական, կրակող հրացան:

Այնուհետև գիշերները հայրիկի մոտ մարդիկ էին գալիս, խոսում էին շշուկով: Մայրիկը բարդիների տակ ման էր գալիս, ու խիստ պատվիրում լիպոյին, որ ոչ մի խոսք բերանից շթոցնի, թե իրենց տուն ո՞վ եկավ և ո՞ւր գնաց:

Լիպոն հասկանում էր, որ հայրիկն իր ընկերների հետ խոսում էր շատ գաղտնի բաներից, ինչպես, օրինակ, կուլակ զոռքա-

ներին տապալելու մասին, աշխարհը փոխելու մասին։ Լիպոն պարզ հիշում էր, ինչպես մի անդամ հայրը ոգևորված բացականշեց։ — «Ենինը ասում է զենքով պետք է վերցնել իշխանությունը...»։ Նրա մյուս ընկերներն էլ ոգևորված սեղմեցին իրենց բուռնցքները կրկնելով՝ «զենքով պետք է վերցնել իշխանությունը»։

Եվ որովհետև հայրիկն ու նրա ընկերները կոփվ էին սիրում, լիպոն էլ մեծերին հետեւելով՝ իր փայտե փոքրիկ հրացանը ամեն խաղաղիքից ու ամեն խաղից շատ սիրեց։

Հայրը երբ օրերով տնից բացակայում էր, տղան բունը կորցրած թռչունի նման անհանգիստ այս ու այն կողմ էր ընկնում ու շշնչում։ — ախ, ե՞րբ պիտի հայրիկս գա։

Այժմ նորից հայրիկը եկել էր։ Նա զգուշությամբ տղայի գլուխը դրեց բարձին ու սկսեց մայրիկի հետ կամացուկ խոսել։ Լիպոյի քունը փախավ, նա ուշադիր որսում էր ականջին հասնող հոր հատ ու կենտ բառերը, սար, ծի, կոփվ, պարտիզան։

Վերջին օրերի անց ու դարձից ու հոր խոսքերից տղան արդեն գուշակել էր ու հաստատ գիտեր, որ իր հայրը պարտիզան է։ Իսկ պարտիզանները քաջ են լինում, մտածում եր տղան։

Վերմակի տակից գաղտագովի տղան հետեւմ էր հոր ամեն մի շարժումին։ Հայրը լոփի շորերը փոխեց, հետո թղթեր հանեց գրպանից ու ճրագի դեմք բռնած կարդաց, գեմքը մոռայլեց։

— «Թանակը հասել է ուկրին, գաֆան թշնամու սիրար մինչև գնդակով շծակես, կոփվ շմզես, աշխարհը հիմքից չի փոխվի...»

Հոր հայացքն անհանգիստ էր ու սպասողական։ Նա մոտենում էր լուսամուտին, առա անկյունից անկյուն քայլում։ Լիպոն տեսավ և այն, թե ինչպես հայրը մոր ականջին շշնչաց ու երկուսով ստվերների սկս անաղմուկ դուրս եկան տնից։ Տղան թռավ անկողնից, նայեց լուսամուտից ու տեսավ հայրիկն ու մայրիկը մտան ցախատուն ու այնտեղ բավական ուշացան։ Տղան նորից մտավ անկողին ու շոմշը պահած սպասում էր։ Հայրիկն ու մայրիկը վերադարձան, իրենց հետ բերելով մի ծանր կապոց, ապա մայրիկն սկսեց տիբրամած։

— Մինչև ե՞րբ պիտի քոնն աշքերիցդ կտրած, տնից-տեղից ընկած՝ սար, ծոր թափառես։ թշնամին էլ աշքն արյուն կոխած քեզ է հետեւմ...»

— Թող հետեւ, մենք էլ նրան ենք հետեւսմ... —պատասխանեց Հայրը:

Խոր հառաջելով՝ մայրը շարունակեց.

— Ասում են ամեն տեղ թշնամին բռնել է ճամփեքը...

Իսկ դրսում խավարը թանձրացել էր, քամին սաստկացել և անձրիի խոշոր կաթիլները կը՝ լթ-կը՝ լթ թակում էին նեղիկ պատուհանի ապակիները։ Տնակում իրապոյի հայրն էր սպասազեն սպասում։

Այս, ինչպես էր սիրում իրապոն իր անվախ հայրիկին։ Եթե հայրիկը հրացան շունենար ու կովելու շգնար, այն ժամանակ գյուղի տղաներն ի՞նչ կմտածեին, թե ի՞նչ տեսակ հայրիկ ունի նա, զազոն ու թևոսն էլ ավելի երես կառնեին։ Տղան գալարվում էր վերմակի տակ։ Պատուհանը երկու անգամ ծնծեցին — տըկտըկ ու դրսից կանչեցին կամացուկ «աստղ»։ Այդ ժամանակ հայրը վստահությամբ դուռը բացեց։ Ներս մտան երկու ուրիշ մարդ՝ առույգ դեմքերով, հայրիկի պես զինված։ Նրանց բարձր շնչով լցվեց կիսախավար տնակը։ Անձրիի, քամու սառնություն բերին նրանք իրենց հետ։ Վերմակի տակից շունչը պահած տղան նայում էր նրանց ու սպասում, թե ի՞նչ էր լինելու։ Նրանցից մեկը բարձրացրեց տնակի մեջտեղում գրած կապոցն ու ասաց.

— Հը՛, կանֆետը պատրաստ է...

— Մի՞թե կանֆետ էր, — զարմացավ տղան, երբ մյուս ընկերն ավելացրեց.

— Դառը կանֆետով միշտ պատաժ կպահենք մեր կրծքերը... — նա ձեռքը դրեց փամփուշտակալի վրա ու խոժող հայացքով նայեց շուրջը։

Այժմ միայն իրապոն հասկացավ, թե ի՞նչ է նշանակում «կանֆետ» բառը։

Նրանցից մեկին հայրը ինչ-որ բան ասաց. նա շտապով դուրս եկավ, քիչ հետո նորից ներս եկավ ու երեքով պատրաստվեցին զնալու։

— Ե՞րբ կլինի, որ տուն գաք վերջնականապես, — հարցրեց մայրը անհանգստանալով։

— Մենք կգանք այն ժամանակ, երբ կշնչենք ճամփեքից մարդանման գալլերին... — պատասխանեցին հայրիկի ընկերները։

Նրանցից մեկը դուրս եկավ՝ տանելով «կանֆետ»-ի կապոցը,

ապա Երկրորդը դուրս եկավ ու դրսից լսվեց մեղմ սովոր: Հայրիկը ոտքն առաջ դցեց, տղան այլեւ շհամբերեց, թոշնի նման վերմակի տակից գլուխը դուրս ցցեց ու ասաց.

— Հայրիկ, ի՞նձ էլ տար քեզ հետ...

Հակառակ սպասածին՝ Հայրը լրարկացավ նրա վրա, այլ հանդարտ պատասխանեց.

— Լավ, որդիս, մյուս անգամ գնալիս՝ քեզ հետո կտանեմ. դու մեզ պետք կգաս...

Տղայի հանդգնությունը և ամուսնու պատասխանը մորը դուք չեկան. նա մոտեցավ, շղաձգորեն վերմակը քաշեց տղայի գլխին ու ասաց.

— Զե՞մ ասել մեծերի գործին մի խառնվի:

Նրանք լուսագեմին պետք է հասնեին նշանակված տեղը. ոչ անձրև հարցրին, ոչ քամի, ձիերն ասպանդակեցին:

Մայր ու որդի նորից մնացին մենակ:

«Դու մեզ պետք կգաս» կրկնում էր կիպոն մտքում հոր վերցին խոսքը ու երկար ժամանակ քուն չէր գալիս աշքերին:

3.

Մենակոր տնակից ոչ շատ հեռու գտնվում էր հովիվ Գևոյի կիսաքանդ խրճիթը. Շեկավուն ու ճարպիկ Սամոն հովիվ միակ որդին էր: Նա հագնում էր հոր կիսամաշ բաճկոնը և ողջ օրը ոտաբերիկ վաղվեռում փողոցներում: Նա ծնվել էր սարում հովվական վրանի տակ, իր առաջին ճիշը խառնելով նորածին դառնուկների և ուկերի մայոցին: Դեռ շատ մանուկ հասակում դառնուկների մահացել էր: Մոր փոխարեն նրան գուրգուրել էր բնումայրը մահացել էր: Մոր փոխարեն նրան առարգուրել էր սարերի ազատ քամին, թարմ կաթյունը, բաց կուրծքը ծեծել էր սարերի ազատ քամին, թարմ կանաչի ու գույնզգույն ծաղիկների բույրն էր առատորեն նա ծծել: Գևոն կնոջ մահվանից հետո չէր ամուսնացել ու իր միակ որդու ողջ խնամքն իր վրա էր վերցրել:

Սամոն մանկությունը հոր հետ սարերումն էր անցկացնում, ոչխարների կողքին, այդ պատճառով նրան ամենքը կանչում էին Սարի Սամոն:

Նա կիպոյից փոքր էր երկու տարով, 13 տարեկան էր, և կիպոյին սիրում էր եղբոր պես:

Երբ սարերից տուն էր վերադառնում երգ ու խաղով, կիպո-

յի համար անպայման բերում էր բնության անարատ նվերներից, ծաղկենինչեր՝ երկճղանի փայտիկների վրա հյուսած: Բերում էր սարի շուշան, բլորդան, քեղ, իծկոտ, խաշ-խաշ ու համովլ կրկենի, որ ծոցում պահած վաղեցնում էր լիպոյենց տուն: Լիպոն Սամոյի ձեռքից համարձակ էր վերցնում ամեն մի նվեր:

Այդպես մանկությունից խաղացին, սիրեցին միմյանց ու անբաժան ընկերներ դարձան: Նրանք միասին էին անտառից փայտ բերում, անտառներում պանտա ու համար հավաքում. մոշուտաձորն էին մտնում աներկյուն՝ մոշով լցնում կողովները: Լիպոյի ահից ոչ ոք չէր համարձակվում Սամոյին մատով անգամ կպչել, թե չէր ուզում քիթ-բերան արյունոտել:

Վտանգի ժամին նրանք կանգնում էին մեջք-մեջքի:

Այն օրը լիպոն շատ մեծ գաղտնիք էր հայտնում Սամոյին. այդ երեսում էր նրա ճակտին հավաքված մանրիկ կնճիռներից և խստորեն կկոցած աշբերից:

— Տե՛ս, ոչ մեկին չես ասի, —քաշեց նրան բարդիների տակ, մատը թափահարեց Սամոյի աշբերի դեմ, —այն ինչ որ ասում եմ քեղ, գաղտնիք է:

Սամոն հպարտ էր և ինքնաբավական, նրա համար որ կարողացել էր նվաճել լիպոյի նման քաջ տղայի վստահությունը: Երդվեց բերնից շթոցնել ոչ մի բառ, երդվեց իր հոր, մոր անունով:

— Ով ասի՞ շուն դառնա...

— Իմ հայրը հրացան ունի, կոփվ է գնացել... —ասաց լիպոն շատ խորհրդավոր:

Սամոն աշբերը լայն բացած, ուզում էր լավ հասկանալ ընկերոջ ասածները:

Լիպոն աշխատեց պարզաբանել իր մտքերը.

— Ա՛յ, իմացի՛ր, իմ հայրիկը կովում է շքավորների համար, —ինքնավստահ ու հպարտ լիպոն նալեց Սամոյի աշբերին, կարծես ուզում էր ստուգել, թե ինչպես ներգործեցին նրա վրա իր խոսքերը:

— Զքավորների, —խոր ակնածանքով կրկնեց Սամոն: Լիպոն շարունակեց ոգևորված.

— Հայրիկս բանվորների, շքավորների, աղքատ մարդկանց կողմից է...

Սամոն շուտով գլխի ընկավ. գյուղի տղաներից, գյուղացիներից լսել էր, ուզեց բղավել բալշեիկ, երբ կիպոյի ձեռքն իջակ նրա բերանին:

— Սուա, կամաց...

Գլուխ գլխի դրած բարդիների տակ նրանք երկար կանգնեցին: Երկինքը, օդը, ջուրը, ծառերը այդ օրը կիպոյի հետ խոսքեկ արած՝ գաղտնապահ էին դարձել:

Երբ վերջում կիպոն ավելացրեց. — Կոփկ է ամեն տեղ, Սամոյի աշքում բարդիները փոխվեցին, դարձան հրացանավոր մարդիկ ու շարք կանգնած սկսեցին արշավել:

Տղայի սիրտը թունդ առավ, ուզեց բղավել, թե աճա գալիս են, բայց ճակատը կպավ կիպոյի ճակատին, ժպտաց. բարդիներն էին օրորվում նրանց գլխավերեւ:

Սամոն մտքից երեք չհանեց կիպոյի պատմածները:

Սամոն վարժվել էր սարերին, անտառներին. Հեր կարողանում գյուղում երկար մնալ: Մեկ էլ աճա հոր կողքին էր:

Գևոն սիրում էր իր տղային, իր հովվական պարզ սրտով: Նորածին գառների և ուկերի մեջ շեր մոռանում Սամոյին. թարմ պանիր էր պատրաստում, կաթի սերը քաշում, պահում նրա համար:

Գևոն փորձված հովիլ էր. գիտեր բոլոր արոտավայրերը, գիտեր ո՞ր ժամանակ, ո՞ւր պետք է տաներ հոտը: Նրա գամշդիմ շների ահից գայլերը չեին մոտենում հոտին: Փոքրիկ Սամոն հոր օգնականն էր: Մեկ էլ տեսար շնչակտուր վազելով գըրկած ետ էր բերում կորած հորթուկին, կամ ովին:

Վերջին ժամանակ Գևոյի հոտը պակասեց: Գյուղացիներն անասուններ քիչ էին պահ տալիս նրան, վախենում էին թալանից: Հովիլ երգը լոեց, նա զոր տալով ծխամորճին ասում էր.

— Օրերը խառնվեցին, իմ գործն էլ դժարացավ:

Երեկոները հոտը փոփում էր խոտերին: Գևոն թեժ խարուցկալառած նստում էր կրակի կողքին, ծխամորճը փստացնում և Սամոյին պատմում բազմաթիվ զրուցներ, հեքիաթներ: Վերջին ժամանակները լոել էին նրա պատմություններն ու երգերը, նա խոռոշությացքով նայում էր սարերին ու գլուխը պտտում, հառաչում.

— Տեսնես ո՞նց կլինի աշխարհի վերջը:

Սարեբում հրացաններ էին ճայթում, հովիվներին ահաբեկում, ասում էին ավաղակներն են ոչխարների վրա տալիս:

—————

Մի երեկո Սամոն հևալով ներս ընկավ մենավոր տնակը՝ Սամոյի այտերը գոմատ էին ինչպես դեղնածաղկի թերթեր, շըրթունքները դողում էին, բառերը կցկտուր էին դուրս ելնում բերանից: Լիպոն և մայրը չէին կարողանում գլխի ընկնել, թե ինչ էր պատահել Սամոյին: Լիպոն ձեռքը գցեց Սամոյի վզով և լուս հայցքով հասկացնում էր. մի թաքցնի:

Ահա թե ինչ պատմեց Սամոն.

Գիշերը սարումն էր հոր հետ միասին: Հանկարծ հոտի մեջ խուժապ ընկավ. պահապան շները հաջեցին կատաղած: Գևոն ենթագրում էր, թե գայլ է մտել հոտի մեջ. քըս-քըս կանչելով դագանակն առած վագեց, Սամոն էլ նրա հետեից: Շատ մոտիկ լսեցին մարդկանց ձայներ, ապա կրակոցներ.

— Գյուլլախորով կանենք էս կատաղած շներին,—բղավում են անծանոթ մարդիկ:

Գևոն առաջ է գնում, որ հասկացնի, թե շները մեկավոր չեն. կես գիշերին ինչի՞ են ընկել ոչխարների մեջ և ի՞նչ են ուզում: Խոսքը բերանում կիսատ՝ հրացանների կոթերը դեմ են առնում Գևոյի կրծքին:

— Զոկի՞ր մի քանի հատ գմակավոր շաղիկ ոչխար,—բղավում են խիստ հրամայական, ահաբեկող ձայնով անծանոթ մարդիկ:

Գևոն դիմադրում, չի ուզում կատարել նրանց հրամանը. այդ պատճառով մի քանի ուժեղ հարվածներ են իջնում նրա գլխին, թիկունքին:

«Քանի՞ գլուխ ունես ուսերիդ վրա, զը՞՛ շորան, որ շեր ուզում մեր խմբապետին պատիվ անել»,—բղավում են նրանք ուրաշքում Գևոյի օձիքից:

Հոր առջևն է ընկնում Սամոն, ուզում է պաշտպանել նրան, մի քանի հարված էլ նրա քիթ ու բերանին են իջեցնում, ապա ոչխարներն առած, օդում մի քանի անգամ կրակելով՝ հեռանում սարսափ տարածելով շուրջը:

Սամոն պատմում էր թե ինչպես շար մարդկանց հետեւից թալալգոր կլանչում էր պահապան շունը, որին խոցել էր նրանց գնդակը: Գևոն տիսուր հառաջանքով ասում է տղային. «Ի՞նչ պատասխան տամ ոչխարատիրոջը, ո՞րտեղ քշեմ հոտըս, որ ազատեմ թալանշիներից, արյունոտ մարդկանց ձեռքից»:

Սամոն վրեժինդրությամբ լցված՝ լոեց:

— Աչի՞նչ, Սամո՛ ջան, մի՛ մտածի, այդ մարդկանց օրերը հաշված են, — ասաց Լիպոյի մայրը:

— Հայրիկն ու իր ընկերները դրանց մի լավ... — Լիպոն սեղմեց բռունցքը շեշտակի նայելով Սամոյի աշքերին:

Այդ բռպեին է՛լ ավելի հարազատորեն հնչեց Սամոյի ականցին Լիպոյի և նրա մոր ձայնը: Զէր ուղում նրանց կողքից հնուանալ: Լիպոյի և նրա մոր խոսքերը ցերեկի պես ցրում էին այնութիւնը, աճավոր ստվերները, որ պաշարում էին Սամոյի միտքը:

Լիպոյի մայրը նրանց երկուախն թիկ տակ քաշած խրատում էր.

— Ամեն իմացած ուրիշին չեն ասի, բերանից ավելորդ բանշեն թոցնի, կոփվ շանեք, աչքն ընկնեք:

Այդ խոսքերից ամեն մեկն իրեն համար հետևություններ էր անում: Մայրը շարունակեց.

— Ինչ որ ձեղ հարցնեն, ասեք «մենք չենք իմանում»:



Լիպոյին և Սամոյին այլևս չեին հետաքրքրում սովորական մանկական խաղերը, որովհետեւ այժմ նրանք զբաղված էին ավելի լուրջ և պատասխանառու գործով: Նրանք իրենց անսպառ եռանդը գործադրեցին ուրիշ ուղղությամբ: Որպես հավատարիմ տղային Լիպոն Սամոյին ծանոթացրեց իր հոր ընկերների հետ, որոնք գյուղում գաղտնի աշխատանքներ էին տանում և չքավոր, բատրակ գյուղացիներին կազմակերպում:

Կարրեին Սեթն էր նրանց ղեկավարում, ոգեսրում էր թիկումքներին խփելով. «Դուք մեր հավատարիմ ճուտերն եք, մեր լրաքեր աղավնիները, թռեք ամեն կողմ ու էլի եկեք, լուրեր բերեք մեզ»:

ինչ կար ավելի հաճելի, քան այդպիսի խրախուսական խոս-
քեր լսելը: Մի՞թե կարող էին ուրիշ տղաներ նրանց հետ մրցել:

Այդ օրվանից երկու ընկերներ գործի դնելով իրենց սրատես-
աշքերն ու արագավազ ոտքերը, նետվեցին պայքարի մեջ:

Նրանք վազեվազ, իրարից բաժան հետամուս էին լինում
ճամփակզրերում, կամուրջների տակ և տեսածն ու լսածը գալիս
պատմում էին դարբին Սեթին, որ սիրով էր ընդունում նրանց ու
գլուխները շոյելով՝ նորից ճանապարհ գցում: Նրանք միշտ վագ-
վրզում էին փողոցներում, ճանդիպում էին իրենց ընկերներին,
խաղում, կատակում, բայց ոչ մի գաղտնիք չէին հայտնում:
Նրանք երգիւլ էին գաղտնապահ լինել ու այդպիս էլ հաստատ-
մնացին իրենց վճռին:

Մի անգամ անտառում, խոտերի մեջ պահված փամփուշտա-
կալներ գտան՝ փամփուշտներով լիցուն. շատ ուրախացան ու
մտածում էին, թե ի՞նչպես և ո՞ւր տանին: Վերջապես ճնարը
գտան, ելան ծառերի գլուխները, չոր ճյուղեր կոտրատեցին, շա-
լակ կապեցին, փամփուշտները պահեցին շալակի մեջ ու շտա-
պեցին դեպի գյուղ: Տեղ հասնելուն պես՝ գտածը պահեցին Սա-
մոյենց խոտի դեպի տակ ու այդ մասին հայտնեցին դարբին Սե-
թին: Երկու ընկերներով այժմ էլ մտածում էին հրացաններ ձեռք
բերելու մասին: Ո՞վ կարող էր գուշակել, թե նրանց գլխով ինչ-
պիսի քաջագործություններ էին անցնում:

Իսկական զինվորներ էին պատկերացնում իրենց ամեն մինը
մի հրեղեն ծի նստած՝ արշավում էր դեպի սարերը, կովի թունդ
տեղը: Նրանց հետևում էին թշնամիները, բայց կիպոն ու Սամոն
անահ և ճանդուզն պատռում էին թշնամու շղթան ու թոշում դե-
պի իրենց նպատակը:

Ահա կիպոն հորն ազատում էր ամենանեղ տեղերից. Սամոն
հեռավոր բլուրների հետևից լուր էր բերում բալշեկի զինվորներին,
որ թշնամու գնդերը մոլորվել են խոր ձորում ու ժամանակն
էր հարձակման անցնելու:

Եվ այդպիս անվերջ իրենց վառ երեսկայությամբ արշավում
էին թշնամու գնդերի դեմ, լսում որոտ, պայթյուն: Կոփվ էր ամեն
տեղ և իրենք այդ կոփվներին մասնակից:

Թանձր մութիս պատել էր սարերը, աշք-աշքի չեր տեսնում, նոր մենավոր տնակից դուրս եկան երկու հոգի, երկուսն էլ ճամփի պատրաստ: Տղան հագել էր փեշերը կտրած կարճ շինել ու դրել հոր գլխարկը, իսկ հայրը՝ իր սովորական երկար շինելն էր հագել, ձեռքն առել մի կապոց:

Դուրս եկավ մայրը, ճանապարհոց նրանց մինչև բարդիները և աղերսանքով պատվիրեց ամուսնուն մի քանի օրից ավելի որդուն չպահել սարերում, ապա աշքերը սրբելով գլխիկոր վերադարձ տուն:

Հայր ու որդի համբաքայլ, անշշուկ գնացին մինչև անտառի փեշերը, հասան երկվորյակ կաղնիներին: Այդտեղ հայրը կանգ առավ ու սուլեց: Տղան անհամբեր սպասում էր թե ինչ էր լինելու: Հանկարծ ծառերի միջից դուրս եկան երկու հոգի, իրենց հետ բերելով մի ձի ու կանգնեցին նրանց դեմ: Լիպոն ճանաչեց հոր ընկերներին, նրանք հաճախ էին իրենց տանը եղել: Զին վրնջաց՝ տիրոջ ձայնը ճանաչելով: Տղան ալեկոծվեց հուզմունքից: Այժմ բացի իր սրտի ուժեղ գարկերից, ուրիշ ոչինչ չէր լսում նա: Այսպիս անսովոր էր մութ անտառը, փայլատակող աշքերով ձին և այն խորհրդավոր մարդիկ, որոնք շահում էին հայրիկի ականջին: Մթան մեջ ամեն ինչ այնպես արագ էր կատարվում, որ տղան չէր կարողանում հետեւ նրանց շարժումներին: Հայրը հրացանն ուսից կախեց, ոտքը գցեց ասպանդակին ու հեծավ ձին: Լիպոն սթափվեց այն ժամանակ, երբ հանկարծ հայրիկի ընկերները նրան պոկեցին գետնից, ինչպես թեթև փետուր, և նստեցրին հոր գավակը:

— Գնացեք բարի, թող ձեր գնդակը դիպուկ լինի, գայլ ու գազաններից մաքրեցեք մեր սարերը,—ասացին ընկերները վըճռական ձայնով:

Ալեքը վերջում պատվիրեց նրանց կամուրջը հսկել, պահպանել, կապը շկտրել ուղղմակետերի հետ: Ապա նա դարձավ որդուն:

— Ամուր բոնիր մեջքս, այժմ թոշելու ենք: Տղան գրկեց հոր մեջքը, արիություն և հպարտություն զգաց, որ գնում էր հոր ռւղեկցությամբ դեպի իսկական պայքարը...

Զարմանալի արագավազ էր հայրիկի ձին. նետի պես ճեղքում էր օդը, սմբակներից կայծեր էին ելնում մթության մեջ՝ Հրաշք հեքիաթներով լի խոր անտառն էր փոված նրանց ճամփին: Մուռ մորուքով, ծուռ ոտներով անտառի պապն էր ամեն տեղ ցցվում, հազար բերան շշնջում: Որքան հետաքրքիր, նույնքան զարհուրելի էր անտառը մութ ժամանակ: Քարեր էին դլորվում ձիու ոտքերի տակից, ճյուղեր էին կոտրատվում, տղան շումը պահած սպասում էր, թե ինչ էր լինելու: Թարձրացան, իջան անտառի մութ կածաններով, ապա մտան մի ահավոր կիրճ, որի մի եզրին անտառն էր կախված, մյուս եզրին ժայռեր հազար ու մի կերպարանք ստացած: Հոր ձայնը սթափեցրեց տղային:

— Գայլերի կիրճն է, շվախենաս, ամուր դրկիր մեջքս, — ու հրացանը պատրաստ պահեց:

Զին վրնջաց, պոչը թափ տվեց, կարծես ուզում էր ստուգել Հեծվորների տրամադրությունը: Քիչ էլ գնացին, ծառերի մեջ զույգ աշքեր պլաղլացին:

— Գայլ, — բղավեց տղան ողջ ուժով հոր մեջքը ցնցելով:

— Չվախենաս, — պատասխանեց հայրը, — այս տեսակ գայլերից հեշտ է ազատվել, եթե տեսնենք շատ մոտեցան կկրակեմ, թե չէ իզուր գնդակ չեմ փշացնի:

Հայրը դիմեց հնարագիտության՝ լուցկի վառեց մի քանի հատ իրար հետևից, ծխախոտը կպցրեց, դրեց բերնին, նորից լուցկիներ վառեց.

— Այ, կտեսնես, նրանք լույսից կվախենան, եթե շատ շն, — ասաց հայրը շատ հանգիստ:

Կարծես գայլերի աշքերը զույգ-զույգ լապտերների պես մեխված լինեին ծառերի բներին, չեին շարժվում, տեղերը չեին փոխում:

— Սրանք կամ մեզ խաբս են տալիս, կամ վախեցան, — շարունակեց հայրը, — բայց մենք խարվող պտուղ շն, Քյահլանն այդ տեսակ գայլերի շատ է համփուր դրել:

Հակառակ նրանց՝ սպասածի՝ գայլերը հարձակման զդիմեցին, այլ կորան դեպի անտառի խորքը: Լիպոն սովորեց, թե ինչպես պետք է փախցնել գայլերին:

Ճանապարհը շարունակեցին, քիչ հետո կիրճից դուրս եկանքաց դաշտը, որտեղ քամին շարացած սկսեց ապտակել Հեծվոր-

Ների երեսին: Լիպոն ազատ շունչ քաշեց. «Գայլերը կորան, վլանդին անցավ»—մտածեց նա, այժմ ապահով կդնան: Բայց այդպիս չեղավ. պայթյուններ լսվեցին, սկզբում խուզ, հետո որոշակի: Հայրը մի ակնթարթում ձիռ գլուխը թեքելով՝ ուղղությունը փոխեց.

— Այս ձայնը քարհանքից է գալիս, սրանք են իսկական գայլերը.—ասաց նա ու դիմեց ձիռն. —թոփ'ր, ախտե՛ր ջան, թոփ'ր, Քյահլա՛ն ջան...

Չին կարծես հասկացավ տիրոջ հրամանն ու սլացավ ինչպես մեավոր

Նորից կրակոցներ լսվեցին շատ մոտիկից: Հայրը մոնշաց ինչպես առյուծ.

— Մեր ճամփան չեք կարող փակել:

Այն մի ակնթարթում կատարվեց. Լիպոն գետնին էր. Հայրը հրամայեց պառկել քարի տակ: «Սկսվում է»—մտածեց Լիպոն: Քարի տակ դիրք մտած հայրն սկսեց պատասխան-կրակոցները: Լիպոն շատ էր ափսոսում, որ ինքը հրացան չուներ: Չին կանգնել էր անշարժ: Լիպոն սկզբում շփոթված էր, հետո ուշքի գալով սիրտ առավել և հոր փամփուշտակալից մեկ-մեկ գանգուշտ էր հանում ու տալիս նրան: Այդ նրա առաջին օգնությունը եղավ: Հենց որ դիմացի կրակոցները դադարեցին՝ հայրը ձեռքերն ազատ թողեց, գլուխը դրեց հրացանի կոթին ու ասաց ձիճաղելով.

— Տեսա՞ր որտեղ պիտք եկան փամփուշտները. դե՛ վեր կաց գնանք, նրանցից ոմանք շանսատակ եղան, ոմանք էլ փախան, —ասաց հայրը, բարձրացավ ձիռ մեջքը, որդում նորից գավակն առավ:

Երկնքում աստղերը չքացան, օդն ավելի պաղեց, լուսաբացը մոտ էր: Ծանապարհին նրանք լուր էին. առաջին անգամ տղան իր սեփական աշքերով տեսավ հոր ճարպիկ շարժումները՝ հրացան գործածելիս: Ու այդ ամենը խոր ու անշնչելի կերպով տպավորվեցին նրա մտքում: Նա բառ չեր գտնում հորն ասելու:

Կրկին կրակոցներ լսվեցին, ձին ականջները խլեց. Լիպոն անհանգիստ ոտները թափ ու թափ էր անոսմ ու զարմանում հոր անտարբերության վրա: Հայրն զգալով տղայի վիճակը՝ գլուխը շրջեց նրա կողմն ու ասաց ուրախ շեշտով:

— Ամեն կրակոց մեկ շի լինի, այս կողմերում օտար ոտք չի խաղա, երեք կրակոց իրար հետևից՝ մերոնց ազգանշանն է՝ նրանք գիտեն մոտավորապես, թե ինչ ժամանակ եմ հասնելու իմաց են տալիս, այժմ ես կպատասխանեմ, և նա մի անգամ կրակեց օդում:

Հետզհետե ճամփորդների տեսողությունը պարզվում էր. մույթ կապույտ հորիզոնն էր ծավալվում հեռու, շատ հեռու, տեղ-տեղ նարնջագույն:

— Պարտիզանի ձին շի մոլորի ճամփան. տեսար գուրս բերեց մեզ անտառից ու կիրճից, այստեղ են մերոնք,—ձեռքը նա պարզեց գեպի բլուրները:

Լիպոն ագահորեն տնտղում էր նոր վայրերը, ուզում էր ամեն ինչ հասկանալ, ճանաչել: Նրանց գեմ բարձրանում էր մի բլուր, որի ստորոտներում փնջածե թփուտներ կային, այդտեղ էր ապաստանել պարտիզանական 7-րդ ջոկատը:

Այգաբացին արթնացած թոշունների պես մեկ-մեկ գլուխները գուրս հանեցին պարտիզանները թիերի տակից:

— Հազար բարով, ընկե՛ր Ալեք, ճուտիդ հետ,—բացական-չեցին նրանք ու ժպիտը գեմքերին շրջապատեցին նրանց:

Հայր ու որդի, ինչպես լեռ ու բլուր, կանգնեցին իրար կող-քի. շգիտեին՝ ո՞ւմ նայեին, ո՞ւմ հարցին պատասխանեին:

— Էսքան էլ իրար նման, ոնց որ միջից կիսած խնձոր Ալեքն ու իր որդին,—ասաց ջոկատի ծեր պարտիզանը՝ Զոհրաբը, կրծքին փուլած սպիտակ միրուքը շփելով:

Լիպոն ձգվեց մեծավարի, ուզեց վայելու երեալ պարտիզանների աշքին. անհանգիստ շարժումներ արեց ու ասաց.

— Ընկե՛ր քեռիններ, ձեզ օգնելու եմ եկել:

Բոլորը ծիծաղեցին, իրար աշքով անելով: Նրանց դուր եկավ տղայի առաջին պատասխանը:

Առաջին բողեից Լիպոն գրավեց ամենաերիտասարդ պարտիզանի՝ Վաղոյի ուշադրությունը, նա եղբայրական աշքով նայեց Լիպոյի վրա:

— Փորձենք ճուտի սիրու, տեսնենք հոր սրտիցն է, թե պակաս.—ասաց Վաղոն մի քանի անգամ դատարկ հրացանը ճլթաց-նելով Լիպոյի ականջի տակ:

Լիպոն աշքը շթարթեց, ոչ էլ տեղից շարժվեց:

— Զէ, ինչպես երեսում է մեր հրամանատարի ճռությունը լեզվում, իսկի պետքն էլ չէ,—բացականշեց վաղոն հիացմունքի շեշտով:

Ալեքը շինելը ուսերին գցած պառկեց խոտերի վրա ու պատմում էր ընկերներին հանապարհին հանդիպած գալուքը մասին:

— Ինչպես երեսում է լավ շեն խրատվել, —միջամտեցին ամեն կողմից:

Պարտիզան Զոհրաբը զբաղված էր Ալեքի ձիով, առաջ թամբը վերցրեց ձիու մեջքից, ապա փորի տակ կապած փամփուշտները մեկ-մեկ դուրս բաշեց ու երեխայի պես ուրախացած բացականշեց.

— Ա՛յ, ինչ եմ ասել, Քյահլա՛ն ջան, մեզ համար երկաթեկանֆետներ ես բերել:

— Զոհրաբ ապի, այնպես ես խոսում, որ մարդու հավաս ես բերում, —ասաց Ալեքը:

Վաղոն կիպոյի հետ առանձնանալով հեռու թփի տակ, ժանոթացնում էր նրան մեկ-մեկ պարտիզանների հետ, պատմում էր համառոտ նրանց կենսագրությունները, նրանց կյանքի հետաքրքիր գեղագիրը, մեկի ուժը նկարագրում, մյուսի հնարամտությունները: Կիպոն տեսնում էր իր աշխով, շոշափում մաղապատ առուց դեմքերով զինվորներին, գորշ շինելներ, հրացաններ, ռազմաձիեր: Այդ բոլորն այնքան անսովոր էին, որ նա դեռևս չէր կարողանում իրեն հաշիվ տալ, թե որտեղ է ինքը գտնվում: Այդ օրվանից նրա համար նոր աշխարհ բացվեց, նոր կյանք սկսվեց:

5.

Առաջին օրերը կիպոյին երազ էր թվում թե՛ այն Յերուալը, թե՛ զերմ հայացքով պարտիզանները: Հետո կամաց-կամաց նա ընտելացավ և՛ շրջապատին, և՛ մարդկանց:

Բոլորը մի վիճակի մարդիկ էին, որը բանվոր էր, գործարանը թողած եկել էր կռվելու, որը չքավոր անհող գյուղացի, կամ ձնշված բատրակ—նրանք ովքեր չեին ուզում ստրուկ և աղքատ ապրել, այժմ եկել էին կռիվ մղելու իրենց իրավունքի, պատության համար:

Ալեքը ջոկատի ղեկավար էր. լուրջ և ազդեցիկ. բոլորը նրանից խորհուրդ էին հարցնում, նրանից էին հրաման ստանում ու պազմական գործողություններ սկսելու համար:

Պարտիզանների մեջ ամենաերիտասարդը Վաղոն էր, ընդամենը 20 տարեկան. նա կիպոյից հասակով մի կանգուն բարձր էր, բեղ և միրուք չուներ, դեմքը ողորկ էր, մարմնով նիշար, ճկուն, բայց զոկի ամենաճարավիկ հետախոսովն էր: Ամենքը նրան կանչում էին «թեավոր Վաղո»: Ամենադժվար բոպեներին, երբ պաշարված էին լինում ամեն կողմից, կամ փամփուշտները վերջանալու վրա էր լինում, հույսը դնում էին Վաղոյի վրա: Վաղոն միշտ էլ պատրաստ էր դնալ՝ օգնություն կազմակերպել:

Կարծես վաղուցվա ընկերներ լինեին, կիպոն ու Վաղոն իրարնայեցին, հարադատորն ժպտացին: Նրանց մտերմության առաջին պատճառը հրացանը դարձավ:

Վաղոն հրացանը ծնկին դրած մաքրում էր և հետո էլ բացատրում, ցուց էր առջիս առանձին մասերը: Կիպոն կողքին շոքած, շրթունքները սեղմած հետեւում էր Վաղոյի շարժումներին, թե ինչպես էր հրացանի կոթը կրծքին դեմ տալիս, մատը դնում ձգանի վրա, ապա աշբերը կկոցած վթացնում: Մանրամասն դասից հետո սկսեցին վարժությունները: Վաղոն խոտե՞րի վրա պառկած՝ մի քանի անգամ նշան զարկեց: Հերթը հասավ կիպոյին, որի դեմքի մկանները լարվեցին, չէ՞ որ առաջին անգամն էր փորձելու: Ինչպես կախարդական խաղալիքին՝ այնպես ուղում էր տիրապետել, ուղում էր իմանալ նրա բոլոր հնարքները ու խաղացնել ձեռքում այնպես թեթև, այնպես վարժ, ինչպես խաղացնում էր հայրիկը, Վաղոն և ամեն մի պարտիզան:

— Փորձիր տեսնենք, — ասաց Վաղոն հրացանը կիպոյի ձեռքը տալով:

Տղան երկու ձեռքով բռնեց սառն ու ողորկ հրացանը ու սիրտը թնդաց, կարծես մի ակնթարթում ինքը հասունացավ: Վաղոն հրամայեց պառկել. կիպոն անմիջապես պառկեց գետնին՝ հրացանի կոթը բռնած: Վաղոն մոտեցավ, հրացանի փողն ուղեց դեպի շորացած մասրենու թուփը:

— Զգողողան, դեմ տուր կրծքիդ՝ խակական պարտիզանի պես, հենց որ ասեմ մեկ, երկու, երեք, ձգանը սահուն քաշիր դեպի քեզ, — պատվիրեց Վաղոն:

Առաջին անգամ կրակելիս կիպոյի ձեռքերը դողացին, խաղալիք շեր հրացանը, այլ ծանր ու լուրջ մի զենք. նա իր ողջ տեսողությունն ու կամքը լարեց հաղթահարելու առաջին դժվարությունը և հոր ընկերների մոտ պատվով դուրս գալու:

— Համարձակ,—ձայն տվեց հայրը մյուս կողմից, որ գաղտագոյի դիտում էր տղայի արարքը: Տղան խրախուսված՝ ձգանը քաշեց, կարծես սրտից դուրս թռավ գնդակը, անցավ մասրենու կողքով: Նոր փամփուշտ տվեց Վաղոն ու բղավեց.

— Մե՛կ էլ...

Երկրորդ, երրորդ գնդակն էլ վրիպեց, բայց շորորդ կրակոցին՝ մասրենին դողգողաց: Վաղոն վաղեց. ճեռից ցուց էր տաշիս մասրենու խոցված ճյուղը:

— Կեցցե՞ս,—բղավեցին ամեն կողմից:

Ալեքը մոտեցավ, ձեռքը դրեց տղայի ուսին:

— Հորդ ամոթով շարիր, այդպես սովորիր հրաձգություն, որ նրան փոխարինես կուլում:

Այդ նույն օրը պարտիզանները ականատես եղան կիպոյի մի ուրիշ շնորհքին: Վաղոն արձակեց իր կաշվե գոտին, մի ծայրից ինքը բռնեց, մյուս ծայրից մի ուրիշ պարտիզան ու մի մետր բարձր պահած գոշեցին.

— Թոփը վրայից, տեսնենք ծնկներիդ ուժը:

Կիպոյի արյունը եռաց, հիշեց իր մանկական խաղերը, լախատին, ապա ընկերների մեջքի վրայից թռչելը: Նա ոտները թրփարփաց գետնին, մի քանի քայլ ետ-ետ գնաց, հապ-հոպ արեց՝ թռավ առանց գոտուն շփվելու: Էլ ավելի բարձրացրին գոտին հորիզոնական բռնած. տղան այս անգամ էլ թռայլ առանց շփվելու:

— Էլի բան կա, շվերջացավ,—գոշեց Վաղոն, — թե կարողանաս մի շնչում 100 մետր վազելով հասնել աղվեսի փոսը ու էլի ետ գալ, կասեմ քննությունդ բռնեցիր: Դե՛, սկսում եմ:

— Մե՛կ, երկո՞ւ, երե՞ք...

Կիպոն տեղից պոկվեց ու նետի պես սլացավ: Բոլորը սրտառուի սպասում էին: Ալեքն անգամ անհանգիստ էր, ուզում էր, որ տղան այդ խնդիրն էլ պատվով կատարեր:

— Իննը-սո՞ւն...

Մեկ էլ տեսան երկնքից իշած թռչնի պես տղան ոտները

խփեց գետնին ու կանգնեց ձիշտ նույն տեղը՝ նրանց դեմ ու դեմ ձակառը քբանած էր, սաստիկ հեռամ էր:

— Հաւալ լինի մորդ կաթը, կեցցե՛ս, — գոշեցին ամեն կողմից: Ալեքը ժպտում էր գոհունակ: Վաղոն կիպոյին թեր տակ առած, ուրախ բան էր պատմում, երկուսով ծիծաղում էին:

— Այ թե շնորհք է ունեցել Ալեքի տղան, — խոսում էին իրար մեջ պարտիզաններն ու նրանց աշքում կիպոն հետզհետերոյ էր քաշում:

— Սպիտակ մորուքս վկա, իսկական զինվորացու է, ոտքից ձեռքից թեթև, աշքը սար ու ձորի սովոր, չի կորչի, չի բռնվի, — ասում էր ծեր Զոհրաբը գայովալի, հայրական տոնով:

Այդպիսի խոսքերից կիպոն ավելի ինքնավստահ էր դառնում՝ ամրանում:



Գիշեր էր: Բլրալանջին պառկած էին պարտիզանները, կանաչ խոտը նրանց անկողինն էր, իսկ բարձի փոխարեն բար էին դրել զլիների տակ: Զիերի կողքին ծեր Զոհրաբն էր ննջում, հրացանը ոտների արանքում ամուր սեղմած: Հայր ու որդի պառկել էին իրար կողքի մի յափնջու վրա՝ շինելներով ծածկված:

Օրվա տպավորություններով գլուխը ծանրացած՝ տղայի քունը չէր տանում: Ծղրիդները երգում էին իրենց գիշերացին երգը՝ լուսատիկները թփից-թուփի էին ոստնում: Քունը կտրած քամին պավում էր, օրոր էր ասում: Իսկ երկնքում աստղերը և լուսինը լույս էին սփռում բլրին, թփերին, քնած պարտիզաններին: Կիպոն մանկան պես շլացած ուզում էր բռնել աստղերը, լուսինը, շոշափել մոտիկից, զգալ նրանց փայլը, շերմությունը: Վերջապես քունը հաղթեց, երազում աստղակոփ տեսավ, երկինքը հրդեհվում էր:

Առավոտը երբ աշերը բացեց, տեսավ բոլոր պարտիզանները ոտքի վրա էին: Նա շինելը վրայից գցելով, ինքն էլ ոտքի ելակ ու փնտրում էր վաղոյին: Պարտիզանները առավոտվա նաշաճաշիկի պատրաստություն էին տեսնում: Զոր էր հարկավոր:

կանչեցին Վաղոյն: Վաղոն հեռու քաշված մասրենու թփի մոռ
թիմարում էր ձիուն: Լիպոն նրա փոխարեն առաջ վագեց.

— Տվեք վեղրոն՝ ես կդնամ:

Մի անգամ Վաղոյի հետ գնացել էր դեպի հեռավոր մացա-
ռուտների մեջ թաքնված աղբյուրը:

Լիպոն ճանապարհը չկորցրեց, ոլոր-մոլոր պառւտներ տա-
լով՝ կանգնեց հենց աղբյուրի գլխին. վեղրոն լիքը լցրեց, ապա
փորի վրա պառկելով՝ բերանը բռնեց կլկլացող ջրի դեմ ու
կուշտ խմեց: Լիպոյի գնալուց հետո Վաղոն կասկածելով, որ նա
կարող է ճանապարհը մոլորել, ձիու թիմարումը կիսատ թողած
անմիջապես հասավ նրա հետեւց: Տեսավ տղան հանգիստ ջուր է
խմում, ուզեց խաղ խաղալ նրա գլխին: Թաքնվեց թփերի տակ
ու մրթմրթացրեց արջի պես: Տղան իսկույն ոտքի կանգնեց, մտա-
ծում էր պաշտպանվել: Նա լսել էր պարտիզաններից, որ այդ
կողմերում արջեր շատ կային. պատմել էին նույնիսկ մի
դեպք, թե ինչպես արջը քիչ էր մնացել պարտիզաններից մեկին
խեղդի, եթե նա չգիմեր խորամանկության ու սուսմեռուկ շտար:

Մրթմրթոցը շարունակվում էր, Լիպոն ոչ զինք ուներ, ոչ էլ
արջի հետ կովելու փորձ: Նա անմիջապես պառկեց գետնին,
վեղրոն անցկացրեց գլուխն ու շոնչը պահած սպասեց: Վաղոն
այդ բանը տեսնելով դուրս եկավ մացառուտների միջից ու կա-
մացուկ մոտեցավ տղային, ականջի տակ բրքչաց ու ասաց.

— Վեր կաց, շունչ քաշի, արջ չի, այլ արջին մահ բերողն է:

Լիպոն շուռ եկավ, տեսավ ոչ թե արջ էր, այլ իր նոր ըն-
կերք՝ Վաղոն: Նրանք ծիծաղից փորները բռնած չէին կարողա-
նում խսուել:

— Թե ես սատանա եմ, դու էլ սատանի պոչն ես,—ասում
էր Վաղոն ծիծաղի միջից,—ուզեցի փորձել քո սիրազ, արևս վկա-
քարի կտոր է:

Վեղրոն նորից լցնելուց հետո՝ խաղով, հանաքով գնացին
ուազմակետ: Վաղոն պատմեց ընկերներին այդ դեպքը. նրանք
լիաթոք ծիծաղեցին:

Նախաճաշը կարճ տևեց. նրանց կերածն էր՝ հաց և խաշած
կարտոֆիլ, որ ուղարկում էին պարտիզաններին սարվորները,
կամ պարտիզանների ընտանիքները: Նրանք ճոխ սեղան էին
ունենում միայն այն ժամանակ, երբ որս էին խփում: Ուտելիս

թե հանդստանալիս, ողջ ժամանակ նրանց խոսակցությունը կոփվ-ների շուրջն էր գառնում: Նրանք տեղեկացել էին իրենց հետախույզների միջոցով, որ այժմ թշնամին Տանձուտաձորն էր մտել: Մտածում էին գակել ճանապարհը խաչաձե շղթայով: Ալեքը գամփուշտներն էր հաշվում, հրացաններն էր ստուգում ու վերցում երկար խորհրդակցում էր պարտիզան Զոհրաբի հետ հարձակման մասին:

— Ալեք, մի՛ վռագի, — ասում էր Զոհրաբը գլուխը տմբացնելով, — մյուս ջոկատներից տեղեկացիր, ամեն բան կարգի բերու հետո...

//

Տաս օր էր կիպոյի գալը, բայց արդեն նա ընտելացել էր պարտիզանական կյանքին, ինչպես իրենց տանն ու ընկերներին: Փայտ էր բերում մոտիկ անտառից, կրակ էր վառում, ծիերն էր արածեցնում: Հաճախ վաղոյի հետ միասին ծլկում էին շատ հեռու, շրջում ծառ ու թփերի բոլորքով, ծաղիկները ոտքի տակ տալով: Երբեմն վաղոն կիպոյի աշքից անհայտանում էր. կիպոն զարմացած չորս կողմն էր նայում, թփերի տակից հանկարծ ծիծաղելով գլուխը դուրս էր ցցում վաղոն: կիպոն սիրում էր, երբ վաղոն ծիծաղում էր, որովհետև ծիծաղելիս նրա դեմքն էլ ավելի բարի ու դուրեկան էր գառնում:

կիպոն սաստիկ անհամբեր էր դարձել, նա հաճախ հարցնում էր ծեր Զոհրաբին.

— Բա ե՞րբ է սկսվելու...

— Ինչ ես վռագում, կոփվը թունդ կլինի, դիշեր ցերեկ մեղանից ոչ մեկը չի քնի, արծիվների պես կթռչենք...

կիպոն տեսնում էր, թե ինչպես հայրը միշտ աշխատում էր բարձր պահել ընկերների տրամադրությունը: Երեկոները նրանց իր շուրջը հավաքած խոսում էր ոգեսրված: Նրա խոսելու ժամանակ բոլորը լուռ էին վիճում, մերթ նրանց հազորներն էին խանգարում:

— Ռեկուցիան մեղ մոտ էլ կհաշվի, ազատությունը կիշեի, եւ չեն լինի ստրուկ ու տեր, դաշնակ-մառվերիստ: — Պահ մի լուսց հետո շաբունակում էր նորից.

— Աենինը, Ստալինը մեզ հետ են, ընկեր պարտիզաններ՝ Նրանք են լուսավորում մեր պայքարի ուղին: Հարձակման անցած պարտիզաններին ոչինչ չի կարող կանգնեցնել, ինչպես հրացանից թռած գնդակին. իրեն բնում կշարդենք թշնամուն,—ասում էր նա ձեռքը օդում շարժելով:

Գիշերը թանձրանում էր նրանց շուրջը՝ ահեղ գալիքներով լի:

Պարտիզաններն Ալեքի խոսքից ոգևորված՝ տեսնում էին իրենց հայրենիքի պայծառ ապագան, տեսնում էին խիզախ առաջնորդներին, որոնք կարծեա լուսից ձուլված հառնում էին նրանց աշքի դեմ, մարտի կանչում ու արիություն բերում նրանց սրտերին:

Հոր խոսելու ժամանակ կիպոն նրա պես շարժում էր շուրջերը, հոնքերը խոժոռում, աշքերը կկոցում, կարծես ինքն էլ էր խոսում:

6.

Զիերի մեջ մի հատիկ էր Ալեքի ձին. թե՛ տեսքով, թե՛ վաղքով նա տարբերվում էր զոկի մնացած ձիերից:

Ալեքը հրացանից առավել սիրում էր կրակոտ աշքերով, սև սաթի պես փայլուն բաշովիր շադանակագույն ձիուն: Հաճախ ձիու մեջքին կպած՝ արծվի պես սլանում էր սարերն ու վերադառնում շուտում:

Պարտիզաններն ասում էին. «Ալեքի ձին աստղերի հետ է թռչում, ձորեր ու վարար գետեր կտրում անցնում, սմբակներով քարափներ պատռում»:

Ալեքն ուրախ ժամերին սիրում էր պատմել իր կյանքից դանաղան դեպքեր՝ ձիու հետ կապված:

«Խիստ գաղտնի թղթնը էի տանում մեր շտաբը՝ ուրիշ ճանապարհ շկար, պետք է գնացի դաշտաների ձորով: Մտածում էի, այս անգամ շրոնվեմ, նրանից հետո ի՞նչ ուզում է թող լինի...»

Այդ մտքին էի, մեկ էլ տեսա ձիս խրտնեց: Հիմի ինչքան ուժ ունեմ, սանձը ձգում եմ, բայց ձին առաջ չի գնում: Սապագներիս կրունկներով կողքին խփում եմ, էլի ճար չի լինում, ձին հետին ոտները խրել է հողում, առջևի ոտներով դոփում է տեղում:

Հույսս կտրեցի, ասացի ձին թարովեց, ընկանք հարամիների բերանը... Մինչ ես նոր հնար էի մտածում ազատվելու, մեկ էլ տեսնեմ ձին շուռ եկավ գեպի ձախ ու իրան զցեց մի նեղ կածան: Բարձրացանք ձորավուսը, ներքեցից լավեցին տրաքոցներ, ազմուկ, բայց էլ ո՞րտեղ կհասնեին. Քյահլանս քամու պես թուավ: Ուրիշն ձին ձայնն առել էր ու իմացել, որ մեր դիմ թշնամու խմբեր կային ու մի հնարքով ազատեց թե՛ ինձ, թե՛ իրեն»:

Այդ պատմություններն էլ ավելի էին բորբոքում տղայի սերըն ու հետաքրքրությունը գեպի ձին: Հենց եկած օրից նա ուզեց իշխել Քյահլանի կամքին, ուզեց հոր պես հպարտ նստել նրա թամբին: Բայց Քյահլանը բացի Ալեքից ուրիշ ու մեկի մոտիկ չէր թողնում, զլուսիք թափահարում էր և աշխատում սանձը բերանից զցել: Այդ ժամանակ պարտիզաններն ասում էին.—Քյահլանի գժությունը բռնեց:

Երկար ժամանակ կիպոյին տանջում էր այն միտքը, թե ինչու էր հայրիկի ձին այնպես խորթ նայում իրեն, ու բացատրում էր նրանով, որ թերեւ իր հասակի փոքրությունն էր անվստահություն ներշնչում, խրտնեցնում ձիուն: Զգիտեր ինչպես ձիուն հնազանդեցնի, ամեն անդամ նրան մոտենալիս ձգվում էր, վիզը երկարացնում, որպեսզի ձին շխրտնի, բայց հակառակն էր ստացվում, Քյահլանը խուսափում էր նրանից: Հրացանից շվանիցավ, բայց Քյահլանից վախենում էր, որ շկարովանաք տիրել:

Մի առավոտ, երբ Քյահլանը բլրի ստորոտներում ցողաթաթախի խոտ էր արածում, կիպոն վազոյի հետ խոսք փոխանակեց ու ձեռք-ձեռքի զարկեցին: Լիպոն անմիջապես վազեց ձիու մոտ, համարձակ նայեց նրա աշքերի մեջ, լուռ հասկացնելով. «այս անդամ շես մերժի, զրազ եմ եկել». շոյեց ձիու զնշիկը, ապա հապ-հոպ-պ անելով բարձրացավ մի քարի վրա, այնտեղից էլ ցատկեց, նստեց ձիու մեջքին: Բոլորը զարմացած տղայի կողմն էին նայում. պարտիզաններից մեկը սաստիկ վախեցած զգուշացնում էր.

— Ա՛յ տղա, զետնով կտա, ինչպես սիրտ արիր...

Զին հանկարծակիի եկած՝ մի քանի անդամ զայրությով թափահարեց զլուսը, մեջքը, տղան ցնցվեց ինչպես ուժեղ երկրաշարժից, բայց պոկ չեկավ ձիու մեջքից:

— Հը՝, վախեցա՞ր, — դեմից եկալ հայրը ծիծաղելով և աշ-
խատում էր ծիռն հասկացնել, որ այդ հանգուգն հեծվորը իր
հարազատ որդին է և ոչ օտար մարդ։ Նա մեկ տղայի գլուխն էր
շփում, մեկ ծիռ բաշը՝ ասելով.

— Քյահլա՞ն, տիրոջ ճուտին ամուր պահիր թամբիդ, ինչպես
միշտ ամուր ես պահում ինձ։

Ալեքը սովորեցրեց որդուն ձի նստելու, սանձը պահելու եղա-
հակր։

Հոր հայացքից ուժ և խրախուսանը ստանալով՝ տղան հա-
մարձակ բռնեց ծիռ սանձը՝ ուղղություն վերցնելով դեպի մացա-
ռուտներում կորած աղբյուրը։ Կարծես գետնի վրայով չէին ըն-
թանում, այլ թեավոր թոշունն էր թոցնում, սար-ձոր թի առած
թոշում էին նրանց հետ։ Մեկ էլ այնտեղ աշքը բացեց, որ աղ-
բյուրի մոտ ծին կռացած, ջուր էր խմում։ Տղան երջանկավետ
ժայիտով, նայում էր ծիռ կապտավոն ոռնգերին ու մտածում.
«Քեզ էլ հաղթեցի»։ Այդ երանավետ րոպեները խանգարեցին մո-
տիկից լսվող կրակոցները։ Տղան հանկարծակի եկած՝ շրջվեց։
Զին ականջները ցցեց, զրից պոկելով ոռնգերը՝ շուրջը նայեց։

«Ափսոս, հրացան շունեմ», — մտածեց կիպոն անհանգստա-
ցած, երբ թիքերի միջից մի գլուխ ցցվեց, մոտեցավ, այս քեզ բան,
ծանոթ հայացք էր, ծանոթ ծիծաղ։

— Վազո՛, — բացականչեց կիպոն ուրախացած։

— Վախեցա՞ր, — հարցրեց վազոն սպանված նապաստակը
ձեռքում ճոճելով։

— Որ վախեցած լինեի՛ լեզուս կապ կընկներ, քեզ հետ էլ
չէի կարող խոսել, — պատասխանեց կիպոն համարձակ ու անմի-
շապես ավելացրեց, ծիռու գլուխը շոյելով, — գրազը հո տարա,
Քյահլանը ոնց որ բամբակ փափկել է ու սիրում է ինձ. այս էլ
աղբյուրը…

— Տարա՛ր, — պատասխանեց վազոն պարտված և անմիջա-
պես անցավ իրեն հուզող հարցին, — սա իր նապաստակի խելքով՝
ծառով թիգով դիպած, ուզում էր ինձպես որսկանին մոլորեցնել
ու զնդակիցս աղատվել։ Սիրոս չէր տալիս, անտերն այնքան
սիրունիկն էր, ոնց որ սարին իշած սպիտակ ձյուն։ Վերջը խիդ-
ձըս ծալեցի, սպիտակամորթին մի շրթոցով գետին գլորեցի, այս-
պես է աշխարհի բանը, հրացանն իմ ձեռին է, ուժն իմ կողմն է։

— Կա՞յ, ինչ սիրո՞ւն է, բա մեղք չէ՞ր, — ասաց Լիպոն խըդ-
ճահարությամբ նայելով սպանված նապաստակին:

— Ի՞նչ մեղք, թող ուրախ լինի ողորմած Հոգին, որ պար-
տիզանի սուրբ գնդակով գնաց, թե չէ դժոխքն էր գնալու, գայլե-
րի փորը...

Միծաղեցին երկուառվ Վաղոյի սրամտությունների վրա, իսկ
Քյահլանը խիստ օտարոտի հայացքով նայում էր սպանված նա-
պաստակին, ո՞վ իմանա, ի՞նչ էր մտածում խելացի ձին փոքրիկ
կենդանուն այդ վիճակում տեսնելով:

— Գրազը տարա, ևս գնացի ձիով, դու կգաս ոտքով, —
ասաց Լիպոն, ձիու գլուխը շրջեց ու պոկվեց աղբյուրի մոտից:

— Տղամարդու պես տարմիր, — պատասխանեց Վաղոն ու մի-
քանի րոպե լուս կանգնած նայում էր սլացող ձիավորի հետեւից՝
հրացանը մեկ ուսից կախած, նապաստակը՝ մյուս ուսից:

Ալեքը ձեռքը ճակատին գրած նայում էր ոլորուն ճամփին,
ճանաչեց ձիու մլացիկ վազքը և շշնչաց. — վերադառնում են...

Զին վազեց, տիրոջ դեմ կանգնեց հնազանդ, աշքերն ուրա-
խության փայլով լցված. կարծես զեկուցում էր նրան, որ որդուն
վերադարձնում է անվնաս:

Ալեքը ձեռքերը պարզած, ուզեց իշեցնել տղային, բայց
տղան առանց օգնության թրըմփ կանգնեց գետնին՝ ճկուն ոտնե-
րի վրա:

— Հը՛, ո՞նց էր, գլուխկոնծի հո շտվիր, — հարցրեց Հայրը:

— Հայրի'կ շան, այսօրվանից Քյահլանի հետ այնպես ախ-
պերացանք, որ աշխարհն էլ ուզենա մեզ չի կարող իրարից բա-
ժանել, — պատասխանեց տղան վստահությամբ:

Հորը գուր եկավ տղայի պատասխանը, և նա գոհ ժպտաց
Ապա պատվիրեց նրան ձիու սանձը հանել, թամբը վրայից վերց-
նել և ազատ թողնել:

Վաղոն վերադարձավ որսից, նապաստակի դնչիկը դեմ արեց
Լիպոյի քթին.

— Գրազը տարար, այս նապաստակը քեզ եմ բաշխում: —
Ապա ծիծաղելով շարունակեց, — բոյդ կարճ է, պարտիզանի
խարչ է, չէ, սրանից հետո քեզ հետ կատակ շենք անի, — թիթիաց,
բեց տղայի մեջքը:

Հուր ստացվեց թե գլխավոր ճանապարհի կամուրջը պաշարված է թշնամու կողմից: Մի քանի օր շարունակ յոթերորդ ջոկատը եռու զեռի մեջ էր. ուազմապաշարն էին հաշվում, փամփուշտակալներն էին լցնում, հրացաններն էին մաքրում, սպասում էին հարմար առիթի, որ արշավեն թշնամու վրա:

Հարձակման նախօրյակին սովորաբար Ալեքը քիչ էր խոսում, շրջում էր բլրի շրջակայքում, ծխախոտը շէր հանգնում, հրացանն ուսից վար շէր դնում. դեմքը խոժոռվում էր, ձայնը խըղվում:

— Գիշեր ու ցերեկ չենք քննելու, զգաստ եղեք,—ասում էր նա իր զինվորներին:

Լիպոն ուշի ուշով հետևում էր հոր կարգադրություններին, որպեսզի ետ շմնա մյուս պարտիզաններից ու շասեն փոքր է, անվարժ: Հենց որ Վաղոն հագնում էր կանաչավուն բլուզը, պընդացնում գոտին, ոտների կապերը, գլխարկն ամուր ծածկում, Լիպոն իսկույն հասկանում էր, որ նա պատրաստվում է «որսի» այսինքն՝ հերթական հետախուզության գնալու:

Մի մասախլապատ գիշեր Վաղոն «որսի» գնաց, առավոտը վերադարձավ ամբողջովին թրշված, ոտները ցեխուտ: Վարար անձրեկի տակ էր մնացել նա, քամին խփել էր կրծքին, սաստիկ հաղում էր: Այդ վիճակում նա փնտրում էր հրամանատարին, ու երբ հեռվից տեսավ նա գալիս է, վազեց ականջին մի քանի քանի շան շնչաց, ապա շինելը քաշեց դլխին, դողում էր: Ալեքն իր յափընշին էլ Վաղոյի վրա ձգեց, և անհամբեր հարցրեց.

— Վաղո՛, տաքացա՞ր, Վաղո՛, գլուխոդ է յավո՞ւմ:

Լիպոն սաստիկ մտահոգված՝ Վաղոյի կողքից շէր հեռանում, աշքերը տիսուր թարթելով մտածում էր. «Վաղոն հիվանդացակը, կորիվն էլ սկսվում է»:

Առավոտն Ալեքը տիսուր էր. ողջ գիշերը շէր քնել, աշքերն ուռած էին, դեմքը գոնատու: Վաղոյի հիվանդությունը խանգարել էր նախատեսած ուազմական գործողությանը: Միայն նա կարող էր գնալ շատ արագ, աննկատելի համնել լճակին ու տեղեկություն քերել թշնամու դասավորությունից: Պարտիզաններն առաջարկում էին Վաղոյի փոխարեն ուղարկել մեկ ուրիշի, բայց Ալեքը

գլուխը շարժում էր բացասաբար: Լիպոն ականջը սրած լսում էր նրանց վեճը ու չէր կարողանում տեղում հանդիստ մնալ:

— Նա ոտքից ծանր է, — ասում էր Ալեքը մի պարտիզանի մասին, որին առաջարկում էին հետախուզության ուղարկել:

«Նա ոտքից ծանր է, իսկ ևս — մտածեց Լիպոն ու տեղից կանգնեց, — ես կգնամ, — հանկարծ գոշեց նա:

Ալեքը հոնքերը խոժոռեց:

— Ես, — նորից կրկնեց տղան, համարձակ նայելով հոր աշքերին:

Ծինելի տակից Վաղոն գլուխը հանեց ու ասաց. — Թողե՛ք գնա, երաշխավորում եմ, երդվում եմ գլխովս, ինձանից ու մյուսներից լավ հետախուզություն կանի: Ինձ հետ տարել եմ, գիտեմ շնորքը:

Երբ Վաղոն լոեց, տղան ոգևորված ավելացրեց. — Ես չե՛մ բռնվի:

Բոլորն անհամբեր նայում էին, թե ինչ վճիռ պիտի կայացնի Ալեքը: Նա որդուն մոտիկ կանչեց, երկար ժամանակ լուս էր, հայրական սիրտն ուրիշ բան էր թելադրում, իսկ հրամանատարական կամքը՝ ուրիշ: Վերջապես որդու համառ հայացքը նրան հաղթեց:

— Որ այդպես է՝ գնա՛, — ասաց նա, առանց գլուխը բարձրացնելու, հուզված ձայնով: — Բայց իմացի՛ր, պարտիզանը սըրբազն երդում ունի, երբ բռնվում է՝ ինչը ան ուզում են շարշարեն, նա կմեռնի, բայց չի հայտնի ընկերների տեղը:

— Կմեռնեմ, բայց չեմ հայտնի, — պատասխանեց Լիպոն խիստ լրջացած և ինքնավատահ:

Հոր կարգագրությամբ Լիպոն շինելը հանեց, մնաց իր սովորական շորերով: Այժմ փոքրիկ հովվի էր նման, այդպես նրա վրա ոչ մի կասկած չէին տանի:

— Հայրի՛կ, կկատարեմ խնդիրը, կվերադառնամ շուտով, — ասաց տղան հրաժեշտի պահին: Հայրը ձանապարհեց որդուն մինչև Աղվեսափոսը, ցույց տվեց լճի ուղղությունը, որ գտնվում էր այդ նույն տեղից 5 կիլոմետր հեռավորության վրա: Ալեքը կանգնեց, մինչև տղան աշքից անհայտացավ:

Կանաչը, բարն ու փուշը ոտքի տակ տալով սլանում էր պարտիզանի տղան: Ծառ, թուփ, երկինք կարծես վաղում էին նրա

Հակառակ ուղղությամբ։ Շուրջը ոսկեթև թիթեռներ էին ճախրում, երբեմն բղացող միջատները դիպչում երեսին, բայց նա ոչինչ չէր դդում. ուշքը, միտքը միայն լճի կողմն էր։ Զէ՞ որ նրան մեծ և պատասխանառու խնդիր էր տրված, պետք է իմանար՝ ո՛րտեղ, ի՞նչպես էին դասավորված թշնամու խմբերը։ Այդ առաջին անգամը չէր, նա Վաղոյի հետ մի քանի անգամ գնացել էր հետախուզության ու սովորել շատ բան։ Հենց որ մի շրջուն էր լսվում՝ կծկվում էր, թաքնվում թփի կամ քարի տակ, ապա համոզվելով որ վտանգ չկա, նորից ճանապարհը շարունակում էր։ Դնում էր վագնվազ, հեալով։ Առավոտը գուրս եկավ ռազմակետից, իսկ ճաշի մոտ, երբ արել հասել էր զենիթին, հասավ լճափ։ Քամին բերում էր խոնավություն և շփում նրա քրոնած երեսը։

— Իի՞ ճը, — շշնչաց տղան և առաջ գնաց զգուշավոր քայլերով։

Իրձն էր փովել վճիռ, խաղաղ։ Տղան կանգնած նայում էր ծփացող կապուտակ ջրերին։ Ջունի պես սպիտակ վայրի բաղերը լողում էին լճի ափերով, ծովաթուղուները ճախրում լճի վրա, մերթ իշնում ջրերին ընդհուպ, մերթ բարձրանում օգ։ Տղան սթափիվեց, հիշելով խնդիրը։ Աշքերը կկոցած չորս կողմը նայեց, բայց ոչ որի չնկատեց։ «Խելոք լիպո, շրոնվես, ուզում է մորթեն, ոչինչ չպիտի ասես», — մտածում էր նա ու աշքը չէր պոկում ջրերից, ուր անհոգ լողացող բաղերը իր ընկերների վվարիտ խըմքերի պես իրեն կանչում էին, ձգում դեպի զովացնող ջրերը։ Ա՛հ, ինչպես էր ուղում բաղերի կողքին լող տալ, չոփ-չըփացնելով, բայց չէ որ ինքը եկել էր մի շատ լուրջ հանձնարարությամբ, նրան վստահել էր մի ամբողջ ջոկատ։ Վերջապես հիշեց հոր խոսքը, երբ ասաց. «Պարտիզանները սուրբ երդում ունեն»։ Լիպոն շրջում էր լճափին, գնաց ափից դեն ու նկատեց շատ հեռու շարժվող կետեր։ Բջը՝ — մատը կծեց, — այս ովքե՞ր պետք է լինեն, — շշնչաց։ Բոլոր նշանները տղան աշխատեց մտքում պահել, առաջ մի բլուր, հետո փոս, մի ցից քար, այնուհետև մի քանի ծառ ու կետեր։ Հեռում էր հուղմունքից, գտել էր տեղը, հարկավոր էր շուտով վերադառնալ։ Ամեն ինչ լավ էր վերջանում, հայրիկը կուրախանա, պարտիզանները կգովեն։ Է՛լ ժամանակ չկորցրեց, շրջվեց դեպի լիճը։ Ու վերջին ուրախ հայցաքով ուղում էր հրաժեշտ տալ լճին, երբ մի ուժեղ ձեռք տղայի ուսը ցնցեց։ Տղան

շուռ եկավ. դեմք կանգնած էր երկար բեղերով, սև փափախով՝ հրացանն ուսին՝ մի մարդ: «Բոնվեցի», — մտածեց տղան:

— Լակո՛տ, — հնչեց անծանոթ մարդու ձայնը, — ի՞նչ ես անում էս վայրի տեղը, տուն չունե՞ս, հերմեր չունե՞ս:

Տղան խեթ-խեթ նայեց օտար մարդուն ու ոչինչ շպատասխանեց:

— Ի՞նչ գործ ունես էս կողմերում, — նորից հարցրեց անծանոթ մարդը:

Տղան մտմտում էր այնպիսի պատասխան տալ, որ կասկածի տեղիք շմնա ու հնարք գալավ:

— Քեռի՛ ջան, մեր քուռակը կորավ, լաց լինելով ընկա հետնից, հասա մինչեւ այստեղ, համփաս կորցրի, — ասաց նա լացակումած ձայնով:

Անծանոթ մարդը տնտղեց տղային ոտից գլուխ, ապա շարունակեց համարյա մանշոցով.

— Քոռդանակով ականջներդ կկտրեմ, սուտ շե՞ս խոսում... կիպոն անմեղ դեմք ընդունած ասաց. — Քեռի՛, սուտ ասողը մեռնի...

Լիպոյի անմեղ հայացքը մեղմացրեց անծանոթի զայրույթը, նա տղային քաշեց թեկ տակ:

— Բան եմ ասում, էս կողմերում տրաքոց-կրակոց շե՞ս լսել, զենքով, հրացանով մարդիկ շե՞ս տեսել, — հարցրեց նա շեշտակի նայելով տղայի աշքերի մեջ:

— Ո՛չ, չեմ տեսել, քեռի ջան... իսկ դու, քեռի՛, ո՞րտեղից ես գալիս այդպես քրտնած, հոգնած...

— Ծան օր ենք քաշում կոփվներում, — պատասխանեց անծանոթը, — թողնում ե՞ն մարդ հանգիստ ապրի:

Տղան օգտվելով առիթից՝ ուզեց որոշ բաներ իմանալ նրանից և հարցրեց շատ միամիտ տոնով.

— Քեռի՛, դու ո՞ւմ կողմի զինվեր ես:

— Ինչ քո խելքի բանն է, լակո՛տ, որ էդ տեսակ հարցեր եւ տալիս:

— Քեռի՛, ինչի՞ ես նեղանում, վատ բան հո շասացի՞:

— Ասում եմ՝ քեզ կարգին պահի, քիթդ ամեն տեղ մի՛ խոթի, լակոտ, չե՞ս իմանում կոփվ է:

— Քեռի՛, չեմ հասկանում, ի՞նչ կոփվ:

Կոխվ, մեր ու նրանց մեջ, այ էսպես, —կատաղությամբ սկսեց կրակել դեպի բաղերը: —Ա'յ տղա, վազիր ջրից դուրս հանիր սպանվածներին, ի՞նչ ես կանգնել ապուշ կտրած, —գոռաց անծանոթ մարդը:

Լիպոն վազեց ջրի երեսից բռնեց երկու սպանված բադ ու հեալով բերեց գցեց ավազների վրա: Նա սաստիկ անհանգիստ էր, մտածում էր ինչ պատրվակով պոկ գալ այստեղից:

— Էհե՛յ, —մոնշաց մարդը, —քիչ գնամ լող տամ, հովանամ... Ի՞նչ ես ասում, պուճ՛ւր: —Լիպոն գլխով դրական նշան արեց ու ներքուստ ուրախացավ: Անծանոթ մարդն սկսեց հանվել: Այդ ժամանակ նրա ծոցից մի թղթի կտոր ընկավ ավազների վրա, ինքը չնկատեց, բայց Լիպոյի սրատես աշքից չվրիպեց և նա ճարպկորեն ոտքը դրեց թղթի վրա ու տեղում մեխսվեց: Անծանոթը շորերը դարսեց տղայի կողքին, հրացանն էլ վրան ժեկնեց: Ապա, ինչպես մի բրդուա արջ, վազեց շըմփ ընկավ ջուրը: Ափին լողացող բաղերը թևահարելով փախան դեպի լճի խորքը, նրանց անդորրը խանգարվեց: Լիպոն փսկույն կուցավ, թուղթը վերցրեց ու ծոցը դրեց:

Մարդը լող տալ կարգին չէր իմանում, մեկ այս, մեկ այն կողքի վրա էր ընկնում, գորտի նման ոտքերը մեկ այս, մեկ այն կողմը ձգում, փուշ, փուշ անում:

— Քեռի՛, ի՞նչ լավ ես լող տալի; Չոդ է, հովացի՛, —բացականչում էր Լիպոն ու մտածում աշքերը ճպճպացնելով. «Քեղերով մարդը վտանգավոր է, թշնամու կողմից է ուղարկված, ուզում է իմանալ պարտիզանների տեղը»:

Իսկ լողորդն ափից բավական հեռացած փուշ-փուչ էր անում:

— Զէ՞ որ կրակել սովորել եմ, —շշնչաց տղան մատները խաղացնելով հրացանի փողի վրա. Հանկարծ բարձրածայն նա հարցրեց, — Քեռի՛, հրացանդ լի՛քն է, —ու ձեռին առավ հրացանը:

— Շա՛ն լակոտ, տեղը դիր, քո բանը չի, —փնչացրեց լողորդը աշխատելով մոտենալ ափին:

— Բա՛դը, բա՛դը, —գոշեց տղան ու փորի վրա պառկած՝ իրար հետեւց կրակեց:

Լողորդն ուզեց իրեն ափ նետել, բայց երբորդ գնդակը կպավ նրա ճակատին, զուրը ներկվեց արյունով:

— Այ քեզ, կերա՞ր, դե՛ գնա, «լսելո՛ք քեսի», ունում էիր մերոց տեղն իմանալ: — Տղայի դեմքը գունատվել, շրթունքները դողում էին. առաջին անգամ իր անվարժ ձեռքով նշան բռնեց թշնամու վրա ու գնդակը շվրիպեց: Մարդը սուզվեց զրի տակ: Տղան այլևս ժամանակ չկորցրեց. մի թերի տակ բագերը դրեց, մյուս թերի տակ հրացանն ու ճանապարհ ընկավ: Թոշուն էր թե մարդ, որ ալանում էր արահետով: Լիճը մնաց հտև: Ծուտով երեաց այն բլրի գագաթը, ուր ապաստանել էր յոթերորդ ջոկատը: Դեռ շնասած ուղղմակետին՝ երկու պարտիզան դիմավորեցին նրան ուրախ բացականշություններով:

— Եկա՞վ, եկա՞վ...

Լիպոն առանց շփոթվելու //առաջ գնաց, սպիտակ, գեղնակուց բագերը դցեց խոտերի վրա, իսկ թերի տակ պահած հրացանը ցից կանգնեցրեց գետնին ու հենվեց փողին: Նոր ճետախույզը մեծ հետաքրքրություն էր առաջացրել պարտիզանների շրջանում: Բոլորը զարմացած նրան էին նայում ու սպասում, թե ի՞նչ պիտի հաղորդի:

— Այս ի՞նչ եմ տեսնում, — զարմացավ Ալեքը և ասես գժվարանում էր աշքերին հավատաբ:

Լիպոն պատմեց իր ճանապարհորդությունը և լճափին պատահած գեալքը: Պարտիզանները զփտեին զարմանացին, թե ուրախանացին: — Հասակին ու կատարած գործին նայեք, — ասում էին միմյանց:

Պարտիզան Զոհրաբը ծխամործի կրակը նորոգելով ասաց.

— Զարմանալու բան չկա, ինչ տեսակ ծառն է, այն տեսակ էլ բարն է, — ձեռքը պարզեց Ալեքի կողմը:

Ալեքը համբուրեց որդու ճակատը և ոչինչ շկարողացավ ասել: Այդ գեպքից հետո այլևս տպացին իր իսկական անունով չէին կանչում, այլ կանչում էին արծվաճուտ: Հանկարծ Լիպոն շիշեց ծոցում պահած թուղթը և այնտեղից հանելով տվեց հորը:

— Հակառակորդի փամփուշտները, սննդամթերքը վերցացել էին, օգնություն էին սպասում ուրիշ խմբերից, — հայտնեց Ալեքը:

Լիպոն մանրամասն բացատրում, ցուց էր տալիս նրանց տեղը, դասավորությունը, հիշում էր միտքը պահած բոլոր նշանները: Ալեքն ու իր ընկերները հավատով և ուշադիր ճետեսում

էին նրա ամեն մի շարժմունքին ու խոսքին: Շատ շանցած որոշում կայացրին՝ հարձակվել գիշերը: Փայտե շշերի անցկացրած վայրի բազերը խորովեցին, ընթրեցին, Վաղոյին էլ բաժին հանեցին:

— Արի՛, արծվաճո՛ւտ շան, նստի՛ կողքիս, պատմիր թե ի՞նչպես հասար որոշած տեղը ու ի՞նչ տեսար այնտեղ, — ասում էր Վաղոն այրվող աշքերը չհեռացնելով տղայից: Լիպոյի կատարած առաջադրանքը ամենից շատ ուրախացրել էր Վաղոյին: Նա հպարտ էր, որ չէր սխալվել իր ճանաշողության մեջ: Ինչպես իր հասակակից ընկերոջը կպատմեր, այնպես լիպոն պատմում էր իր զլխով անցածը, թե ինչպես հանկարծ սկսեց գոռալ «բազը, բազը» ու նշան բռնեց շար աշքերով, երկար բեղերով թշշամու վրա:

— Ինքն ինձ լակոտ անվանեց, ես նրան քեռի շան ասացիմեկ էլ տեսնեմ հրացանը ձեռքումս է, ձգանը բաշեցիւ ու քեռին ձկներին հյուր գնաց...

— Արևս վկա, դու մեր բոլորից անցար, — տեսնդից շորացած շրթունքները ծպացնելով ասում էր Վաղոն:

Թարտիզանները խիստ զբաղված էին, հրամանատարն ամեն մեկին առանձին խնդիր էր տվել ու բոլորին նախապատրաստում էր հարձակման: Եղանակը պաղեց, իրիկնաքամին սլալաց, լուսնեղջյուրը բարձրացավ լեռների հետեւից: Թարտիզանները ոտքի ելած սպասում էին հրամանի: Ալեքը Քյահընի կողքին կանգնած միքանի բոպե լուռ մտածում էր, հանկարծ դարձավ տղայի կողմն ու կարդագրեց.

— Վաղոյի հետ այստեղ կմնաս մինչև մեր գալը, ուրիշ ու մի տեղ չես գնաւ:

Քյահլանը սմբակները գետնին զարկեց, գետինը դղրդաց: Երեսուն զինված պարտիզան հետեւցին հրամանատարին:

— Կորիվ է լինելու իսկական, — շշնջում էր տղան: Քամին բերում էր ձիերի դոփյունը:

8.

Բլրալանջի թփերի մեջ մենակ մնացին երկուսով: Մեկը հիվանդ պառկած, շինելն ուսերին քաշած, մյուսն առույգ՝ հրացանը ձեռքին կանգնած: Առույգ զինվորը մերթ անհանգստացած դառնում էր հիվանդի կողմը, որ տեսնի՛ մի՛ բացգում. նա մերթ նայում էր երկնքին, կարծես այնտեղ էր ուզում որոնել իր բարդ

մտքիրի պատասխանը: Հուանեղջուրը անփութորեն ծիծաղում էր տղայի հետ:

Տրա՞-տա՞-տա՞-տա՞,-լսվեցին տրաքոցներ, տղան հրացանը կրծքին սեղմած բացականչեց.

— Ընդ՛, սկսվեց:

Վաղոն գլուխը բարձրացրեց, ուզում էր ստուգել, թե որ կողմից էին գալիս արաքոցները:

— Մեջքդ մի՛ բաց անի, կոփիլ է,—ասաց հանդիմանական տոնով կիպոն, կոացավ շինելը քաշեց հիվանդի թիկունքին ու շարունակեց իր լուրջ մտածումները: «Ճիմի Սամոն քնած է, Արմոն, Մոսին քնած են ու շեն իմանում, որ կիպոն իսկական զինվորի պես հրացան ունի, այժմ կոփիլ է ու կարող է նա էլ իսկական զինվորի պես կրակել»:

— Տվե՛ք հրացանս, չե՛մ ուզում անբանի պես վեր ընկնել,—բղավեց Վաղոն շինելը դեն նետելով վրայից:

Կիպոն վազեց նրա մոտ ու այս անգամ ավելի խիստ հանդիմանեց:

— Վաղո՛, հիվանդ ես, մի՛ բացվի, մենք պետք է հրամանատարին լսե՞նք, թե չե...

Վաղոն հնապանդ շինելը քաշեց ուսերին ու սրտնեղած սկսեց հառաշել:

— Ես էլ եմ ուզում կրակել հայրիկիս հետ միասին,—շնչաց կիպոն ու քայլեց ինքն իրենից խռոված:

Դիշերը կես եղավ, հետզհետե տրաքոցները նվազեցին, հատ ու կենտ դարձան: Լիպոն ականջը գետնին դրած լսում էր խուլ որոտներ: Մոտեցավ Վաղոյին, ուզում էր խոսել, բայց Վաղոն քնած էր, սառը քրախնքը ցողի նման նստել էր նրա երեսին:

— Մերոնք ե՞րբ կգան, տեսնես հաղթեցի՞ն...—շնչաց կիպոն, ապա սպասելուց հոգնած՝ կծկվեց Վաղոյի կողքին հրացանը գրկած: Նա ննջում էր, երբ աշքերի դեմ անսահման լիճը ծփաց, ջրում լողում էին վայրի բագերը, որոնցից մեկը հանկարծ ծառս ելավ, թեերը թափահարեց, դարձավ այն շար, երկար բեղերով, փափախով մարդը: Հանկարծ նա հարձակվեց տղայի վրա, ուզում էր խլել նրա հրացանը: Տղան վեր թուալ վախեցած՝ տեսավ հրացանն ամուր սեղմելուց թեերը ցավում էին: Տղան ծիծաղեց ինքն իր վրա, ապա դարձավ դեպի երկինք, որ տեսնի

Ճուակնն էլ հո շի՝ ծիծաղում իր վրա. բայց լուսինը վազուց չքայել էր երկնթից: Միայն աստղերն էին ցոլցում անվրդով... Տղան տեղից կանգնեց, կարծես մի աներեւոյթ ուժ մղում էր նրան ղեպի այն ճանապարհը, որտեղից գնացել էին պարտիզանները: Սրտատրուի վազեց առաջ. քամին բերում էր սմբակների ձայն:

— Եթի մերոնցից լինի՝ հո լավ, իսկ որ թշնամի լինի՝... — շնչաց նա տարակուսանքով ու քաշվեց ճամփակեղբը: Սմբակների ձայնը գնալով որոշակի էր դառնում. դրան հետևեց ձիու խըրխընջոց: Տղան աներկյուղ առաջ գնաց և կիսամթնում ճանաշեց Քյահլանին:

— Ազի՛զ ջան, — բղավեց նա ու քարացավ իր տեղում: Ի՞նչ էր պատահել, ձին ուրախ չեր: Հայոք կուացել էր ձիու մեջքին: Զին դունչը քսեց տղայի երեսին, ասես բան էր ուզում ճասկացնել:

— Զվարիսնաս, ուոքս է միրավորված, — Հնչեց ճարագատ ձայնը, — է՛լ մի կանգնի, գնանք:

Տղայի կոկորդը սեղմվեց, ուզում էր ճշալ, բայց իրեն զըսպած՝ բռնեց ձիու սանձն ու գնացին:

Լիպոն օգնեց հորը ձիուց իշնելու, իր հագի շինելը փռեց գետնին, հորը պառկեցրեց վրան: Այդ բոպեին ձին ալեկոծվում, սանձաթող էր ուզում լինել, լիպոն չեր հասկանում, թե ինչու է Քյահլանն այդպես անում, երբ Ալեքն ասաց.

— Հավատարիմ ձին այդպես է անում, երբ տիրոջը միրավոր է տեսնում:

Վաղոն աշքերը բացեց. սկզբում նա չեր հասկանում, թե ինչ էր կատարվում իր շուրջը: Լիպոն հոր կողքին չոքած, ուզում էր նրա վերքը տեսնել, հայրը չեր թողնում: Վաղոն հասկացավ, հրամանատարը միրավորված էր, հարկավոր էր առաջին օգնությունը ցույց տալ: Նա շինելը նետեց վրայից, չոքելով մոտեցավ հրամանատարին ասելով.

— Թող ես վերքը կապեմ, — ու բռնեց լիպոյի ձեռքը: Ալեքը չեր ուզում, որ հիմանդն անհանգստանա, բայց Վաղոն համառ կերպով շոքել էր նրա կողքին և շնեռացավ մինչև վիրքն իր ձեռքով շիտաթաթեց:

— ՕՄհնք նրանց ջարդ տվինք, քշեցինք: Մի այսպիսի գրոհ ու ջարդ՝ ճանապարհ կը ացվի մերոնց համար, — ասաց Ալեքը:

Հուսադեմին պարտիզանները վերադարձան, որը վիրավոր որն առանց ծիռու, որն առուլգէ Նրանք մի քանի զոհ էին տվել վիրավորված էր Հրամանատարը, բայց կոփվը շահել էին: Նրանք մեծ ուժությամբ պատմում էին Ալեքս մասին, թե ինչպես էր ամենքից առաջ սլացիլ ու իր հանկարծակի հարձակումով այնպիսի խուճապ առաջացրել հակառակորդի զինվորների մեջ, որ կարծել էին թե հազարներ են նրանց վրա գալիս ու գոռացել էին.—«Փախսե՞ք, հա փախսե՞ք, կարմիր Ալե՞քն է իր զորքով եկել»:

Զոհաբը, որպես հմուտ վիրակապ, նորից փաթաթեց Ալեքս վերքն ասելով.

— Գնդակը կողքից է ծակել անցել, շատ չի քաշի, շուտ կլավանա:

Զոհաբի խոսքը աշխուժություն բերեց բոլորի վրա, մոայլ դեմքերը պայծառացան:

Այդ դեպքից մի քանի օր հետո պարտիզանները որոշեցին երկու կիլոմետր դեպի աջ շարժվել: Վաղոն արդեն առողջացել էր, կատակներ էր անում առաջվա նման: Հրամանատարն առանց օգնության կարողանում էր ձի նստել. թարմ վերքը մազաշափ անգամ չէր ընկճել նրա կամքը:

Մի լուսադեմի ապօմամթերքը և ուստիստի պաշարը հավաքած՝ ճանապարհ ընկան դեպի նախատեսված վայրը: Քարաբերդ էր կոչվում այն ժայռը, որի գագաթին հինավորց, գորշ, ատամնավոր բերդի բեկորներն էին ցցված: Կիսաքանդ բերդից շարունակ քարեր էին գլորվում, ստորոտում դիղվում: Այդտեղ թաքստատեղերը շատ կային. պարտիզանները տեղավորվեցին գորշ քարերի արանքներում: Այդտեղ հարմար դիրք էր. յուրաքանչյուրն իրեն քար ընտրեց ու տեղ, Հաննելուն պես Զոհաբը բացեց Ալեքս վերքը, իր ձեռքով պատրաստած դեղը վերքի վրա դրեց, նորից փաթաթեց:

Պարտիզաններն առույգ էին, սպասում էին Հրամանատարի վերքի բուժվելուն: Լիպոն ու Վաղոն ամբողջ ժամանակ միասին շրջում էին, ուսումնասիրում նոր վայրը: Դիշերները միասին էին գնում հետախուզության ու վերադառնում: Մի անգամ լիպոն հակառակ կողմը գնաց, առանց Վաղոյի: Նա գնաց հասկ խիտ թիուտների, հանկարծ թիուտների միջից լսվեց շան հաջոց: Տղան լսողությունը սրեց, շունչը պահած սպասում էր և

մտածում՝ «ո՞րտեղից, ի՞նչ շուն է հաշում»։ Մեկ էլ տեսավ մարմինը շագանակագույն, դմշիկն սպիտակ մի շուն, լեզուն հանած հեալով դես-դեն էր նայում։ «Ո՞ւմ է կորցրել, տիրո՞ջը, ո՞վ է նրա տերը», — մտածում էր տղան։ Քուշի՞-քուշի՞ կանչելով՝ տղան շանն ուզում էր մոտ կանչել։ Շունը մի քանի անգամ հաջեց, օտարութի նայեց տղայի կողմը ու պոչը թափ տալով վազեց դեպի Քարաբերդը, տղան վազեց նրա հետեւից։ Մեկ էլ այն լսեց, որ Վաղոն կանչում է — «եկո՞», Զեկո՞... Շունը վազեց դեպի Վալոն ու փաթաթվեց նրա ոտքերին։ Վաղոն շոյում էր շան գլուխը, ապա շոշափեց շան վզին կապած շորի կտորը, որն անմիջապես արձակեց ու միջից հանեց մի ծալած թուղթ։ Բացեց թուղթը կարդաց ու միասին վազեցին դեպի Քարաբերդը։ Լիպոն չէր հեռանում Զեկոյի կողքից։ Ալեքը մեծ ուշադրությամբ թուղթը նորից կարդաց ու գլուխը պատեց, հարկավոր էր այդ նույն տեղից շարժվել ուրիշ կողմ։ Նոր խնդիր ծագեց, բոլորը դարձան մտազբաղ։ Լիպոն Զեկոյին հացի կտորներ տվեց, շուշը մտերմացավ տղային, այլևս օտարութի շէր նայում նրան։ Ալեքը պատասխան գրեց, կապեցին նորից շան վզին, կարծես շունը հենց դրան էր սպասում, երբ ասացին՝ «Զեկո՞», դե, շո՞ւտով տար մեր նամակը, — նա այլևս չսպասեց, վազեց։ Լիպոն զարմանքով նայում էր շան հետեւից ու մտածում։ «Զեկոն էլ է մեզ օգնում»։ Վաղոն պատմում էր Զեկոյի կյանքից շատ դեպքեր, թե ինչպիսի հավատարիմ շուն է նա և ինչ ծառայություններ է մատուցում պարտիզաններին։

Ժամկեաը որոշված էր. մի քանի օրից թողնելու էին Քարաբերդը։ Պարտիզանները սառ քարերին թիկնած, կամ նստած պատմում էին իրենց պապերից ու հայրերից լսած պատմություններ։ Պատմում էին, որ Քարաբերդը հին ժամանակ պատկանելին է եղել իշխաններին։ Այդ ժայռակուռ բերդի անունը տարածվել էր հեռու, յոթ սարերից այն կողմ։ Շատ կոփէններ են տեղի ունեցել այդ բերդի շուրջը, զորք են բերել ջարդել-ջարդվել։ Բայց բերդը միշտ մնացել է կանգուն։ Լավ պատմություններ գիտցողի համբավ ուներ Զոհրաբը պարտիզանների շրջանում ու բերդի մասին ամենահետաքրքիր պատմությունը նա սկսեց պատմել, ծխամորճը կայծկլտալով, գլուխը տմբացնելով։ Լիպոն լսում էր անհապուրդ հետաքրքրությամբ։ Զեկոքը պարզեց Զոհրաբը դեպի բերդն ու սկսեց ոգևորված։

— Էղ բերդի ամեն մի քարը լեզու առած մինչև հիմա էլ պատմում է ականջիս տակ մի պատմություն: — Էս աշքերովս եմ տեսել, էս մատներովս եմ շոշափել ձիու ոտների տեղը քարերի վրա:

— Հոր մի հատիկ որդին էր Սամսոնը, սիրառ բարի մի իգիթ: Բոյ-բուսաթը շինարի, աշքունքը շողք էր տալիս Հավունի թրի պես... Նա շուրջը շատ աղքատ մարդիկ տեսավ, շատ անարդար գործ ու վարմունք, խռովեց աշխարհի հին կարգերից, ասաց ինչ՝ պիտի զոռքան խեղճին ճնշի, հարուստն աղքատին թալանի, — ասաց ու վեր կացավ, մի հրացան ուար գցեց, մի կտոր հաց վերցրեց, սարերն ընկավ, մի հրեղեն ձի փախցրեց հարուստների երամակից, թռավ ձիու մեջքին ու ասաց. «մինչև աշխարհում արդարություն վինի, ո՛չ ձիս կհանգստանա, ո՛չ ես»:

Ռուսի թագավորը ստրաժնիկներ գցած գյուղացիների մեջ՝ հարկ էր հավաքում, մեր-մանուկ լացացնում, գյուղացիների եղած-շեղածը տանում: Իգիթ Սամսոնը, որ թափառում էր սարերում, գյուղացոց լաց ու ողբի ձայնն առնում էր, գալիս էր մի թաքուն տեղից կրակ բացում ստրաժնիկների վրա ու էլի սարերը թռչում: Ստրաժնիկները գես դեն էին ընկնում, ուղում էին անպայման բռնել հանցավորին, բայց շէին կարող: Կատաղեցին ստրաժնիկները և նրանց հետ միացած գյուղի տերերը, ասացին՝ Սամսոնին բռնենք տաս տեղից գյուղախորով անենք: Իսկ շքավոր գյուղացիները Սամսոնի համար աղոթում էին, որ երկար ապրի ու սուրբ միշտ կտրուկ լինի: Այդ ժամանակ Սամսոնին միացան մի խումբ քաջ տղաներ ձիեր հեծած, հրացաններ ուսերը գցած, պեծ-պեծ կրակի պես եկան ու վրա տվին ստրաժնիկներին ու նորից փախան սարերը: Այս բանը հասնում է թագավորի ականջը, զորք է ուղարկում, որ անհնազանդ քաջ տղերանց ու Սամսոնին բռնեն պատժն: Ասում են, թոփ-թվանքով, զորքով գալիս սարերը պատում են: Սամսոնը իր ընկերներով փամփուշտ վերցրած, հենց էս Քարարերդի տակին են լինում: Զորքը գալիս շրջապատում է Սամսոնին ու ընկերներին: Սամսոնն ու իր ընկերները մտածում են՝ ի՞նչ անեն, ի՞նչ շանեն, վերջը մի գիշեր իրենց հրեղեն ձիերին հեծած՝ քարերի վրայով Քարարերդի գլուխն են բարձրանում: Նրանց թիվն էր հարյուր, իսկ ներքեմի զորքը՝ հազարից շատ էր:

Պատմում են գյուղացիք, որ մեր-մանուկ լաց էին լինում Սամսոնի ու նրա ընկերների համար: Գիշերները մեր կիսոյի շատ ճարպիկ տղաներ թաքուն ճամփերով, քարերի արանքներով օձի պես փորսով տալով բարձրանում էին Քարաբերդի վլուխը՝ փամփուշտ ու հաց հասցնում իգիթ տղերանց: Ասում են, կժերով ջուր էին տանում նրանց համար: Այդպես վերեկց նրանք կրակում են ներքեւ թշնամու վրա, իսկ ներքեկի զորքը ավելի է կատաղում, թոփ ու գնդակին զոր տալիս: Ասում են, երբ Սամսոնի ծին Քարաբերդի ժեռ կատարին ծառ էր լինում՝ ներքեկի մարդիկ սարսափի մեջ էին ընկնում, թե ի՞նչ տեսակ սիրտ ունի նա, ոչ գնդակից է վախսենում, ոչ զորքի թվից: Այդպես մեկ ամիս մնում են, պաշարված, փակում են նրանց օգնելու բոլոր ճամփաները: Սամսոնի փամփուշտները վերջանում են, նրա ընկերների փամփուշտները, հացը, զուրը նույնպես վերջանում են, բայց նրանց ուժն ու համառ կամքը չի կարողանում էդ ողջ զորքը կոտրել, նրանք մենոնում են մեկ-մեկ, բայց Քարաբերդից վար չեն իջնում ու թշնամուն հանձնվում: Սամսոնը մեկ էլ ետ է նայում ու տեսնում բոլոր ընկերներն արդեն մահացել են, մնացել է ինքն ու իր ծին, այդ ժամանակ գոռում է վիրեկց ահեղ ձայնով.—«Էյ նամարդ գուշման, մենք մենոնում ենք, բայց կդա մի օր, որ քո, կարգերի քարը քարին չի մնա, մենք մենոնում ենք, բայց կդան նոր իգիթներ ու աշխարհում արդարություն կլինի»: Ասում են նրա ծին սմբակներով այնքան է խփում քարերին, որ սմբակների տեղերը մնում են քարերի վրա ու մինչև էսօր էլ գեռ կան: Մեռնում է Սամսոնը քաչի մահով:

Այն օրվանից չի մոռանում ժողովուրդը քաջ Սամսոնին ու նրա ընկերներին: Այն օրվանից ուկատանել է դամում Քարաբերդը, մարդիկ գալիս են քարերը լիզում, արդարություն են կանչում, արդարություն են փնտրում: Ու պատմում են, որ ամենն զիշեր Քարաբերդի գլխին Սամսոնը հրեզեն ծին նստած բղավում է. «արդարությունը չի». կորչի, երբ լույս կլինի աշխարհի վրա, ևս էլ նորից կծնվեմ...»:

Սարերն ու ձորերն արձագանք են տալիս նրա ձայնին: Հույսը սրտերում ժողովուրդն է իգիթ Սամսոնին ու նրա պես շատ-շատ քաջերի սպասում:

Վերջում Զոհրաբն ավելացնում էր.

— Հե՞յ գիդի իգիթներ, մի գլուխներդ բարձրացրեք, տեսեք սար, քոլ ոտքի տակ տված՝ մենք էլ ենք կովում արդարության համար: Հե՞յ գիդի մեր հալալ եղբայրներ, ձեր արյունն է մեր արյունին խառնվել ու չենք մոռացել ձեզ—Զոհրաբը վերջացնելով՝ ծխամորճը թափ տվեց ծնկին խփելով ու լոեց: Լիպոն անսահման սիրով լցվեց դեպի քաջ Սամսոնը, միշտ մտածում էր՝ եթե կենդանի մնար, ապա ուրեմն պարտիզանական խմբերի մեջ լիլիներ:

Այդ պատմությունից հետո Լիպոն հանդիսաւ չեր տալիս Զոհրաբին, ազատ ժամանակը նրա կողքը մտած, ինդրում էր, որ նա էլի պատմի հին-հին քաջերի մասին:

Պատմության վերջում Զոհրաբը միշտ ավելացնում էր. «Քաջ Սամսոնի պես կուռդ կտնաշի, նրա պես սրոտու լինես, նրա պես անվախ լինես»:

Ուրախանում էր Լիպոն և ամեն անգամ իրեն պատկերացնում էր մի քաջ հսկա, հոր զենքն ու զրահը կապած, իսկ Քյահանին՝ Հրեղեն ձի. սլանում են հապարտ և աշխարհը դողում է նրանց ոտքի տակ:

Զեր հայտնում Լիպոն իր մտքերը ոչ ոքի, նույնիսկ իր մտերիմ Վաղոյին, Սամսոնի քաջագործություններն էին նրա ուղեղում հողմի պես պատվում: Նա ուզում էր նմանվել Սամսոնին, եթե թշնամին մեն-մենակ նրան պաշարեր, ապա ուրեմն չպետք է մոլորվեր, պիտի կովեր մինչև վերջ՝ քաջ Սամսոնի պես:



Մի առավոտ անսովոր իրարանցում էր. պարտիզանները հավաքվել էին միմյանց գլխի, շրջապատել նոր մարդկանց, որոնք եկել էին քաղաքից և իրենց հետ բերել էին կապոցներով թղթեր և բաժանում էին պարտիզաններին:

Հայրիկն ու նրա ընկեր պարտիզանները խորհրդակցում էին՝

այդ թղթերը գյուղերը հասցնելու, գյուղացիներին բաժանելու մասին: Լիպոն երեխա չէր, հասկանում էր ամեն բան և անհանգըստությունից կրծում մատները, կրունկները քսում իրար, նայում հորը և սպասում կարգադրության: Վերջապես հայրը նրան էր մոտ կանչեց և ինչպես մի հասակակից ընկերոջ հետ զրուցեց.

— Որոշված բան է, դու պետք է տանես այս թոռոցիներն ու բաժանես շքավոր ու բատրակ գյուղացիներին, հորդ պատիվը գետնով շտաս, շրունվես, սա քո ամենալուրջ քննությունը կլինի:

Տղան հուզմունքից չէր կարողանում խոսել, վերջապես պատասխանը գտավ:

— Ծիս կդառնամ, կթռչեմ, կտրից, գոնից ներս կընկնեմ՝ շեմ բռնվի... Հենց որ հասնեն թը՝ ոռ...

Երկար ժամանակ հայրը նրան խրատում էր, իսկ տղան գլխահակ լսում էր հոր ամեն մի խոսքը և սրբությամբ մտքում պահում:

Լիպոն փնտրում էր Վաղոյին, բայց Վաղոն գնացել էր «ոռօի» և այդպես էլ նրան գնալուց առաջ շտեսավ:

Առավոտը, երբ դեռ արեի շողերը չեին դիպել Քարարերդի ստորոտին, Լիպոն խուզչինը մեջքին, առույգ դեմքով՝ պարտիզաններին և Քարարերդին մնաս բարով ասաց:

9.

Մթնշաղ էր. անտառի ստորոտից ցած էր իշնում մեկը՝ բեռն ուսին հեալով: Ողջ ճանապարհը նա եկել էր առանց գաղտար առնելու, որպեսզի բեռը շուտով տեղ հասցնի: Նա մի պահ կանգ առավ, խուզարկող հայացքով ստուգեց շորս կողմը, ապա արագ քայլեց դեպի մենավոր տնակը: Դա մեզ ծանոթ Լիպոն էր:

Նրա բացակայության ընթացքում կարծես տնակն ավելի էր դորշացել ու բարդիներն է՛լ ավելի բարձր ցցվել: Իրենց բարեկամին տեսնելու պես կարծես ծառերն սկսեցին խորհրդավոր կերպով խշշալ, թէ՝ «բարով ես եկել»... Կարծես լսվեց նորից սարյակների ճովողյունը և մանկական ուրախ ճիշեր: Տղան զվարթ շշնչաց.

— Բարեկ՝ ձեզ, իմ մտերիմներ... ու աննկատ սահեց պատի

տակ: Նա պատուհանը թակեց ձիշտ այնպես, ինչպես հայրիկն էր միշտ թակում: Մայրը որդուն տեսնելու հույսը վազուց էր կարել, երբ տղան շեմքում կանգնեց, չէր ուզում հավատալ աշխարհին, ապա լաց լինելով փաթաթվեց նրան. շգփառ նախատիւթափի նրա գլխին, թե կարուն առնի նրանից: Չէ՞ որ անքոն գիշերներ սպասել էր նրան սրտատրոփի, ամեն մի թխկոց կամ շշուկ լսնվիս, վեր էր թռել անկողնից, դուռը բացել, բայց իզուր: Այժմ շոյում էր իր տղայի գլուխը, թիկունքը, երեսը: Մոր աշխատմ որդին կերպարանափոխվել, կոշտացել էր և շափահաս մարդու հաստատակամություն էր գծվել նրա դեմքին: Հանդիպման առաջին րոպեներին մայրը ու որդին լուս էին. Հետո մայրը հարց-րեց Ալեքից, նրա ընկերներից ու կռվից:

— Հայրիկը լավ է, ընկերները լավ են, կոփվն էլ... տղան խուսափեց մորը հայտնել հորը պատահած դժբախտությունը: Այդ պատճառով փոքր ինչ շփոթված նորից կրկնեց.—դե՛ կոփվներ են, էլի՛...

Մայրը խնդրեց որդուն քնել, հանգստանալ: Ինչպե՞ս կարող էր նա հանգստանալ, երբ անհետաձգելի գործ կար, յուրաքանչյուր բոլոր թանկ էր, նա մտածում էր—մորը հայտնել, թե շհայտնել: Մայրը երբ տեսավ որդու անհանգիստ վիճակը, ձեռքը գրեց նրա ճակատին՝ տեսնելու հո հիվանդ չէ: Լիսոն տեսնելով մոր գթուտ վերաբերմունքը՝ որոշեց այլևս նրանից շթաքցնել:

— Մայրիկ, տես, քեզ համար հասած վայրի տանձ եմ բերել, ընկույզի շափի մեծ-մեծ,—նա զգուշությամբ բացեց խուրջինի երեսը: Մայրը զարմացավ որդու անհոգության վրա, թե ինչպես նա ժամանակ էր գտել նույնիսկ տանձ հավաքելու:

— Իսկ տակը,—խորհրդավոր կերպով ավելացրեց տղան, — ծվարել են թերթիկները... Այսօր պիտի թոցնենք, որ ամենքը, ամեն տեղ կարդան:

Մայրը ետ-ետ քաշվեց շփոթված. չէ՛, որդին անհոգ շերինչպես կարծում էր ու պատկառանքով նայեց տղային և այն խորհրդավոր խուրջինին, որի երեսը տանձ էին լցրել շատ հականալի պատճառով:

Ողջ ճանապարհը տղան ծրագրել էր, թե ի՞նչպես պետք է վարվեր խուրջինում պահած թղթերի հետ, ուստի այլևս ժա-

մանակ չկորցրեց: Դուրս եկավ, դնաց Սամոյենց պատի տակ սուլեց, ապա Սամոյին հետն առած նորից տուն մտավ: Սամոյ ուրախացած տնտղում էր ընկերոջը. նա այնքան մոտեցավ կիպոյին, որ քիթը կապավ նրա քթին՝ ուզում էր իմանալ սարը գնալուց հետո ինչ փոփոխություն էր կատարվել նրա մեջ: կիպոյի աշքերը ուրիշ տեսակ էին փայլում, դեմքի գույնն էլ փոխվել էր:

— Այ լավ տանձ,—բացականշեց կիպոն, ապա մայրիկին և Սամոյին մի անկյուն քաշելով՝ սկսեց պատճել խորհրդավոր թղթերի մասին:

Երեքով մտասուզված նայում էին խորհրդավոր խուրչինի կողմը: Կարծես աշխարհ էր տեղավորված այնտեղ: Իսկական գործ էր սկսվում նաև Սամոյի համար: Նա անհամբեր գոչեց.

— Հենց հիմի ուզում ես անձրսի պես շաղ տամ թղթերը:

Սամոն անհամբերությամբ հա ուզում էր խուրչինը շալակել, իսկ կիպոն խփում էր նրա թերին:

— Սպասի՛ր, թող շատ մթնի...

Մայրն արդեն հաշտվել էր այն մտքի հետ, որ որդին պետք է օգներ հորն ու գնար նրա ճանապարհով: Այդ պատճառով շփմաղեց այդ վտանգավոր ձեռնարկումին, միայն խրատեց, որ ճարպիկ լինեն և զգուշ:

Կես գիշերին, երբ գյուղը խաղաղվեց, երկուառվ դուրս եկան տնից ու գնացին՝ խուրչինը հերթով շալակելով: Պատերի տակով կուղեկուզ և զգուշավոր քայլերով անցնում էին նրանք ինչպես ստվերներ: Դուռն ճեղքերից կամ երդիկներից ներս էին գցում թուցիկները: Հենց որ շուն էր հաջում, կամ ոտնաձայն էին լսում, ճարպիկ ոստյուններով իրարից բաժանվում, շարդախներն էին մտնում, կամ հանդիպած տանիքը բարձրանում:

Իրենց գյուղում գործը վերջացնելուց հետո, նրանք բռնեցին ճարման գյուղի ճանապարհը: Հենց կամուրջի վրա նրանց ճամփան կտրեցին երկու մարդ:

— Էս ժամին ո՞ւր եք գնում, այ շան լակոտներ,—հնչեց մեկի կոպիտ ձայնը:

Խրտնած հորթուկների պես տղաներն ընկան ճամփանզրը, ուզում էին մի կերպ ծլկել, բայց մարդիկ ճասան նրանց հետեւց, բռնեցին ու ճգեցին կիպոյի թեր.

— Քեզ Հետ ենք, պատասխան տուր:

Լիպոն երկար շմտածեց, իսկույն պատասխանը գտավ:

— Էս մոտիկ գյուղում մեր տատոնք են ապրում. տատս Հիվանդ մեռնում է, մեզ կանչել են, գնում ենք տեսության:

Մինչ լիպոն պատասխան էր տալիս ճանապարհը փակողներին՝ Սամոն ահագին տեղ խուրչինը փախցրեց նրանց աշբից: Այս անգամ մի կերպ վտանգից ազատվեցին:

Նոր գյուղում, ուր նրանք ոտք դրին՝ գործն ավելի արագ ընթացավ, միայն շներն էին, որ երթեմն վրա էին ընկնում՝ ճափհափ անելով: Եթե տղաները ճարպիկ ու արագավազ շինեին, գյուղի շները նրանց վրա բլուզ-շալվար չէին թողնի: Թուուցիկները այդ գյուղն էլ մուտք գործեցին: Խուրչինը դատարկվեց, մի հատիկ թուուցիկ մնաց նրա մի պարկում: Տղաները վերադառնում էին գործը վերջացրած, անհոգ, աներկյուղ: Լիպոն երգում էր կամացուկ Սամոյի ականջի տակ իր հնարած երգը:

Են մութ ձորերում

Գայլերն են ոռնում.

Հայրս պարտիզան,

Ես շեմ վախենում:

Երգն աշխուժ էր հնչում: Սամոն ինքն էլ սկսեց բթի տակ երգել: Հանկարծ ամպի պես որոտաց մի ձայն.

— Զգա՞ստ...

Տղաները լուս կանգնեցին: Մթնում կախվեց մի գլուխ: Դա պահակ էր, թե հետախուզվագ, — այդ կարևոր չէր, կարևորն այն էր, որ բարեկամ չէր: Լիպոն շրթունքները կրծոտելով մտածում էր ազատվելու հնար գտնել: Խոկ Սամոն կտավի պես սպիտակեց. չէ՝ որ խուրչինը նրա ուսին էր:

— Էս մթանը որտեղից եք գալիս, ո՞վ է ձեզ դրկել, ի՞նչ եք տանում, — սարսափելի աշքերը շովեցին, ձայնը սղոցի պես խղաց:

— Պանտա էինք տարել մեր տատոնց տուն, հիմի ետ ենք գալիս, — պատասխանեց Լիպոն հուզված:

— Ոչ պանտա, ոչ տատոնք ես շեմ հասկանում, այդ տեսակ բաներ ինձ մի՛ ասեք, առաջ անցեք: Հիմի ես ձեզ ցույց կտամ...

Լիպոն պատասխան էր տալիս համարձակ, վիճում. այդ միշտ չոցին Սամոն մեջքը դարձրած դեպի այն մարդը, արագործն հանեց խորչինում մնացած թռուցիկն ու դրեց ծոցը:

— Բաց արեք խորչինը, —բղավեց մարդը հրմշտելով տղաներին: Ապա ձեռքը գցեց խորչինի մեջ՝ հուսալով մի բան գտնել այնտեղ, բայց ոչինչ չգտավ:

— Ես ձեզ վրա կասկած եմ տանում. դուք սատանի ճուտեր եք, որովհետև էս տեսակ մութ գիշեր սատանի ճուտերը գյուղից գյուղ կդնան: Մտածեց, մտածեց ձեռքը քունքին դրած ու որոշեց, —գնանք, դուք իմ գերիներն եք:

— Քեռի՛, որք ենք, քաղցած, մեզ գերի մի՛ վերցնի, —ասացին տղաները միաբերան:

Մարդն իր որոշումից ետ չկանգնեց, հրացանի փողը տղաների մեջքին դեմ տված հրելով՝ տարավ հասցրեց մի մարագի ցուռ:

— Ա՛յ, այստեղ դուք կմնաք, խելքներդ գլուխներդ կգա, մինչև ձեր գործը պարզեմ, թե ի՞նչ պառողներ եք... Ուրիշ ոչ մի խոսք, ներս կորեք:

Դուռը բացեց ներս գցեց տղաներին, հրացանը դրեց ոտների արանքը և ափերի մեջ թքելով, որպես նախնական պատիժ, միմի ապտակ հասցրեց նրանց երեսին: Ապտակի տեղերը կարմրեցին: Լիպոն համբերությունից դուրս եկած՝ ուզում էր բռնել մարդու կոկորդը. Սամոն հասկանալով ընկերոց մտադրությունը, նրա ոտքը պինդ տրորեց:

Մարդը դուռը նրանց վրա կողպեց ու գնաց հայտնելու, որ իր պահակության ժամին բռնել է երկու կասկածելի տղացի:

Մարագը նեղմիկ էր. կիսով շափ հարդով լցված: Տղաները պառկիցին հարդի վրա:

— Ա՛յ քեզ փորձանք, —շշնջում էր Լիպոն աղատվելու հնար փնտրելով:

Սամոն, որ համեմատաբար ավելի անփորձ էր, ավելի շատ էր ընկճված, գլուխը թույլ կախել էր կրծքին: Նա առաջին անգամն էր բանտ տեսնում, բայց որ նայում էր Լիպոյի համարձակ աւշքերին՝ սրտապնդվում էր:

— Լիպո՛, մեզ ի՞նչ կանեն, —հարցրեց Սամոն:

— Կհարցաքննեն, դու շխռես, մենակ ես կխռում, տե՛ս բերանիցդ բան շթոցնե՛ս:—Մատը սպառնալից թափահարեց կիպոն:

Սամոն կծկվեց ու ոչինչ շասաց:

Կիպոն այդ նեղ ժամանակ հիշեց Զոհրաբի հրաշալի պատմությունը, թե ինչպիսի գմկարություններ են Հաղթահարել քաջմարդիկ, թե ինչպես են մեն-մենակ քար-պատնեշներ ծակել ու դուրս եկել: Իսկ ինչ էր այժմ, բանտ կոչվածը մի խարխուկ մարսագ: Հոր պատկերը դեմք եկավ, որ արիություն էր ներշնչում իր համառ հայացքով, հիշեց աներկյուղ Վաղոյին: Ու հրաշքով ասես ուժ եկավ տղայի վրա, վեր կացավ ըմբիշի պես մենամարտեպատրաստ, սկսեց վազվզել նեղվիկ մարագում: Ոտքով ցրիվ էր տալիս հարդը՝ մինչև առաստազը փոշի հանելով, պատերին էր զարկում ոտները, դուն վրա էր ընկնում. արմունկներով զոռ տալիս, բոթում, մեջքով խփում...

Սամոն զարմացած նայում էր ընկերոց շարժումներին և ըսպասում, թե ինչ էր անելու:

— Վե՛ր կաց, Սամո՛, դուռը ջարդե՛նք, — վճռեց կիպոն ու գնաց եկավ դրա խեկ՝ դռանը խփեց ոտքով:

— Կա՛ց, ի՞նչ ես տաքացել, աղմուկ սարքում. հիմի կգան մեզ կմորթեն, — Սամոն բռնեց կիպոյի ոտները:

— Չես ուզո՞ւմ փախչել, — հարցրեց կիպոն զարմացած:

— Ուզում եմ, բայց ուրիշ տեսակ, ա՛յ, — նա ցուց տվեց մարագի հողե ցածրիկ տանիքը, որի ձեղքերից լույս էր թափանցում և հողն անընդհատ մաղում:

Կիպոն հավանություն տվեց այդ լավ առաջարկին ու է՛ վայրկյան չկորցրին: Սամոն ամուր հենվեց պատին, կիպոն կանգնեց նրա ուսերին ու ձեռքը հասցրեց առաստազին, մի քանի անգամ բռուցքով ուժեղ խփեց, հողը թափվեց առատորեն ու ձեղքը լայնացավ: Սամոն դրապանում պահած դանակը տվեց ընկերոջը, որպեսզի ավելի հեշտ փորեր տանիքը:

— Ծո՛ւտ արա, ուսերս ցավում են, նրանք էլ հիմի կգան, — շնչում էր Սամոն կիպոյի ծանրության տակ ձկած: Իսկ կիպոն փորում էր, հա փորում, ձեռքերը ձանկուտելով, ողջ մարմնով քրտնած: Վերջապես նա պոկվեց Սամոյի ուսերից ու սողալով

դուքս եկավ լայն բացված ջեղքից, հետո գլխի վրա կախվեց
ներքև ու ձեռքերը մեկնեց Սամոյին:

— Ոտքդ զիր պատի քարերին, ձեռքերդ տուր ինձ,—սովորեցնում էր նա Սամոյին:

Սամոն ճոճանակի պես օդում ոտքերն օրորում էր, իսկ կիպոն ուժով քաշում էր նրա ձեռքերից: Դուան վրա շմկչիսկոց լսեցին: Լիպոն վերջին ուժերը գործադրեց ընկերոջը՝ դուքս բերելու այն վտանգավոր տեղից: Եվ ահա երկուսով վանդակը կոտրած թռչունների պես ազատ թառեցին տանիքի վրա:

— Այ քեզ գերի,—շշնչաց կիպոն ծիծաղելով,—դե՛ հիմի փախչենք՝ քանի մեր հետեւց չեն հասել: Մինչ մարդիկ մարագի դուռը բացին, ներս մտան, Հարդն էին շուռ-մուռ տալիս, տղաներն այդ միջոցին տանիքի վրայից ցատկեցին ու վազելով մտան մի փոսի մեջ: Այդտեղ մի քիչ սպասեցին, երբ տեսան վտանգն անցավ, մարդիկ մարագում ոշինչ ցգտնելով, իրար հետ կովշտելով գնացին, իսկ տղաները մի այլ ճանապարհով՝ առանց ետնացելու անցան բլրի հետևն ու ազատ շունչ քաշեցին: Դիպքն այնքան անակնկալ էր, որ նրանք չեին խոսում միմյանց հետ, վազում էին ձեռք ձեռքի տված: Հասան գյուղ և այդտեղ էլ ընկան մի ուրիշ ազմուկի մեջ: Գյուղն անսովոր իրարանցման մեջ էր: Մարդ, կին, երեխա այս ու այն կողմ էին վազվզում, շները հաջում էին: Հանդուգն փախստականները բարձրացան հենց առաջին իսկ պատահած տանիքը, այնտեղից դիտում էին գյուղի անց ու դարձը: Լիպոյի կարգադրությամբ Սամոն գնաց տեղեկություններ բերելու: Թուոցիկները բակերում, տներում գտել, կարդացել էին գյուղացիները և այժմ խոսում, վիճում էին թուոցիկների շուրջը: «Հոդ և ազատություն» բղավում էին ըմբռուները: «Մենք շենք ուզում ստրուկ ապրել», — լրացնում էին ուրիշները:

Մի դաշնակ խմբապետ խիտ հոնքերի տակ արնակալած աշքերը շրած՝ ժողովրդի մեջ ընկած գոռգոռում էր, ահարեկում ամենքին:

— Թուոցիկներ տարածողի տեղն ասեք, թե չէ բոլորիդ դամշիս տակ կառնեմ, շանսատակ կանեմ: — Նրան ուզեկցում էին երկու մասուղերին և կրկնում նույն խոսքերն ավելի կոպիտ ձեռվ:

Գյուղացիներից ոմանք ասում էին, թե ո՞ւմ մեղքը վերցնեն, քանի որ չեն իմանում, ոմանք էլ ուսերն էին թոթվում։ Զեշաբարի պես ծակ-ծակ երեսով մի պառավ կին պատմում էր ձեռքը բերանին գրած։

— Գիշերը աշքս նոր էր կպել, շներն էլ հաջում էին, գլուխս բարձրացրի երկու տղա աշքիս ընկան։ — Գլխի շեղա, թե չէ հարայ կկանչեի... Հիմի կասկածում եմ, որ նրանք են...»

— Պառավ, հոգուդ մեղք մի՛ անի, — ամեն կողմից վրա տվեցին գյուղացիները։ Այդ միջոցին Դազու և Թեոս եղբայրներն օգնության հասան խմբապետին։

— Մենք գիտենք, ա՛յ, էն տանից են դուրս եկել թղթերը, — ձեռքերը պարզեցին գեպի մենավոր տնակը։ — Լիպոն է տարածողը... — ավելացրին նրանք։

Խմբապետն ու մյուս մասնակիւստները վագեցին դեպի մենավոր տնակը։ Գյուղացիները կրո՞ն տվեցին նրանց հետեւյ։ Սամոն հեալով խցկվեց նրանց արանքը։ Խոկ լիպոն իր տեղը շմնաց, մի՛թե նա կարող էր այդքան համբերել, պատերի գլխով, կտուրների վրայով մագլցելով առաջ էր գնում ու սպասում թե ինչ էր լինելու։

Մենավոր տան դուրը աղմուկով բացվեց. Լիպոյի հիվանդ մայրը շփոթված կանգնեց շեմքին։

— Մարդիդ տեղն ասա՛, տղայիդ տեղն ասա՛, թե շես ուզում պատիվդ կորցնել, — գոռաց խմբապետը։

Կինը զայրուցից գունատված պատասխանեց կարճ, որ իր ամուսինն ու որդին վաղուց է, ինչ աշխատում են քաղաքում։ Գազաղած խմբապետը քաշշքում էր հիվանդ կնոջ թեմերից, որպեսզի կինն ստիպված լինի խոստավանել, բայց իզուր, նա այլևս ոչինչ շասաց։ Այդ ժամանակ գյուղացիներից մի քանիսը մեջ մտան ու շթողին, որ խմբապետը շարունակի իր բռնությունները կնոջ նկատմամբ։

— Ի՞նչ ես ուզում խեղճ հիվանդ կնոջից. Հաշիվ ունես՝ մարդի հետ տես, — աղաղակեցին նրանք։

Մտրակն իշավ միջամտող գյուղացիների թիկունքներին, երեսին։ Հենց որ այդ բանը տեսան կանայք՝ վախ վիշը գցեցին։ Ճշացին՝ օգնեցե՛ք... Վախկոտները մի կողմ փախան, խոկ ըմբոստները կուի մեջ մտան։ Ըմբոստների մեջ էին Արմոյի և Մո-

սիի հայրերը, որոնք համակրում էին բալշեկներին։ Զնայած կովի սարսափին՝ երեխաները պոկ չեկան իրենց հայրերից։ Այդ խառը րոպեին Դալզոն Քրիտրած՝ մատը պարզեց դնապի Սամոն։

— Սա կիմանա կիպոյի տեղը, կիպոյի մոտիկ ընկերն է.

Խմբապետը մեծերին թողած արնակոխ աշքերը շուած հարձակվեց Սամոյի վրա և իր ուժեղ ձեռքերով բռնեց նրա կոկորդը։

— Ա՛յ, քննուած, ընկերոջդ տեղն ասա՛, թե չես ուզում գորտի պես ուտիս տակ ճիշեմ...

Սամոն ցավից գեմքը ծռած՝ բղավում էր.

— Ես չեմ իմանում...

Արմոն ու Մոսին կորյունների պես համարձակ պտտվում էին Սամոյի շուրջն ու բղավում։

— Քեռի՛, դա մեղք շունի, խեղճ տղա է, բա՛ց թող...

Իսկ Դալզոն ու Թեսուը միաբերան հաւկառակն էին պնդում։ — Հենց գրանք են գյուղը խառնողները։

Կիպոն ականատես էր այդ ողջ տեսարանին. նա ծոցը քարերով լցրած դիրք էր մտել դիմացի տանիքի վրա՝ ծիննելույզի հետեւ և ուզում էր նետել քարերն իրար հետեւից ու շար մարդկանց գլուխները պատռել, բայց իրեն զսպելով ետ-ետ էր քաշվում ու շշնջում։

— Զէ՛, լավ է համբերեմ, թող շտեսնեն ինձ... Մեկ էլ ներքենայի ի՞նչ տեսնի, խմբապետը նորից բռնել է Սամոյին՝ քիչ մնում գզգզի։ Գյուղացիներից մի քանիսն առաջ էին ընկել, երեխաները գոռում էին ու մի ակնթարթում Սամոն դուրս պրավ խմբապետի ձեռքերից ու փախավ։ Խմբապետն ու մառզերիստները տեսան, որ բան չի դուրս գալիս հայնոյելով, սպառնալով գնացին։ Լիպոյի մայրը գլխի շորն աշքերի գեմ բռնած լաց էր լինում, անիծում չար խմբապետին, իսկ Ալեքի ընկերներից երկուաը նրան հանգստացնում էին ու կամաց շշնջում։ — Ոչի՞նչ նրանց օրերը հաշված են...

Մայրը ներս մտավ ու գունը փակեց։ Արմոն ու Մոսին ճնճղովների պես միատեղ թռան կիպոյենց տուն ու մորը հայտնեցին, որ խմբապետը որոշել է նրանց տան մոտ սկահակ կանգնեցնել, կիպոյին բռնել, տեղն ու տեղը կիսել։ Մայրն արցունքը սրբելով աղաշեց Սամոյին, որպեսզի որդուն զգուշացնի, այդ

գիշերը տուն չգա: Սամոն հանգստացրեց նրան ու շտապ դուրս եկավ տնակից: Մութը ու ծածկոցի պես փռվեց գյուղի վրա: Ամենքը քաշվեցին իրենց տները: Մենակոր տան ճրագն այդ գիշեր չվառվեց: Մայրը դուռ լուսամուտ ամուր փակեց ու վրշտացած անկողին մտավ:

Սամոյենց խոտի դեղի տակ պահ մտած կիպոն սպասում էր գիշերվա խորանալուն, որ ճանապարհ ընկնի: Նա մենակ չէր, Սամոն էլ կծկվել էր նրա կողքին:

— Դու կռվել իմանո՞ւմ ես,—հաղիկ լսելի ձայնով շշնչաց Սամոն նրա ականջի տակ:

— Իմանում եմ, դեռ մի «քեռի բաղ» էլ թալալեցրի գնդակով, —պատասխանեց կիպոն խիստ խորհրդավոր ձայնով ու շուրջը նայելով: Սամոն մթնում չուել էր աշքերն ու չէր իմանում այժմ իրեն առջև հասակակից կիպոն է կանգնած, թե կոփմների մասնակցած իսկական զինվոր:

— Ի՞նչ «քեռի բաղ», —հարցրեց ձայնը դողալով:

— Են, որ այսօր քեզ ուզում էր խեղդել, էն, որ այսօր մորս էր քաշքում՝ էդ տեսակ «քեռի բաղ»:

— Ուխայ, —ձեռքը քսեց սրտին Սամոն ու ձայնն ավելի ցածրացնելով հարցրեց, —ճշմարի՞տ...

— Բա կարծում ես կատակ եմ անո՞ւմ. ով շի իմանում ձի նստել, հրացան կրակել՝ նրան պարտիվանները շեն պահում իրենց մոտ, —պատասխանեց կիպոն հպարտ:

Սամոյին ամենից շատ հետաքրքրում էր այն, թե ինչպես է հրացանը պայթում, թե արդյոք մարդու վրա կրակելիս ձեռքը շի դողում: կիպոն բացատրում, ցուց էր տալիս, ինչպես պետք էր բռնել հրացանը:

— Ո՞վ է հաղթում կռվում, —հարցրեց Սամոն վճռական պատասխանի սպասելով:

— Մենք:

— Բա ինչպես մենք, չէ՞ որ նրանք էլ հրացան ունեն, —նորից հարցրեց Սամոն:

կիպոն հիշեց հոր և պարտիվանների խոսքերը ու թեքվելով ընկերուշ ականջին շշնչաց.

— Ճշմարտությունը մեր կողմից է, դրա համար մենք...

Սամոն ընկերոջ առաջին և նշանակալից խոսքը հիշելով՝
ուրախությունից աղաղակեց, բերանը դեմ անելով խոտին, որ-
պեսզի ձայնը չտարածվի օդում:

— Ճշմարտությունը...

Տպավորությունը խոր էր, մութ գիշեր, խոտի դեղը հովա-
նոցի պես կախված, պատսպարում էր երկու ծպտյալներին։
Լիպոն մի քանի մանրամասնություններ պատմեց, թե ինչպես
մութ գիշերներին ինքն ու մի ուրիշ քաջ պարտիզան գնում էին
հետախուզության, թշնամու հետքն էին փնտրում. եթե թշնամին
նկատում էր նրանց՝ իրենք թաքնվում էին։ Շատ անգամ էր պա-
տահել, որ անցել էին գնդակների տարափի միջով, մտել էին
ծառերի հետեւ, բարձրացել էին ծառերի կատարները, սողացել
քարախորշերով ու հարմար դիրքից տրա՝-տա՝-տա՝ կրակ էին
բացել թշնամու վրա։

Խշշում էր չոր խոտը, Սամոյին թվում էր՝ հաղարավոր հրա-
ցաններ էին միանգամից ճայթում։ Մութն ավելի թանձրացավ,
լիպոն պայուսակը կապեց մեջքին։

— Կա՛ց, ես էլ եմ գալիս քեզ հետ, — աղերսեց Սամոն վիզը
ժռած։

— Չէ, դու պետք է մնաս այստեղ, ուրիշ գործեր կան, մայ-
րիկիս կնայես։

Լիպոն մեծ եղբոր պես համոզեց նրան, ապա մնաս բարով
ասաց։

Սամոն տիրամած նայում էր նրա հետեւից ու մտածում.
«Գյուղում ուրիշ լավ տղաներ կան, բայց ոչ ոք լիպոյի տեղը չի-
բռնում»։ Լիպոյի հետ ունեցած մտերմությունն ուրիշների հետ-
չէր կարող ունենալ, ինքն էլ չէր կարողանում բացատրել, թե ին-
չու։ Ափսոս որ իր հայրը պարտիզան չէր, ինքն էլ կոփվ կգնար-
լիպոյի պես համարձակ։ Սամոն դեռ կանգնած մտածում էր գըլ-
խիկոր, իսկ լիպոն վաղուց չբացել էր նրա աշքից ու ձուլվել խա-
վարին։

10.

Գաշնակ զինվորները ճամփորդներին թալանում էին, ծեծի
ենթարկում, ամեն տեսակ սպառնալիքներ կարդում ու շատ շա-
տերին ահաբեկում։ Այդ խիստ վտանգավոր ժամանակ չէր վա-

խենում միայն այն ոտաբորիկ տղան, որ ճարպիկ ոտներին ուժով տալով՝ մեկ այս, մեկ այն ճամփագլխին էր ցցվում և սպասում ընկերոջ վերադարձին։ Ոչ ոք չեր կարող կասկածել այն միամիտ տղայի վրա, որը սովելով անցնում էր ճանապարհից ճանապարհ, հետամուտ էր լինում, թե գյուղից ե՞րբ, ո՞վեր էին դուրս գալիս և ի՞նչ էին փոխադրում։ Այստեղ, որտեղ մարդիկ էին խմբված լինում, նա մոտենում էր, քայլերը դանդաղեցնում, ականջը սրում։ Հանկարծ մտնում էր այն խրճիթը սև աշքերը ճպճպացնելով հաղորդում էր հարազատ քեռիներին, թե ո՞րտեղ ի՞նչ էր տեսել, կամ ո՞վ ի՞նչ էր ասել։ Այդ Սամոն էր։

Այստեղ արգեն նա ներկայանում էր որպես շափահաս մարդ, որին հուզում էին գյուղում կատարվող վեպքերը։ Նա ուզում էր իր աշքով տեսածը ճշգրիտ կերպով պատմել Ալեքի ընկերներին, որոնք գաղտնի ժողովներ էին անում և որոշում՝ ո՞վ ո՞ւր պիտի գնար և ի՞նչ պիտի աներ։ Սամոյի մասին ասում էին, «ըրաբեր աղավնին եկավ»։ Սամոն պատմում էր ամեն ինչ մանրամասնությամբ ու նորից գնում գյուղը շրջելու։ Հովիվը բողոքում էր, որ վերջերս իր որդին քիչ է տանը նստում և ուշքն ու միտքն էլ վրան չեր, իսկ Սամոն համառ կերպով լուսմ էր, իր գործերի մասին ոշինչ չեր ասում, որովհետեւ երգվել էր նույնիսկ իր հորն էլ շասել, թե չե ամենքի աշքից կընկներ, էլ չե՛ր լինի կիպոյի հավատարիմ ընկերը։ Զէր մոռացել նաև կիպոյի պատվերը՝ նրա մորը նայել ու վերջերս կիպոյի մոր հավատարիմ բարեկամներից մեկն էր դարձել նա։ Դուռը ծեծում էր կամացուկ, ներս մտնում՝ տեսնի մոռաքույրն ի՞նչ է անում։ Մեծավարի նստում էր նրա կողքին, հույս էր տալիս, որ շմտածի, ասում էր կիպոն շուտով կվերադառնա։ Սամոն չեր թողնում մոքիրի փայտը պակասի, օջախի կրակը հանգի. շուր էր բերում աղբյուրից ու շրջում էր մենապորտնակի շուրջը՝ տեսնելու թե շար մարդիկ հո չե՞ն ուզում մոռաքրոջը նեղացնել։

Այն դաժան գեպքից հետո, երբ խմբապետը քաշքշել, կապատացրել էր կիպոյի մոր թեերը, մայրը շատ էր փոխվել. ավելի զգայուն էր դարձել, փոքր շմկոցից վեր էր թոշում, հայացքը լարում, կարծես պատրաստվում էր հարձակման։

— Ա՞ի, երբ կինի աշխարհից ջնջվեն անկուշա, դայլ մարդիկ, ա՞յս, ե՞րբ կինի աշխարհը փոխված, տեսնենք, բարին,

Հաղթած, — շշնչում էր նա ու աշքերը վառվում էին պայքարի տեսնդով: Նա իր տրամադրություններով վարակում էր նաև Սամոյին, որը երազում էր կիպոյին հասնել, նրա պես հրացան ունենալ, մասնակցել կովին: կիպոյի մայրը պատմում էր Սամոյին ծանր դեպքերից, ինչպես մառզերիստները ծեծում ու շարշարում էին աղքատ գյուղացիներին. պատմում էր, հառաշում:

— Գիտե՞ս, Սամո ջան, քո հայրը խեղճ հովիվ է, մենք էլ բանվորի ընտանիք ենք ու միանման սիրու ունենք. շենք սիրում զորբաներին: կիպոյի մայրը ոգևորված կանգնում էր, Սամոն էլ էր կանգնում ու երկուառվ մտազբաղ գնում էին գալիս խրճիթի երկայնքով մեկ: Սամոն սկսում էր շատ բան հասկանալ, շատ բան սովորել նրանից. զարմանքով աշքերը ճպճպացնում, մտածում էր, որ մորաքույրն էլ կարող է կովել ու շէր համարձակվում հարցնել, թե նա կրակել կարո՞ղ է:

— Մոքիր, դու է՞լ բալշեիկ ես, — հարցնում էր Սամոն:

Անմիջական պատասխանի փոխարեն կիպոյի մայրն սկսում էր զայրույթով.

— Իմ ձեռքերով կճանկուտեմ խմբապետի մոռվթը, նա ինձ անպատճեց, — ասում էր նա, ապա հանդարտ նորից շարունակում, — դու էլ իմ որդին ես, Սամո, կիպոյիցս ես քեզ շեմ ջռկում. աշքդ բաց պահիր...

— Ես հասկանում եմ, մոքիր, համ էլ փոքր շեմ, — հուզմունքից կարմրած պատասխանում էր Սամոն:

Բացի Ալեքի ընկերներից, մայրիկից ու Սամոյից ուրիշ ոչ ոք չէր իմանում գյուղում, թե երբ էր կիպոն սարերը գնում ու երբ վերադառնում: Սովորաբար գիշերներն էր նա գալիս, նամակներ էր բերում և հաղորդում Ալեքի ընկերներին, որ մթերք և ուղամամթերք հասցնեն պարտիզաններին:

Լուսնկա, աստղազարդ մի գիշեր կիպոն վերադարձավ և նամակներ բերեց գյուղի ընկերներին: Մայրն ուրախացավ, իր սիրասուն թռչնիկին շերմ կարուտով սեղմեց կրծքին ու այս անգամ լաց շեղավ, այլ անաց.

— Հորդ օգնական եղի՛ր, սովորիր լա՛վ կովել...

Երկու ընկերները գնացին. նամակները հանձնեցին ո՞ւմ որ հասցեագրված էր ու նորից տուն վերադարձան: Մայրը կիպոյի շորերը փոխեց, մի կապոց շոր պատրաստեց Ալեքսի համար: Սամոն չէր հեռանում կիպոյի կողքից, ուզում էր ամեն բան իմանալ, խորապես թափանցել կատարվող դեպքերի մեջ: Իսկ կիպոն քանի գնում՝ լրջանում և գաղտնապահ էր գառնում: Նա խոսափում էր կովի մանրամասնությունները պատմել, եթե մայրիկն ու Սամոն հանկարծ բերաններից թոցնեին, այն ժամանակ ի՞նչ կստացվեր, չէ՞ որ կիպոն կկորցներ այն վստահությունը, որ տածում էին պարտիզանները դեպի նա: Այդ պատճառով հաճախ խոսքը փոխում էր, մայրիկի առողջությունից էր հարցնում, Սամոյի հոր մասին, գյուղի շարանձիներից:

Լուսաղեմին կիպոն պատրաստվել էր գնալ, երբ Սամոն հերձե տուն ընկալ, կարծես ավագակների ձեռքից փախած լիներ: Կիպոն բռնեց նրա ձեռքը:

— Ասա տեսնենք, ի՞նչ է պատահել, ո՞վ է ծեծել քեզ:

— Չէ, ուրիշ բան...

— Ախր ի՞նչ բան, շուտ ասա, — հարցրեց կիպոն վախեցած, — իմացե՞լ են որ եկել եմ, կամ ի՞նչ են խոսում...

— Չէ, հրացանների տեղն են իմացել, այն որ Արմոյինց մարագում պահել են մերոնք, — հայտնեց Սամոն:

— Վա՛յ, քոռանա՞մ, — ծնկներին խփեց կիպոյի մայրը:

Իսկ կիպոն լուր էր, նա կապոցը մեջքից ցած դրեց, նոր խնդիր ծագեց — ո՞ւր տանել հրացանները: Ինչպես երկում էր՝ մատնողներ են եղել, հարկավոր էր փրկել: Կիպոն և Սամոն գնացին այն գաղտնի խրճիթը, որտեղ դարբին Սեթը մտահոգված էր, եկել էին և մյուս ընկերները և մտածում էին, թե ինչպես անեն որ հրացանները շընկնեն թշնամու ձեռքը: Վերջապես հնարը գտան, ինչ գնով ուզում է լինի, պետք է այդ գիշեր փոխադրեն հրացանները մի ուրիշ տեղ: Այդ ուրիշ տեղը որոշվեց, Սամոյինց կարտոփիլի հորը: Այդ գործը կազմակերպում էր դարբին Սեթը, իսկ մյուսները պետք է օգնեին նրան: Ամբողջ օրը նրանք զբաղված էին: Կիպոն գնաց Արմոյի մոտ, նրա ականջին շշնջաց, Սամոն մի քանի ուրիշ տղաների հետ խոսեց ու կես գիշերին մի խումբ մարդիկ ու պատանիներ գործի անցան: Տղաները սողալով

մտան մարագ, այնտեղից հանում էին հրացաններն ու փախցը-նում էին դեպի Սամոյինց տունը: Դարբին Սեթը պահակ էր կանգնել. Արմոյի հայրը ներսից հրացանները տալիս էր տղաներին: Զարմանալի արագությամբ կիպոն հրացանները տանում էր ու վերադառնում:

Կես գիշերին հարայ-հրոցն ընկավ, գյուղացիները դուրս թափեցին տներից: Մի խումբ զինված մարդիկ վրա էին հասել ու տեսել մարագի դուռը բաց: Նրանք նեղն էին գցել Արմոյի հորը, որպեսզի հայտներ, թե ո՞վ էր այդ բանն արել: Մինչ նրանք վեճի էին բռնվել՝ կիպոն մարագի պատի մեջ փորված մի անցքից հրացանները դուրս էր տալիս, իսկ տղաները փախցնում էին: Կիպոն Արմոյի ականջին շշնչաց. Արմոն կայծակի արագությամբ վազեց ու իրենց գամփռ շան շղթան արձակեց: Շունը հաջում էր, երեխաներն աղմկում էին, այդ խառը ժամանակ օգնում էր նաև կիպոյի մայրը. նա էր հրացանները հորի մեջ լցնում: Կիպոն պատի տակ հանդիպեց Սամոյին ու կամաց շշնչաց.

— Գործը վատանում է, մեղ կարող են բռնել, մի հնար պետք է գտնել, — մի փոքր տեղ շշնչալով գնացին: Քիչ հետո Արմոն ծղրտալով վազեց ու ընկավ հավաքված մարդկանց մեջ.

— Հասե՞ք, եկա՞ն, բալշեկիները քանդել են կամուրջը...

— Ո՞ր կողմից եկան, ի՞նչպես թե, — աղաղակում էին մյուսները:

— Այ գնացեք, իմ աշքով տեսա:

Այդ հայտարարությունից հետո շփոթություն ընկավ խըմբված մարդկանց մեջ ու սկսեցին բոլորը վազել դեպի կամուրջը: Մառազերիստները, որ բռնել էին Արմոյի հոր կոկորդը, բաց թողին ու իրենք էլ վազեցին դեպի այն կողմը: Այդ խառնաշփոթյունից օգտվեցին տղաները: Կիպոն վերջին երկու հրացանը թևի տակ փախչում էր, երբ մի մառազերիստ հասավ նրա հետեւց ու բռնեց: Փոքրիկ Մոսիին սովորեցրել էին տղաները, որ աղաղակեր, թե բալշեկիները եկել են: Մոսին տեսնելով կիպոյին վտանգ է սպառնում, աղաղակեց.

— Քեռինե՞ր, կոփե՞վ է, հասե՞ք, բալշեկիները վրա տվին կամուրջին: Այդ մառազերիստն էլ շփոթված քաշ տվեց կիպոյին, հրացաններն ուզում էր խլիլ, բայց կիպոն կատաղած կծեց նրա ձեռքն ու հրացաններն աղատելով փախավ:

Մարագը մտան երկու հոգի, լուցկի վառեցին, տնտղեցին շորս կողմը, ապա ապշած նայեցին իրար:

— Այ քեզ զենքի սլահեստ... Պահեստում մնացել էր մի կոտրած գնդացիր և դատարկ փամփուշտապարկեր:

Խուզարկիչները երբ տեսան պահեստը դատարկված, սկսեցին օդում կրակել: Կրակոցներին խառնվեցին շների աղեկառու ունոցները: Սարսափը պատեց գյուղին. գյուղացիները տուն մտան, դոները փակեցին շնչալով. «Ժամանակը վատացել է»:

Քնած չէին միայն մենավոր տան բնակիչները, կիպոն մի քանի ժամից ճանապարհվելու էր գեղի սարերը: Սամոն, որպես արթուն պահակ, շրջում էր գուրսը, որպեսզի կասկածելի մարդիկ նկատելիս իմաց աներ:

Նույն գիշեր կիպոյին ճանապարհեցին գեղի ուղղակետ: Բաժանվելիս՝ Ալեքի ընկերներն ասացին նրան.

— Մենք կուզարկենք փամփուշտներ և հրացաններ:

Այդ գիշեր մի խումբ տղաներ դարբին Սեթի զեկավարությամբ փախցրել էին հարյուր հատ հրացան և բազմաթիվ փամփուշտ: Սամոյենց կարտոֆիլի հորը բերներերան լցվել էր զենքով: Հետքը կորցնելու համար վրան դարսել էին փայտ և խոտ:

11.

Նրա համար սովորություն էր դարձել գիշեր ժամանակ ճանապարհ գնալը: Այլևս չեր սարսափում խիտ անտառների խորհրդավոր խշշոցից, մութ-մութ ձորերից, կամ ճամփանեղրին կախված ահավոր ժայռերից: Այս անդամ բեռը թեթև էր. ոտքը չեր ցավում ու չեր հոգնում: Փոքրիկ կապոցում տանում էր հորշորերը և մի շաբթ գաղտնի նամակներ՝ գյուղի ընկերներից: Նաշտապում էր շուտով տեղ հասնել, պատմել գյուղում կատարված անակնկալ դեպքերի մասին: Ճանապարհը կարճելու համար՝ սկսեց երգել ցածրաձայն իր հնարած պարտիզանական երգը:

Էն մութ ձորերում

Գայլերն են ոռնում.

Ճամփաս չեմ ծոփ

Ես չեմ վախենում:

Հայրս պարտիզան
Ահ շոնի սբոռում,
Ռճի—ծի, հրացան
Թշնամուն է ջնջում...

ին սեգ սարերում
Արծիվն է իջնում.
Հրացանն ուսին
Հայրս է շրջում:

Հաղթության համար
Արյունըս կտամ,
Չեմ թողնի մենակ
Հորս պարտիզան:

Կարծես բնությունն ամեն կողմից միաբերան արձագանքում
Քր նրա երգին ու երգը դառնում էր որոտալից ու հզոր: Նա տեղ
հասավ այն ժամանակ, երբ արդեն ցերեկ էր: Ամայացած Քարա-
մերդն էր այժմ նայում վերից: Կարծես հենց նոր ահեղ մըրիկներ
էին անցել վրայով, բանդել նրա հոյաշեն պատերը, և ոչ մի կեն-
դանի շունչ չէր մնացել այնտեղ: Նույն Քարաբերդի տակ մի քա-
նի օր առաջ պարտիզանների ոտքն էր խաղում, օշախի ծովսն էր
ծխում, ձիերն էին խրխնջում: Այժմ դատարկ էր ու անաղմուկ:

Տղան մոլոր քայլերով այս ու այն կողմն ընկավ, ձայն տվեց,
ձայն տվող շեղավ, միայն Քարաբերդից խուլ արձագանքը լսվեց:
«Ո՞վ իմանա՝ ինչ է պատահել, ո՞ր կողմն են գնացել»—մտածում
էր տղան: Յուրա քամին էր նրա շուրջը վզվզում, շորացած խո-
տերն էին ոտքի տակ խշշում, հիշեցնելով ծանոթ ձայները: Տղան
վեր էր թռչում կարծելով թե գտել է նրանց, բայց աշքը դատարկ
տեղերին առնելով՝ նորից կանգ էր առնում տարակուսած: Նա
քայլում էր կոխոտված խոտերի հետքերով, որպեսզի կարողանար
որոշել պարտիզանների գնացած ուղղությունը: Հանդիպեց մոխ-
րացած օշախին, որի շուրջը գիշերները պարտիզանները նստո-
ւած հիշողություններ էին պատմում: Նա խառնեց մոխրակուստր,
կարծես ուզում էր որոշել, թե ե՞րբ էր կրակը մարել, Տեսավ ծխա-
խոտի մնացորդներ, հրացանի պարկումներ, ապա գետնի վրա
կուցած Քյահլանի սմբակների հետքն էր փնտրում, մի պատա-
ռության պայտասակ գտավ, վրա ընկավ, ուրախացավ, ձեռքը

վերցրեց. շէ՞ որ Վաղոն այդ պայտակով էր բերում սպանած լորերն ու նապաստակները: «Ծտապելուց էր մոռացել, թե այլև պետք չէր եկել նրան», — տղան պայտակը ձեռքում շուռ-մուռ տվեց ու նորից գցեց խոտերին: Ամեն մի քարը հիշեցնում էր պարտիզանական առօրյան ու հարազատ դեմքերը: Նա ուզում էր քարերի պաղ հայացքից գուշակել, թե ի՞նչ կարող էր պատահած լինել հոր ջոկատին, մի՞թե մոռացել էին, որ ինքը պետք է վերադառնար: Զայրույթն ու տիրությունը հոգում՝ նա շրջում էր մտամոլոր: Հանկարծ ոտքը կապավ ողորկ մի քարի, որի վրա կեսօրին Ալեքի ստվերն էր ձգվում, նա էր գլուխը դնում այդ քարին ու ծխացող ծխախոտը շրթին մտածում: Խապոցն ուսին, գլխիկոր նա նստեց քարին ու մտածում էր ի՞նչ անել, ո՞ւր գնալ: Հանկարծ հայացքն ընկավ աստղաձև շարված քարերին. վաղեց, նայեց ու միտքը պայծառացավ: Քիչ էլ գնաց, նորից հանդիպեց աստղաձև շարած քարերի՝ հիշեց Վաղոյի այն խոսքը, որ պարտիզանները նշաններ ունեն գնացած ուղղությունը ցուց տալու համար: Մի քիչ էլ որ գնաց այժմ էլ աստղաձև ճյուղեր էին իրար վրա դարսած: Այդպիս եթե նա շարունակեր՝ ճանապարհը տանում էր դեպի Քարաբերդը: Գնաց, գնաց ու այլևս շտեսավ աստղանշաններ, բայց որոշեց անցնել Քարաբերդի հետեւը, ուր կապույտ գետն էր զրնգոցով անցնում: Այդ որոշումից աշխուժացած նա պնդացրեց մեջքի կապոցը, ոտքերը վեր ու վար արեց ուժը փորձելու համար և շատ համարձակ մի վճիռ կայացրեց. — գնալ կարճ ճանապարհով, այսինքն ժայռն ի վեր մագլցելով, շուռ գալ, իջնել ժայռի մյուս երեսը: Էլ ինչի՞ է ժամանակ կորցնում, ո՞ւմ է թողնում այնտեղ. հրաժեշտի հայացք նետեց շրջապատի վրա, հապ-հոպ ասաց ու սկսեց բարձրանալ դեպի ժայռակուռ բերդը: Ուրախ էր, կամքով արի. ճանապարհը հեշտ թվաց: Նա ձեռքերը հենարանդարձած՝ մագլցում էր, հա մագլցում, ոտքի տակից քարեր էին հանկարծ պոկվում ու գոռգոռոցով գլորվում ներքև. նա շէր սարսըռում, շէր ուզում ճանապարհը փոխել: Որքան մոտենում էր բերդին, այնքան ահավոր էր դառնում այն: Զոհրաբի պատմությունն այնպես մոտիկ, այնպես իրական էր թվում, կարծես Սամսոնն էր իր ձիու վրա գլուխը երկնքում կորած նայում դեպից աշած: Մեկ էլ կրակէ նիղակի պես ձին էր շողում Սամսոնի ոտնեցած:

րի արանքում: Բերդը դղբում էր, կարծես վլվում էր: Տղայի ոտքի տակից քարերը պոկվեցին սահեցին. նա սթափվեց ու բռնեց ուրիշ կարծր քարերից: Վերջապես հենց դեմ ու դեմ բերդի խստադեմ քարերը հյուրընկալեցին հանդուսն ճամփորդին: Քարերից բացի այնտեղ ուրիշ ոչինչ չկար: Նա ման եկավ քարերի մեջ, Սամսոնի ձիու սմբակների տեղերն էր վնարում քարերի վրա, շոշափում էր քարերը ու կենդանի ուժով նրա աշքի առջև արթնանում էին հերոսների պատկերները: Հանկարծ պլշած աշքեր փայլատակեցին. այդ մենակյաց բուերն էին բարձր քարախորշերում թառել: Տղայի ձեռները շհասան բռնելու նրանց: Սկսեց քարեր նետել, բայց ո՞վ զարմանք, թոշունները տեղերից շշարժվեցին, նա մոռացել էր, որ ցերեկները բուերը չէին տեսնում. նետած վերջին քարը կպավ մեկի թկին, բռն շարժվեց, բայց շփախավ: «Ինչ զարմանալի թոշուն է, վինի՞ թե հեքիաթներից է մնացել ու քարացել», — մտածում էր տղան. ապա մնաս բարով ասաց պատմական բերդին, նրա խորշերում քարացած բուերին ու հույսը սրտում սկսեց իշնել ներքել:

Քարաժայոից իշնելը ավելի դժվար էր, քան բարձրանալը: Ծունկերը ծալվում էին, գլուխը պտտվում էր ներքե նայելիս: Այնտեղ, կապույտ շերտից այն կողմ և կետեր էին նշմարվում: «Մերոնք պետք է լինեն ջրի այն կողմը», — որոշեց տղան հիշելով հոր ակնարկը. կապույտ գետի մասին և սկսեց թաշկինակն օդում ծածանել: Պարտիզանները ներքելից նկատեցին, որ ժայռի վրա մի թոշուն է թևերը թափահարում. սկսեցին հետաքրքրվել: Տղան շտերը հանեց, այժմ ոտարոքիկ սահելով, քարերից կախվելով իշնում էր, հա իշնում: Նա նորից թաշկինակն սկսեց ծածանել: Զոհրաբը, որ ծերությունից հեռատես էր դարձել, ընկերների հետ վիճում էր, թե թևահարողը մարդ էր և ոչ թե թոշուն: Տեսան շարժվող թոշունը բավական իշավ, այլև շվիճեցին. Վաղոյին և մի ուրիշ պարտիզանի ուղարկեցին ստուգելու թե ո՞վ էր իշնողը: Նրանք հասան և ինչ տեսան. մեկը կախվել էր քարաժայոից ու ճոճվում էր օդում. մոտիկ վագեցին ու շորերից միայն կարողացան ճանաշել լիպոյին: Ներքեմից կուռացին.

— Չթոշես, տակը սուր-սուր քարեր կան, ոտներդ կշարդես: Տղան հանկարծակի եկած ոտները քաշեց դեպ իրեն. այժմ

Էլ ողնու պես կծկված գլորչում էր քարերի վրայով։ Հոգնածությունից էր, թե ուրախությունից խոսք չէր գտնում ասելու։

— Այդ ի՞նչ տեսակ սիրո ունես դու, որ բարձր քարաժայով զլսով ես եկել, մենք քեզ ուրիշ ճանապարհ էինք ցուց տվել, — ասաց Վաղոն տղայի կապոցը մեջքից քանդելով։

Նորից հարազատ մարդկանց շրջանն ընկնելով՝ կիպոն մռացավ ճանապարհի կրած տանջանքները։ Սուր-սուր քարերից ուրերք քերծվել էին, արյունոտվելի։ Զոհրաբը հանեց ծոցում պահած դեղը, բայց տղայի ոտների քերծվածքներին։

— Ախր քեզ ո՞վ ասաց այդ սատանի ճամփով դաս։ Ասում են ինքը՝ Սամսոնն էլ դժվարությամբ է, Քարարերդի գլուխութանել, բա որ ընկնեիր, ջարդվեիր՝ ի՞նչ պատասխան տայինք հորդ, — խրատում էր Զոհրաբը նրա քերծված ոտները կապելով։

Լիպոյի աշքում բոլորը փոխված էին երևում, երեսների գույնն ավելի էր գորշացել, մազապատվել, անուրախ ու խիստ հարցական էր նրանց հայացքը։ Նա չէր կարողանում հասկանալ, թե ինչ էր պատահել, բոլորը մոտեցան, բարեկցին, բայց հայրիկը շերեւաց։ Նայեց, և ինչ, Քյահլանը կանգնել էր առանց թամբի, սմբակները խփում էր քարերին ու անհանգիստ խրխընջում։

— Ո՞ւր է հայրիկս, — բղավեց տղան։ Պարտիզանները տարակուսած նայեցին իրար երես։ Նրանց բոլորի փոխարեն ծեր Զոհրաբը պատասխանեց մորուքը շիմելով։

— Ասացինք՝ Ալեք', մի՛ գնա, թե չէ կզնամ։ Ուրիշ շորս պարտիզան տղերք հնան առավ, վեր կացավ ոտքով գնաց մռտիկ գյուղը ժողով անելու։ Մեր հաշվով նրանք ուշացան։ մերոնցից երկուսը գիշերը գնացին իմանալու՝ թե ի՞նչ պատահեց։

Տիրեց խորհրդավոր լուռթյուն։ Տղայի շրթունքները դողացին, սիրտը ճմլվեց վատ նախազգացումով։ Մոռանալով ոտքերի ցավը, վագեց Քյահլանի մոտ, գրկեց նրա գլուխն ու աշքերին նայելով անընդհատ՝ ուզում էր նրանից իմանալ, թե ի՞նչ կարող էր պատահած լինել հորը։ Զին կարծես կարոտել էր տիրոջ որդուն, ուստի քառում էր նրա երեսին, հոտոտում։ Այնուհետև տղան վագեց Վաղոյի և Զոհրաբի մոտ ու չէր հեռանում, գիտեր նրանց անձնությունը գեպի հրամանատարը։ Հարցական նաև անձնությունը գույնությունը գեպի հրամանատարը։

շում էր նրանց աշքերին՝ սպասելով վճռական պատասխանիր Դիշերը կիպոն չկարողացավ քնել, որովհետև անհանգիստ էր, դգում էր քարերի կոշտությունը, օդի սառնությունը, մյուս կողմից լսում էր շարունակ Քյահլանի խրխնջոցն ու մտածում էր մենակ գնալ հոր հետեւից:

Լուսադեմին, երբ լեռները արծաթազօծվեցին, երկու պարտիզան եկան ու հայտնեցին խիստ անհանգստացած.

— Հրամանատարի կյանքը վտանգի մեջ է: Ճանապարհին թշնամիները բռնել են նրանց ու բանտը գցել. այժմ էլ որոշել են սպանել:

— Արծիվը գերության մեջ,—դարձավ Զոհրաբը դեպի պարտիզաններին,—ասացինք մի՛ գնա, մեզ լսեց,—շարունակեց ծերը հուզմունքից աշքերը պղտորված:

Տղան այդ լուրն առավ թե չէ, թե էր ուզում թոշելու. ոչ մի բան այլև չէր կարող նրան ետ պահել իր վճռից:

— Կա՛ց, համբերի՛, մենակ դու չես: Ալեքի կյանքը բոլորիս համար թանկ է, ողջ ջոկատն է Ալեքի համար կանգնած,—ասում էր Զոհրաբը ձեռքը տղայի ուսին դրած:

Երբ պարտիզանի կյանքին վտանգ էր սպառնում, ընկերները երկար չեին խոսում: Որոշված էր ու պատրաստ էին արդեն տասքաջ հեծվորներ, նրանց հետ կիպոն՝ հոր ձին հեծած:

— Բարի նպատակը թող բարի վերջանա, —աղաղակեց Զոհրաբը նրանց հետեւից:

Նրանք շուտով պիտի հասնեին այն գյուղը, որտեղ կալանավորել էին Ալեքին ու ընկերներին: Լրաբերները մանրամասն պատմել էին, թե որտեղ էր գտնվում բանտը: Դեռ գյուղ չմտած խոտի դեղ կար, այնտեղ հոսում էր բարակ առվակ, առվի այն կողմ պատ էր, պատի ներաը բանտն էր:

«Փատի-ներսը բանտն էր»—կրկնում էր տղան ու չէր հաշտվում այն մտքի հետ, որ կարող էր սարի պես հսկա իր հայրը գերության մեջ գտնվել:

Տաս ձիավոր գնում էին սրբնթաց: Լուս ճանապարհ էին կտրում: Խոտի դեղը երևաց: Ինչպես որոշված էր՝ այնպես էլ վարվեցին, պարտիզանները բոլորը միանգամից չգնացին, միայն մեկը պետք է գնար, դեղը վառեր, հրդեհ առաջացներ, մի կերպ

ներս ընկներ և իմաց տար ընկերներին, որ պատրաստ լինելու փախչելու Այդ գործը հանձն էր առել կիպոն: Նա Քյահլանից իշավ, նրան թողեց պարտիզանների մոտ, իսկ ինքը գնաց դեպի խոտի գեղը:

Հսկողությունը խիստ էր. պարսպի դռան վրա պահակախումբ էր կանգնած: Տղան որպես թե ճանապարհը մոլորած միանցորդ դեմ-դեն էր նայում, ուսումնասիրում, պարսպի բարձրությունը չափում: Ուզում էր հրաշքով ճնճղով դառնալ կամ թիթեռ, ուզում էր աներեւով մարդ լինել, որպեսզի շուտով հասներ, հորն ազատեր: Հիշում էր պարտիզանների այն խրատը, որ պահակների ուղարրությունը պետք է ցրել դեղը հրդեհելով, դրա համար կայծքար էր վերցրել: Օրը ցերեկ, արթուն պահակներ, պահանջվում էր մեծ զգուշություն: Նա կայծքարը գրպանում շոշափեց ու մի ակնթարթում աննկատելիորեն խոտի դեզի հետևն անցավ: Ինքն էլ շհասկացավ թե ինչպես կայծքարը զարկեց, կայծը շողաց, բռնկվեց խոտը մի քանի տեղերով: Այդ միջոցին նա փախավ հեռու ընկած քարի հետեւ ու սպասում էր: Սրտի դողով նա հետեւում էր հրդեհի ընթացքին: Նա շրթունքները կրծելուց արյունոտել էր, ուզում էր բոց լիներ ուժգին, լափող: Քիչ հետո օդում տարածվեց ծուխը, բոցը և ճարճատյունը: Տղան շուր եկավ ու ինչ տեսնի՝ խոտը տրնդեց էր դարձել: Այդ ժամանակ տղան մի սուլոց լսեց. ի՞նչ էր նշանակում, ո՞վ էր այն,—մտածեց տղան ու հարմար միջոցին գուրս թռավ թաքսուցից ու պատի վրայով իրեն ներս գցեց: Նա զգաց քարին կապած ծնկի ցավը, ուզդվեց ու առաջ գնաց: Լավեց նորից սուլոցը. ի՞նչ էր նշանակում այդ. շգիտեր ինչպես վարվել, սուլոցին հետեւեց շշով, նայեց այս ու այն կողմը, ապա ետ դարձավ և տեսավ մեկը բակում՝ կանգնած հրացանն ուսին: Տղան գաղաղած կորյունի նման ուզում էր հարձակվել նրա վրա, երբ պահակը ժպտաց և կամաց ասաց «աստըղ»: Լիպոն ամեն ինչ հասկացավ. այն հրացանով մարդը գնաց դեպի բանտապահը, հրացանի փողը ուղղեց նրան ու հրամայեց բացել փակ դռները: Բանտապահն առանց դիմադրության դուռը բացեց, դուրս թափվեցին բանտարկյալները, վերջում դուրս եկավ Ալեքը, մազերը խոփիլ, դեմքը գունատ...

— Հայրի՝ կ...

— Ախալը, ի՞նչ ես անում դու այստեղ...

Չէր կարելի ժամանակ կորցնել. նրանք վազեցին դեպի դարձասը: Այնտեղ կոփիլ էր սկսվել, պարտիզանները հարձակվել էին պահակների վրա, կրակում էին: Այն հրացանով մարդը, որ բանտի դռները բացեց, ծպտյալ պարտիզան էր: Ալեքի հետ շետ շառկով մի քանի բառ փոխանակեցին և անցան դեպի պարձրացան պարսպի գլուխը և ցատկեցին փողոց: Իիպոն էլ բարձրացավ այն հրացանավոր մարդու ուսին, ապա այնտեղից էլ իրեն զցեց փողոց: Այնտեղ կոփիվ շարունակվում էր, նրանք շխառնվեցին կովողներին, որովհետև հրացան չունեին, օգտվելով առիթից, որ պահակները զբաղված էին կովով, իրենք փախան: Ալեքն ուզում էր գրկել որդուն, բայց ժամանակ չկար: Վազում էին ձի նստելու: Պահակներից մեկը վիրավորված էր, երկուան էին միայն կրակում: Պարտիզանները Ալեքին ու ընկերներին փախցրին: Այն նշանով թումբի մոտ Քյահլանն սպասում էր տիրոջը և նրա որդուն: Իիպոն արդեն վարժ հեծվոր էր, թուավ հոր գավակը, առանց որևէ օգնության: Թրիկնամուտին նրանք բոլորը հասան ուզմակետ:

— Արծիվն ու արծվաճուտը, տեսեք, գալիս են,—ուրախ աղաղակներով նրանց դիմավորեցին ջոկատի մյուս անդամները: Հենց որ հասան, ձիերն ազատ արձակեցին. կրակ վառեցին, ամեն մեկն իր հրացանին կոթնած նստեց կրակի մոտ, իսկ կենտրոնում ծանրախոհ հրամանատարն էր ամուր նստել: Անքուն գիշերների ու կոփիների տագնապը գեմքին դրոշմված երկար ժամանակ նա չէր խոսում: Պահակախմբի հետ կոփիլ ունենալուց հետո երկու պարտիզան վիրավորվել էին, մեկը ոտքից, մյուսը թեկից: Զոհրաբը վերքերն էր փաթաթթւմ, մյուսներն աշխույժ զրույց էին սկսել: Նորից հնչեց հրամանատարի ձայնը հաղթական շեշտով ու քամու թեով տարածվեց հեռուները. նա մերթ փոթորկվում էր, մերթ խաղաղվում ինչպես պարզ օր. տղան աշքերը չէր հեռացնում հոր շրթունքներից: Ալեքը պատմում էր, թե ինչպես էին թշնամու ձեռքն ընկել:

Գնում էին հինգ հոգով, շատ հանդարտ, զրուցելով, ծիծաղելով: Ալեքը նկատում է, որ ընկերներից մեկը շարունակ լուռ է, նրանցից ետ է ընկնում: Հենց որ մտնում են ձորը, ետ մնա-

ցող ընկերն սկսում է սովել և անհանգստությամբ շուրջը նայել։ Այդ բռպեին ոչ ոքի մտքով չի անցնում, որ կարող է վատ բան պատահել։ Ետ մնացողը սովորական վերջ տալով սկսում է «կո՛ւ-կո՛ւ-կո՛ւ-կո՛ւ» կանչել։ Դուրս են թափվում զինված մարդիկ ու շրջապատում Ալեքին իր ընկերների հետ միասին, իսկ դավաճանը թշնամու խմբին միանալով անընդհատ «կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ» է կանչում։ Լիպոն հասկանում է, թե այն մարդը, որի մասին հայրը պատմում էր, ինչու էր միշտ լուս, բիշ էր մասնակցում նրանց խոսակցությանը, պարտիզանները նրա հետ լավ չեին վարվում, որովհետև նա անհաշտ էր։ Մի անգամ էլ տեսավ, թե ինչպես մենակ նստած նախաճաշում էր։ Միշտ դժգոհ էր, գլուխը կախած և զարմանալին այն էր, որ Ալեքը դրան հետախուզության չէր ուղարկում, կարծես նախազգում էր և ասում, «աչքիս լավ չի երևում»։

Ալեքի պատմությունը լսելով բոլորը հուզվեցին։ Ամեն մեկը հիշում էր այն դավաճանի գեմքը և այժմ միայն հասկանում, թե ինչո՞ւ նա այնպիս օտարութիւն էր իր բոլոր արարքներով։ նոր միայն ճանաշեցին, բայց արդեն ուշ էր։

— Աշքաբաց մնացե՛ք, ամո՛թ դավաճանին... Միևնույն է, արդարությունը մեր կողմն է, հաղթությունն էլ մեր կողմը կիենի...—վերջացրեց Ալեքը։

Երբ Ալեքը խոսում էր՝ Զոհրաբը գլուխը տմբացնում էր և նրա խոսքը կրկնում։

— Ամո՛թ դավաճանին...

Մութին իշնում էր դանդաղ ու իր գրկի մեջ առնում ամեն ինչ։ Հոգնած զինվորների գլուխները հասկերի պես իրար կողքի թեքվեցին։ Նրանց ականջի տակ քամին շարունակ կարծես կրկնում էր։ «Հաղթություն կլինի»։

Ալեքն ու իր որդին սառը քարերի վրա գլուխները դրած, միշտ յափնջու տակ կծկվեցին։

Երկու հերթագահ պարտիզան հրացաններն ուսերին՝ այդ գիշեր արթուն շրջեցին։

Դադարել էին կրակոցները. շէր լսվում ձիերի դոփյում, խաղաղ էր բնությունը, խաղաղ էին պարտիզամները: Այդպիսի օրեւին կիպոն սովորաբար իր գրադմունքն էր ունենում, կամ վաղոյի հետ խոսք մեկ արած՝ որսի էին գնում, կամ մեն մենակ՝ Քյահլանին հեծած բարձրանում էր մոտիկ սարալանջն զրուանքի:

Այդպիսի մի խաղաղ առավոտ պատանեկան շարածճությամբ կիպոն վազեց ձիու մոտ, առանց թամբի հեծավ ու քչեց: Քյահլանն առանց տրատունչի, ուրախ խաղաց զահել տիրոջ ոտների արանքում: Երբ հասան սարալանջը՝ կիպոն թռավ ձիուց ու նրան ազատ թռղեց բնության մեջ: Զին գլուխը կախ խոտերն էր հոտում և արածում: Սարալանջը կարմրին էր տալիս կարմիր կակաչներից: Առավոտյան ցողն իշել էր նրանց ծաղկաթերթերին ու շողջուում էր ինչպես ադամանդ: Տղան այնպես ուրախացավ, ինչպես ուրախանում էր, երբ Սամոն վերադառնում էր սարերից՝ հետը բերելով պես-պես ծաղկեփնջեր: Սամոյի փոխարեն, այժմ կիպոն էր սարերում շրջում, այն էլ ոչ հասարակ նպատակով: Կիպոն շէր մոռանում սիրով ընկերությունը և այն ցողաթաթախ ծաղկեները:

— Քյահլան, դու անուշ-անուշ խոտ արածի, ես ծաղկեներ քաղեմ հորս համար:

Խաղով, զրուցով շատ կակաչներ պոկեց ու կապեց մի գեղեցիկ ծաղկեփունչ, երբ գլուխը բարձրացրեց՝ տեսավ Քյահլանը կողքին չէ, գնացել է բավական հեռու: Վազեց, ետ դարձրեց ձիու գլուխը՝ թռավ մեզքին ու ծաղկեփունչը գոտկին խրած վերադարձավ պարտիզանների մոտ: Զին առույգացել էր ցողաթաթախ խոտ արածելով. առույգ էր և պատանի հեծվորը:

Ալեքը քարին թիկնած՝ խորասուպվել էր, նոր պլաններ էր գծում, հարձակման ճանապարհները որոշում: Տղան զվարթ ծիծաղով ծաղկեփունչը պարզեց հորը: Հայրն սթափվեց, վերցրեց տղայի ձեռքից ծաղկեփունչն ու ասաց.

— Այն սարալանջին, ուր քաղել ես այս ծաղիկները, հինգ ազիկ ընկերների արյուն է թափվել: Կիպոն տիրամած՝ նստեց հոր կողքին:

— Զնդանի պես ամուր կամքով դարբին Պավելը, Բագրատը, բատրակ Օհանը և առողջ ու բարձրահասակ երկու եղբայրներ ընկան թշնամու ձեռքով,—հասաչց Ալեքը: Պատճառն այն էր, որ թքել էին պրիստավիլ երեսին, որովհետեւ նա դադում էր գուղացիների կաշին, մայր-մանուկ լացացնելով հարկ հավաքում ցարի համար: Հինգ հերոս ընկերներ պայքարել են իրենց կյանքի դնով:—Մահն աշքի առաջ Պավելը գոռացել է դահճի երեսին. «պակսեցնում եր մեղ, բայց չեթ կարող պակսեցնել արևի լույսն աշխարհի վրայից»:

Գնդակը սրտերի մեջ երկու եղբայրներն ահեղ գոռացել են. «Մեզ կփոխարինեն հազար-հազար ազատ կամքի տեր՝ մարդիկ, միենույն է ձեր վերջը եկել է»:—Այժմ ահա նրանց թափած արյունն է ծաղկել այդ սարալանջին... Ալեքը բնքշանքով ծաղկի թերթերն էր մեկ մեկ հատ քաշում, կարծես զոհված հերոսների կենդանի դեմքերն էր շոյում ու նրանց շունչը դգում: Նա նկարագրեց մի բանվորական ցուցը, երբ բանվորները՝ կարմիր գրոշներ պարզած անցնում էին փողոցներով: Ալեքը բարձրացրել էր ծաղկեփոխակը ինչպես գրոշակ ու աշբերն այրվում էին:—Անվախրանվորների վրա կրակում էին ժանդարմները, արյուն էր թափառ գում, բայց բանվորների կամքի առաջ մահն էլ ոշինչ է:—Նրանք դնում էին համարձակ, գնում էին աղաղակելով. «Կեցցե՛ աղատությունը...»:

Ալեքը մի ուրիշ հերոսական գեպք հիշեց.—հայր ու որդի, երկուսն էլ բանվոր, թուոցիկներ տարածելու ժամանակ ժանձները նկատում են նրանց ու հետապնդում: Երբ թշնամու գնդակով հայրը խփվում է՝ անմիջապես թուոցիկները տալիս է նաև մի աղատավում, նա էլ արյունվա փովում է հոր կողքին: Ամեն առիթով նրանց հիշելիս աշքերն արցունքով էին լցվում:

— Ուելուցիան առանց արլան չի դալիս, —կրկնում էր նա: Մեր գրոշակները ներկված են խիզախ մարդկանց կարմիր արյունով: Ով սիրում է աղատությունը՝ նա սիրում է կարմիր գույնն ու կենինի—Ստալինի գրոշի ներքո պայքարի գնում:

Զահրաբը նրանց կողքին նստած լսում էր և ուզում անպատճառ իր հեղինակավոր խոսքն ասել:

— Իմ որդու արյունն էլ, — հազիվ հուզմունքը զսպելով,
ժխամբճը ատամների տակ սեղմած ասաց նա:

Զոհրաբի միակ և անմեղ որդուն դաշնակներն սպանել էին
ճանապարհին: Վաթսուն տարեկան ծերունի հայրը երդվել էր
մըեթ լուծել դաշնակներից ու միացել էր պարտիզանական ջոկա-
տին՝ ասելով, «Իմ մինուճար որդուց հետո, ո՞ւր եմ արևի տակ
ապրում: Ով իմ թշնամու դեմ զենք բարձրացնի՝ ևս նրա կողմն
եմ անցնում»: Այդպես էլ Զոհրաբը մտավ պարտիզանական շար-
քերը:

Լիպոն նայում էր մերթ հորը, մերթ ծաղիկներին, մերթ վըշ-
տարեկ Զոհրաբին, որը երբ տիրում էր՝ ծերությունն ավելի էր
շեշտվում:

Եցր օրը լիպոն խորը ըմբռնեց կարմիր գույնի նշանակու-
թյունը: Նա հասկացավ, թե ինչու կարմիր ծաղիկներն աղատու-
թյան ծաղիկներ են կոչվում:

Ամեն անգամ կարմիր ծաղիկներ տեսնելիս՝ նա հիշում էր
ուկոլուցիայի համար արյուն թափած բանվորներին, ըմբռուտ
մարդկանց: Նրանց սրտերն ամեն գարնան կարմիր ծաղիկների
մէջ են բացվում, ճնշված մարդկանց ու աշխարհին աղատու-
թյան վառ տենչանքներ բերում:

13.

Զագը կորցրած արծվի նման պարտիզան Ալեքը սարերն ըն-
կած թափառում էր: Անցել էր մի քանի օր այն պահից, երբ որ-
դին խիստ կարևոր հանձնարարությամբ գնացել էր գյուղ ու շեր-
ջերադարձել: Հայրը գիտեր իր որդու անհանդիստ բնավորու-
թյունը: Նա մեկ օրից ավելի այնտեղ շեր կարող մնալ, եթե ճանա-
պարհին փորձանք պատահած լիներ: Մի քանի օր անընդհատ
Ալեքը ձիուց շիշավ, գլուխը քարին շդրեց: Նա շարունակ շրջում
էր սար, ձոր, որպեսզի քամուն տար սիրու կրծող շարագուշակ
մտքերը: Քյահլանը կարծես լուսությամբ հասկանում էր տիրոջ
անհանդասության պատճառը, ուստի անտրառունջ թոցնում էր
նրան մեկ այս, մեկ այն ճամփի մրա, մի պահ կանգ առնում,
ականջները սրած սպասում ծանոթ քայլերին: Վաղոն նույնպես

Հետամուտ էր լինում ճանապարհներին՝ իր մտերիմ ընկերոջ հետքը գտնելու ու նրան ռազմակետ բերելու համար:

Պարտիզանների շրջանում՝ Ալեքը չէր արտահայտում իր տիսրությունը: Երբ սար, ձոր թափառելիս մենակ էր մնում Քյահանի հետ՝ այն ժամանակ միայն սիրող որդու սիրով ալեկոծ շշնչում էր.

— Ա՞յս, ո՞րտեղ ես, իմ կտրիճ տղա, — ձիուն խթանում էր նա ու առաջ նետվում:

Հայրական շերմ սիրո հանդեպ ծառ ու թուփ հնազանդ ճըկվում ճամփա էին բացում:

Բնության հրաշագործ առավոտներից մեկն էր. երկինքը շինչ, արևը ոսկեղեն փայլով աշք էր շլացնում, օդը հագեցած էր ցողաթաթախ խոտերի բույրով: Ահա այդ ժամանակ դարձյալ նույն համառ ձիավորը հատվող ճամփագլխին սպասում էր: Հանկարծ նա նկատեց, որ հեռու սարալանջով կարծես մի գառնուկը էր վազում ցած: Ալեքը ձին խթանեց, առաջ գնաց: Մոտեցավ մի տասնյակի քայլ էր մնում, որ հասնի նրան, տեսավ վազողը ոչ թե գառնուկ է, այլ մի տղա՝ համարյա մերկ վիճակում: Մի քանի քայլի վրա հեծվորին տեսնելուն պես տղան կանչեց.

— Հայրի՝ կ...

Հոր աշքերը մթագնեցին, երբ տեսավ տղային՝ աշքերն ուռած, դեմքը կապտած ու ոտից գլուխ թրջված: Միայն ձայնից կարողացավ ճանաչել իր որդուն: Հայրը ձիուց թռավ ու գրկեց նրան.

— Այս ի՞նչ օրի ես ընկել, — ասաց, կոկորդը սեղմված:

Տղայի նշաճեւ աշքերը փակ կոկոնների պես հանկարծ բացվեցին ու ժամացին հոր երեսին: Ինչպես հողը տաքանում է արևից, այնպես տաքացավ հոր սիրու որդու ժպիտներից: Տղան երեք իր հորն այդշափ տիսրամած չէր տեսել. մարմնի ցավերը մոռացավ ու դարձավ հորն ասաց.

— Հայրի՛կ, ինչու ես տիսրել հո չե՞մ մեռել, ազատվեցի...

Հայրը շուզեց ժամանակ կորցնել, շինելը հանեց իր վրայից, հագցրեց տղային ու երկուսով ձի նստեցին: Լիպոն չէր ուզում հավատալ աշքերին, որ նորից այնպես հարազատորեն հպիել էր հորը և Քյահանին,

Ալեքի ուրախությունը՝ ողջ ջոկատի ուրախությունն էր: Պարագաները դեռ հեռվից նկատել էին նրանց և աղաղակում էին.

— Ահա գալիս է արծիվն իր ձագի հետ:

Չթողին ստքը գետին առներ. Լիպոյին իրենց ձեռքերի վրա իշեցրին: Ամեն մեկն ուզում էր հոգատարություն ցուցաբերել, այն աղայի նկատմամբ, որ անտրտունջ կատարում էր նրանց բոլոր հանձնարարությունները: Վաղոն պազել էր տղայի կողքին ու կերակրում էր նրան թարմ որսի խորովածով: Իսկ լիպոն ժըպտում էր ու հարցնում վաղոյին, թե իր բացակայության ժամանակ քանի՞ նապաստակ էր խփել նա, ի՞նչ տեսակ այցյամներ էր փափցրել սարերից: Վաղոն իր սրախոսություններով ծիծաղեցնում էր նրան թուլանալու շափ՝ ասելով. «Դու և այցյամ ես, և նապաստակ, փախար մեր ձեռքից, հետո էլի քո ստքովը ետ և կար»:

Հայրը նստել էր որդու գլխավերելը, Զոհրաբը ստքերի կողմը՝ ծխամորմի ծուխը կուլ էր տալիս ու գլուխը տմբացնում: Տղան կերավ, հանգատացավ ու սկսեց պատմել վլխից անցածը:

Գյուղից վերադառնալիս մի խումբ զինված մարդիկ կտրում են նրա ճանապարհը: Այս անգամ տղան շի կարողանում ծլկել, որովհետև փոսի մեջ է լինում և ամեն կողմից պաշարված: Տղայի ձեռքերը կապուած, ծեծելով տանում են խմբապետի մոտ: Խմբապետը՝ մսոտ երեսով, շաղ մարմնով մի մարդ՝ մոնչում է տղայի վրա. «Հը», ճանաշեցի քիթ ու մոռվիցդ, — ասում է, — դու խոռվարար Ալեքի որդին չե՞ս»: Ապա հրամայում է իր զինվորներին այնպես ծեծել տղային, որ ողջ մարմինը կապտի, որպեսզի ստիպված լինի նա հոր տեղը հայտնել: Խմբապետի հրամանն անմիջապես իրագործում են ու տղային ծեծված, թուլացած վիճակում մի կողմ են գցում: Քիչ հետո նույն զինվորները վզակոթներին տալով բերում են երեք գյուղացով՝ բոլորովին մերկ վիճակում: Նրանք մեղադրվում էին իրենց՝ տներում պարտիզաններին պատսպարելու և իշխանության դեմ հակառակ բաներ խոսելու համար: Խեղճ գյուղացիները լաց էին լինում, աղերսում թե այդպիսի բան չի եղել, բոլորը զրպարտություն է. բայց անօգուտ էր, ո՞վ էր նրանց լսողը, ո՞վ էր նրանց հավատացողը: Խմբապետը մոնշում էր ու հրամայում այնպես ծեծել նրանց, որ լեզվի

գամարները բացվեն. «Յերեք այստեղ շան լակուտին», — գոռում է իմբաւպետը: Լիպոն կանգնում է համարձակ, նրան խուզարկելու ժամանակ ծոցից հանում են մի կարմիր աստղ, որ հորից էր ստացել որպես թանկ նվեր: Դրանից որոշում են տղայի ով լինելն ու սկսում են ծաղր ու ծանակի ենթարկել նրան. «Այս տղա, մորդ չեմ հարցրել, թե ինչի ես կիտայցու նման»: Քրջում են զեկի պնս: Չնայած ամեն տեսակ տանջանքներին՝ տղան լեզուն տտամների տակ սեղմած՝ համառ կերպով լուսմ է: Մի գիշեր գերության մեջ՝ շատ բան է տեսնում, շատ բան լսում: Նա տեսնում է արյունարբու մարդկանց արարքները, թե ինչպիս քաղցած դայցի աշբերով նայում էին զոհի վրա, ինչպիսի ծաղր ու ծեծի էին ենթարկում անմեղ գյուղացիներին: Մուտք երեսով խմբապետն ստիպում էր մերկ գյուղացիները չեին կատարում նրա ստորացուցիչ կամքը, այն ժամանակ հրացանի կոթերն անխնա իշնում էին նրանց գլխին: Այդ բոլորը կատարվել էր տղայի աշքի առջև: Պատմելու ժամանակ հուզմունքից դողում էին լիպոյի շրթունքները, շնչառությունը կտրվում էր: Նրա ամեն մի խոսքը մուրճի պես հարվածում էր Ալեքի գլխին: Հոր դեմքը խոժոռովում էր այնպես, ինչտես երկինքն է խոժոռովում փոթորկից առաջ: Դեպքերի զարգութելի նկարագրությունը նա գեռ չեր վերցացրել: Պարտիզանները քար կտրած սպասում էին շարունակությանը: Խմբապետը հրամայում է պահել գերիներին մինչև լուսաբաց, եթե խօստովանվեն՝ լավ, եթե ոչ՝ նրանց վերջն էր լինելու: Ծեծկելով ձեռ ու ոտ կապուած գերիներին մի կողմն են զցում, մի ձեռ զինվորի ձեռք էլ հրացան տալով պահակ կանգնեցնում նրանց վրա: Մուտք իշնում է, մահասարսու շշուկով գերի ընկած մարդկանց սրտերը լցնում: Բայց լիպոն հույսը չի կտրում, ամբողջ ժամանակ մտածում է ազատվելու մասին: Պահակը նստում է մի քանի քայլ հեռու կոճղի վրա: Լիպոյի հետ եղած գյուղացիներից մեկը բատրակ էր, երկուաը շքավոր գյուղացի. նրանք պատմում էին շշուկ, թե ինչ ավերումներ են անում գաշնակ-խմբապետներն իրենց գյուղերում: Նրանք գոմերում անասուն չեին թողնում, խոտը, հացը թալանում են, անկարգություններ անում: Գյուղացիներից մեկը ճանաշում էր լիպոյին ու կամացուկ պատմում մյուս

ընկերներին տղայի ով լինելը։ Խոտի վրա սովալով, իրար ձգելով մոտենում են տղային։

— Ա'յ տղա, հայրդ ո՞րտեղ է, — Հարցնում է նրանցից մեկը։ Մյուսը թե՝ «Ե՞րբ կազմատվենք»։ Լիպոն ուսերը թոթվում է և հասկացնում, որ լուն։ Նրանք տեսնում են, որ տղան սովորական միամիտ երեխաներից չէ։ Այժմ էլ աշքի, Հոնքի շարժումներով են հարցնում թե ե՞րբ պիտի կարմիր զորքը իրենց ազատի այդ վիճակից։ Այդ դժվար բոպեներին տղայի ականջին հնչում էին հոր ազատաբեր խոսքերը։ Հաղթանակը մերը կլինի... Նա կամացով շշնջում է գյուղացիների ականջին։ — Չուտով կլինի ձեր ուղածը, փարոսների պես շոշշողում էին տղայի աշքերը գյուղացիների հանգեալ։ Նրանք շուտ են գալիս մյուս կողքի վրա, որ էլի Հարցեր տան, երբ պահակը «առւա» է ասում, աշքն արթուն նրանց կողմը նայում։ Նրանք լուս են և ամեն մեկը մտածում է փախչելու մասին։ Հանկարծ նույն տեղում աղմուկ է բարձրանում։ Թշնամու խմբից մի զինվոր ծիուց իշխում է ու կատաղությունից փրփրած խմբապետին գտնում, պատմում, թե ինչպես գյուղերում բալշեիկները զատանում են և գյուղացիներն անցնում են նրանց կողմն ու դաշնակին հաց շեն տալիս, շոր շեն տալիս՝ ապստամբում են։

«Նրանք աղգի դավաճաններ են», — մոնշում է խմբապետը և բարկությունից սկսում է օդում կրակել։ «Պարո՞ն խմբապետ, պարո՞ն խմբապետ, ուշքի արի...»։ Նրա ձեռքը բռնում են խմբի զինվորները։ Քիչ հետո իրար գլխի հավաքված մի քանի բոպե խորհրդակցում են և դառնալով գերիների կողմը՝ հայտնում դատավճիռը։ «Եթե շատեր պարտիզանների տեղը, առավոտը ձեզ ժայռից կպորենք ցած, շանսատակ կլինեք»։ Ու համայսւմ են պահակին ավելի խստացնել հսկողությունը, որպեսզի ոչ մի շարժում չկարողանան անել։

Գերի ընկած գյուղացիները գատավճիռն իմանալով՝ սկսում են ծանր հառաչել, հիշել իրենց ընտանիքները, մերկ ու քաղցած երեխաներին լիպոն թեև տարիքով նրանցից փաքք էր, բայց չի հառաջում։ Նա փորձում է իր մկանների ուժը, որպեսզի կտրատի ուրիշի ու ձեռքի կապանքները։ Պահակը նկատում է տղայի անհանգիստ շարժումներն ու գոռում։ «Հը՛, հանգիստ մնա»։ Քիչ հետո մի ուրիշ տեսարան է բացվում տղայի աշքի առջև։ թշնա-

մու զինվորները թալան են բերում—մի գեր, ճղճղան խոզ: Խըմ-րապետի աշքերը ջրակալում են ախորժակի սրությունից, ան-միջապես նա պատվիրում է խորոված սարքել: Խարուցի են վա-ռում: Խոզի գլուխը գնում են կոճղի վրա մորթում, իսկ արնաթա-թախ սուրը մոռանում այնտեղ: Կես գիշերին, թշնամու զինվոր-ները քաղցած գայլերի պես վրա են տալիս խորոված խոզի մսին: Պահակն էլ թուքը կու տալով մերթ նրանց կողմն է նայում, մերթ գերիների ու վերջապես քունը տանում է, հրացանը՝ թուզ-թուզ ծնկներին ընկած:

Փոքրիկ կալանավորը հարմար առիթը չի կորցնում, հենց որ տեսնում է պահակի քունը եկավ, մի քանի անգամ ուժով թափ ու թափ է անում ձեռքերն ու կապերը //կտրատում: Զեռքերն աղատ փորսող տալով մոտենում, վերցնում է արնաթաթախ սու-րը, ոտքի կապերը սրով կտրատում: Իրեն աղատ տեսնելով ուրա-խությունից քիչ էր մնում թոշկոտար, բայց հենց որ պահակը աշ-քը բացում էր՝ նա նորից կուշ էր գալիս իր տեղում, սուրը հետեւ պահած: Այդ ժամանակ թշնամու քեֆը տաքացել էր, մոռացել էին կալանավորների գոյությունը, այժմ իրար էին հայնոյում, ապտակում, ծեծում: Տղան կուղեկուղ մոտենում է գյուղացինե-րին, նրանց ոտքի, ձեռքի կապերը կտրատում և ասում. «Դե՛ շուտ, փախչենք՝ քանի ուշքի չեն եկել»: Ուրախությունից խելա-կորույս ինքն էլ փախչում է, շիմանալով թե որ: Պահակն սթափ-վում է այն ժամանակ, երբ չորս գերին էլ իրենց տեղում չեին: Աշքերն է տրորում, չի հավատում կատարված փաստին: Հրացա-նը բռնած վաղում է, որ հասնի նրանց. կրակում է, բայց անօ-գուտ: Այդ ժամանակ մյուս զինվորներն են վլխի ընկնում, հա՛յ-ջա՛յ են կանչում, փախչողների հետեւից ընկնում և իրար հետեւից կրակում: Լիպոն զարմանալի արագությամբ մտնում է անտառ, ապա գուրս է գալիս բացատը ու թվում է նրան, որ էլի հետա-պընդում են իրեն, ասում է՝ հոր աշքերին նայելով.

— Թափերի ու քարերի տակ պահվելով աշքից կորա:

Իսկ թե ի՞նչ պատահեց այն երեք գյուղացիներին՝ նա չեր իմանում, որովհետեւ նրանք տարբեր ճանապարհներով էին փա-խել: Թշնամու ճանկերից հազիվ աղատված լիպոն հանդիպում է զրնգում գետի: Երկար ու բարակ չի մտածում, մտնում է ջուրն ու մինչև գոտին թրչվելով՝ անցնում մյուս ափը, սկսում է նորից

վաղել, հետո ինքն իրեն հարց է տալիս, թե ո՞ւր է գնում այդպիս: Կանգնում է, շորս կողմը նայում, նկատում է ճամփակեղրին ընկած սատկած ձիու մի գլուխ, հիշում է որ գնալիս էլ նույն ձիու գլուխն այդտեղ էր ընկած, ուրախանում է ու բռնում այն ժանապարհը, որ տանում է գեղի պարտիզանական ռազմակետը:

Ողջ պատմության ընթացքում Ալեքի աշքերը վառվում էին վրեմինդրության բոցով. վերջում գրկեց տղայի գլուխն ու ասաց.

— Քաջ է իմ որդին, իրավունք ունի պարտիզանական ջուկատի արժանավոր գինվորը կոչվելու...

Տղան հպարտ էր հոր խոսքերից: Այդ մի քանի ժամվա ընթացքում, հարազատ մարդկանց շրջանում նրա երեսի գույնը տեղն էր եկել ու առաջվա պես աշխուժացել: Զոհրաբն անմասշմնաց, ասաց իր ծանրակշիռ խոսքը՝ ալեզարդ միրուքը շինելով.

— Սամսոնի պես քաջերն էլ սրա մոտ ոշինչ, արծվի ճուտ եմ ասել:

Վաղոն և մյուսները շգիտեին ինչ խոսքերով արտահայտեին իրենց եղբայրական անկեղծ սերը 15 տարեկան պատանուն: Նրանց աշքում նա և՛ մեծ էր, և՛ անպարելիր Ալեքը շրջում էր, հակատը քամուն տված և մտածում մոտեցող կոփիների մասին, թե ինչպես ահեղ փոթորկից հետո պետք է պարզվիր երկինքը ու արել հավասարապես շողար ամենքի վրա, և իր որդու նման շատ երեխաներ պետք է ապրեին ուրախ ու երջանիկ կյանքով:

14.

Յոթերորդ ջոկատի անվախ սուրհանդակը մարտական նոր խնդիր ստացավ՝ մեկ ժամում պետք է հասներ 5-րդ ջոկատը, որը գտնվում էր նրանցից երեք կիլոմետր դեպի ձախ: Առաջվան կայտառ էր տղան, նա ոտքերում այնքան ուժ էր զգում, որ կարող էր օրերով վազել ու չհոգնել: Անմիջապես հագավ շինելը, ոտքի կապերն ամրացրեց, գոտին կապեց, ապա կանգնեց հրամանի պատրաստ, որպես մի խրոխտ զինվոր: Հայրը պատվիրեց զգույշ և ճարպիկ գտնվել, որ ճանապարհին թակարդը շընկնի, թշնամին վխտում էր այդ կողմերում: Նա պետք է կտրեր թշնամու շլթան ու անցներ ձախ:

Տղան համբուրեց հոր ձեռքն ասելով.

— Բնկեր զոկատի պետ, հրամանդ կկատարվի: Հինգերորդ զոկատը պատրաստ կլինի աղղանշանին: — Նա մնաս բարով արեց մյուս պարտիզաններին, Զոհրաբն օրհնեց նրա ճանապարհը ասելով:

— Մի ոտքդ հաղար դառնա, ճամփենդ հեշտ լինի, թշնամին չորանա...

Տղան շմոռացավ Քյահլանին էլ մնաս բարով ասել, համբուրեց նրա խելացի աշքերն ու դունչը և ճանապարհ ընկավ: Երկինքը մոռայլ էր ու ամպամած: Հորդ անձրե էր սպասվում: Աշնան սառը քամին ծեծում էր տղայի երեսը: Ռողղությունը որոշ էր. քար ու թիփի չնալեց, որովհետեւ այդ ճանապարհով առաջին անգամ շէր գնում: Հարձակման պլանը պահպատ էր ծոցում, որից կարծես տաքանում էր նրա սիրտը: Այժմ նրան ամբողջովին համակել էր մի նպատակ՝ կատարել առաջադրանքը: Լեռնակուտակ ամպերը կախվել էին երկնքից և կարծես հաղար ու բյուր պարաններով ճոճվում էին: Երկինքը սարսափելի էր: Օդում զդացվում էր խոնավություն, բայց ի՞նչ փուլթ, իրապն շէր վախենում բնության և ոչ մի արհավիրքից: Երգում էր պարտիզանական առույդ երգը՝

Ես մութ ձօրերում
Գալիք ես ոռնում,
Ճամփաս չեմ ծոռւմ,
Ես չեմ վախենում...

Քամին աջ կողմից ձայներ բերեց, ապա ձայներին հետեւյին կրակոցներ: Տղան մեքենայորեն ձեռքերը դեպի կուրծքը տաքրավ ու ամուր սեղմեց, կարծես գանձ էր պահել կրծքի վրա: Էլ ժամանակ չկորցրեց՝ մի ակնթարթում ուղղաձիգ ճանապարհից ընկավ ձախ կողմի արահետը ու սկսեց վաղել: Կրակոցները շատացան: Գարծյալ նա իրեն չկորցրեց. թիերի, քարերի տակով կուղեւուզ առաջ էր գնում:

— Զա՞ր դեեր, ձեր ձեռքը շե՞մ ընկնի, շե՞մ բռնվի, — շում էր նա քարերի տակ կուշ եկած:

Մերթընդերթ կայծակներ էին փայլատակում և շուրջը ցերեկ դարձնում, ապա նորից ամեն ինչ կորչում էր խավարում: Տղան վաղում էր հկին ու շնչում:

— Հորս զոկատը չեմ մատնի, թուղթը շեմ տա ոչ ոքի:

Այլևս նա ոչինչ չէր տեսնում, չէր լսում, միայն իր սրտի ուժգին բարախումն էր ականջներում:

Երկինքը ասես պատռվեց, ու հեղեղի պես անձրև թափվեց: Մութ գիշեր, անձրև, քամի, ամպը որոտում էր աճեղադղորդ, այդ պահին վազում էր տղան միայնակ գնդակների տարափի միջով: Թրջվել էր նա ոտից գլուխ, միայն կուրծքն էր չոր մնացել, որ պահպանում էր իր ձեռքերով: Վազելու ժամանակ հանկարծ մի բան վզզաց ձախ ականջի մոտ, ականջը տաքացավ: Վազեց, էլի վազեց ու շիմացավ, թե ինչպես փովեց գետնին ձեռքերը կրծքի վրացից շնեռացնելով: Նրան երկար ժամանակ թվում էր, թե էլի վազում է: Էսլեց շան հաչոց, տղան ուզեց շրջվել, բայց շկարողացավ: Շունը եկավ այնտեղ, ուր ցեխի մեջ գետնատարած փոված էր տղան: Շունը մրմուցնելով հոտոտեց տղայի մարմինը, ապա սկսեց գլխարկը քաշքան, բայց որովհետև տղան շշարժվեց և կսեց տխուր վնասաւ: Այդ հինգերորդ ջոկի կապի շունն էր, ճանաշել էր տղային, որը նրանց մոտ մի քանի անգամ գնացել էր՝ ծոցում պահած լինելով շան համար մսի կամ հացի կտորներ: Դա Զեկոն էր: Շունը տղայի գլխարկն ատամներով բռնած վազեց, քիչ հետո հաշելով վերագարձավ նույն տեղը, նրա հետեւց երկու հրացանավոր:

— Զեկոն չի սխալվի, անպայման մերոնցից է,—ասաց նրանցից մեկը, իսկ մյուսը կուցավ տղայի վրա, նայեց երեսին ու բացականչեց.

— Ալեքք որդին...—ականջը դրեց տղայի սրտին,—շնչում է,—ժպտաց:

— Տեսնիս վերքը խո՞ր է, չի՝ լավանա, —ասում էին մի-մյանց, ապա մեկը ոտքի, մյուսը գլխի կողմից զգուշորեն վերցրած՝ տղային տարան մինչև ուզմակետ:

Շունը գնում էր առաջից՝ ատամներում սեղմած տղայի գըլ-խարկը: Հինգերորդ ջոկատը տեղավորված էր մի լայնախորշ քարանձավում: Պահակ զինվորները շրջում էին զուրսը, իսկ մնացածները հանգստանում էին քարանձավում: Ներս ընկավ Զեկոն, գլխարկը զցեց գետնին ու սկսեց հաշել: Դա նշան էր, որ կամ մարդ է գալիս, կամ արտասովոր բան է կատարվել: Շան հետեւց ներս մտան երկու հրացանավորը և վիրավորին դրին քարանձավի մեջտեղը: Պարտիզանները գլուխները բարձրացրին,

խորհրդավորությամբ իրար հայտնեցին, որ վերավորը Ալեքի որդին է:

Օջախի կրտկը նորոգեցին, քարանձավը լուսավորվեց. տեսան տղայի երեսով արյուն էր հոսում. մոտեցան, տնտղեցին. ձախ ականջը գնդակը ծակել, անցել էր: Տղայի երեսը լվացին, ուշքի բերին. տղան գունատ էր: Սպիտակ շորով փաթաթեցին նրա ականջն ու գլուխը: Տղան աչքերը բացեց, սկսեց շուրջը նայել. սկզբում չէր հասկանում, թե որտեղ է, հետո Զեկոյից և ծանոթ դեմքերից հասկացավ, որ գտնվում է հարազատ շրջապատում: Հանկարծ հիշեց նա մարտական խնդիրը, որի համար եկել էր՝ կյանքը վտանգի ենթարկելով: Մոցից հանեց թուղթն ու պարզեց կարճահասակ, բարի դեմքով հրամանատարին, որն իր հագուստով, իր ողջ կեցվածքով չէր տարբերվում մյուս դինվորներից: Բոլորն անհամբեր սպասում էին, թե ինչ է հայտնելու հրամանատարը. «Պատրաստ մնացեք, Տանձուտի մոտ կամուրջը պիտք է մաքրել ու ճանապարհ բացել Կարմիր զորամասերի համար», — կարդաց հրամանատարը և բոլորը մի առանձին աշխուժով նայեցին միմյանց:

Ողջ գիշերը նրանց քունը շտարավ. նոր հակատամարտ էր սպասվում: Հինգերորդ շոկատի հրամանատարը մի քանի ուղղություններով հետախույզներ ուղարկեց, անա մյուսներին կարգադրեց խիստ հսկել ճանապարհների վրա, որպեսզի աղդանշանը լսելուն պես գրոհն միանգամից: Մի ամբողջ օր կիպոն պառկած մնաց քարանձավում. ականջի ցավը մեղմացել էր, տաքությունն՝ իշել: Նոր ընկերները զարմանալի հոգատարությունն էին ցուցաբերում դեպի իրենց կրտսեր ընկերը, չէին թողնում նա վերկենա, կատակներ էին անում, ուրախացնում: Լիպոյի համակրանքը ամենից շատ գրավեց պարտիզան Կարոն, որը մեծ խնամքով էր կապում տղայի վերքը, երբ նա ծիծառում էր՝ աշքերը ծիածանի փայլ էին ստանում ու երփներանդ շողում: Զեկոն զարմանալի կերպով կապված էր Կարոյին, հետևում էր նրա ամեն մի շարժումին. երբ Կարոն հրամայում էր նրան պառկել՝ անմիջապես պառկում էր. հրամայում էր երկու ոտքի վրա կանգնել, կանգնում էր, Կարոն Զեկոյին բերել էր իր հետ կովի դաշտ, նրան առաջուց վարժեցնելով ուզմական գործողություններին: Կարոն փոքր հասկելից շատ էր սիրում կենդանիներին, հատկա-

պես շներին՝ նրանց հավատարմության համար նա պատմում էր Զեկոյից, թե ինչպես մի անդամ գետինը հոտոտելով տարել, ցույց էր տվել թշնամու հետախուզվի տեղը: Ուրիշ անդամներ նամակը փորի տակ կապած տարել, հասցրել էր պարտիզանական ջոկատներին և վերադառնալով բերել պատասխան-նամակը: Կորած պարտիզանների հետքը Զեկոն շուտով գտնում էր և գետինը ճանկուտելով ցույց էր տալիս ուղղությունը: «Զեկոն հասարակ շուն չե»—մտածում էր տղան՝ հայացքը Զեկոյի աշքերին սեեռած: Զեկոն չեր հեռանում կիպոյի մոտից, ողջ ժամանակ լիզում էր նրա ձեռքերը, կարծես ուղղում էր իր փաղաքշանքով մոռացնել տալ նրան խոցված ականջի ցավը: Կարոն պատմեց, որ Զեկոն զարմանալի սեր էր ցուցաբերում դեպի վիրավոր զինվորները, եթե իհարկե մերոնցից է այդ զինվորը: Զեկոն չեր սխալ-վում և թշնամուն չեր շփոթում հարազատ մարդկանց հետ:

Երեկոյան քարանձավի կրակը թեժացրին և պառկուտեցին շուրջը: Ներս ընկան պահակակետի զինվորները և հայտնեցին, որ աջ կողմից լսվում են ազդանշան կրակոցներ: Մի ակնթարթում պարտիզանները հրացանները վերցրած՝ ոտքի կանգնեցին: Կարծես փոթորիկ բարձրացաւվ ու հողմի հետ ամեն ինչ քեց, տարափ: Քարանձավում մնացին կիպոն, մեկ էլ Զեկոն: Կարոն գնալուց առաջ մատը թափահարեց Զեկոյի վրա ու պատվիրեց տղայի մոտից. չհեռանալ: Զեկոն հասկացավ պատվերը և տեղից շշարժվեց:

Լիպոն նկատեց իրենից քիչ հեռու ընկած մի հրացան, ձեռքը երկարացրեց ու հրացանը մոտիկ քաշեց, ապա շունչը պահած սպասում էր: Այժմ Զեկոն էր նրա հավատարիմ պահապանը, որ լարված և հանդիմանող հայացքով հետևում էր տղայի բոլոր շարժումներին: Այդպես բավական երկար նրանք մնացին իրար նայելով, իրար հանդիմանելով: Քիչ հետո շունն սկսեց անհանգստանալ, քարանձավի երկայնքով մեկ վազվզել, մերթ գետինը հոտոտել, մերթ պոչի վրա նստած մոմուացնել:

Զեկոն գուրս էր գնում, ներս գալիս՝ իր հետ, բերելով դրսի ցուրտ օդի հոսանք:

— Զեկո՛, մի՛ գնա, ինձ մենակ մի՛ թողնի, — ասում էր տղան աղերսական տոնով:

Զեկոն մոտենում էր, տղայի ձեռքերը լիզում, կարծես

ուղղում էր հասկացնել, որ նրան մենակ չի թողնի. մերթ նստում էր մարող կրակի մոտ ու անթարթ նայում: Տղայի ականջին երբեմն հանում էին խուլ պայթյուններ. ինչպես երևում էր՝ բավական հեռացել էին քարանձավի մոտաց: Տղան կողքի հրացանը վերցրեց, սեղմեց կրծքին, աշքերն անթարթ հառեց կրակին: Կարծիս շարաձմի խաղընկերների աշքերն էին կրակների միջից ծիծաղում, հանգչում, նորից վառվում: Կենտրոնի թեժ կրակի կտորները Սամոյի պայծառ աշքերն էին հիշեցնում, նրանք ամենից շատ գրադեցրին տղային. Հիշում էր խոտի գեղը ու նրանց խորհըրդավոր զրուցը, երր բաժանվում էր Սամոյից՝ նրա աշքերը հուզմոնքից ճիշտ այդպես էին փայլատակում: «Ինչպես կտըխը Սամոն, եթե հանկարծ իմանա, որ իր հավատարիմ ընկերը այժմ վիրավոր, մենակ պառկած է ահավոր քարանձավում»—մտածում էր տղան: Ամեն մի կայծը մի նոր հիշողություն էր վառում նրա ուղեղում, պատկերները բազմանում էին, զեմքերը պայծառանում ու հանկարծ հանգչում: Կարծիս իրենց տան ճրագն էր վառվում, բարդիներն էին դուրսը խշշում, մայրիկը գունատ, օրորվելով՝ սպասում էր շնմքին: Լիպոն հրացանն ուսած, ձի հեծած մտնում է գյուղ, վազում են ընկերներն ուրախ ճիշերով ու շրջապատում հեծվորին...

Զեկոն թափով ներս ընկավ, իր հետ բերելով ցուրտ օդի հոսանք, անձրեւ, խոտի բույր. տղան սթավիլեց: Կրակը մոխրացել էր, այժմ միայն Զեկոյի աշքերն էին մթան մեջ վառվում:

Անձրեւ կաթկիոցներ, թե՝ ոտնաձայներ դրսից լավեցին. Զեկոն ականջները ցցած գուրս ընկավ. «Ո՞վքեր են, ո՞ւր գնաց անհամբեր Զեկոն» մտածում էր տղան մութ քարանձավում՝ աշքերը լայն բացած: Շուրջը կրակ, ճրագ շկար, ստվերներ էին շարժվում, իրար վրա բարձրանալով լինների շափ դառնում, նորից փլշում, անձև, անորոշ տարածվում շրս դին: Երկար ժամանակ այդպիս մենակ նա մութ ստվերներով պաշարված: Հանկարծ լսվեց հաշոց, տղան վեր կացավ կանգնեց:

— Այնտեղ կոիվ է, իսկ ես այստեղ վեր եմ ընկել պարապ, — հրացանը գրկած գնաց դեպի քարանձավի մուտքը, երր ուրախ հաշոցով նրա ոտքերին դիպավ Զեկոն ու նրա հետեւ մեկը բըռնեց լիպոյի ուսերը.

— Ո՞ւր ես գնում, խելմ վիրավոր, ցնդե՛ւ ես, դեռ վերքու

շի՝ լավացել, իսկ՝ դու, ե՛տ գարծիր... և Հաղորդեց նրան ուրախ լուրերը Եկավ երկրորդ զինվորը, երրորդը, եկան խմբերով՝ քարանձավը նորից կենդանացավ:

Իրար ընդհատելով պատմում էին, որ յոթերորդ ջոկատը միանալով հինգերորդին, շնորհիվ Ալեքի համարձակ ղեկավարության, հանկարծակիի էին բերել թշնամուն, չորս կողմից պաշտպան էին նրան ու անընդհատ կրակ բացել: Թշնամուն խմբերը թեղետ թվով շատ, բայց խիստ շփոթված՝ շէին կարողացել դիմադրել ու թողնելով զենքերը՝ փախսել էին: Նրանք պատմում էին ոգեսորված և ավելացնում.

— Որտեղ Ալեքի շունչը լինի՝ և՛ քաջություն, և՛ Հաղթություն կլինի:

«Ալեք, Հաղթություն» կրկնում էր տղան մտովի՝ անսահման ուրախությունը զսպած: Ծնշասպառ ներս մտավ Վաղոն ու շրիսկացնելով գետնին թափեց թշնամուց խլած հրացանները:

— Այ ձեզ գալլեր, ձեզանից խլած փամփուշտները ձեր ճակատին կարձակենք:

— Զա՞ն, զա՞ն,—բացականչեց Լիպոն նորից իր մտերիմ վաղոյին տեսնելով: Վաղոն նրա կողքին շոքած հարցնում էր, թե ի՞նչ է պատահել, ի՞նչու է գլուխը փաթաթած: Լիպոն խուսափում էր ճշմարտությունը պատմել, չեր ուղում նրա բարձր տրամադրությունը փշացնել: Ամենից վերջը ներս մտավ Ալեքը՝ Հաղթական ժամանակի գեմֆին: Ամենքը պատկառանքով ճանապարհ բացեցին նրա համար: Ալեքը տղային էր փնտրում, չեր համբերում հայրական սիրտը: Մինչև Ալեքի դալը՝ կրակը նորից թիժացրել էին ու կրակի լուսով նա տեսավ իր որդուն՝ գլուխը սպիտակ շորով փաթաթված:

— Ի՞նչ է պատահել,—հարցրեց Հայրը վախեցած:

— Ականջս է, Հայրի՛կ,—պատասխանեց տղան ծիծաղելով:

— Ականջը մի քիչ քերծվել է զնդակից,—միշամոնց հինգերորդ ջոկատի բարի գեմֆով հրամանատարը:

Հայրը գրկեց որդու գլուխն ու շնչաց.

— Այդ թող լինի քո մարտական մկրտությունը...

Հոր կրծքին շարված փամփուշտները ձյունի պես սառը քավեցին տղայի հուզմունքից այրվող այտերին: Մարտը շահած զինվորների ուրախության հանդեպ նսեմանում էին ամեն տեսակ

միշտ ու տխրություն։ Հայր ու որդի լուսնայում էին զինվորներին որոնք պատմում էին իրենց տպավորությունները այդ օրվա կովից Զոհրաբը քարանձավից դուրս զբաղված էր ձիերը խնամելով ներս մտնելիս տեսավ Լիպոյին ու բացականչեց։

— Աչքե՞րս քոռանային, որ քեզ այս օրին շտեսնեի, ցավդինձ դիալշեր, բալա՛, չոր գլուխս, ծեր գլուխս ո՞ւմ է պետք։ Նա տղայի գլխի վիրակապը բացեց, որ իր ձեռքով փաթաթի, բայց ձեռքերը գողացին, սիրոց փղձկաց, աշքերն արցունքով լցվեցին։ Լիպոյի ձախ ականջը թշնամու գնդակը ծակել էր։

Ալեքը երեսը շրջեց, որպեսզի իր սեփական աշքերով շտեսնի որդու վերքը, ապա հուզմունքը հազիվ զապելով շշնջաց։

— Իմ կտրիճ տղա...»

Խսկ տղան հարազատ մարդկանցով շրջապատված, առաջվապես անհոգ, առույգ ժպտում էր, կարծես ոչինչ չէր պատահել նրան։

15.

Պարտիզանական յոթերորդ և հինգերորդ ջոկատների միացյալ ընդհանուր ժողովն էր տեղի ունենում քարանձավում։ Զինվորները քնել էին, հանգստացել, այժմ պատրաստվում էին մինոր ճակատամարտի։ Կենտրոնում նստել էր Ալեքը՝ ձեռքերը ծնկներին դրած, աշ կողմում թիկնել էր Զոհրաբը իր գործ ծխամորձից անբաժան, ձախ կողմում հինգերորդ ջոկի հրամանատարը։ Լիպոն ծվարել էր սիրելի Վաղոյի և Կարոյի մեջտեղը, իսկ Զեկոն նստել էր նրանց առջև և իրեն շատ լուրջ էր պահում, կարծես մասնակցելու էր ժողովին։

Նախագահը Ալեքն էր։ Նրա խոսքերը արձագանք էին տալիս խոր քարանձավում։

— Այնպես պետք է զարկել օձի գլխին, որ նա խսպառ անհետանա մեր երկրի երեսից։ Հերիք ինչքան թույն թքելով մեր այգեստանի դալար խոտը շորացրեց, ժողովրդի ծիծառը լաց դարձրեց, սրտները արյուն կապեց։ Վճռական ժամին պետք է հարձակվել համարձակ ու կրակ բացել ամեն կողմից, որպեսզի կտրենք միանգամից թշնամու շղթան ու ճանապարհն ազատ պահենք Կարմիր զորքերի համար։

— Կհաղթենք աշխարհի ամենալուսավոր մարդկանց՝ կենինի—
Ստալինի անոնով, կդանանք մեր տները, կդառնանք մեր Հողերի,
մեր այգիների տերն ու տնօրենը։ Այնպես չէ, ընկեր պարտի-
զաններ։ — Հաճախ դիմում էր Ալեքը պարտիզաններին։

— Այդպես է, ընկե՛ր Հրամանատար։ — միաբերան պատաս-
խանում էին բոլորը։

Ալեքն իր ներշնչող խոսքերով, կենդանի ու վառ օրինակնե-
րով միշտ աշխատում էր բարձր պահել զինվորների մարտունա-
կությունը և այդ նրան հաջողվում էր, շնորհիվ իր անձնական
օրինակի և ազդեցիկ բնավորության։

Ալեքից հետո խոսք խնդրեցին և խոսեցին ուրիշ պարտիզան-
ներ, կարճ, թե ինչ պետք է անեին վաղվա կովին։ Զոհրաբը խո-
սեց նույնպես համառոտ։

— Ծերս ի՞նչ ասի, ի՞նչ ավելացնի, քանի որ Ալեքը ամեն-
բան տեղը տեղին ասաց։ Մենակ մի բան կուզեմ ավելացնել-
ես էլ ձեզ հետ արյունս գնես կդարձնեմ, որ աշխարհից շարը վե-
րանա՞բարին իշխի. լացի տեղ ծիծաղ ծաղկի, ժողովորդը հա-
մերաշխ ու սիրով ապրի։

Լիպոն անհանգիստ տեղում շարժվում էր, սնդիկի պես
շարժուն հայացքը մեկից, մյուսին դարձնում։

Վերջում Ալեքը ոգեսորված բացականշեց։

— Մե՛ծ Հոկտեմբերի ազատաբեր դրոշը մեր երկրի վրա էլ
կծածանվի շուտով։ Կովե՛նք արիաբար, ընկե՛ր պարտիզաններ,
հանուն Հոկտեմբերի սուրբ դրոշի, հանուն կենինի—Ստալինի-
դրոշի... Պարտիզանները լուս, լարված հետևում էին իրենց հրա-
մանատարի կրակոտ խոսքերին։

Ալեքը շարունակեց հիացական ժպիտը դեմքին։

— Ռուս զինվորների ուժն անկոտրում է, կովենք նրանց
օրինակով։ Վաղվա կովում, ընկեր պարտիզաններ, ամեն մեկս
մեր արյան գնով պիտի ցույց տանք, որ մենք արժանի ենք ազա-
տության զինվորը կոչվելու։

— Ուսա՞—, բացականշեցին բոլոր պարտիզանները։

Ալեքը լոեց, հայացքը հեռու հորիզոններին հառած։ Ամեն մի

Ֆարտիկ ոգևորված՝ կենինի—Ստալինի անունով՝ երդինց մինչեւ արշան վերջին կաթիլը կովել ազատության համար:

Հոր խոսքերի վառ տպավորության տակ, կիալոն քուն մտավ: Երազում նա տեսավ այնպես իրական, այնպես պարզ, որ ինքը շատ շատ զինվորների հետ միասին մի ձեռքում հրացան, մյուս ձեռքում ալ կարմիր դրոշակ պարզած կովի էր նետվել... երբ կիալոն աշքերը բացեց, արդեն լույս էր:

— Ո՞ւր է հրացանս, ո՞ւր է դրոշակս,—հարցրեց նա դեռևս երազի տպավորության տակ:

Հայրը ժպտաց: Տղան ամոթից կարմրեց. նա տեսավ, թե ինչպես պարտիզանները անսովոր իրարանցման մեջ էին, հրացաններն էին չսկզբացնում, մաքրում, փամփուշտներ էին լըցնում փամփուշտակալները: Հետեւելով պարտիզաններին՝ ինքն էլ վերցրեց մի հրացան ու սկսեց մաքրել, հետն էլ սրտի թրթիռով ժտածում էր շուտով հանդիպել Սամոյին, ասել նրան, որ ինքը ինչքան բան իմացավ և թե ինչպես է սովորում կովել:

16.

Աւշ աշուն էր: Սարերում տեղ-տեղ ձյուն էր իշել: Քամին քերում էր անարատ ձյան բույրը ու հաղորդում ձմռան գալուստը:

Թշնամին իր բոլոր ուժերը կենտրոնացրել էր գլխավոր ճանապարհի վրա, որի մի կողմում լիճն էր ծփում, մյուս կողմում՝ բլուրներ էին:

Արծիվների պես սարերից իշան պարտիզանական մի քանի զոկատներ ու բլուրների հետևն անցած սպասում էին ազգանշանի: Ալեքը որպես գլխավոր հրամանատար՝ խմբերի բաժանեց պարտիզաններին ու ցույց տվեց հարձակման ուղղությունը: Կիալոն նրանց շարքերումն էր: Սպիտակ միրակապի վրայից գլխարկը իշնում էր մինչեւ ականջները, իսկ շինելի փեշերը ծփում էին կրունկների վրա: Ոչ մի կերպ չկարողացան նրան համոզել ու ետ պահել մարտական շարքերից:

— Ինչ ուզում եք, արեք, Հորս մոտից չեմ հեռանալու, որտեղ
նու, այնտեղ էլ ես, —պատասխանել էր նա հրացանն ամուր բըռ-
նած:

Քյահլան ձին տակին, ուսին դիպուկ հրացան, արծիվ նման
հայացքը շեշտակի շրջում էր Ալեքը: Նա ստուգում էր շարքերը,
մարտիկների տրամադրություններն ու ուղմամթերքը, մտածում
վերջին վճռական մարտի մասին:

Վաղոն գնացել էր գեպի հակառակորդի դիրքերը՝ մանրա-
մասն տեղեկություններ բերելու: Մութը դանդաղ իջավ սարերին:
Բոլորը գեպի երկինք էին նայում, կարծես այնտեղից էին սպա-
սում թշնամուն: Հանկարծ բոցեղեն մի լեզու վշշալով վերև սլա-
ցավ գեպի ամպերն ու այնտեղից ծաղկի թերթիկների պես կայ-
ծերը թափվեցին ցած:

— Ազդանշան, —բղավից կիպոն:

«Ուսա» կանչելով պարտիզանները գրոհեցին. կարծես սա-
րեր էին տեղաշարժ լինում: Քյահլանը խրխնջաց, թափ տվեց տի-
րողը և առաջ նետվեց: Ալեքին հետեւցին մյուս հեծվորները,
սպա, հետեակները: Այդ բոլորն այնքան արագ կատարվեց, որ
կիպոն Հորը կորցրեց աշքից: Նա միայն տեսնում էր շարժվող
շարքեր ու թվում էր երկինք գետին նրանց հետ շարժվում էին:
Տղան ուշքի եկավ, հրացանն ամուր բռնած սկսեց վագել, երբ
հետեւց մեկը թերը բռնեց. գլուխը շրջեց նա զայրացած ու հա-
ցացքը հանդիպեց Զոհրաբի հանդիմանող հայացքին:

— Կա՞ց, ո՞ւր ես վազում:

— Ուրեմն ես շեմ կովելո՞ւ, Զոհրաբ ապի, —վիրավորված
տոնով ասաց տղան:

Իսկ Զոհրաբը պատասխանեց հանդարտ:

— Կովում զինվորներին փամփուշտ է պետք, որու փամ-
փուշտ կտանես: Տղան, խոսք չգտավ պատասխանի: Ծոծրակը
բորելով հրացանը տվեց Զոհրաբին:

— Ես փամփուշտ կտանեմ:

Պահակակետում մնացել էր Զոհրաբը. նրան էին հանձնված
պահեստի, փամփուշտները, հրացանների պահպանությունը:

Տրաշտաշտաշտաշտա, դպրում էին սար ու ձոր: Միի մշտը
էր բարձրանաւմ ու խառնվում անպերին: Վասողի Հոտն էր այժմ
բամթին սփոռում ամեն կողմ:

— Տղերը ջան, ձեր հոգուն մատաղ, ջարդեցե՛ք թշնամուն, —
ասում էր Զոհրաբը փամփուշտապարկերը լցնելով: Մութ գիշեր,
առ ու գողը մոռացած, ոտների ուժն անսպառ լիպոն փամփուշտ
էր տանում հանձնում կովող պարտիզաններին ու Հեիծե վերա-
դառնում: «Այս արդեն խսկական կոփիլ է», մտածում էր նա: Մահը
շէր վախեցնում նրան. բժմում էին ականջները, թիլում էր, թե եր-
կինը կրակ է թափում: Միշտ աչքի առջևն էր հայրը, որ առա-
ջին շարրում կործը դեմ տված՝ կովում էր քաջաբար. մի՛թե կա-
րող էր թշնամու դնդակը ծակել ժայռից ամուր հոր կործը: —
մտածում էր տղան:

Ամբողջ գիշերը երկու կողմերը շրագարեցին կրակելուց:
Կարկուտի պես թափվում էին գնդակները: Լիպոն ոչ մի բռպի-
շանգստացավ: Գնդակների տարափի տակ գնում էր փամփուշ-
տի պարկերն ուսին, հանկարծ ծանոթ շունը փաթաթվեց նրա ոտ-
ներին ու աղիղողորմ կլանչեց:

Նա ճանաշեց՝ Զեկոն էր:

— Զեկո, ի՞նչ է պատահել, — ասաց տղան և շուրջը նայեց ու
ի՞նչ տեսնի, մեկը փորսող էր տալիս գետնին: Վաղեց մոտ, շո-
րերից ճանաշեց, Կարոն էր վիրավոր ոտքը քարշ տալիս: Աւը
դեմ տվեց, Կարոն հենվեց տղային ու գնացին պահականիտ:
Այնտեղ ուրիշ վիրավորներ էլ կային. Զոհրաբը փաթաթեց Կա-
րոցի ոտքը: Զեկոն կարծես հանգստացավ տիրոջը հարսղատ
մարդկանցով շրջապատված տեսնելով ու վաղեց լիպոյի հետեից,
որ շտապով փամփուշտ էր տանում կովողներին: Այնտեղ կովի
առաջին շարքում Վաղոն նկատեց, որ հրամանատարը օ՛ֆ արեց,
ցնցվեց:

— Ընկեր Ալեք, ետ կանգնի, դու վիրավորված ես, — գոչում
էր Վաղոն գրեթե թոքերը պատռելով:

Իսկ Ալեքը ետ չէր կանգնում ու համառորեն քաջալերում էր
իր ընկերներին.

— Կրա'կ աջից. կրա'կ ձախից...

Վերքը գեղ տաք էր, ցալ չեր զգում:

Հսկա կաղնու պես հրամանատարը թերվել էր ձիու մեջքին:
Զին վազում էր գեպի պահակակետ: Այդ ժամանակ նրանց դեմ
ու դեմ գալիս էր տղան՝ փամփուշտապարկը ուսին: Կանգնեց
վրդով...

— Զվախնաս, որդիս, ինձ շուտով տար Զոհրաբի մոտ, իսկ դու գործդ շարունակիր, վաղոյի փամփուշտը վերջանում է, — ասաց նա:

Տղայի աշքերը մթագնեցին, ուզում էր գոռալ, ուզում էր օգնություն կանչել, բայց հիշեց Հոր խոսքերը, որ զինվորը կովի մեջ արիասիրտ պետք է լինի: Տղան լուռ ձիու սանձը բռնեց, գնացին: Զին կարծես հասկանում էր, չեր ուզում սմբակները խփել քարին, որ տիրոջ վիրավոր մարմինը ցցնցվի: Զգուշությամբ Ալեքփին իշեցրին ձիուց: Այնպես պազ էր նրա գեմքը, այնպես գունատ: Հրացանն ուսից հանեցին, փամփուշտակալն արձակեցին, շինելը ետ տարան, կուրծքը բացեցին. արյուն էր ծորում կրծքից, Զոհրաբը հառաշեց. թշնամու գնդակը կպել էր Ալեքփի կրծքին: Հրամանատարի վիճակը ծանր էր: Զոհրաբը շգիտեր ինչպես օգներ սիրելի հրամանատարին, արցունքն աշքերին՝ շոքից վիրավոր հրամանատարի կողքին՝ վերքը փաթաթելու, բայց Ալեքքը գլուխը պտտեց.

— Ե՛տ տա՛ր ձեռքդ, Զոհրաբ, այս անգամ դեղդ վերքս չի լավացնի...

Տղան ազերսապին աշքերով մերթ Զոհրաբին էր նայում օգնություն խնդրելով, մերթ ձիուն էր փաթաթվում սրտի մորմորով՝ ուզում էր իր վիշտը նրա հետ բաժանել: Քյահլանը տիրոջ կողքից չեր հեռանում. աշքերը պլառը՝ անհանգիստ դովում էր զետինը:

Ալեքփի ցավը սաստիկ էր, բայց նա չեր տնքում: Մյուս վիրավորները հրամանատարի վիճակը տեսնելով՝ մոռացան իրենց վերքը, նորից էին ուզում նետվել կովի մեջ, վրեժ առնել, բայց Ալեքքը շմոզեց, ասելով.

— Թշնամու հաշիվը մաքրված է...

Զյան էր թափվում, բարակ շերտով ծածկում գևտինը: Ալեքքը հազիվ շնչում էր:

Այգաբացը մոտ էր. Հետզհետե կրակոցները նվազեցին: պարտիզանները կրակեցին մինչեւ վերջին փամփուշտը: Թշնամին թվով շատ էր ու կոփն անհավասար, բայց պարտիզանները շնաշանչեցին, կովեցին արխակամ:

Հանգարտ թափվում էր առաջին ձյունը; թափվում, ծածկում
էր իր անաղարտ սպիտակությամբ թշնամուց մաքրված հանա-
պարհը: Պարտիզանները վերադառնում էին պահակակես: Նրանց
դեմքին հաղթական ժամանակամատարն էր շողում և վշտի ստվիր կարչ չէ՝ որ
սիրելի հրամանատարն էր կրծքից վիրավորված: Եկան, հավաք-
վեցին: Կոլում շատերին էին կորցրել: Ալեքը դեռ շնչում էր ու
սպասում աշքը ճամփին հառած, աղատության վառ կարոտը
սրտում: Վերջին ուժերը հավաքելով դունաթափ շորթերը շար-
ժեց.

— Բնկե՛ր պարտիզաններ, իմ կողմից բարեներ կտաք մեր
կարմիր գորքին... ասեք Ալեքը շատ-շատերի հետ իր արյունը
տվեց աղատության համար...

Վիրավորն ուզեց գլուխը բարձրացնել, բայց ուժերը չներե-
ցին, նորից ցած գրեց. գլխով նշան արեց որդում, որ նստել էր
գլխահակ հոր հրացանի և ձիու կողքին: Տղան արցունքով լի աշ-
քերը թարթեց, գլուխը գրեց հոր կրծքին: Առաջին անգամ իր
հյանքում նրա մանուկ հոգին խոր վիշտ ապրեց: Մարդկանց, սա-
րերին օգնության էր կանչում հոր վերքը բուժելու: Բոլորը լուս-
մտազբաղ նստել էին սառը ձյան վրա: Առյուծի պես մննչացել,
ամպրոպի պես որոտացել էր հրամանատարը, իսկ այժմ շունչն էր
փշում: Բայց և անպարտելի էր նա այդ վիճակում:

— Լաց մի՛ լինիր: Մի՛ տիսրի, որդիս, առանց զո՞հի հաղթու-
թյուն չի գալիս... աշքերդ սրբի, հրացանս ու ձիս քեզ հմ իշաշն
խում, — ասաց հայրն ու խնդրեց մոտ բերել Քյահլանին:

Նրա խնդիրն անմիջապես կատարեցին:

Զին համբաքայլ, կրակվող աշքերով մոտեցավ տիրոջը:

Ալեքը նվազած աշքերով վերջին անգամ նայեց որդուն, նա-
յեց ձիուն, Ֆիդ թափեց վերջին խոսքերն արտասանելու, — ինձ
կթաղեք այս սարի լանջին, — ձեռքը պարզեց դեպի սարը... — այս
շխոսեց:

Զո՞րաբը մինչև վերջին րոպեն չեռացավ Ալեքի կողքից. իր
դողացող ձեռքերով նրա աշքերը փակեց: Զյունը գալիս, ծած-
կում էր հրամանատարի անշնչացած մարմինը...

— Այս ձեր գլուխն թող կսրչեր, իսկ այս տեսակ հերոս մար-
չը, որ աշխարհին պետք էր, թող ասլրեր... — արտասվեց Զո՞րա-
բը, արտասվեցին բոլոր պարտիզանները: Վաղոն և մի որիշ

պարտիզան իրենց մեջ էին առել կիսոյին, որ մենակ մնալով
վշտից ընկճմի: Սարի լանջին մի խումբ պարտիզաններ հողին
հանձնեցին Ալեքի մարմինը: Այդ սարը կոչեցին պարտիզան
Ալեքի սար: Նրանք իրենց արցունքու աշքերը պաղ ձյունով լվա-
ցին ու պատրաստվեցին ճանապարհ ընկնելու: Մինչև գյուղը
հինգ կիլոմետր էր մնում: Այժմ ճանապարհը բաց էր, նրանք
կդնային անարգել:

Քյահլանն առանց թամբի, մոլոր վազվզում էր. ոչ ոք չէր
շամարձակվում մոտենալ հրամանատարի՝ վշտահար ձիուն: Կի-
պոն հիշելով հոր խոսքերը՝ ծածովկ սրբեց աշքերը, ուղղվեց,
վագեց հոր փամփուշտակալը կապեց, հրացանն ուար գցեց:

Քյահլանն առույգացավ, երբ թամբն ամրացրին, սիրով ըն-
դունեց տիրոջ որդուն իր մեջքին: Ամենքը զարմացած նայում
էին տղային, որ խրոխտ ու հպարտ հոր հայացքի պես հայացքը
սեռած նայում էր նրանց: Թվաց, որ Ալեքը չէր մեռել, այլ նո-
րից կենդանի կանգնել էր նրանց դեմ՝ հրամանի խոսքը շրթին:
Վաղոն, Կարոն կիպոյի կողքից չէին հեռանում: Տղայի սիրու
ցվեց նոր հույսերով, նոր գալիքներով: Այն, ինչ երազել էին հոր
հետ միասին դժվար բռպեներին, մահն աշքի տակ առած՝ այժմ
իրական էր դառնում, շուտով պետք է հանդիպեին հյուսիսից
եկած հարազատ ուսւ եղբայրներին: Նա շրջվեց դեպի սարալան-
շը, գլխարկը հանեց, մնաս բարով ասաց հարազատ հոր թարմ
հողաթմբին. մյուսներն էլ գլխարկները հանեցին: Սարեր, դաշտեր
Ալեքի հայացքն ընդունած ճանապարհ էին գցում թվով քիչ, բայց
ուզով անպարտ մի խումբ պարտիզանների:

Կորաքամտեկ, ծեր Զոհրաբը ձիու վրա մեջքը շտկեց:

— Քշենք ձիերը, հասնենք մերոնց, — բացականչեց նա:

Սմբակների հետքեր բացվեցին թարմ ձյունի վրա: Հորիզոնը
կարմիր բռցով ողողվեց: Երկնքից լույսի հեղեղ էր թափվում
երկրի վրա:

Բնությունն ամեն կողմից ժպտաց: Զինվորներն իրար նայե-
ցին, նույնպես ժպտացին: Գնում էին 11 պարտիզան: Նրանց
շարքում ընթանում էր ամենասրաշավ ձին իր մեջքին տանելով
պարտիզանի տղային, որը ամուր էր պահել սանձը իր ձեռքերի
մեջ: Սլանում էր այն պատանին, իսկական զինվորի կեցվածքով՝
հաղթորեն ձգված:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՊԱՐՏ ԱԵՐ

Արձանը	<i>t₂</i>
Հպարտ սեր	5
Անմոռուկներ	24
Արծվենի հայուհին	32
Գարնանային շշունչներ	46
Ռասացլուհի	59
Ասացին թոփքը	63
Փոթորկից հետո	76
Սեյանների բնտանիրը	80
	95

ԱԵՐԱԴԱՐՁԱԾ ԵՐՉԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Օհան Հայրիկ	<i>t₁₂</i>
Վիշտ և սփոփանը	121
Վերագարձած երջանկություն	134
Առաջին կինը	157
Կոլտնտեսութու օրագրից	164

ՊԱՐՏԻԶԱՆՆԵՐ

Արյունոտ վարդեր	<i>t₁₄</i>
Պարտիզանները	178
Սպասում	188
Պարտիզանի աղան	216



Պատ. խմբագիր Ա. ՍՈՂՋԱՆՅԱՆ
Նկարիչ Հ. ՌՈՒԽԿՅԱՆ
Տեխ. խմբագիր Մ. ՄԱՐՏԻՔՈՍՅԱՆ


Գ.Յ. 04002 Պատովեր № 425. Տեղաժ 4000.
Հեղին. 16¹/₂ մամուք տպ. 19¹/₂ մամուլ
Հանձնված է արտադ. 30/VIII 1947
Ստորագրվ. է տպ. 28/X 1947

ՀՍՍԻ Մ. Սովետին կից
Պոլիգր. և Հրատ. Վարչ
№ 3 տպարան, Ալա-
վերդյան № 65,
Երևան, 47 թ.

கால்வாயை குதித்து வரும்
குதித்து கூறுவது
குதித்து கூறுவது
குதித்து கூறுவது



நீங்கள் என்ன சொல்லுகிறீர்கள்
நீங்கள் என்ன சொல்லுகிறீர்கள்





Հայոց Տեղական
Առողջապահության
Մշտական պահպանից
30 ամյակին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026963

